

Հավելված  
ՀՀ կառավարության 2010 թվականի  
փետրվարի 11-ի N 102-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ)  
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

## Ն ա խ ա բ ա ն

Արմավիրի մարզի Արմավիրի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի (այսուհետ՝ Գլխավոր հատակագիծ) նախագիծը, տարածքի հատակագծային կազմակերպման խնդիրներից բխող, հողօգտագործման հետ փոխշաղկապված երկարաժամկետ զարգացման նպատակային հիմնական քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է:

Գլխավոր հատակագծի հիմնական նպատակը Արմավիրի քաղաքաշինական համալիր զարգացման ռազմավարական ուղղությունների ընտրությունն է: Այն է քաղաքային համայնքի կայուն զարգացումն ապահովող հիմնական քաղաքաշինական ծրագրային փաստաթղթի մշակումը՝ բնակեցման համար անվտանգ և առողջ կենսոլորտի ստեղծման, բնական և մշակութային ժառանգության պահպանման պայմանների ապահովմամբ: Գլխավոր հատակագծի մշակմամբ համայնքի առջև դրվում են լուծում պահանջող հետևյալ խնդիրները՝

- տեղական ներուժի ակտիվացման և ժամանակակից իրական արտաքին հնարավորությունների ներգրավման միջոցով՝ համայնքում տնտեսության գերակա առաջատար ճյուղերի ընտրությունն ու տարածքային տեղաբաշխումն, ինչը կապահովի համայնքում աշխատատեղերի շուկայի ձևավորում և կերաշխավորի բնակչության համար զբաղվածության տարատեսակների ընտրության հնարավորությունը,

- համայնքային ինքնակառավարման մարմինների մասնագիտական կատարելագործման և տեխնիկա-տեխնոլոգիական ապահովվածության մակարդակի բարձրացման միջոցով՝ քաղաքի սոցիալական ենթակառուցվածքի ու քաղաքային տնտեսության արդիականացում, առողջապահական, կրթական, մարզական և մշակութային, առևտրի ու կենցաղային համակարգերի զարգացում, բնակարանային ֆոնդի արդիականացում, կոմունալ ծառայությունների ժամանակակից տեխնիկական զինվածության ապահովում,

- մարզային տնտեսական համակարգերում Արմավիրի ուրույն նշանակության որոշում և ամրագրում, քաղաքի տեղական տարաբնակեցման համակարգում գերիշխող դերի (կենտրոնի) ամրապնդում, քաղաքամերձ գոտիների և կանաչապատ տարածքների ստեղծում և պատշաճ խնամք,

- համաքաղաքային, տեղական, ինչպես նաև արդյունաբերական նշանակության տրանսպորտաճանապարհային և ինժեներական ենթակառուցվածքների կատարելագործում,

- քաղաքային միջավայրի սանիտարական, հիգիենիկ և հակահամաճարակային որակի միջազգային ստանդարտների հիմնում և պահպանում,

- էկոլոգիական իրավիճակի բարելավում, շրջակա միջավայրի պաշտպանություն ու բնության պահպանում,

- պատմության, մշակույթի ժառանգության, ազգագրական ավանդույթների պահպանում ու կիրառում սոցիալական կյանքի ակտիվացման, ինչպես նաև դրանց ներգրավում տնտեսական առաջընթացի ապահովման համար:

Տարածքի բնական պայմանների, տեխնածին և սոցիալական գործոնների վերլուծությունն ու գնահատումը վկայում է համապատասխան ներուժի առկայությունը համայնքի /բնակավայրի/ հետևողական զարգացման առաջընթացի ապահովման համար: Սույն գլխավոր հատակագիծը նպատակաուղղված է կանոնակարգելու այդ առաջընթացի տարածքային հատակագծային կազմակերպման խնդիրները:

## 1. Արմավիրի դիրքը մարզի տարաբնակեցման համակարգում

Արմավիր քաղաքը ՀՀ Արմավիրի մարզի վարչական կենտրոնն է: Այն գտնվում է Երևանից 48 կմ հեռավորության վրա:

Արմավիրի մարզի տարածքը կազմում է 1242 կմ<sup>2</sup> կամ 124200 հա: Մարզում կան երեք քաղաքային և իննսուն գյուղական համայնք: Բնակավայրերը, մարզի տարածքում, անհավասարաչափ են բաշխված: Դրանք հիմնականում կենտրոնացված են հարավային մասում, որի եզրով՝ Արաքս գետի հետագծով, անցնում է ՀՀ պետական սահմանը:

Արմավիր քաղաքը, միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներով, կապված է հանրապետության մայրաքաղաքի, մյուս բնակավայրերի և մարզերի հետ: Քաղաքի հարավային սահմանով անցնում է Երասխ-Երևան-Գյումրի-Այրում երկաթուղին:

Արմավիրը (նախկինում՝ Հոկտեմբերյան) հիմնադրվել է 1931թ., Նորապատ գյուղի և «Սարդարապատ» կայանի միջև ընկած տարածքում:

Քաղաքի բնակչությունը, «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» /ՀՀ ՏԳՆ/ առ 01.01.2002թ. տվյալներով, կազմել է 45.1 հազ. մարդ: Քաղաքապետարանի տվյալներով ներկայումս քաղաքում բնակվում են 40 հազ. մարդ: Մարզի երեք քաղաքներից, բնակչության թվով զիջելով Էջմիածնին, մարզկենտրոնը զբաղեցնում է երկրորդ տեղը:

Մարզի տարաբնակեցման համակարգի քաղաքների թվային բնութագրերը բերված են 1-1 աղյուսակում:

Աղյուսակ 1-1

Քաղաքներ	Բնակչության թիվը	
	Հաշվարկային ըստ նախորդ գլխավոր հատակագծի	ըստ «ՀՀ ՏԳՆ», 2002 թ.
Արմավիր	60.0	45.1
Էջմիածին	83.8	65.4
Մեծամոր	-	12.4

Համաձայն ՀՍՄ-ի /1/ տեղեկատվական-վերլուծական պարբերականի տվյալների, Արմավիրի մարզի քաղաքների բնակչության զբաղվածության բաշխվածությունը, ըստ տնտեսության ոլորտների (%), ներկայացված է 1-2 աղյուսակում:

Աղյուսակ 1-2

Ոլորտներ	Արմավիր	Էջմիածին	Մեծամոր
Արդյունաբերություն	1,5	7,0	25,0
Գյուղատնտեսություն	0,0	36,0	0,0
Ծառայություններ/առևտուր	80,0	42,0	38,0
Շինարարություն	0,0*	5,0	5,0
Այլ	18,5	10,0	23,0

\* /տես ՝ Հայաստանի Սոցիալական Միտումները» տեղեկատվական-վերլուծական պարբերականի տվյալներ, ՀՍՄ՝04 էջ 18, աղյուսակ 4

Տնամերձ հողամասերում և տնային տնտեսությամբ զբաղվածությունը Արմավիրում կազմում է բարձր տեսակարար կշիռ (14%), որն ավելի մեծ է, քան Էջմիածնում (9.9%) կամ Մեծամորում (5.4%):

Արմավիրի բնակչության ճնշող մեծամասնությունը բնակվում է առանձնատներում (համապատասխանաբար, բնակելի կառուցապատումը ներկայացված է հիմնականում 1-2 հարկանի առանձնատներով՝ կից հողամասերով):

Արմավիրի տնային տնտեսությունների 92%-ն ունեն կենտրոնացված ջրամատակարարում և ջրահեռացում: Ջեռուցման համակարգը չի գործում (նույնը վերաբերում է մարզի գրեթե բոլոր համայնքներին): Արմավիր քաղաքում, ինչպես նաև մարզի մյուս բնակավայրերում, շարունակվում է գազաֆիկացման վերականգնումը: Հեռախոսակապով ապահովված է բնակավայրերի մոտ 65%:

Տեղանքի բացարձակ նիշերը տատանվում են 800-ից 840 մ ծ բ: Տարածքում տեղ-տեղ հանդիպում են ձախճային հողակտորներ՝ գետերի ջրի արտահոսքի առաջացման հետևանքով:

Շրջանի խոշորագույն գետը Արաքսն է, իր Սելավ- Մասարա, Սևաջուր և այլ վտակներով:

Արարատյան հարթավայրը, որին վերաբերում է և Արմավիրի մարզի տարածքը, հանրապետության ամենամեծ կլիմայական գոտին է և հանդիսանում է Հայկական բարձրավանդակի ցածրադիր և պարփակ մասերից մեկը: Կլիման չոր է, խիստ մայրցամաքային, բնորոշվում է սառը ձմեռներով և շոգ ամառներով, ինչպես նաև արևափայլի երկարատևությամբ (տարեկան՝ միջինը 2600 ժամ): Ձմեռը, այս տարածքում, բնութագրվում է չոր, քիչ ձյունոտ և ցուրտ եղանակներով: Գարունը երկարատև է, տաք, խոնավ: Ամառը նույնպես երկարատև է, շոգ, չոր, պարզ եղանակների գերակշռությամբ: Աշունը բնորոշվում է երկարատև չոր, մեղմ և արևոտ եղանակով:

Ամսեկան միջին տեղումները կազմում են 10 մմ, հարաբերական խոնավությունը հաճախ լինում է 30%-ից ցածր: Տեղումների տարեկան քանակությունը կազմում է 200-300մմ.:

Արմավիր քաղաքը զբաղեցնում է թույլ հավասարաչափ թեքությամբ տարածք:

Արմավիրի տարածաշրջանին բնորոշ են սելավային երևույթները, որոնք առավել հաճախ դիտվում են գարնանը և անձրևային եղանակներին: Մարզի տարածքը հարուստ է տուֆի և բազալտի պաշարներով:

Քաղաքի տարածքի ինժեներա-երկրաբանական, հիդրա-երկրաբանական և սեյսմիկ բնութագրերը հանգամանորեն ներկայացված են 3.1.4 բաժնում:

Արմավիր քաղաքը հանրապետության գյուղատնտեսական արտադրության կենտրոններից մեկն է:

## **2. Նախորդ գլխավոր հատակագծի իրացման վերլուծություն**

Արմավիր (Հոկտեմբերյան) քաղաքի համար մինչ օրս մշակվել է չորս գլխավոր հատակագիծ: Առաջինը՝ 1929թ. կազմվել է ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի կողմից, որի հատակագծման հիմքում դրվել է քաղաք-այգու գաղափարը: Այս գլխավոր հատակագծի հորինվածքի կենտրոնում դրված էր 1200 մ երկարությամբ, հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք ձգվող զբոսայգին, որի շուրջ տեղաբաշխվում էին հասարակական շենքերը: Այն սկիզբ էր առնում «Սարդարապատ» երկաթուղային կայանի մուտքից և ավարտվում էր կանաչ պուրակներով շրջապատված կիսաշրջանաձև հրապարակով:

Զբոսայգու երկու կողմերում տեղաբաշխված էին երկայնական և լայնական փողոցները, որոնց շնորհիվ ստեղծվում էր ուղղանկյուն կանոնավոր ցանց, իսկ կենտրոնական հրապարակի շուրջ ստեղծվող կամարաձև փողոցները ամփոփում էին քաղաքի հատակագիծը:

Բնակելի կառուցապատումը պետք է իրականացվեր անհատական, մեկ-երկու հարկանի տներով, իրենց կից հողամասերով, ուր նախատեսվում էր օժանդակ կառույցների տեղադրում, նաև պտղատու ծառերի տնկարկ:

Հենց թամանյանական հատակագծի լուծումն է հանդիսանում այսօրվա Արմավիր քաղաքի կենտրոնական հորինվածքային միջուկը:

1948-ին Դ. Խոյեցյանի կողմից կազմվել է հաջորդ, թվով երկրորդ, գլխավոր հատակագիծը:

Երրորդը՝ մշակվել է տասն տարի անց, 1958-ին, ճարտարապետ Ռ. Գրիգորյանի կողմից, մինչև 1980թ. հաշվարկային հեռանկարով և 220 հազար մարդ բնակչության նախագծային թվով:

Դ.Խոյեցյանի և Ռ.Գրիգորյանի մշակած գլխավոր հատակագծերը նախատեսում էին բնակավայրի սահմանափակ տարածքային աճ: Համաձայն այս նախագծերի, պետք է իրացվեին քաղաքամերձ հողատարածքները, նոր թաղամասերի ստեղծման համար: 1948 և 1958 թթ. հատակագծերով սկիզբ դրվեց առաջին գլխավոր հատակագծով ստեղծված փողոցային կանոնավոր ցանցի որոշակի խախտմանը: Նոր փողոցային ցանցն աստիճանաբար ձեռք բերեց անկանոն և անհամաչափ ուրվագծեր: Քաղաքի տարածքային զարգացման (բնակելի կառուցապատման) համար օգտագործվեցին դեպի հյուսիս, ինչպես նաև երկաթուղուց հարավ ընկած հողամասերը:

Վերջին՝ չորրորդ գլխավոր հատակագիծը մշակվել է «Հայպետնախագիծ» ինստիտուտում 1974թ.: Այս պահին արդեն քաղաքը իրենից ներկայացնում էր զարգացած ենթակառուցվածքով բնակավայր:

Հարկ է նշել, որ քաղաքը բուռն զարգացում է ապրել սկսած 1920-ական թվականներից: Եթե 1922թ. բնակչության թիվը կազմում էր 128 մարդ, ապա 1926-ին այն դարձել էր 533 մարդ, 1939-ին՝ 5.6 հազ. մարդ, իսկ արդեն 01.01.1973-ի տվյալներով այն կազմում էր 27.6 հազար մարդ: Այսպիսով, շարունակվում էր քաղաքի բնակչության թե՛ բնական և թե՛ մեխանիկական աճը:

Այսօր Արմավիրը պատկանում է Հայաստանի փոքր քաղաքների թվին և ունի 40 հազ. բնակիչ:

Արմավիրի քաղաքաստեղծ գործոններից է տարածքի հարավ-արևմտյան սահմանով անցնող Այրում-Երևան-Երասխ երկաթուղային ճանապարհը: Երկաթգծից դեպի հարավ գտնվում է Նորապատ գյուղը, մի շարք արտադրական ձեռնարկություններ և պահեստային տնտեսությունը:

Քաղաքի արդյունաբերական կառույցների գերակշռող մասը տեղադրված է տարածքի հարավ-արևելյան մասում:

Ուսումնասիրելով քաղաքի վերջին 25 տարիների զարգացման ընթացքը՝ կարելի է եզրակացնել, որ այն իրականացվել է գլխավոր հատակագծերին համապատասխան:

1974 թվականին մշակված գլխավոր հատակագծի նախնական տարբերակը ( կազմված 1972-ին) նախատեսում էր տարածքային զարգացում հյուսիսային և հյուսիս-արևելյան ուղղություններով: Սակայն հողի իրացման խնդրի բարդության պատճառով, կապված բարձր ճնշման գազատարի և բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի տեղափոխման հետ, այն չիրականացվեց: Ավելի ուշ մշակված (1974-ին) տարբերակը նախատեսեց, որպես քաղաքի զարգացման առաջնային ուղղություն, արևմտյան հատվածի 150 հա հողատարածքը, ինչը հետագայում հաստատվեց քաղաքի գործադիր մարմինների կողմից՝ համապատասխան փաստաթղթերով: Նույն նախագծով 2000թ. հաբնակչության հաշվարկային թիվը նախատեսված էր 60 հազար մարդ, իսկ բնակչության ֆոնդը՝ 720 հազար մ2:

Պետք է նշել, որ 1970-ական թվականներից Արմավիր (այն ժամանակ՝ Հոկտեմբերյան) քաղաքը իրենից ներկայացնում էր համանուն շրջանի վարչական կենտրոն:

Բնակչության զբաղվածության հիմնական ոլորտներն են եղել գյուղատնտեսությունն ու գյուղատնտեսական արտադրությունները: Քաղաքում գործող արտադրական ձեռնարկությունների կազմում, հինգը, զբաղվելով գյուղատնտեսական մթերքի մշակմամբ, ապահովում էին համախառն արտադրանքի ծավալի 57%: Քաղաքի արդյունաբերական ոլորտը ներակայացնում էին հաստոցաշինական գործարանը, «Հայկոպի» գինու կոմբինատը, գարեջրի, պահածոների, հացի, կոնյակի և կաթի գործարանները: Քաղաքում գործում էին կույրերի միավորման ուսումնարարական կոմբինատը, տպարանը, կենցաղային սպասարկման կոմբինատը, «Հայգյուղտեխնիկայի» շրջանային միավորումը, մանածափաթեթավորման արտադրամասը և որմնանյութերի տրեստը: Ընթանում էր պահածոների համար ապակե տարայի, գազի սարքավորումների, ֆուրնիտուրի և կահույքի գործարանների շինարարությունը:

Քաղաքի շինարարական ոլորտը ներկայացնում էին յոթ կազմակերպություններ: Երեք ձեռնարկություններ ապահովում էին նյութերի մթերման և պահեստավորման ոլորտը:

Զբաղեցնելով բարենպաստ դիրք քաղաքի տրանսպորտային ոլորտում՝ գործում էին մեկական երկաթուղային և ավտոտրանսպորտային ձեռնարկություններ:

Երրորդ կարգին պատկանող Հոկտեմբերյանի երկաթուղային կայարանը, ունենալով վեց հիմնական և երեք օժանդակ ուղիներ, 1971թ. իրականացրեց 249.4 հազ.տ բեռնափոխադրում: Տարեկան ուղևորների հոսքը կազմեց 75.6 հազ. մարդ:

Ավտոտրանսպորտային ձեռնարկությունը շահագործում էր 176 ավտոմեքենա, որից 113 բեռնատար, 43 ավտոբուսներ և 20 մարդատար: Տարեկան ընդհանուր բեռնափոխադրման ծավալը կազմում էր 6686 հազ. տոննա/կիլոմետր, իսկ ուղևորափոխադրումը՝ 320 հազ. մարդ: Ոլորտում զբաղված աշխատողների թիվը կազմում էր 922 մարդ:

Քաղաքի վարչական, մշակութային և կենցաղային ոլորտներում զբաղված էին շուրջ 350 մարդ: Գործում էին 19 մսուր-մանկապարտեզ, 7 միջնակարգ և 1 յոթնամյա (գիշերօթիկ) դպրոց և 3 ուսումնարան: Մշակութա-լուսավորչական ցանցը կազմված էր մշակույթի տան, կինոթատրոնի, 3 գրադարանի և երաժշտական դպրոցի հաստատություններից: Գործում էր մարզադպրոց:

Առողջապահական ոլորտի կազմակերպությունները սպասարկում էին ամբողջ վարչական շրջանի բնակչությանը: Քաղաքում գործում էր մեկ՝ 250 մահճակալով հիվանդանոց ու 30 մահճակալով ինֆեկցիոն հիվանդանոց, 32 մահճակալով քիթ-ականջ-կոկորդի բաժանմունք և 38 մահճակալով մանկական ինֆեկցիոն բաժին, շտապ բուժօգնության և սանիտարահամաճարակային կայանները, պոլիկլինիկան և դեղատունը: Բուժմիավորման ծառայողների անձնակազմը հասնում էր 500 մարդու:

Հասարակական սննդի օբյեկտներից քաղաքում գործում էին մեկ ռեստորան, երեք ճաշարան, մի շարք բուֆետներ, առևտրի ցանցում՝ 1 հանրախանութ, 20 մթերային, 17 արդյունաբերական, 7 խառը ապրանքների խանութներ, 20-ից ավելի կրպակներ:

Քաղաքում կար 56 տեղանոց 1 հյուրանոց, 100 տեղանոց բաղնիք և 500 կգ (հերթափոխում չոր սպիտակեղեն) հզորությամբ լվացատուն:

Պետական բնակելի ֆոնդը կազմում էր 36.5 հազ. մ<sup>2</sup>, ուր ապրում էր 4838 բնակիչ: Մեկ բնակչի բնակելի մակերեսով միջին ապահովվածությունը կազմում էր 7.55 մ<sup>2</sup>/մարդ: Անհատական բնակարանային ֆոնդի կազմում ընդգրկված էր 117.65 հազ. մ<sup>2</sup> մակերես, որտեղ ապրում էր շուրջ 21.16 հազ. մարդ: Անհատական բնակարանային ֆոնդում մեկ բնակչի միջին ապահովվածությունը կազմում էր 5.56 մ<sup>2</sup>/մարդ:

Ներկայացված վերջին ցուցանիշները վկայում են նոր բնակելի շինարարության իրականացման խիստ պահանջի մասին:



Նկ. 1 Քաղաք Արմավիր, կենտրոնական հրապարակ, Մշակույթի տուն, 1955 թ., ճարտ.՝ Ռազմիկ Ալավերդյան

Այս տարիներին քաղաքն ուներ ձևավորված ճանապարհային ցանց, որի միջոցով իրականացվում էր ինչպես ներքաղաքային, այնպես էլ արտաքին հաղորդակցությունը:

Քաղաքի զարգացման ընթացքում առաջանում էին մի շարք նոր խնդիրներ: Բնակչության աճի տեմպին չէր համապատասխանում բնակելի ֆոնդի, նախադպրոցական և կրթական համակարգի, ինչպես նաև սպասարկման ոլորտի զարգացումը:

Քաղաքի տարածքը 1973թ. կազմում էր 629 հա, որից բնակելի մասը 522.0 հա: Արդյունաբերության տարածքները զբաղեցնում էին 107.0 հա: Քաղաքն ակնհայտորեն սպառել էր իր տարածքային պաշարները:

Արդեն 1972թ. ձեռնարկվեց նոր (չորրորդ) գլխավոր հատակագծի մշակումը, որով նախատեսվում էր քաղաքի տարածքային զարգացման համար հյուսիսային և հյուսիս-արևելյան տարածքների ընդգրկում: Սակայն այս առաջարկությունը չընդունվեց, քանի որ, ինչպես վերը նշված էր այստեղով անցնում էին էլեկտրահաղորդման բարձր լարման օդային գծերը և բարձր ճշման գազատարը: Հաշվի առնելով աշխատավորների դեպուտատների Հոկտեմբերյանի շրջանային սովետի գործադիր կոմիտեյի առ 25 հոկտեմբերի 1973թ. նո. 04-40 տեղեկանքում ներկայացված հիմնավորումը՝ քաղաքի արևմտյան մասում 150.0 հա տարածքի գյուղատնտեսության համար ոչ պիտանի լինելու մասին «Հայպետնախագիծ» ինստիտուտը 1974թ. մշակեց Հոկտեմբերյան քաղաքի նոր գլխավոր հատակագիծը:

«Հայկական ՍՍՀ մինչև 2000թ. զարգացման գլխավոր ուրվագծին» համապատասխան, որը մշակված էր 1967-70 թթ., «Հայպետնախագծի» կողմից Հոկտեմբերյան (Արմավիր) քաղաքին

վերագրված էր Երևանի ազդեցության գոտում գտնվող արդյունաբերա-ագրարային մասնագիտացման, երկրորդ աստիճանի շրջանային նշանակության կենտրոնի դերը:

«Հայպետնախագիծ» ինստիտուտի կողմից 1974թ. նշակված Հոկտեմբերյան քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսվեց բնաչության կրկնակի աճ՝ 29.0 հազարից մինչև 60.0 հազ. մարդ 2000թ.: Քաղաքի տարածքային զարգացումը պետք է իրականացվեր արևմտյան կողմում գտնվող գյուղատնտեսության համար անօգտագործելի հողերի հաշվին:

Արդյունաբերական ոլորտի զարգացումը նախատեսվում էր մեքենաշինության և շինարտադրության ճյուղերի մասնաբաժինը ավելացնելու շնորհիվ:

Բնակելի կառուցապատման տարածքների աճը նախատեսվում էր 600 հա-ից՝ հասցնել մինչև 945 հա, որոնցից 221 հա գյուղատնտեսության մեջ անօգտագործելի հողերի և 124.0 հա գոյություն ունեցող անտառային զանգվածի տարածքի հաշվին:

Քաղաքի գործառական գոտևորումը բխում էր գոյություն ունեցող իրավիճակից: Բնակելի կառուցապատման տեղաբաշխումը սանիտարական տեսակետից պետք է բավարարեր բարենպաստ լինելու պայմանը: Արդյունաբերական և կոմունալ-պահեստային ձեռնարկությունները, ամփոփելով երկաթուղուն հարակից հարավային և հարավ-արևելյան մասը, պետք է կազմեին Հոկտեմբերյանի արդիանգույցը: Այսպիսով, քաղաքի ամբողջ տարածքը 836 հա-ից աճում էր մինչև 1248 հա:

Քաղաքի հասարակական կենտրոնը պետք է շարունակեր ձևավորվել բնակելի տարածքի կենտրոնական մասում: Սակայն նոր իրացվող տարածքների մասում նախատեսվեց ևս մեկ հասարակական կենտրոնի ստեղծում: Հասարակական կենտրոնների, ուսումնական համալիրների և անտառայգու համար նախատեսվեց 350 հա տարածք:

Բնակարանային ֆոնդի զարգացումը նախատեսվեց լայնածավալ պետական բազմաբնակարան շենքերի կառուցման միջոցով: Այն գոյություն ունեցող 160.2 հազ. մ<sup>2</sup>-ուց պետք է աճեր 4.5 անգամ՝ 2000թ.-ին՝ կազմելով 720.0 հազ. մ<sup>2</sup>: Բնակելի մակերեսով մեկ մարդու միջին ապահովվածության (6.0 մ<sup>2</sup>/մ) աճը նախատեսվում էր 2000-ին կրկնապատկել՝ հասցնելով մինչև 12.0 մ<sup>2</sup>:

Կենտրոնական մասում գտնվող մանր պահեստային տնտեսությունների և ավտոտնտեսությունների տարածքների իրացման հաշվին նախատեսվում էր կենտրոնական հատվածի մասնակի վերակառուցում:

Ճանապարհային ցանցի զարգացումը ծրագրվում էր արտաքին և ներքին կապերի վերակարգավորման միջոցով: Քաղաքի տարածքով անցնող Երևան-Գյումրի (այն ժամանակ՝ Լենինական) համամիութենական նշանակության ավտոմայրուղին առաջարկվում էր տեղափոխել՝ հյուսիսից շրջանցելով Մեծամոր, Ժդանով (ներկայումս Մայիսյան) և Լուկաշին բնակավայրերը, իսկ դեպի «Սարդարապատ»-ի հուշահամալիրը տանող ճանապարհը փոխարինել նոր՝ հարավային շրջանցող ավտոճանապարհով: Այս միջոցառումները նպատակաուղղված էին քաղաքի տարածքից տարանցիկ ավտոտրանսպորտային հոսքերի հեռացմանը: Արտաքին և ներքին կապերի կարգավորման նպատակով 1974թ. գլխավոր հատակագծով նախատեսվեց՝ Գայի փողոցի հետագիծը, շարունակելով դեպի հյուսիս-արևելք, հասցնել մինչև Երևան-Գյումրի նոր նախատեսվող ավտոմայրուղին՝ այսպիսով ապահովելով Հոկտեմբերյանի կրկնակի կապը հանրապետության արևմտյան և հյուսիսային շրջանների հետ:



Ներքին ճանապարհային ցանցի զարգացման ծրագիրը լրացվեց դեպի նոր իրացվող տարածքները տանող ճանապարհների և դրանց հյուսիսային հատվածների կառուցմամբ (շրջանցելով բնակելի զանգվածները):

Գլխավոր հատակագծի կազմում նախատեսվեց տարածքի ինժեներական նախապատրաստման՝ ուղղաձիգ հատակագծման, մակերևութային ջրերի հեռացման, ինչպես նաև հակասելավային միջոցառումներ: Լուծված էր նաև աճող քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման, ոռոգման ցանցերի զարգացման, նաև էլեկտրամատակարարման, գազամատակարարման և ջերմամատակարարման խնդիրները: Նախատեսվեց և իրականացվեց կեղտաջրերի մաքրման կառույցների շինարարությունը, Մեծամորից 3.5 կմ հարավ գտնվող տարածքում, որոնք պետք է ապահովեին նաև Մեծամոր քաղաքի կեղտաջրերի մաքրումը:

Քաղաքից հյուսիս՝ Թալին տանող ճանապարհից արևելք, նախատեսվեցին տարածքներ գերեզմանոցի, իսկ դրանից հյուսիս՝ աղբավայրի համար՝ պահպանելով սանիտարական նորմերը:

Հայկական ՍՍՀ աշխատավորների, դեպուտատների, Հոկտեմբերյանի քաղաքային սովետի գործադիր կոմիտեն 1974թ. օգոստոսի 30-ի նո.16 արձանագրության 1 կետով ամրագրեց գլխավոր հատակագծի հավանություն տալու որոշումը: Արձանագրվեցին մի շարք «խիստ անհրաժեշտ» առաջարկություններ և լրացումներ, որոնք վերեբերում էին՝ Երևանյան փողոցին հարակից տարածքից ավտոտնտեսությունների տեղափոխման, քաղաքի մուտքի կարգավորման, ջրամատակարարման համակարգում նո.1 պոմպակայանի հզորացման, քաղաքի հետագա տարածքային զարգացման համար հյուսիս-արևելյան մասում տարածքների նախանշման և այլ աշխատանքներին: Ելնելով շրջանի բնակլիմայական պայմաններից՝ առաջարկվեց քաղաքի հարավային մասում նախատեսել արհեստական լճակի ստեղծում:

Արևմտյան տարածքների քաղաքաշինական իրացման համար, նույն 1974-ին, «Հայնախագիծ» ինստիտուտը մշակեց մանրամասն հատակագծման նախագիծ: ՄՀՆ նախատեսվեց լայնածավալ բնակարանային շինարարություն: Կառուցապատումը նախատեսվում էր իրականացնել 4-5 հարկանի բազմաբնակարան բնակելի շենքերով՝ գործող տիպային նախագծերով:

70-ական թվականների կեսից մինչև 90-ականների սկիզբը, համապատասխան 1974թ. գլխավոր հատակագծին և ՄՀՆ-ին, արևմտյան մասում՝ 130 հա տարածքում, սկսվեց քաղաքի խոշոր բնակելի շրջանի շինարարությունը: Այն լայնածավալ էր և ընթանում էր արագ տեմպերով: Տարածքում կառուցվեցին 48-ից ավելի 5 հարկանի բազմաբնակարան բնակելի շենքեր: Շահագործման հանձնվեց շուրջ 2000 բնակարան:

Կառուցվեցին հանրակրթական դպրոցներ, մանկապարտեզներ, հիվանդանոց և ուսումնարաններ: Իրականացվեց ճանապարհային ցանցի նշահարումն ու մասնակի շինարարությունը, ջրամատակարարման, ջրահեռացման, ջեռուցման և էլեկտրամատակարարման ցանցերի ու դրանց կառույցների ստեղծումը: 90-ական թվականների սկզբից դադարեց պետական շինարարական աշխատանքները: Շենքերի որոշ մասը մնաց անավարտ: Տարածքի տարբեր մասերում բազմաթիվ հողահատվածներ տարիներ շարունակ անօգտագործելի են մնացել մինչ օրս:



Նկ. 2 Քաղաք Արմավիր. 2006 թ. Արևմտյան բնակելի զանգված. կառուցապատման հատված

Հետագայում կատարվեցին որոշ հողահատկացումներ տնամերձ անհատական կառուցապատման համար: Արևմտյան բնակելի շրջանի 1974թ. ՄՀՆ տեխնիկա-տնտեսական ցուցանիշները ներկայացված են ստորև բերված 2-1 աղյուսակում:

Աղյուսակ 2-1

հհ	Տարածքներ	Հա	%
1	Բնակելի զանգվածի տարածքը, այդ թվում՝	130.0	100
2	բնակելի բազմաբնակարան կառուցապատման	74.9	57.7
3	դպրոցների և մանկապարտեզների	13.3	10.25
4	գիշերօթիկի	2.1	1.51
5	ուսումնարանի	3.0	2.3
6	սպասարկման օբյեկտների	16.0	12.3
7	ընդհանուր օգտագործման կանաչապատ	7.0	5.4
8	մարզական հրապարակների և կառույցների	2.5	1.92
9	փողոցների և հրապարակների	7.2	5.54
10	անհատական օգտագործման ավտոհանգրվանների	4.0	3.08
11	Բնակելի ֆոնդի խտությունը	2600 մ <sup>2</sup> /հա	
12	Բնակչությունը	33.0 հազ. մարդ	
13	Բնակ. շենքերի տիպերը	I A - 450	
14	Հարկայնությունը	5 հարկ	

Արևմտյան բնակելի շրջանը բաժանված էր երկու թաղամասերի՝ հյուսիսային և հարավային: 1975-1991թթ. իրականացվեց հարավային թաղամասի մասնակի շինարարությունը:

### **3. Արմավիրի քաղաքային համայնքի (քնակավայրի) տարածքի համալիր վերլուծություն և գնահատում**

#### **3.1 Բնական պայմաններ**

##### **3.1.1 Կլիմայական բնութագիր**

Արարատյան հարթավայրը հանդիսանում է հանրապետության ամենամեծ կլիմայական գոտին: Այն իրենից ներկայացնում է Հայկական Լեռնաշխարհի առավել ցածր և պարփակված մասերից մեկը: Գոտու, ինչպես նաև քաղաքի, կլիմային բնորոշ առանձնահատկությունը՝ խիստ մայրցամաքային լինելն է, ջերմաստիճանի և օդի խոնավության տարեկան և օրեկան մեծ տատանումներով:

**Օդի միջին ջերմաստիճանը, °C, ըստ ամիսների**

Արմավիր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
	-5.1	-2.5	4.5	11.9	17.3	21.5	25.7	25.2	20.2	13.1	5.5	-1.6	11.3

Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -33°C, բացարձակ առավելագույնը՝ +41°C, միջին առավելագույն ջերմաստիճանը՝ +18°C:

Քաղաքի տարածքը գտնվում է Անդրկովկասի առավել չոր, երաշտային շրջաններից մեկում: Տարվա ընթացքում տեղումների գումարային միջինը կազմում է 271մմ, օրական առավելագույն քանակը 38 մմ:

**Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %**

Արմավիր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
	77	69	64	56	56	49	44	46	50	62	74	78

Միջին հարաբերական խոնավությունը ժամը 13-ի դրությամբ կազմում է՝ ամենացուրտ ամսին՝ 66%, ամենաշոգ ամսին՝ 30%:

Արարատյան հարթավայրի և շրջակա լեռնաշղթաների միջև ջերմային կոնտրաստները առաջացնում են լեռնա-հարթավայրային ուժեղ քամիներ, հատկապես ամռանը, իսկ ձմռանը հարթավայրի սահմաններում դիտվում է թույլ քամի առանց հողմի: Առանձին դեպքերում քամու արագությունը հասնում է 15-20մ/վ:

**Քամու միջին արագությունը ըստ ամիսների, մ/վ**

Արմավիր	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
	0.7	1.2	1.4	1.6	1.5	1.4	1.7	1.4	1.2	0.9	0.7	0.5	1.2

Արմավիրում ձմեռը ցուրտ է, չոր, քիչ ձյունոտ: Ձնեծածկով օրերի միջին թիվը 45, ձմեռվա ընթացքում ծածկույթի միջին բարձրությունը 10սմ:

Գարունը տևական չէ, տաք է, հիմնականում խոնավ և սկզբում առանձնանում է փոփոխականությամբ: Գարնանային սառցակալումները, միջին տվյալներով, կրճատվում են ապրիլի սկզբի 2-րդ տասնօրյակին:

Ամառը տևական է, շոգ, չոր, պարզ եղանակի գերակշռմամբ: Ամառային ամիսների միջին ջերմաստիճանը 24.2 °C, առավելագույնը՝ +41 °C:

Ձգալի են նաև օրական տատանումները: Ցերեկային ժամերին հարաբերական խոնավությունը իջնում է մինչև 30% : Աշունը չոր է, տևական և փափուկ, արևային, տաք և չոր եղանակի գերակշռմամբ:

### **3.1.2 Կենսաբազմազանություն, բուսական և կենդանական աշխարհ**

#### **3.1.2.1 Բուսական աշխարհ**

Բուսական աշխարհը ներկայացված է Երևանյան ֆլորիստական շրջանի, ավազա-կավային մայր ապարների վրա բաց և մուգ դարչնային հողերի վրա զարգացած չոր տափաստանային լանդշաֆտային գոտուն բնորոշ բուսականության տեսակներով:

Այստեղ, համաձայն Ա. Մաղաքյանի հետազոտությունների, գրանցված է մոտ 130 բուսատեսակ, որոնցից որպես դոմինանտ կարելի է նշել հովվափողազգիներից (ALISMATACEAE)՝ հովվափող լանցետային (ALISMA LANCEOLATUM), սովորական նետախոտը (SAGITARIA SAGITTIFOLIA L.), եռատերև նետախոտը (SAGITARIA TRIFOLIA L.), հովանոցազգիներից՝ ակտոնոլեմ խոշորաբաժակը (ACTINOLEMA MACROLEMA), աննշմարակող անհարթապտուղը (APHANOPLEURA TRACHISPERMA), երնջակ Վանատուրի (ERINGIUM VANATURII), աստղածաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (AMBERBOA MOSCHATA), խոզանափուշ բարակը (CAUCINIA TENELLA), կանգար տուրնեֆորի (GUNDELLA TURNEFORTII), կաթնուկ Թախտաջյանի (LACTUCA TAKHTADZHIANII), խաչածաղկավորներից՝ ISATIS ORNITORHYNCHUS (լրջուն թռչնակտուց), ցախակեռասազգիներից՝ SAMBUCUS TIGRANII (կտտենի, թանթրվենի Տիգրանի), մեխակազգիներից՝ ACANTHOPHYLLUM PUNGENS (փշատերևուկ ծակող), ALLOCHRUSA BUNGEI (ալոխրուլա բունգեի), DIANTHUS LIBANOTIS (մեխակ Լիբանանի), թելուկազգիներից՝ BIENERTIA CYCLOPTERA (բիեներցիա շուրջաթև), SALSOLA TAMAMSCHJANAE (օշան Թամամջյանի), SPINACIA TETRONDA (սպանախ քառաեզ), լոբազգիներից՝ ASTRAGALUS PARADOXUS (գազ տարօրինակ), TRIGONELLA CAPITATA (հացհամեն գլխիկավոր), ֆրանկենազգիներից՝ FRANKENIA PULVERULENTA (ֆրանկենիա փոշապատ), բորակաթուփազգիներից՝ NITRARIA SCHOBERI (բորակաթուփ շոբերի), հացազգիներից՝ AEGILOPS CRASSA (այծակն հաստ), TRITICUM ARARAICUM (ցորեն Արարատյան), կարմրանազգիներից՝ TAMARIX (կարմրան), TANARIX OCTANDRA (կարմրան ութառեզանի), զուգատերևազգիներից՝ TETRADICLIS TANELLA (տետրադիկլիս բարալիկ) և այլն:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, անտառահատում, ոռոգում և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային գոտու տեսակների ինչպես կազմը, այնպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը: Մասնագետների կարծիքով այսօր պահպանության կարիք ունի ֆլորայի տեսակների կեսը:

Ստորև՝ 3.1.2.1-1 աղյուսակում ամփոփված են նկարագրվող տարածքում պահպանության կարիք ունեցող տեսակները: Աղյուսակը կազմված է ՀԽՍՀ Կարմիր Գրքի հիման վրա, որում գրանցված բուսատեսակների քանակը կազմում է 387 տեսակ, ինչը տեսակների ընդհանուր քանակի՝ 3500 նկատմամբ կազմում է 11%):

Աղյուսակում բերված է նաև յուրաքանչյուր տեսակի պահպանության կարգավիճակը ըստ Կարմիր Գրքում կատարված դասակարգման (1- անհետացման վտանգի տակ գտնվող, 2 – հազվագյուտ, 3-կրճատվող):

### Պահպանության կարիք ունեցող ֆլորայի տեսակները

Աղյուսակ 3.1.2.1-1

Հ/հ	Բուսատե սակնե ըի անվանումը		Պահպանության կարգավիճակ
	Լատիներեն	Հայերեն	
1	Acorus calamus L.	Խնկեղեգ ճահճային	1
2	Allium akaka Gmel	Սոխ ակակա	2
3	Amberboa moschata (h)	Վարդատերեփուկ մուշկային	3
4	Bienertia cicloptera Bunge	Բիեներցիա շուրջաթև	1
5	Cicer anatolicum Alef	Սիսեռ անատոլիական	1
6	Connvolvulus commutatus Boiss	Պատատուկ փոփոխական	2
7	Diospyros lotus	Խուրմա կովկասյան	1
8	Ferula persica Willd	Նարդես պարսկական	2
9	Hedysarum micripterum Bonge	Կուրկուրան մանրաթև	2
10	Inula aucherana DC	Կղմուխ Օշեի	1
11	Lactuca Takhtadzani Sosn	Կաթնուկ Թախտաջյանի	2
12	Linum seljukorum Davis	Կտավատ սելջուկյան	1
13	Merendera sobolifera Fischet C.A. Mey	Խլոպուզ ընդյուղակիր	1
14	Orchis laxiflora Lam	Խոլորձ նոսրածաղիկ	1
15	Astragalus paradoxus	Գազ տարօրինակ	2

### 3.1.2.2 Կենդանական աշխարհ

Արմավիր քաղաքի և դրա շրջակայքի համար դիտարկվում է ն միայն ողնաշարավոր կենդանիները, քանի որ Գլխավոր հատակագծով նախատեսված աշխատանքները էական ոչ մի ազդեցություն չեն ունենա անողնաշարավոր կենդանիների վրա:

Նկարագրվող տարածքում տարածված է ն ցածր բարձրության (մինչև 1000մ ծովի մակերևույթից բարձր) հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Սակայն այստեղ հանդիպում է ն նաև արտագնալ բնակավայրերին (քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ: Համաձայն Ս. Դալի հրապարակված տվյալների, այս լանդշաֆտային զոնայում տարածված է ն 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ (որոնցից 82-ը՝ հանդիպում է ն նաև արտագնալ բնակատեղիներում), այդ թվում՝ 28 (20) կաթնասուն, 67 (41)՝ թռչուն, 15 (8)՝ սողուն և 3 (3)՝ երկկենցաղ: Կաթնասունները առավել և կենդանիները և կրծողները,

որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները նաև ընկալաբար են ընկալում տարածքներին բնորոշ տեղական բույսեր: Սողունները և թռչունները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սև զոնաներին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանող տեղական տեսակներ:

Տվյալ տարածքի դոմինանտ և բնորոշ տեղական թռչուններն են՝ Հայաստանում ամենուրեք տարածված *Crocodyrus* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես), *Cricetus auratus* Nat. (գետնամուկ), *Microtus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L. (կաքավ), *Grus grus* L. (կռունկ) և այլն:

Տվյալ տարածքին բնորոշ են՝

Ողնաշարավոր կենդանիներից՝ անատամ, եղեգնակատու, կրնջան բադ, ճահճակուղբ, լճագորտ, ժայռային մողես, սովորական լորտու, տնային ճնճուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, մոխրագույն առնետ, գայլ, աքիս:

Անողնաշարավոր կենդանիներից՝ ծովախեցգետին, մրջյուն, մեղու, ճրիկ, մորեխ, կաղամբաթիթեռ, ճանձեր, մոծակներ:

Արմավիր քաղաքային համայնքին բնորոշ էնդեմիկ կենդանիներից է՝ Հայկական որոր (*Larus armeniacus* But.):

Մեծամոր քաղաքի մոտակայքում հանդիպում է Արարատյան որդան կարմիր (*Porphyrophora hamnii* Brandt):

Տարածքում հանդիպում են նաև որսի կենդանիներ՝ մշկամուկ, շնագայլ, խեցգետին (վայրի):

Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վեղացում, ոռոգում, ավտոճանապարհների և այլ գծային կառուցվածքների կառուցում, օգտակար հանածոների արդյունահանում և վեղացում, որսագողություն և այլն) կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել: Կենդանական աշխարհի պահպանության նպատակով դրանց զգալի մասը վեղացված է հատուկ պահպանության տակ և գրանցված է Հայաստանի Հանրապետության, նախկին ԽՍՀՄ և Բնության Պահպանության Միջազգային Միության (ԲՊՄՄ) Կարմիր Գրքերում: Ստորև, աղյուսակում բերված են Կարմիր Գրքերում գրանցված կենդանիների տեղական ըստ պահպանության կարգավիճակի (1- անհետացած վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, 2-անհետացող, կրճատվող):

#### Պահպանության կարիք ունեցող ֆաունայի տեսակները

Աղյուսակ 3.1.2.2 -1

Հ/հ	Կենդանիների անվանումը		Գրանցման Կարմիր գրքի անվանում		
	Լատինական անուն	Հայերեն անուն	ՀՀ	ԽՍՀՄ	ԲՊՄՄ
1	<i>Erinaceus auratus</i> Gmelin	Լայնականջ ոզնի	1	-	-
2	<i>Rhinolophus euryales</i>	Հարավային պայտաքիթ	1	1	-
3	<i>Rhinolophus Mehelyi</i>	Մեծ հեղինիկ պայտաքիթ	2	-	-
4	<i>Myotis nattereri</i> Kuhl.	Նատերի թռչուն արաքսյան գիշերային չղջիկ	1	-	-
5	<i>Miniopterus schreibersi</i> Kuhl.	Սովորական և ընկալաբար չղջիկ	1	1	-

6	Vormela peregusna peregusna Guld.	Հարավուսական խայտաքիս	1	1	-
7	Pelecanus onocrotalus Linneaus	Վարդագուն հավալուն	1	-	-
8	Phalacrocorax pygmaeus Linneaus	Փոքր ձկնկուլ	2	-	-
9	Egretta alba Linneaus	Մեծ սպիտակ տառեխ	1	-	-
10	Plagadis falcinellus Linneaus	Քաջահավ	2	-	-
11	Anser anser Linneaus	Մոխրագույն սագ	2	-	-
12	Circaetus gollicus gollicus Gmelin	Եվրոպական օձակեր	1	1	-
13	Falco vespertinus vesoertinus	Սովորական մանրաքաղե	1	1	-
14	Haematopus ostralegus longipes Buturlin	Կտցար-կաչաղակ	2	-	-
15	Aquila heliaca sovigni	Մոկոնրակ անբլրային արծիվ	1	1	-

### 3.1.3 Օգտակար հանածոներ

Արմավիրի քաղաքային համայնքի վարչական տարածքի սանմաններում որևէ օգտակար հանածոների հանքեր չկան: Տարածքում չի բացահայտվել նաև որևէ հանածոների երևակումներ: Տես ՀՀ բնապահպանության նախարարության 03.02.2006 թ. N 6-35/16 գրությունը:

### 3.1.4 Արմավիր քաղաքի տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանները

Արմավիր քաղաքի տարածքի սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզի կազմման համար, համաձայն տեխնիկական առաջադրանքի, կատարվել են դաշտային երկրաֆիզիկական հետազոտություններ:

Դաշտային աշխատանքներում ընդգրկվել են երկրաֆիզիկական հետազոտությունների համալիր՝ սեյսմիկ զոնդավորման եղանակով գործիքային գրանցումներ, բարձր հաճախականության միկրոսեյսմերի գրանցումներ: Գրանցված կետերի տեղադիրքը ներկայացված է գրաֆիկական հավելված 1-ում:

Արմավիր քաղաքի տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանները՝ համաձայն տեխնիկական առաջադրանքի, ներկայացված են պատվիրատուի կողմից տրամադրված արխիվային նյութերի հիման վրա:

#### 3.1.4.1 Ֆիզիկա - աշխարհագրական բնութագիրը

Արմավիր քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևմտյան մասում: Գեոմորֆոլոգիական տեսակետից դաշտավայրի այդ մասը իրենից ներկայացնում է նախալեռնա-թեքվածքային, թույլ ալիքաձև հարթավայր:

Քաղաքի տարածքի ռելիեֆը հարթ է, աննշան, հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք բավական հավասարաչափ թեքվածությամբ: Թույլ թեքությամբ բլրաթմբերը առանձնացնում են գոյություն ունեցող բնակելի շրջանը արդյունաբերականից:

Հյուսիսում՝ քաղաքից դեպի հյուս-արևելք, տարածքը իրենից ներկայացնում է հրաբխային սարահարթ, հատված ծորակներով, ոչ խորը կիրճերով, որոնք հանդիսանում են մթնոլորտային տեղումների կոլլեկտորներ: Ծայրամասային արևելյան և հյուսիս-արևմտյան մասերում տարածքը ընդունում է բլրակային բնույթ: Շրջանի գլխավոր ջրային երակը հանդիսանում է Սելավ-Մաստարա գետը, որն ունի սեզոնային բնույթ և բացառապես սնվում է հալոցքային և անձրևային ջրերով: Գետը գործում է միայն ինտենսիվ ձնհալերի և վարար տեղումների ժամանակ: Այն սկիզբ է առնում Արագած լեռան հարավ-արևմտյան լանջից, դուրս է գալիս Արարատյան հարթավայր և թափվում է Սև-Ջուր գետը: Սելավ-Մաստարա գետն են թափվում բազմաթիվ՝ Բազմաբերդի, Թալիշ-Շամիրամի և այլ վտակներ: Նրանք նույնպես ցուցաբերում են խիստ սեզոնային բնույթ:

Մեծ Հոկտեմբերյան ջրանցքից 3կմ դեպի հյուսիս ստեղծվել է հողապատնեշ, որը Թալիշի սելավի նյութերը ուղղում է դեպի հարևան ծորակ: Վերջինս անցնում է նկարագրվող տարածքի արևելյան կողմով, հատում է Հոկտեմբերյան ջրանցքը և թափվում է Մաստարա գետը տարածքի սահմաններից դուրս: Սելավ-Մաստարա ավազանում սելավային վարարումների կրկնելիությունը տարին մեկ, կամ երկու տարին մեկ անգամ է:

#### **3.1.4.2 Երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը**

Արմավիրի շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենային և պլեյստոցենային բազալտները, տուֆերը և տուֆաբրեկչիաները, որոնք ծածուկների ու հոսքերի տեսքով տեղադրված են երրորդական հասակի նստվածքային հաստաշերտերի վրա և ծածկված են ավելի երիտասարդ ալյուվիալ-պրոլյուվիալ-դելյուվիալային նստվածքներով:

Քաղաքի տարածքում տարածված են չորրորդական հասակի ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքները, մինչև 40մ հզորությամբ, որոնց տակ բազալտային լավաները և տուֆաավազներն են:

Ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքների հաստաշերտում առանձնանում են հիմնականում հետկյալ տարատեսակները. կավավազներ, ավազակավեր, ավազներ, կոպձա-մանրախձային նստվածքներ:

Վերը նշված բոլոր տարատեսակները բնութագրվում են բարդ միահյուսվածքներով, շերտադարսմամբ, կամ էլ աստիճանաբար անցումով մի ֆացիալ տարատեսակից՝ մյուսին: Նրանք չունեն տարածական տեղադրման հաստատունություն և շերտերի հերթականության օրինաչափություն:

Հանդիպում են փոշենման, խտացված և սպիտակահողերի տիպի կավավազներ: Նրանք քիչ թե շատ պարունակում են մանրախիճ, կոպիճ և տարահատիկ ավազ: Սպիտակահողային կավավազները սուֆոզիոն անկայուն են: Խտության տեսակետից կավավազները փոփոխական են: Հանդիպում են պնդացած ենթաշերտեր, իսկ որոշ շերտեր գտնվում են փխրուն հոսուն վիճակում:

Ավազակավերի մեջ, կախված հատիկաչափական կազմից, առանձնանում են ծանր, միջին և թեթև տարատեսակները:

Բոլոր տարատեսակները հաճախ պարունակում են մանրախճի և կոպիճի միացություններ: Հաճախ հանդիպում են փոշենման ավազակավեր, որոնք անցնում են կավավազների, պարունակում են ավազների ենթաշերտեր և ոսպնյակներ: Ծանր ավազների շարքում հանդիպում են թեթև մոխրանման ավազներ: Որոշ ենթաշերտեր ներկայացված են մաքուր, լավ որակի ավազներով, իսկ որոշները վատ որակի են, ունեն



փոշեման տարրերի խառնուրդներ կան էլ մանրախճի և կոպիճի միացություններ, որոնց պարունակությունը տատանվում է մեծ սահմաններում:

Մանրախճա-կոպիճային նստվածքները խիստ տարբերվում են տարակազմությամբ: Խոշորահատիկ ֆրակցիան ներկայացված է տարբեր մեծության մանրախճով, մանր և միջին կոպիճով:

Հանդիպում է նաև խոշոր կոպիճ: Բեկորները կազմված են բազալտներից, տուֆերից, հազվադեպ խարամներից: Նրանք հիմնականում լավ հղկված են և ունեն կլոր ձև:

Լցանյութը ներկայացված է տարահատիկ ավազներով, կավավազով: Լցանյութի քանակը նույնպես տատանվում է մեծ սահմաններում, սովորաբար գրունտների ընդհանուր ծավալի 20-45%-ի չափով:

Մանրախճա-կոպիճային գոյացությունները պատկանում են խոշորաբեկորային գրունտներին:

Արմատական ապարներից շրջանում տարածված են բազալտները և տուֆերը: Բազալտները բնութագրվում են ինտենսիվ ճաքճքվածությամբ և հողմնահարմամբ: Տուֆերը և տուֆավազները քիչ խախտված են: Լավաների որոշ մասը մեծաբեկորային է:

#### **3.1.4.3 Հիդրոերկրաբանական պայմանները**

Արմավիրի շրջանը հիդրոերկրաբանական տեսակետից գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում: Ստորերկրյա ջրերը պատկանում են լճա-գետային գոյացություններին և ճաքճքված անդեզիտա-բազալտներին: Ստորերկրյա ջրերի սնուցումը իրականանում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջլավային ջրերի հոսքի միջոցով: Ճնշումնային հորիզոնը տեղադրված է 150-200մ հասնող հավասար խորություններում, ունի բացասական ճնշում (հոսք): Քաղաքի և շրջանի տարածքում հանդիպում են նաև գրունտային ջրեր: Նրանք պատկանում են ալյուվիալ-դելյուվիալ, պրոլյուվիալ նստվածքներին և սնվում են մակերևութային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Նրանք քաղաքի տարածքում հիմնականում հանդիպում են 6-7մ խորը, իսկ տեղ-տեղ մինչև 5-5.5մ (հավելված 4):

Գրունտային ջրերը առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ-մայիս ամիսներին, իսկ նվազագույնի՝ օգոստոս-նոյեմբեր ամիսներին:

Ջրի քիմիական անալիզի

Աղյուսակ 3.1.4.3-1

Հ/Հ	Լաբոր համարը	Նմուշի վերցման տեղը,	Փորվածքի խորությունը, մ	Նմուշի վերցման ամսաթիվը	Անալիզի կատարման ամսաթիվը	Չոր մնացորդը, մգ/լ	pH	ԱՆԻՈՆՆԵՐ											
								Ալկալիականությունը						Cl <sup>-</sup>			SO <sub>4</sub> <sup>2-</sup>		
								CO <sub>3</sub> <sup>2-</sup>			HCO <sub>3</sub> <sup>-</sup>								
								մգ/էկվ	մգ/լ	% էկվ	մգ/էկվ	մգ/լ	% էկվ	մգ/էկվ	մգ/լ	% էկվ	մգ-էկվ	մգ/լ	% էկվ
1	83	հոր. 27	4.5	5.11.81	— "" —	316	7.9 8	0.14	11	3.1	2.78	170	61.0	0.80	28	17.5	0.84	40	18.4
2	84	հոր. 69	8.5	— "" —	— "" —	364	7.5 3	0.34	10	7.3	2.22	136	47.8	0.96	34	20.7	1.12	54	24.2
3	85	հոր. 64	7.3	— "" —	— "" —	306	8.2 6	0.34	10	6.9	1.94	118	39.3	0.96	34	19.4	1.70	82	34.4
4	86	հոր. 63	7.5	— "" —	— "" —	376	7.8 6	0.34	10	5.9	2.00	122	40.3	0.88	32	17.7	1.74	84	35.1
5	10 3	հոր. 65	4.8	23.12.83	— "" —	918	7.9 2	չկա	չկա	չկա	6.00	366	48.4	2.98	106	24.0	3.42	164	27.6
6	10 4	հոր. 67	4.5	— "" —	— "" —	894	8.2 3	չկա	չկա	չկա	5.12	312	35.0	3.94	140	26.9	5.58	268	38.1
7	10 5	հոր. 68	5.2	— "" —	— "" —	1074	8.1 2	չկա	չկա	չկա	5.94	362	34.5	3.04	108	17.7	8.24	396	47.8

Ջրի քիմիական անալիզի

Աղյուսակ 3.1.4.3-2

ԿԱՏԻՈՆՆԵՐ									Կոշտությունը		
Ca <sup>2+</sup>			Mg <sup>2+</sup>			Na <sup>+</sup> +K <sup>+</sup>			մգ/էկվ		
մգ/էկվ	մգ/լ	% էկվ	մգ-էկվ	մգ/լ	% էկվ	մգ/էկվ	մգ/լ	% էկվ	Ընդհանուր	Առանձնացվ.	Հատուտորեն
1.04	22	22.8	0.32	70	4	3.16	72	69.2	1.36	1.36	
0.56	10	12.1	0.16	34	2	3.92	90	84.5	0.12	0.12	
0.96	20	19.4	0.44	89	5	3.54	80	71.7	1.40	1.40	
0.76	16	15.3	0.28	56	3	3.92	90	79.1	1.04	1.04	
6.76	136	54.5	2.04	24	16.5	3.60	82	29.0	8.80	6.00	
6.64	132	45.4	2.44	30	16.7	5.56	128	37.9	9.08	5.12	
6.88	138	40.0	2.04	24	11.8	8.30	190	48.2	8.92	5.94	

#### **3.1.4.4 Ինժեներա-երկրաբանական շրջանացում**

Ուսումնասիրվող տարածքը բաժանված է 2 ինժեներա-երկրաբանական շրջանների, որոնք իրենց հերթին ունեն ենթաշրջաններ: Նրանց բնութագրերը տրվում են ինժեներա-երկրաբանական քարտեզի վրա (հավելված 2): Ստորև բերվում է այդ շրջանների բնութագրերը:

##### **I շրջան**

Տվյալ շրջանի մեջ է մտնում այն տարածքը, որը հատուկ ինժեներային նախապատրաստում չի պահանջում: Դա հիմնականում գոյություն ունեցող քաղաքի տարածքն է ներկայացված այլուվիալ հարթավայրով, չնչին, բավական հավասարաչափ թեքությամբ՝ հյուսիս-արևմուտքից հարավ-արևմուտք:

Ներկայացված է կավավազներով, ավազակավերով, տարահատիկ ավազներով, մանրախճա-կոպճային գրունտներով: Հաստաշերտի հզորությունը 20մ-ից մեծ է: Գրունտային ջրերը հիմնականում հանդիպում են 7մ-ից խորը, տեղ-տեղ (հատկապես հարավ-արևմտյան մասում) 5-ից մինչև 5.5մ:

##### **II շրջան**

Երկրորդ շրջանում ընդգրկված են այն տարածքները, որտեղ պահանջվում է ինժեներային նախապատրաստում: Ըստ լիթոլոգիական հատկանիշների երկրորդ շրջանը բաժանվում է 3 ենթաշրջանների.

II-ա ենթաշրջանը գտնվում է քաղաքի հարավ-արևելյան մասում, ընդգրկում է արդյունաբերական շրջանի մի մասը: Ունի հարթ լանջերով բլրոտ ռելիեֆ: Կազմված է բազալտներից, ծածկված մեծաբեկորա-փլվածքային խճային գրունտներով, կավավազա-սպիտակահողային գրունտներով: Տեղ-տեղ մերկանում են արմատական բազալտները: Ծածկույթային գրունտների հզորությունը 0.3-6մ և ավելի է:

Սպիտակահողային կավավազների հզորությունը փոքր է: Արմատական տեղադրման բազալտներն ունեն մեծաբեկորային առանձնացումներ: Մեծաբեկորների միջև գոյություն ունեցող ձեղքերը լցված են սպիտակահողա-խճային նյութով: Գրունտային ջրերը մինչև 7մ խորությունը չեն հանդիպում:

II-բ ենթաշրջանը գտնվում է քաղաքի հարավ-արևելյան մասի եզրամասում: Ենթաշրջանի մակերեսը հիմնականում հարթ է, արևելյան մասում թեթևակի բլրացած:

Տարածքը կազմված է ավազակավերով, սպիտակահողային կավավազներով և խճավազով, պնդացած կավավազով անհամասեռ խճա-բեկորային և կոպճա-մանրախճային գրունտներով: Գերակշռում են խճա-բեկորային գրունտները կավավազային և ավազաքարային լցանյութով ու մեծաբեկորներով: Հզորությունը՝ մինչև 6մ և ավելի:

Կավավազը սպիտակահողային տիպի է հիմնականում թույլ հզորության (1-3մ): Թրջվելու դեպքում սպիտակահողային կավավազները ցուցաբերում են նստվածքային հատկություններ և որպես հիմնային գրունտներ նրանք չեն երաշխավորվում: Գրունտային ջրերը 5մ-ից, տեղ-տեղ 10մ-ից խորն են:

Ինժեներային նախապատրաստումը – մակերևույթային ջրերի հեռացում՝ հաշվի առնելով սպիտակահողային և պնդացած կավավազների հատկությունները, և ուղղահայաց նախագծում:

II-գ ենթաշրջանը ընդգրկում է կառուցապատումից ազատ տարածքը, որը գտնվում է քաղաքից հյուսիս և հյուսիս-արևելք:

Ենթաշրջանը իրենից ներկայացնում է հրաբխային հարթ սարահարթ: Հյուսիս-արևմտյան և հարավային մասերում ընդունում է բլրաձև բնույթ, բլուրները ծածկված են մեծաբեկորային էյլովիալ նստվածքներով:

Տարածքը ծածկված է շինարարական աղբով: Ենթաշրջանը կազմված է տուֆերով, տուֆավազներով, անդեզիտներով, անդեզիտա-դացիտներով, որոնք ծածկված են գլաքարա-կոպձային նստվածքներով, ավազա-կավավազային ու մանրախձային գրունտներով և կավավազային ու ավազակավային լցանյութով: Ծածկույթային գրունտի հզորությունը 0.3-6մ և ավելի է: Տեղ-տեղ ծածկույթային գրունտը բացակայում է և մերկանում են տուֆերը: Գրունտային ջրերը ճմ-ից խորն են:

Ինժեներային նախապատրաստումը – մակերես դուրս եկող ստորգետնյա աղի ջրերի կարգավորում, ուղղահայաց նախագծում:

Թալիշ-Շամիրամի սելավի սելավային ջրերի հեռացման համար Մեծ Հոկտեմբերյան ջրանցքից 3կմ հյուսիս-արևելք (նկարագրվող տարածքի սահմաններում) կառուցված է հողապատնեշ: Վերջինս գտնվում է ինժեներային վատ վիճակում: Հարկավոր է միջոցներ ձեռնարկել նրա ամրությունը ուժեղացնելու համար: Անհրաժեշտ է նաև հենապատերի կառուցում սելավատարի կողերի երկայնքով, որն անցնում է ենթաշրջանի հարավային մասով:

Կցված սխեմատիկ ինժեներա-երկրաբանական քարտեզը և ինժեներա-երկրաբանական նկարագրությունը կազմվել են ֆոնդային նյութերի և արխիվային նյութերի հիման վրա:

Տեղամասերի շահագործման դեպքում անհրաժեշտ է անցկացնել հատուկ ինժեներա-երկրաբանական հետազննումներ:

Կատարված ինժեներա-երկրաբանական հետազոտություններով հայտնաբերվել են ըստ ֆիզիկա-մեխանիկական հատկությունների հետևյալ գրունտների տիպերը՝


1. Շինարարական և արտադրական թափոններ
2. Տարահատիկ ավազներ
3. Կավավազ ամուր
4. Գլաքարա-կոպձային նստվածքներ ավազաքարային, կավավազային լցանյութով
5. Բազալտի և տուֆի մեծաքեկորներ, խիճ և խձավազ, կավավազային լցանյութով
6. Ավազակավ ծանր
7. Հրաբխային տուֆ
8. Հրաբխային խարամ
9. Անդեզիտա-բազալտ

Ըստ ֆոնդային նյութերի, և դաշտային հետազոտությունների արդյունքների, գրունտների լաբորատոր հետազոտությունների տվյալներից ստորև բերվում է որոշ տարածված գրունտների ֆիզիկա-մեխանիկական բնութագրերը.

### 3.1.4.5 Ակտիվ խզվածքները և սեյսմատեկտոնական պայմանները

Արմավիր քաղաքը գտնվում է Արագած ստրատոհրաբխի հարավային լանջին, Արարատյան դաշտավայրի հյուսիսային կողմում (Նկ. 1): Քաղաքից 6կմ հեռավորության վրա անցնում է Սարդարապատի ակտիվ խզվածքը: Սարդարապատի խզվածքը, նրան որպես ակտիվ կառույց չառանձնացնելով, ցույց էր տրված Վ. Ամարյանի (1965) և Վ. Ամարյանի ու Է. Խարազյանի (1990), Է. Խարազյանի (2005) երկրաբանական քարտեզներում: Սարդարապատի խզվածքի, որպես ակտիվ խզվածքի առանձնացումը հիմնավորված էր SM-1995 սեյսմատեկտոնական մոդելով, որը ստեղծվել էր ՀԱԷԿ-ի սեյսմիկ վտանգի գնահատման համար (Կարախանյան և այլք, 1994): «Գեոռիսկ» ընկերության կողմից կատարած նոր հետազոտությունները թույլ տվեցին ստանալ լրացուցիչ տեղեկատվություն այդ ակտիվ խզվածքի վերաբերյալ:

Սարդարապատի խզվածքը մտնում է Սարդարապատ-Նախիջևանի խզվածքների համակարգի մեջ: Խզվածքների համակարգը կազմված է 4 իրար հաջորդող հատվածներից - Կաղզվանի (KF), Սարդարապատի (SF), Փարաքար-Դվինի (PDF) և Նախիջևանի (NF) (Նկ.3): Հատվածները ունեն ձախակողմյան թեքվածություն և ձգվում են Կաղզվան (ԹՀ) քաղաքից Հայաստանի տարածք, որտեղ անցնում են Երևան քաղաքի հարավային և Դվին ու Արտաշատ գյուղերի հյուսիսային մասով: Հարավ-արևմուտքում խզվածքի գոտին անցնում է Ադրբեջան և Իրան: Նախիջևան (Ադրբեջան) քաղաքի շրջանում գոտին փոխում է իր ուղղությունը դեպի հյուսիս-արևմուտք և ձգվում է Մարենդ (Իրան) քաղաքի ուղղությամբ:



Նկ. 3 Տեղանքի սեյսմատեկտոնական քարտեզ

Սարդարապատի խզվածքը ներկայացված է Արարատյան դեպրեսիայի մակերևույթի նկատմամբ 40-70մ ուղղահայաց անալիտիկական բարձրացմամբ: Սարդարապատի բարձրացումը կազմված է բլուրների և թմբերի համակարգից, որոնք շերտավորված են ալյուվիալ-դելյուվիալ նստվածքներով ու բազալտներով: Բարձրացման կենտրոնական առանցքով ձևավորվել են կատարածն դեպրեսիաները, որոնց կողերը ներկայացված են մերձուղղահայաց ճեղքվածքներով: Հավանական է, որ այսպիսի դասավորվածությունը համապատասխանում է «ծաղիկ» կամ «palm tree» տիպի կառուցվածքին, որը ձևավորվել է խոշոր կողաշարժի գոտուց վեր (Նկ.4):



**Նկ. 4 Տեղանքի քարտեզ**

Սարդարապատի խզվածքի վրա կարելի է բարձրացման արագությունը գնահատել 2 բնորոշիչներով: Խզվածքի արևմտյան թևին, բարձրացման գագաթնային մասում, Արարատյան դեպրեսիայի մակարդակից վեր 70մ բարձրության վրա, Արաքս գետի կոպճի շերտի տակ հայտնաբերվել է օբսիդիանային գործիքներ՝ խալխկոլիտային հասակի: Խզվածքի արևելյան թևին հնագույն ոռոգման ջրանցքը բարձրացված է խզվածքով դեպրեսիայի մակերևույթից 25մ, որտեղ էլ այն տեղադրված է եղել:  $C^{14}$  ածխի անալիզը, որը գտնվել էր ջրանցքի նստվածքներում, տալիս է  $3400 \pm 140$  BP (ՃԷՂ) հասակ: Այս տվյալները թույլ են տալիս գնահատել ուղղահայաց տեղաշարժման արագությունը Սարդարապատի խզվածքով  $0.74$ մմ/տարի: Հորիզոնական տեղաշարժի արագությունը գնահատել չհաջողվեց:

Արարատյան դեպրեսիայի կենտրոնական մասում առանձնանում է Արաքսի պալեոհունային համակարգը: Սարդարապատի խզվածքի և Սարդարապատ-Նախիջևանի համակարգի հորիզոնական և ուղղահայաց տեղաշարժերը բերեցին Արաքսի հունի միգրացիային դեպի հարավ 12կմ հեռավորությամբ: Արաքսի պալեոհունի ոլորանները և տեղաշարժերը հստակ ընգծում են Սարդարապատի խզվածքի նախավերնետքային ակտիվությունը (Նկ. 5): Կան պատմական տվյալներ, որոնք թույլ են տալիս թվագրել միգրացիայի ժամանակը: Արաքս գետը հնագույն ժամանակներից հոսել է Դավթիբլուր բլուրի ստորոտով, որի վրա էր գտնվում Հայկական թագավորության առաջին մայրաքաղաք Արմավիրը: Ըստ հայ տարեգիր Մովսես Խորենացու տվյալների BC 200-220 թվականներին Արաքս գետը հեռվացել է քաղաքից, և քաղաքի ու թագավորանիստի համար ջրի բացակայության հետևանքով, մայրաքաղաքը տեղափոխվել է այլ տեղ (Խորենացի, 1990):

Երկրորդ ակտիվացումը կապված էր Փարաքար-Դվինի հատվածի հետ և տեղի է ունեցել AD 300-388թթ.: Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը այն ժամանակ գտնվում էր Արաքս և ջրառատ ու խոշոր Մեծամոր գետերի միախառնման տեղում: Փարաքար-Դվինի հատվածի ակտիվացման հետևանքով Մեծամոր գետը դադարեց գոյություն ունենալ և բաժանվեց Սևջուր, Քասախ, Հրազդան, Ազատ, Վեդի 5 գետերի միջև, որոնք, յուրաքանչյուրը առանձին, ներկայումս թափվում են Արաքս գետը: Արտաշատի շրջակա տեղանքը վերածվեց ճահճի, շրջապատում օդը լցված էր գարշահոտով և հոսքով թագավորը



մայրաքաղաքը տեղափոխեց Դվին քաղաք (Խորենացի 1990): Արաքսի բազմաթիվ պալեոհունները ֆիքսվում են նաև թուրքական տարածքում, Իզդիր քաղաքից հյուսիս և արևելք: Արաքսի հունի վերջին միգրացիաները տեղի են ունեցել 1931 և 2001թթ. և բերեցին սահմանային վեճերի, քանի որ Թուրքիայի ու Հայաստանի և Իրանի ու Ադրբեջանի միջև սահմանը անցնում է այդ գետով:

Սարդարապատի խզվածքի գոտում տեղի ունեցած միակ հայտնի սեյսմիկ իրադարձությունը դա Հոկտեմբերյանի 1916թ. երկրաշարժն է  $M=5.0$  մագնիտուդով: Երկրաշարժի էպիկենտրոնի տեղադիրքը, ըստ տարբեր կատալոգների և ֆիքսվում է Նոր Արմավիր, Ջանֆիդա, Փշատավան գյուղերի շրջանում: Երկրաշարժի մաքսիմալ մակրոսեյսմիկ էֆեկտը հավասար է 6 բալի, ֆիքսվել է Արմավիր, Էջմիածին քաղաքներում և Արաքս գետի աջ ափին գտնվող Տուզուլջե տեղում ու Արարատի հյուսիսային լանջին: 6 բալի իզոսեյստը ցույց է տրված նկար 4-ում և 5-ում:




**Նկ. 5 Տեղանքի քարտեզ**

Բացի այդ երկրաշարժից Սարդարապատի թմբի վրա կան հնարավոր սեյսմածին տեղաշարժերի հետքեր, նրանցից վերջինների տարիքը հավանաբար պատմական է (Նկ. 6, 7): Սարդարապատի խզվածքի  $M_{max}$  գնահատումը, որը կատարվել է տարբեր մեթոդներով, կազմել է 6.6:

Համաձայն ՀՀ ՇՆ 5.2.2 կետի (2006թ. խմբագրություն) «Սեյսմիկ գոտով գրունտի հորիզոնական արագացման սպասվելիք արժեքը ընդունվում է ըստ աղյուսակ 1-ի: III սեյսմիկ գոտում շինհրապարակների համար, որոնք գտնվում են հնարավոր օջախային գոտուց (ակտիվ խզվածքների) 10կմ քիչ հեռավորության վրա, գրունտի սպասվելիք արագացման **a** արժեքը բազմապատկվում է 1.2-ով»:





Նկ. 5 Երկրաչափի /1916թ./ էպիկենտրոնի դիրքը և 6 բալի իզոսեյստը



Նկ. 6



Նկ. 7

Արմավիր քաղաքի տարածքը գտնվում է Սարդարապատի խզվածքից 6-ից (հարավային սահմանագիծ) մինչև 10կմ (հյուսիսային մաս) հեռավորության վրա, համապատասխանաբար գրունտի հորիզոնական արագացումների ստացված արժեքները պետք է բազմապատկվեն 1.2-ով (Նկ. 8): Նկար 8-ում կանաչ գույնով ցույց է տրված Սարդարապատի խզվածքի 10կմ-ոց գոտին:

#### 3.1.4.6 Ելակետային սեյսմիկ վտանգի գնահատում

Արմավիր քաղաքի տարածքի սեյսմիկ վտանգի հաշվարկի համար հիմք է ընդունվել ՀՀՀՆ II-2-94 «Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր» նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտեվորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է




երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը: Համաձայն (<< ՇՆ II – 6.02.06) նորմերի, հաշվի առնելով Սարդարապատի խզվածքից Արմավիրի քաղաքի տարածքի 6-ից (հարավային սահմանագիծ) մինչև 10կմ (հյուսիսային մաս) հեռավորության վրա գտնվելու հանգամանքը վերջնական հաշվարկներում օգտագործվել է 0.4 g  $\times 1.2 = 0.48g$  արագացման ելակետային արժեքը:

#### 3.1.4.6.1 Գրունտային պայմանների ազդեցությունը սեյսմիկ վտանգի վրա

Ինչպես հայտնի է, տարածքների սեյսմիկ վտանգի վրա զգալի ազդեցություն են թողնում տեղի գրունտային պայմանները: Գրունտների տատանման ինտենսիվության փոփոխությունը գրունտային պայմաններից կախված, որոշվում է հիմնականում շերտերի հզորությամբ, նրանց ֆիզիկա-մեխանիկական և առաձգական հատկություններով, ինչպես նաև գրունտային ջրերի մակարդակով:

Գրունտների առաձգական հատկություններից կախված սպասվող մաքսիմալ հորիզոնական արագացումները հաշվարկելու համար, իրականացվել են գործիքային գրանցումներ գրունտների առանձին շերտերում, առաձգական ալիքների տարածման արագությունները որոշելու նպատակով: Սեյսմիկ զոնոավորման կետերի տեղադիրքը ներկայացված է փաստացի նյութերի քարտեզի վրա (գրաֆիկական հավելված 1 ) :



Նկ. 8 Տեղանքի քարտեզ

#### 3.1.4.6.2 Գործիքային գրանցումներ

Գործիքային գրանցումներն իրականացվել են 160 կետերում, Արմավիր քաղաքի գլխավոր հատակագծի սահմաններում: Սեյսմիկ տվիչների միջև հեռավորությունն ընտրվել է այնպես, որ գրանցումներն ընդգրկեն տարածքի բոլոր շերտախմբերը:

Գրանցումներն իրականացվել են ՌՕՌ-24Փ թվային սեյսմիկ կայանի օգնությամբ: Սեյսմիկ կայանը հնարավորություն է տալիս աշխատել ցանկացած իմպուլսային հարվածող սարքերի հետ: Կայանի աշխատանքի հիմքում դրված է թույլ ցնցումների գրանցման և նրանց գումարման մոտեցումը, որի արդյունքում թույլ ցնցումները ուժեղացվում են: Սեյսմիկ ալիքների գրանցման համար օգտագործվել են «CB-20» տիպի սեյսմատվիչներ:

Կիրառվել է բեկված ալիքների գրանցման եղանակը: Սեյսմատվիչների միջև հեռավորությունը եղել է 2մ, ծայրակետերի սեյսմատվիչների միջև եղած հեռավորությունը 22մ, որը հնարավորություն է տվել մանրամասն ուսումնասիրել երկրաբանական կտրվածքը ներկայացված հորատանցքերի ամբողջ կտրվածքով: Սեյսմիկ ալիքները հարուցվել են 20 կիլոգրամանոց հարվածային մուրձի օգնությամբ:

Գործիքային գրանցումներով ստացված սեյսմոգրամաների մշակման արդյունքներով տարածքի 160 կետերի համար կառուցված գոդոգրաֆներով որոշվել են շերտերում առաձգական ալիքների տարածման արագությունները: Հաշվարկվել են նաև առաձգական ալիքների տարածման միջին արագությունները: Արդյունքները օգտագործվել են սպասվող մաքսիմալ հորիզոնական արագացումների հաշվարկներում:

Հաշվարկներն իրականացվել են հետևյալ բանաձևով՝

$$\lg(a) = 0.11 \times I - 0.51 - \lg \sqrt{(R^2 + h^2)} - 0.0027 \sqrt{(R^2 + h^2)} \quad (1),$$

որտեղ՝ I- ն ինտենսիվությունն է բալերով  
a-ն հորիզոնական արագացումն է g- ի մասերով  
R- ը էպիկենտրոնային հեռավորությունն է կմ-ով  
h- ը հիպոկենտրոնի խորությունն է կմ-ով

Գրունտային պայմաններից կախված սեյսմիկ բալականության փոփոխության մեծությունը գնահատվել է սեյսմիկ կոշտությունների մեթոդով:

Հաշվարկներն իրականացվել են հետևյալ բանաձևով՝

$$\Delta I_0 = 1.67 \log (V_{0\rho_0} / V_{ip_i}), \quad (2)$$

որտեղ՝  $V_{0\rho_0}$  – էտալոնային գրունտի ակուստիկ կոշտությունն է;

$V_{ip_i}$  – ուսումնասիրվող գրունտի ակուստիկ կոշտությունն է;

Գրունտային ջրերի հաշվին սեյսմիկ ազդեցության ուժգնության փոփոխությունը բալերով գնահատվել է բանաձև 3-ով՝

$$\Delta I_{q.z.} = e^{-0.04h}, \quad (3)$$

որտեղ՝ h – գրունտային ջրերի տեղադրման խորությունն է գետնի մակերեսից հաշված:

Սեյսմիկ ազդեցության ուժգնության ընդհանուր փոփոխությունը բալերով հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝

$$\Delta I = \Delta I_0 + \Delta I_{q.z.}, \quad (4)$$

Հաշվարկների համար, որպես էտալոնային ընդունվել են այն գրունտները, որոնց միջին խտությունը կազմում է  $\rho=1.75$  գ/սմ<sup>3</sup>, երկայնական ալիքների տարածման միջին արագությունը՝  $V_p=650$  մ/վրկ, ակուստիկ կոշտությունը՝  $V_{0\rho_0}=1050$ :

Այսպիսով ելակետային սեյսմիկ ազդեցության ուժգնությունը բալերով հաշվարկվել է բանաձև 5-ով՝

$$I = \Delta I + I_0, \quad (5)$$

Սպասվող մաքսիմալ հորիզոնական արագացումների հաշվարկների համար տարածքի ելակետային սեյսմիկ վտանգը գնահատվել է 0.48g:

Հաշվարկների արդյունքները ներկայացված են 3.1.4.6.2-1 աղյուսակում:

Աղյուսակ 3.1.4.6.2-1

1	N-C3	V <sub>1</sub>	V <sub>2</sub>	h <sub>1</sub>	h <sub>2</sub>	V <sub>cp</sub>	Δg
1		2	3	4	5	6	7
	C3-1	130	1000	2.63	27.37	630	0.47
	C3-2	285	1000	3.73	26.27	762	0.43
	C3-3	273	1384	1.76	28.24	980	0.37
	C3-4	235	1555	2.58	27.42	1049	0.37
	C3-5	172	1111	3.89	26.11	793	0.43
	C3-6	185	1000	3.73	26.27	762	0.43
	C3-7	122	888	2.32	27.68	721	0.45
	C3-8	253	1300	1.78	28.22	900	0.38
	C3-9	172	1111	3.89	26.11	793	0.43
	C3-10	185	1100	3.73	26.27	760	0.44
	C3-11	250	1200	0.81	29.19	1088	0.36
	C3-12	205	1333	0.92	29.08	980	0.37
	C3-13	200	1200	1.69	28.31	936	0.38
	C3-14	181	857	1.61	28.39	714	0.45
	C3-15	195	1000	3.28	26.72	689	0.46
	C3-16	183	1230	2.58	27.42	824	0.41
	C3-17	150	1200	4.05	25.95	793	0.43
	C3-18	195	1000	3.28	26.72	689	0.45
	C3-19	380	1500	3.86	26.14	1088	0.35
	C3-20	375	1200	3.62	26.38	948	0.38
	C3-21	143	1250	4.11	25.89	798	0.42
	C3-22	138	1666	5.20	24.80	817	0.41
	C3-23	285	2000	4.33	25.67	1070	0.35
	C3-24	250	1200	0.81	29.19	1088	0.36
	C3-25	260	1220	1.21	28.80	1088	0.36
	C3-26	105	1333	0.92	29.08	980	0.37
	C3-27	307	1272	2.35	27.65	1021	0.37
	C3-28	307	1272	2.35	27.65	1021	0.37
	C3-29	307	1272	2.35	27.65	1021	0.37
	C3-30	307	1272	2.35	27.65	1021	0.37
	C3-31	200	1200	1.69	28.31	936	0.38
	C3-32	307	1272	2.35	27.65	1021	0.37
	C3-33	243	1250	4.11	25.89	798	0.32
	C3-34	140	1000	3.91	26.09	708	0.45
	C3-35	307	1272	2.35	27.65	1021	0.37
	C3-36	307	1272	2.35	27.65	1021	0.37
	C3-37	180	1200	3.60	26.40	953	0.42
	C3-38	185	1272	3.18	26.82	930	0.43
	C3-39	307	1272	2.35	27.65	1021	0.37
	C3-40	375	1200	3.62	26.38	948	0.38
	C3-41	307	1272	2.35	27.65	1021	0.37
	C3-42	307	1272	2.35	27.65	1021	0.37
	C3-43	307	1272	2.35	27.65	1021	0.37
	C3-44	307	1272	2.35	27.65	1021	0.37
	C3-45	122	1000	0.80	29.20	915	0.40

C3-46	307	1272	2.35	27.65	1021	0.37
C3-47	363	1600	2.38	27.62	1259	0.35
C3-48	122	1125	1.64	28.36	921	0.40
C3-49	107	1272	2.35	27.65	1021	0.42
C3-50	333	1142	2.22	27.78	968	0.38
C3-51	200	1500	2.62	27.38	956	0.37
C3-52	153	1384	1.79	28.21	935	0.44
C3-53	266	1333	1.63	28.37	1094	0.35
C3-54	200	1285	1.71	28.29	982	0.37
C3-55	113	1250	3.55	26.45	1008	0.45
C3-56	173	1454	2.66	27.34	877	0.41
C3-57	133	1230	1.79	28.21	824	0.41
C3-58	101	1058	1.68	28.32	832	0.48
C3-59	100	1000	2.20	27.80	854	0.47
C3-60	133	941	2.07	27.93	836	0.41
C3-61	122	1058	2.42	27.58	811	0.47
C3-62	107	1230	2.32	27.68	998	0.47
C3-63	126	1076	3.02	26.98	851	0.41
C3-64	125	1090	3.06	26.94	846	0.41
C3-65	281	2000	1.83	28.17	1241	0.35
C3-66	222	1636	1.74	28.26	1194	0.36
C3-67	307	1272	2.35	27.65	1021	0.37
C3-68	307	1272	2.35	27.65	1021	0.37
C3-69	307	1272	2.35	27.65	1021	0.37
C3-70	285	1500	1.65	28.35	1215	0.35
C3-71	160	1000	1.96	28.04	911	0.40
C3-72	166	1058	1.71	28.29	810	0.40
C3-73	153	857	0.83	29.17	760	0.43
C3-74	307	1272	2.35	27.65	1021	0.37
C3-75	185	750	1.34	28.66	699	0.43
C3-76	122	782	1.49	28.51	695	0.43
C3-77	111	1052	0.90	29.10	839	0.41
C3-78	142	1200	0.89	29.11	983	0.44
C3-79	120	1600	4.40	25.60	1192	0.43
C3-80	100	1750	3.96	26.04	1210	0.43
C3-81	133	1230	2.27	27.73	1022	0.49
C3-82	100	909	0.62	29.38	886	0.48
C3-83	109	1000	4.9	25.1	562	0.48
C3-84	139	1000	4.8	25.2	702	0.46
C3-85	125	1000	2.2	27.8	2337	0.42
C3-86	133	1000	3.6	26.4	2612	0.46
C3-87	138	1750	3.7	26.3	717	0.41
C3-88	184	667	5.3	24.7	456	0.42
C3-89	143	2333	3.8	26.2	799	0.46
C3-90	107	1667	5.3	24.7	742	0.43
C3-91	120	2667	2.9	27.1	880	0.42
C3-92	143	1750	3.7	26.3	735	0.43
C3-93	148	3000	3.9	26.1	853	0.44
C3-94	185	3000	4.7	25.3	887	0.42
C3-95	105	875	3.5	26.5	469	0.41
C3-96	190	3000	4.8	25.2	528	0.39

C3-97	290	2000	1.0	29.0	1244	0.35
C3-98	267	1750	3.4	26.6	1070	0.36
C3-99	279	1500	4.4	25.6	717	0.37
C3-100	530	1600	2.8	27.2	784	0.26
C3-101	121	1400	3.7	26.3	611	0.43
C3-102	161	1500	4.5	25.5	668	0.42
C3-103	107	417	3.5	26.5	373	0.44
C3-104	139	3000	4.8	25.2	702	0.45
C3-105	172	1500	4.5	25.6	699	0.45
C3-106	130	3500	3.8	26.2	1093	0.42
C3-107	239	3000	4.8	25.2	702	0.35
C3-108	261	2500	5.4	24.6	983	0.36
C3-109	258	2500	5.6	24.4	661	0.35
C3-110	221	1400	3.7	26.3	611	0.35
C3-111	333	1333	1.6	28.5	1154	0.35
C3-112	258	833	1.3	28.8	707	0.36
C3-113	271	583	0.9	29.1	545	0.37
C3-114	225	471	2.3	27.7	389	0.35
C3-115	100	800	0.0	30.0	800	0.44
C3-116	126	1000	2.5	27.5	719	0.42
C3-117	136	615	2.2	27.8	519	0.43
C3-118	143	500	3.0	27.0	401	0.44
C3-119	100	1750	3.6	26.4	910	0.43
C3-120	135	1167	3.3	26.7	815	0.44
C3-121	230	1600	2.8	27.2	784	0.38
C3-122	274	1750	3.6	26.4	836	0.37
C3-123	253	1125	1.9	28.1	801	0.37
C3-124	243	2333	3.8	26.2	799	0.36
C3-125	220	2250	1.9	28.1	1293	0.39
C3-126	238	2333	3.8	26.2	778	0.38
C3-127	307	1272	2.35	27.65	1021	0.37
C3-128	242	1143	2.9	27.1	681	0.36
C3-129	245	1000	1.7	28.3	955	0.37
C3-130	307	1272	2.35	27.65	1021	0.37
C3-131	250	1667	5.2	24.8	844	0.36
C3-132	247	2000	4.6	25.4	678	0.37
C3-133	282	2500	5.6	24.4	742	0.35
C3-134	222	3000	7.4	22.6	732	0.36
C3-135	207	417	3.5	26.5	373	0.35
C3-136	211	1000	6.5	23.5	554	0.39
C3-137	271	3000	2.0	28.1	1446	0.37
C3-138	200	2000	4.5	25.5	849	0.37
C3-139	215	800	2.6	27.4	528	0.35
C3-140	282	714	4.6	25.4	492	0.35
C3-141	307	1272	2.35	27.65	1021	0.37
C3-142	307	1272	2.35	27.65	1021	0.37
C3-143	243	1000	2.6	27.4	658	0.38
C3-144	276	1250	5.2	24.8	607	0.39
C3-145	222	2500	5.5	24.5	869	0.36
C3-146	307	1272	2.35	27.65	1021	0.37
C3-147	254	2333	3.7	26.3	844	0.37

C3-148	307	1272	2.35	27.65	1021	0.37
C3-149	307	1272	2.35	27.65	1021	0.37
C3-150	125	1333	2.9	27.1	796	0.45
C3-151	120	2000	2.8	27.2	807	0.43
C3-152	122	1750	3.6	26.4	860	0.42
C3-153	120	3000	3.9	26.1	905	0.42
C3-154	207	1272	2.35	27.65	1021	0.37
C3-155	243	1750	3.7	26.3	735	0.36
C3-156	350	1143	2.6	27.4	723	0.32
C3-157	126	2000	4.6	25.4	709	0.44
C3-158	111	1500	4.5	25.5	668	0.34
C3-159	107	1272	2.35	27.65	1021	0.37
C3-160	119	857	4.4	25.7	451	0.36

Հաշվարկների արդյունքներով կազմվել է Արմավիր քաղաքի տարածքի 1:5000 մասշտաբի սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզը (գրաֆիկական հավելված 3):

Հաշվարկների արդյունքները ցույց են տալիս, որ հետազոտված տարածքի համար սպասվող մաքսիմալ հորիզոնական արագացումները գտնվում են 0.26g–0.49g տիրույթում:

Հարկ է նշել, որ Արմավիր քաղաքի սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզը կարող է հիմք ծառայել քաղաքի գլխավոր հատակագծի մշակման համար: Այն չի կարող օգտագործվել կոնկրետ կառույցների կառուցապատման խնդիրների լուծման համար:

#### **3.1.4.6.3 Գրունտների սեփական տատանումների գործիքային գրանցումներ**







Արմավիր քաղաքի տարածքում տարբեր գրունտային պայմաններում գրունտների սեփական տատանումների գործիքային գրանցումների արդյունքում հաշվարկված հաճախականությունների սպեկտրները ներկայացված են տեքստային հավելված 1-ում:

Միկրոտատանումների գրանցումները իրականացվել են ՌՃՆ-24Ճ թվային կայանի միջոցով, որը ընդգրկում էր.

- C-069Г C-069B տիպի տվիչներ, որոնք գրանցում են տատանումների հաճախականությունը 0.5 – 30 հց տիրույթում:
- տատանումների ուժեղացուցիչ:


Գրանցումները իրականացվել են թվային սեյսմիկ կայանի միջոցով: Գրանցումներն իրականացվել են բոլոր սեյսմիկ զոնդավորման կետերում: Ելնելով գրունտների առանձնահատկություններից, նրա սեփական տատանումները բավարար չափով հետազոտելու նպատակով կատարվել է գրանցումների համար անհրաժեշտ տեղերի ընտրություն ինժեներա-երկրաբանական շրջանացման քարտեզի տվյալների հիման վրա: Արմավիր քաղաքի տարածքում տարբեր գրունտային պայմաններում գրունտների սեփական տատանումների գործիքային գրանցումների արդյունքում հաշվարկված հաճախականությունների սպեկտրների օրինակները ներկայացված են տեքստային հավելված 1-ում:

Ըստ գրանցումների հաճախականությունների սպեկտրների գերակայող հաճախականությունները գտնվում են 2-5 Հց տիրույթում:



Արմավիր քաղաքի տարածքի գրունտների սեփական տատանումների հաճախականությունների սպեկտրների օրինակներ





Արմավիր քաղաքի տարածքի գրունտների սեփական տատանումների հաճախականությունների սպեկտրների օրինակներ

#### 3.1.4.6.4 Կատարված աշխատանքների արդյունքները

1. Արմավիր քաղաքի տարածքի փաստացի նյութերի քարտեզը 1:5000 մասշտաբի հիմքի վրա (գրաֆիկական հավելված 1):
2. Արմավիր քաղաքի տարածքի 1:5000 մասշտաբի ինժեներա-տեղագրական շրջանացման քարտեզը (գրաֆիկական հավելված 2):
3. Արմավիր քաղաքի տարածքի 1:5000 մասշտաբի ստորերկրյա ջրերի տարածման քարտեզը (գրաֆիկական հավելված 3):
4. Արմավիր քաղաքի տարածքի 1:5000 մասշտաբի սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզը (գրաֆիկական հավելված 4):
5. Արմավիր քաղաքի տարածքում գրանցված միկրոսեյսմերի տվյալներով հաշվարկված հաճախականությունների սպեկտրների օրինակները (տեքստային հավելված 1):

### **3.2 Հատակագծային կառուցվածքը և տարածքների փաստացի օգտագործումը**

Արմավիրի տարածքում ըստ գործառական օգտագործման տեսակների տարբերակվում են բնակելի, արդյունաբերական, լանդշաֆտա-ռեկրեացիոն գոտիներ: ՀՀ հողային օրենսգրքում նշված այս տարածքները սահմանվում են որպես՝ բնակավայրի հողեր, արդյունաբերության հողեր և հատուկ պահպանվող տարածքներ:

Արմավիրի քաղաքային համայնքը զբաղեցնում է փաստացի 2177.24 հա տարածք: Հարավային մասում անցնող երկաթուղուն հարակից տեղաբաշխված են արդյունաբերական ձեռնարկությունները: Արդյունաբերական նպատակներով օգտագործվում է 166.5 հա:

Հանգստի համար նախատեսված ընդհանուր օգտագործման կանաչ տարածքը ներկայացված է ոչ մեծ մակերես ունեցող հողակտորով բնակավայրի հյուսիսային մասում և բնակելի գոտու առանձին հատվածներում:

#### **3.2.1 Բնակավայրի գործառական և ծավալատարածական կառուցվածքը**

Արմավիր քաղաքի հատակագծային մտահղացումը ձևավորվել է դեռ 1931 թ. ակադեմիկոս Ալ.Թամանյանի կողմից մշակված գլխավոր հատակագծում, այն է՝ ուղանկյուն, կենտրոնում կիսաշրջանաձև փողոցային ցանցի վրա հիմնվող հատակագծային կառուցվածք:

Հորինվածքի կենտրոնական մասը կամ միջուկը, որը նախատեսված էր քաղաքի հասարակական համակարգի ձևավորման համար, կառուցապատվեց նաև բազմաբնակարան 3-4 հարկանի, մասամբ նաև սակավահարկ /1-2 հարկ/ տներով: Քաղաքի հասարակական կենտրոնը փաստացի ձևավորվեց կենտրոնական հրապարակից դեպի երկաթուղային կայարան ձգվող տիրույթում: Այստեղ են տեղաբաշխված քաղաքի և մարզի վարչական, մշակութային, ֆինանսական, բուժական, սպասարկման և առևտրի տարբեր ձեռնարկություններ: Նշված տարածքային տիրույթում օրվա ցերեկային ժամերին միշտ մարդաշատ է լինում: Այս առումով հատկապես ակտիվ է օգտագործվում Երևանյան փողոցի երկարության միջին հատվածը, որտեղ գտնվում է երկաթուղային և ավտոկայարանները, առևտրի և հասարակական սննդի բազմաթիվ, փոքր և մեծ կետերը: Այս հատվածը Արմավիր քաղաքի այն մասն է, որտեղ ժամանում կամ որտեղից մեկնում են թե տեղի բնակիչները, թե քաղաքի հյուրերը կամ տարանցիկ ուղեվորներն ու զբոսաշրջիկները:

Բազմաբնակարան բնակելի կառուցապատումը տեղակայված է հիմնականում քաղաքի կենտրոնում և արևմտյան կիսակառույց զանգվածում:

Մանկական նախադպրոցական և կրթական կազմակերպությունները տեղաբաշխված են բնակելի թաղամասերում և, հիմնականում, ապահովում են սպասարկման հետիոտն մատչելիության նորմատիվները:

Արմավիր60ն ունի փողոցային ցանցի պարզ կառուցվածք: Համաքաղաքային մայրուղու /Երևանյան փողոց/ մի կողմում գտնվող ուղղահայաց ու զուգահեռ փողոցներն միմյանց հետ են կապում բնակելի թաղամասերն ու քաղաքի հասարակական կենտրոնը, արտադրական գոտիները և մյուս հատվածները: Կենտրոնական մասում են գտնվում՝ քաղաքային զբոսայգին, մարզապետարանը, մշակույթի տունը, քաղաքապետարանը, շուկան, հյուրանոցը, մի շարք խանութներ և այլն: Քաղաքի ավտոկայանը գտնվում է երկաթուղային կայարանին մոտ: Քաղաքի հյուսիսային մասում գտնվում է

քաղաքային մարզահամալիրը, իսկ ավելի հեռու՝ քաղաքային գերեզմանոցը: Քաղաքի հասարակական կենտրոնի հորինվածքային առանցքը նշմարում են պատմության և մշակույթի, պետական ցանկում ընդգրկված պահպանման ենթակա երկու հուշարձանները՝ երկաթուղային և ավտոկայարանների հրապարակում զետեղված Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակը հավերժացնող կոթողն ու կենտրոնական հրապարակում 1955թ. կառուցված քաղաքի Մշակույթի պալատը:

Գերեզմանոցից դեպի արևելք գտնվող հողամասում կազմավորվել է բնակելի սակավահարկ կառուցապատման նոր թաղամաս: Համեմատաբար նոր է նաև արևմտյան մասում գտնվող, նույնպես, սակավահարկ կառուցապատումով բնակելի թաղամասը:

### **3.2.2 Բնակավայրի հողեր և քաղաքամերձ գոտիներ**

Արմավիրի բնակեցման տարածքում (բնակավայրի հողերում), հիմնականում, տեղաբաշխված են բնակելի ֆոնդի և հասարակական նշանակության շենքերն ու կառույցները: Այս տարածքում են գտնվում նաև սանիտարապաշտպանիչ գոտիներ չպահանջող առանձին կոմունալ կամ արտադրական նշանակության օբյեկտներ: Ինչպես վերը նշվեց, քաղաքի կենտրոնում է տեղաբաշխված զինվորական մասը: Բնակելի հողերի սահմաններում առկա են զբոսայգիներ, պուրակներ (ընդհանուր օգտագործման կանաչ), ինչպես նաև այս տարածքները միմյանց միացնող փողոցային ցանցը:

Թաղամասերում տեղաբաշխված են հասարակական բազում՝ սպասարկման, կրթական, առողջապահական, առևտրի և այլ նշանակության շենքեր: Դրանց գերակշռող մասն ունի իրենց կից հողատարածքները (դպրոցներ, մանկապարտեզներ, հանրախանութ, կինոթատրոն և այլն): Սպասարկման, առևտրի օբյեկտների մի մասն էլ զբաղեցնում է բնակելի բազմաբնակարան շենքերի առաջին հարկերը:

Արմավիրի քաղաքամերձ տարածքը՝ շրջապատող գյուղական համայնքների հողերն են կազմում. արևմուտքում՝ Լուկաշին, Նորավան, արևելքում՝ Ծառաշեն, Մրգաշատ, Նորապատ: Գյուղական համայնքների հողերն ունեն գյուղատնտեսական բարձր արժեք և զբաղեցված են պտղատու և խաղողի այգիներով:

Հյուսիս-արևելքում տարածվում են պետական հողային ֆոնդի հողերը: Դրանցից 2006թ. շուրջ 1000 հա անհատույց փոխանցվեց Արմավիրի քաղաքային համայնքին:

### **3.2.3 Բնակարանային ֆոնդ և բնակչություն**

Արմավիրի բնակարանային ֆոնդը կազմում է 359.1 հազ. մ.<sup>2</sup>, այդ թվում սակավահարկ անհատական տները ընդհանուր առմամբ կազմում են 305.2 հազ.մ.<sup>2</sup>, իսկ բազմաբնակարանները՝ 53.8 հազ.մ.<sup>2</sup>:

Բնակելի ֆոնդը ներառում է 142 բազմաբնակարան շենք և 5979 առանձնատուն: Առկա ֆոնդի 86% ունի վերանորոգման խնդիր, իսկ քաղաքի 12 շենք գտնվում է վթարային վիճակում (համաձայն 2003թ. հոկտեմբերի տվյալների):

Բնակֆոնդի շուրջ 85 % սեփականաշնորհված է:

Ստորև 3.2.2-1 աղյուսակում բերված է բնակավայրերի հողերի կազմում ընդգրկված տարածքների հաշվեկշիռը:

Ծածկագիր	Տարածքների գործառնական նշանակությունը	Տարածք, հա	%
2.1	<b>Բնակելի կառուցապատում, այդ թվում</b>	<b>438.55</b>	<b>51.71</b>
2.1.1-ա	բազմաբնակարան	10.66	1.25
2.1.1-բ	տնամերձ, սակավահարկ	406.33	47.91
2.1.2	այգեգործական	21.56	2.54
2.2	<b>Հասարակական կառուցապատում</b>	<b>69.83</b>	<b>8.23</b>
2.3	<b>Խառը կառուցապատում</b>	<b>56.81</b>	<b>6.70</b>
2.4	<b>Ընդհանուր օգտագործման տարածքներ, այդ թվում զբոսայգիներ, փողոցներ, հրապարակներ</b>	<b>187.70</b>	<b>22.13</b>
2.5	<b>Այլ հողեր</b>	<b>95.19</b>	<b>11.22</b>
	<b>Ըդամենը</b>	<b>848.08</b>	<b>100</b>

Բնակարանային ֆոնդի սպասարկումը իրականացնում են համայնքի կոմունալ ծառայությունները:

Բնակավայրի հողերի սահմաններում բնակչության խտությունը կազմում է 50 մարդ/հա, իսկ համայնքի սահմաններում 35 մարդ/հա:

Համայնքի բնակչությունը 01.01.2006 թ. դրությամբ կազմում է 40.0 հազար մարդ:

Բնակչության տարիքային կազմը հետևյալն է՝

- մինչև 15 տարեկան 15.0 հազ. երեխա,
- աշխատունակ հասակի 18.7 հազ. մարդ,
- 60-ից բարձր տարիքի 6.3 հազ. մարդ:

### **3.2.4 Վարչական համակարգի, առևտրի և սպասարկման ոլորտի տեղաբաշխում**

Արմավիր քաղաքը Արմավիրի մարզի վարչական կենտրոնն է, այս պատճառով քաղաքում տեղակայված են մի շարք պետական կառավարման մարմիններ, դրանք են՝ մարզպետարանը, դատարանը, ոստիկանությունը, զինկոմիսարիատը, սոցիալական ապահովության բաժինը և այլն:

Տեղական ինքնակառավարման իշխանության մարմինը՝ քաղաքապետարանն է՝ իր ստորաբաժանումներով և ծառայություններով:

Արմավիրում գործում են նաև տարբեր հասարակական և ստեղծագործական կազմակերպություններ:

Քաղաքի, նախկինում ձևավորված առևտրի և սպասարկման համակարգը, վաղուց չի գործում: Դրա փոխարեն սկսվել է ձևավորվել առևտրի և սպասարկման ծառայությունների նոր համակարգ: Ներկայումս, արդյունաբերական և մթերային ապրանքները վաճառվում են խառը, երբեմն, պատահական տեղերում, սակայն արդեն ընթանում է առևտրի կենտրոնի շենքի վերակառուցումը: Համայնքում ընդլայնվում և աստիճանաբար կարգավորվում ու ավելի քաղաքակիրթ տեսք է ձեռք բերում առևտրի, ծառայությունների

մատուցման և սպասարկման ոլորտները:

Սպասարկման օբյեկտներից են՝ կապի և բանկային երկուական բաժանմունքները, սրճարանները, ճաշարաններն ու ռեստորանները, քաղաքային շուկան:

Կոմունալ ոլորտի համակարգից քաղաքում ներկայումս առկա են՝ հյուրանոցը, քաղաքային բաղնիքը, և այլ օբյեկտներ:

Մարդատար տրանսպորտային սպասարկման ոլորտում գործում է ավտոկայանը ու երկաթուղային կայարանը: Տարածքում գործում են նաև բենզալցակայաններ, գազալցակայաններ, ավտոտեխսպասարկման կետեր:

Ոլորտը կարիք ունի համակարգման և կանոնավորման:

### **3.2.5 Առողջապահական, կրթական, մշակութային և մարզական համակարգեր**

Արմավիր համայնքում առողջապահական համակարգում գործում են երկու հիվանդանոց՝ հիվանդանոցային 5 լաբորատորիաներով, պոլիկլինիկա և շտապ օգնության կայանը:

Կրթական օբյեկտներից գործում է 16 մանկապարտեզ, 10 դպրոց, 3 ուսումնարան, համալսարան, երաժշտական դպրոց, ինչպես նաև գեղարվեստի դպրոցը:

Նախադպրոցական և դպրոցական հիմնարկները համայնքի տարածքում տեղաբաշխված են համեմատաբար համաչափ, բացառությամբ նոր սակավահարկ բնակելի կառուցապատման տարածքների: Կրթական համակարգին վերաբերող կառույցները, ընդհանուր առմամբ, ունեն տարբեր աստիճանի վերանորոգման խնդիրներ, ինչպես նաև սեյսմակայունության բարձրացման անհրաժեշտություն:

Համայնքն ունի գրադարան, մշակույթի տուն, 2 կինոթատրոն:

Բացի այդ, Արմավիրում առկա են 2 մարզադաշտ, 2 սպորտդպրոց, որոնք չեն բավարարում բնակչության սպորտային պահանջներին:

Անհրաժեշտ է նշել, որ ոչ բոլոր հանրակրթական դպրոցներն են ապահովված մարզական միջոցով:

### **3.2.6 Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական**

#### **նշանակության հողեր**

Համայնքի արդյունաբերության հողերը զբաղեցնում են Արմավիրի վարչական տարածքի շուրջ 8% կամ 166.50 հա:

Արդյունաբերական տարածքում են գտնվում արտադրական ձեռնարկությունները և դրանց հետ կապված օբյեկտների հողատարածքները, կոմունալ ու պահեստարանային շինությունները, ինչպես նաև արտաքին տրանսպորտի ուղիները և կառույցները:

Արդյունաբերության հողերը հիմնականում գտնվում են Արմավիրի տարածքի հարավային մասում, երկաթուղու գոտուն հարակից մասերում:

Կան նաև բնակելի տարածքում գտնվող ոչ մեծ արտադրական ձեռնարկություններ:

Արդյունաբերական ձեռնարկություններից են՝ Պահածոների գործարանը, Կոնյակի գործարանը, Գինու գործարանը, գարեջրի գործարանը, կահույքի գործարանը, կարի ֆաբրիկան, մեխանիկական գործարանը, «Սառնարանը», ապակե տարանների գործարանը:

Արտադրական գոտում են նաև բազմաթիվ պահեստներ, ավտոտնտեսություններ, մեխանիզացիայի բազան, շինարարական կազմակերպությունների տարածքներ, արտադրամասեր, պոմպակայան, ջրմուղ-կոյուղու արտադրամասեր և այլն:

Արդյունաբերական հողերը բաշխվում են հետևյալ կերպ՝

Գործառական նշանակությունը	Սեփականության ձևը	Տարածք, հա	
		ըստ սեփականության	ընդամենը
Արդյունաբերության	համայնքային	93.52	97.5
	ՀՀ քաղաքացիների	3.98	
Գյուղատնտ. արտ-թյուն	համայնքային	45.70	45.70
	ՀՀ քաղաքացիների	0.41	
Պահեստարանների	համայնքային	21.43	22,89
	ՀՀ քաղաքացիների	1.47	
ընդամենը	166.50		

Արմավիրի արդյունաբերական գոտին ապահովված է ավտոճանապարհներով և երկաթուղային մոտեցումներով: Կարգավորված է արդյունաբերական հանգույցի ճանապարհային կապը արտաքին ավտոճանապարհների հետ:

Ընդերքի օգտագործման նպատակով համայնքի սահմաններում հողօգտագործում արձանագրված չէ:

Պահեստարանների տարածքները մասամբ ընդգրկված են նաև արտադրական ձեռնարկությունների տարածքների սահմանների մեջ:

### **3.2.7 Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքի հողեր**

Էլեկտրաէնթակայանները, «Զրմուղ - կոյուղու», «Հայրուսգազարդ»-ի օբյեկտները, կոմունալ գրասենյակները, նման տիպի կազմակերպությունները տեղաբաշխված են բնակելի կառուցապատման տարածքում (առանձին շենքերում, կամ շենքերի հարկաբաժիններում), ինչպես նաև առանձին տարածքներում: Համայնքն ունի փոստի երկու բաժանմունք: Ավտոտրանսպորտային ձեռնարկություններին, երկաթուղուն պատկանող տարածքները, ինչպես նաև դրանց շահագործումը իրականացնող օբյեկտների տարածքները պատկանում են տրանսպորտային հողերին:

Այս բոլոր տարածքների տեսակները ընդհանուր առմամբ Արմավիրի համայնքում կազմում են 51.98 հա, այդ թվում՝ էներգետիկայի 4.31 հա, կապի 0.21 հա, տրանսպորտի 23.74 հա և կոմունալ ենթակառուցվածքի օբյեկտները 23.72 հա:

### **3.2.8 Գյուղատնտեսական նշանակության հողեր**

Արմավիրի քաղաքային համայնքի վարչական տարածքի սահմաններում գյուղատնտեսական նշանակության հողերը ներկայացված են հետևյալ կաղնով՝ վարելահող 121.82 հա, բազմամյա տնկարկների /պտղատու այգիներ/ 6.72 հա, արոտներ 403.02 հա և այլ հողատեսքեր 314.37 հա:

Դրանցից՝

- ՀՀ քաղաքացիների սեփականությանը պատկանող հողատեսքերը կազմում են ընդամենը 374.92 հա, որից՝ 103.09 հա վարելահող, 6.72 պտղատու այգիներ, 265.11 հա այլ հողատեսքեր,
- ՀՀ իրավաբանական անձանց սեփականությանը պատկանող ընդամենը 153.63 հա-ից՝ արոտներ 143.87 հա, այլ հողատեսքեր 9.77 հա,

- համայնային սեփականությանը պատկանող 317.39 հա-ից՝ 18.74 հա վարելահող է, 259.16 հա արոտներ, 39.5 այլ հողատեսքեր:

Գյուղատնտեսական նշանակության հողերն ընդամենը կազմում են 845.94 հա:

### **3.2.9 Հատուկ նշանակության հողեր**

Արմավիրի քաղաքային համայնքի վարչական տարածքի սահմաններում հատուկ նշանակության հողերը կազմում են 132.81 հա: Դրանք գտնվում են քաղաքի տարբեր մասերում:

### **3.2.10 Հատուկ պահպանվող տարածքների հողեր**

Համայնքում հատուկ պահպանվող տարածքները ներկայացված են՝

- բնապահպանական 55.74 հա,
- պատմության և մշակութային – 54.06 հա

Ընդամենը հատուկ պահպանվող տարածքների հողերը զբաղեցնում են 109.80 հա, որից պետական սեփականության 55.74 հա, համայնքային՝ 54.06 հա:

### **3.2.11 Անտառային, ջրային, պահուստային հողեր**

Համայնքի վարչական սահմաններում անտառային հողեր չկան, ջրային տարածքները ներկայացված են հետևյալ տեսակներով՝

- գետեր - 2,58 հա - պետական
- ջրանցքներ - 13.17 հա, որից՝ 1,69 հա - համայնքային, 11.48 հա պետական:

Հիդրոտեխնիկական և ջրային այլ օբյեկտները գտնվում են համայնքային սեփականության հողերում և կազմում են ընդամենը - 3.38 հա: Ընդհանուր ջրային նշանակության տարածքները կազմում են 19.13 հա:

Պահուստային տարածքներ Արմավիրի համայնքի վարչական տարածքների սահմաններում չկան:

### **3.2.12 Հողօգտագործումն ըստ սեփականության ձևերի**

Ըստ սեփականության ձևերի հողօգտագործման փաստացի վիճակը ներկայացված է 3.2.12-1 աղյուսակում:

աղյուսակ 3.2.12-1

	Սեփականության սուբյեկտներ	Տարածք	
		հա	%
1.	Պետություն	232.31	10.67
2.	Համայնք	982.64	45.13
3.	ՀՀ քաղաքացիներ	808.66	37.14
	ՀՀ իրավաբանական անձինք	153.63	7.05
	Ընդամենը	2177.24	100.0

### **3.2.13 Ճանապարհային ցանց և տրանսպորտ /ներկա վիճակ/**

Արմավիր քաղաքը գտնվում է Արարատյան հարթավայրի ամենախիտ բնակեցված տարածքում՝ մայրաքաղաք Երևանից 48 կմ. դեպի արևմուտք։ Այս շրջանում հաղորդակցուղիները մեծ խտություն ունեն։ Քաղաքի հարավային հատվածով է անցնում միջպետական նշանակության Մ-5 Երևան - Արմավիր - պետական սահման՝ 52,3 կմ երկարությամբ ճանապարհը, որի 41 կմ Երևան - Էջմիածին - Արմավիր հատվածն առաջին կարգի է՝ երթևեկության չորս, տեղ-տեղ նաև վեց, շերտերով։ Արմավիրից 20 կմ դեպի հյուսիս, արևելք - արևմուտք ուղղությամբ անցնում է միջպետական նշանակության Մ-1 ճանապարհը՝ Երևան - Գյումրի - պետական սահման։ Մեկ այլ, Մարգարա - Վանաձոր - Տաշիր - հյուսիսային սահման՝ Մ-3 կոչվող ճանապարհը սկսվում է Մարգարա բնակավայրից։

Արմավիր քաղաքից են սկսվում հանրապետական նշանակության երկու ճանապարհ. Հ-17՝ Արմավիր - Իսահակյան - Գյումրի և Հ-15՝ Արմավիր - Արզավանդ - Մարգարա։

Էջմիածին-Արմավիր՝ Մ-5 ճանապարհի հատվածից է սկսվում մեկ այլ հանրապետական նշանակության Հ-16՝ Մեծամոր - ՀԱԷԿ ճանապարհը, իսկ Արմավիր - Նոր Կեսարիա հատվածից՝ Հ-18-ը դեպի սահմանամերձ Բագարան տանող ճանապարհը։

Արմավիրի հարավային մասով՝ Մ-5 ճանապարհին, այնուհետև Հ-17 ճանապարհին զուգահեռ, անցնում է Երևան - Գյումրի - Վանաձոր - Թբիլիսի երկաթուղին, որը կառուցվել է դեռևս 19-րդ դարի վերջին։

Մոտակա օդանավակայանը Ջվարթնոցն է, որն Արմավիրից գտնվում է 30 կմ հեռավորության վրա, իսկ Գյումրիի օդանավակայանը՝ 104 կմ։

Տրանսպորտային կապերի ապահովվածության տեսանկյունից Արմավիր քաղաքը և՛ վերգետնյա, և՛ օդային ուղիներով կապված է հանրապետության տարբեր մարզերի և արտասահմանյան երկրների հետ։ Ինչպես երևում է տրանսպորտային ուղիների ուրվագծից, թե՛ ավտոմայրուղային, թե՛ երկաթուղային ճանապարհներն անցնում են քաղաքի հարավային մասով։ Դեռևս խորհրդային տարիներին՝ 70-ական թվականներին, «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտը կազմել էր Արմավիր - Իսահակյան - Գյումրի (այն ժամանակ Հոկտեմբերյան - Իսահակյան - Լենինական) մոտ 100կմ երկարությամբ առաջին կարգի ճանապարհի նախագիծը, ըստ որի ճանապարհը, Մեծամոր ավան դեռևս չհասած, պետք է Էջմիածին-Արմավիր ճանապարհից թեքվեր դեպի հյուսիս և, շրջանցելով Արմավիր քաղաքը, անցներ Թալինից մոտ չորս կիլոմետր արևմուտք դեպի Իսահակյան կոչվող բնակավայր և, այնուհետև, դեպի Գյումրի։ Արմավիր քաղաքի մոտակայքում ճանապարհի հողային աշխատանքները մասամբ կատարվեցին, իսկ Իսահակյանի մոտակայքում՝ Ախուրյանի ջրամբարի հարևանությամբ, կառուցվեց ճանապարհի 6,5 կմ երկարությամբ մի հատված, և շինարարությունը հետագայում դադարեցվեց։ Դրա փոխարեն վերակառուցվեց Երևան - Աշտարակ - Գյումրի ճանապարհի հատվածը երկրորդ կարգի պարամետրերով, և Արմավիր - Իսահակյան - Գյումրի մայրուղու շինարարությունը չվերսկսվեց։ Ներկայումս «Լինսի»-ի հիմնադրամով պետք է վերականգնվի Գյումրի - Իսահակյան - Գետափ 60 կմ երկարությամբ սահմանամերձ ճանապարհը։ Գետափ բնակավայրն ընկած է Ախուրյան գետի ափին՝ Անի կայանից 9 կմ հարավ։

Ըստ «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի»՝ Արմավիր քաղաքից տարանցիկ ճանապարհը, որն անցնում է արևմուտքից դեպի արևելք, պետք է դուրս բերել քաղաքի տարածքից,



ինչպես ցուցադրված է ուրվագծում: Ճանապարհը նպատակահարմար է կառուցել այն պարագայում, երբ Հայաստանի տարածքով կիրագործվեն արտերկրային փոխադրումներ՝ արևելք - արևմուտք և հակառակ ուղղությամբ:

Ներքաղաքային ճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 89.6 կմ, այդ թվում արագընթաց շարժման մայրուղային ճանապարհները՝ 4 կիլոմետր: Էլեկտրաֆիկացված երկաթուղու երկարությունը (կրկնակի ուղի) նույնպես հավասար է 4 կիլոմետրի: Ճանապարհային ցանցը ունի կարգավորման և բարեկարգման կարիք:

Ներկայումս տարածքում գործում են մի շարք տրանսպորտային ձեռնարկություններ: Համաձայն Արմավիրի քաղաքապետարանի տվյալների /20.02.2006թ. թիվ 119/ Արմավիր քաղաքի ավտոտրանսպորտի կազմը ըստ տեսակների, շահագործման վաղեմության և նստատեղերի ներկայացված է 3.2.13-1 աղյուսակում:

աղյուսակ 3.2.13-1

Տրանսպորտի տեսակներ	Վաղեմություն, տարի վազքը, կմ						
	մինչև 3	4	5	6	7	8 և ավելի	ընդամենը
Բեռնատար	<u>5</u> 465	-	-	-	<u>2</u> 220	<u>382</u> 50512	<u>389</u> 51197
Մարդատար մինչև 10 նստատեղ	103 8974	26 2470	17 1463	6 527	19 1867	3274 246676	3445 261977
Մարդատար (10 և ավելի նստատեղ)	1 100	-	-	-	1 100	313 36910	315 37110

Տրանսպորտային միավորների ընդհանուր կազմում, նոր՝ մինչև 3 տարի, ավտոմեքենաների քանակը, ըստ տեսակների կազմում է՝

- բեռնատար 1.28%
- մարդատար, մինչև 10 նստատեղ 2,98%
- մարդատար, 10 և ավելի նստատեղ 0,3%:

Տրանսպորտային միավորների ընդհանուր կազմում, հին՝ 8 և ավելի տարի, ավտոմեքենաների քանակը, ըստ տեսակների կազմում է՝

- բեռնատար 98,2%
- մարդատար, մինչև 10 նստատեղ 95,0%
- մարդատար, 10 և ավելի նստատեղ 99,3%:

Արմավիր քաղաքի ներկայիս ավտոկայանատեղը ներկայացված է՝ 389 բեռնատար, 3445 թեթև մարդատար և 315 ավտոբուսներով և միկրոավտոբուսներով: Ավտոպարկի ընդհանուր քանակը կազմում է 4149 ավտոմեքենա:

Անհատական օգտագործման ավտոմեքենաները կայանվում են ըստ տերերի բնակության վայրի (բնակելի շենք, առանձնատուն): Տնամերձ հողամասերով սակավահարկ անհատական տներում

բնակվողների ավտոմեքենաները տեղավորվում են իրենց հողամասում և քաղաքում դրանց կայանման հետ կապված խնդիրներ չեն առաջանում: Լուրջ դժվարություններ է ստեղծում բազմաբնակարան շենքերում բնակվողների ավտոմեքենաների կայանման խնդիրը: Դրանք զբաղեցնում են բակային և միջբակային տարածքները, իրենց անկազմակերպ, և հակաէսթետիկ տեսքով ապականում են բնակելի միջավայրը, զբաղեցնում են կանաչապատման, մանկական և հանգստի համար նախատեսված տարածքները: Ինչպես այլ քաղաքներում, նույն թվում Երևանում և հիմա արդեն Արմավիր քաղաքում ևս, խնդիրը պահանջում է համապատասխան լուծում:

Քաղաքի բոլոր փողոցների երկարությամբ, բացառությամբ Երևանյան փողոցի, երթևեկային մասի եզրերով ձգվում են ոռոգման առուները:

2006թ. ամռանը կազմակերպվել է քաղաքի փողոցներով տրանսպորտի երթևեկային անցուղարձի հաշվառում և քարտեզագրում: Համաքաղաքային նշանակության փողոցների անցուղարձի ցուցանիշները բերված են թիվ 1 աղյուսակում և քարտեզագրամում:

Ինչպես երևում է աղյուսակից, քաղաքի ամենա ծանրաբեռնված փողոցը Երևանյանն է, որի կենտրոնական հատվածի բեռնվածության մակարդակն հասնում է 0.47-ի: Դա նշանակում է, որ այսօրվա դրությամբ փողոցն աշխատում է իր թողունակության կիսով չափ: Կա մեկ հանգամանք, որ բնորոշ է ՀՀ-ի բոլոր քաղաքներին. ավտոմոբիլային մակարդակի աճին զուգընթաց, շատանում է փողոցների եզրերով կայանած ավտոմեքենաների քանակը, որի պատճառով փողոցների բանուկ մասերը նեղանում են: Ստացվում է, որ ավտոմոբիլային մակարդակի աճի հետ մեկտեղ մեծանում է փողոցների բեռնվածությունը և միաժամանակ նեղանում երթևեկային մասը: Այս երևույթը բնորոշ է բոլոր զարգացած (կամ զարգացող) երկրների բնակավայրերին: Այս առումով բացառություն չի կազմում նաև Արմավիրը: Արդեն իսկ Երևանյան, Հանրապետության և Նալբանդյան փողոցների եզրերով, ցերեկվա ժամերին դիտվում է մայթերին հարավից կայանած ավտոմեքենաների շարքեր: Հատկապես դա հատուկ է Նալբանդյան փողոցին, որտեղ գտնվում է քաղաքային շուկան, և արդեն իսկ 336 ավտոմեքենա մեկ ժամում անցուղարձի պայմաններում շուկայի դիմաց խտացումներ են առաջանում:

Հետագա տարիներին, ավտոմոբիլացման աճին զուգընթաց, կբարձրանա նաև փողոցների բեռնվածության մակարդակը: Սակայն տրանսպորտի երթևեկության կազմակերպման տեսանկյունից առանձնակի դժվարություններ Արմավիր քաղաքի պայմաններում չեն առաջանա, քանի որ քաղաքի հիմնական մասի փողոցային ցանցն ունի ուղղանկյունաձև հատակագիծ, փողոցների բանուկ մասերը բավականաչափ լայն են, ինչը հնարավորություն կտա կիրառել միակողմանի երթևեկության սկզբունքը: Այսպես, օրինակ, երբ որևէ փողոցի բեռնվածության իրական մակարդակն հասնի 0.6-0.7-ի, կարելի է զուգահեռ փողոցները դարձնել միակողմանի և տրանսպորտի երթևեկությունը կդառնա ավելի արդյունավետ և անվտանգ: Դրա հետ մեկտեղ կնվազեն արտանետումները, կցածրանա աղմուկի մակարդակը:

Ներկայումս քաղաքում գործում է երեք ուղևորատար երթուղի, որտեղ աշխատում են միկրոավտոբուսներ: Երթուղիների ընդհանուր երկարությունը կազմում է 22.6 կմ:

Համաքաղաքային նշանակության փողոցների ցանցի առկա ցուցանիշները բերված են թիվ 1 աղյուսակում: Այդ կարգի փողոցների ընդհանուր երկարությունը կազմում է 16.375 կմ, իսկ խտությունը 2.0 կմ/կմ<sup>2</sup> :

### 3.2.14 Կանաչապատման առկա ցուցանիշներ

Արմավիր քաղաքը, ինչպես նշված է համապատասխան բաժիններում, գտնվում է կիսաանապատային լանդշաֆտային գոտում, խիստ մայրցամաքային կլիմայով, ջերմաստիճանի և օդի խոնավության տարեկան և օրեկան մեծ տատանումներով: Այս ամենը չափորոշիչ է քաղաքի կանաչապատման համակարգի ձևավորման և պահպանման համար:

Արմավիր բնակավայրի տարածքի 56%-ից ավելին զբաղեցնում է սակավահարկ տնամերձ, անհատական հողամասերով կառուցապատումը: Տնամերձ հողամասերի շուրջ 60%-ը զբաղեցված են պտղատու այգիներով և բանջարանոցներով:

Մասամբ կանաչապատված են նաև հասարակական տարբեր նշանակության կազմակերպությունների հողատարածքները:

Ընդհանուր օգտագործման կանաչապատ գոտիները՝ պուրակներն ու զբոսայգիները ներկայացված են հինգ, ոչ մեծ հատվածներով:

### Արմավիրի կանաչապատման առկա ցուցանիշները

աղյուսակ 3.2.14-1

Կանաչապատման տեսակները ըստ նշանակության	Տարածք	
	հա	մ <sup>2</sup> /մարդ
1. Ընդհանուր օգտագործման	7.06	1.77
2. Սահմանափակ օգտագործման	460.4	115.1
3. Հատուկ նշանակության, այդ թվում	23.85	5.96
Ընդամենը	491.3	122.8

Աղյուսակում ներկայացված ցուցանիշներից հետևում է, որ կանաչապատման ամբողջ զանգվածով, քաղաքի կանաչապատման պահանջը ապահովված է, սակայն նույնը չի կարելի ասել ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների ցուցանիշների վերաբերյալ, քանզի դրանք չեն բավարարում նորմատիվ պահանջը:

### 3.2.15 Ինժեներական ենթակառուցվածքներ (ներկա վիճակ)

Ինժեներական ենթակառուցվածքների ուրվագծերը նախագծելու համար, որպես ելակետային տվյալներ օգտագործվել են՝

- Արմավիր քաղաքի գլխավոր հատակագծային հորինվածքը կատարված «Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից
- ՀՀ «Նոր Ակունք» ՓԲԸ գրավոր տվյալները (07.02.2006թ N 56/02) Արմավիր քաղաքի առկա ջրամատակարարման և կոյուղացման վերաբերյալ

- «ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Մուսալեռ» մասնաձյուղի գրավոր տվյալները (21.01.06թ. N ԱԱ-54) քաղաքի առկա էլեկտրամատակարարման վիճակի վերաբերյալ
- «Հայռուսգագարդ» ՓԲԸ գրավոր տվյալները (15.08.05թ. ААО-05-15/2491) քաղաքի գազաֆիկացման և գազամատակարարման առկա վիճակի վերաբերյալ
- ՀՀ Առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և համաճարաքային տեսչության Արմավիրի մարզային կենտրոնի գրավոր տվյալները քաղաքի սանիտարահիգիենիկ վիճակի վերաբերյալ (13.02.06թ. N01-27116):

### **3.2.15.1 Ջրամատակարարում և ջրահեռացում (կոյուղի)**

Ներկայումս Արմավիր քաղաքային համայնքի ջրամատակարարումն իրականացվում է քաղաքի գործող, օրվա կարգավորիչ ջրամբարների հարակից տարածքում իրականացված հինգ խորքային հորերից, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 21,0 հազ. մ<sup>3</sup>/օր: Խորքային հորերից, ՄՕՁ-12-160-100 մակնիշի պոմպերի միջոցով, ջուրն առանձին ջրագծերով մղվում է քաղաքի կենտրոնացված ջրամատակարարման համակարգի գլխամասային կառույցների տարածքում գործող մարիչ հորը, որտեղ և կատարվում է ջրի վարակագերծում, այնուհետև ինքնահոս խողովակաշարով լցվում քաղաքի գործող կարգավորիչ ջրամբարները, որտեղից առանձին ջրատարներով տրվում է բնակավայրի ներքին բաշխիչ ցանցի օղակային հինգ գոտիներին:

Ներկայումս կեղտաջրերը պատշաճ մաքրման չեն ենթարկվում: Արմավիր և Մեծամոր քաղաքների կեղտաջրերը նախկինում ենթարկվում էին կենսաբանական մաքրման՝ Մեծամորից հարավ ընկած տարածքում գտնվող մաքրման կայանում: 1989թ.-ից շուրջ 15 տարի հայտնի պատճառներով կայանը չի գործել. բարոյապես և ֆիզիկապես շարքից դուրս է եկել և վերականգնման համար դարձել ոչ նպատակահարմար: Շահագործող կազմակերպության կարծիքը հաշվի առնելով՝ պահանջվում է կառուցել նոր ժամանակակից մաքրման կայան հարակից տարածքում:

### **3.2.15.2 Էլեկտրամատակարարման ներկա վիճակը**

Ներկայումս Արմավիր քաղաքի էլեկտրամատակարարման գլխավոր սնուցող ենթակայաններն են՝

- «Արմավիր» Ե/կ 110/35/10 5 ՄՎԿ հզորությամբ ԿՎ լարման 2x31.,
- «Ուրարտու» Ե/կ 110/10 ԿՎ լարման 1x25 ՄՎԱ հզորությամբ :

Գոյություն ունեցող բարձր լարման ենթակայանների տրանսֆորմատորների ընդհանուր հզորությունը 56.5 ՄՎԱ է: Հանրապետության էլեկտրահամակարգի հետ կապը իրականացվում է «Արմավիր-1», «Արմավիր-2» 110 ԿՎ բարձր լարման օղային գծերով: Քաղաքի բնակելի, հասարակական, տնտեսական, արդյունաբերական ձեռնարկությունների և արտաքին լուսավորության պահանջները բավարարում են վերը նշված գլխավոր իջեցնող ենթակայաններից, քաղաքում գործող երկու բաշխիչ կետերի(ԲԿ) և 10/04 լարման ցանցային 68 ենթակայանների միջոցով, որոնցից 59 - ը մեկտրանսֆորմատորով, իսկ 9 - ը երկտրանսֆորմատորով. միջին հզորություններ 250 ԿՎԱ, քաղաքի ներքին բաշխիչ ցանցի մալուխային 10 ԿՎ լարման գծերի երկարությունը 140 ԿՄ է, օղային գծերինը՝ 150 ԿՄ:

Ներկայումս քաղաքի էլեկտրաէներգիայի գումարային ծախսը 30 մլն ՄՎԱ է, որից 28.95 ՄՎԱ բնակչության կարիքների համար, իսկ արտադրական ձեռնարկություններինը՝ 1.065 ՄՎԱ: Մեկ բաժանորդի էլեկտրական էներգիայի տարեկան սպառումը 2890 կՎՏ/ժամ: Էլեկտրամատակարարման համակարգի տեխնիկական վիճակը բավարար է:

### **3.2.15.3 Զերմամատակարարման ներկա վիճակը**

Մինչև 1991թ.-ը Արմավիր քաղաքում գործում էր կենտրոնացված ջերմային համակարգը, բազմաբնակարան բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման կարքներն ապահովվում էր երկու կենտրոնական կաթսայատներից: Ներկայումս կենտրոնացված համակարգի, նախկինում գործող ամբողջ ջերմային ցանցերն ու հանգույցները երկար տարիներ չգործելու հետևանքով քայքայվել են, չարքից դուրս են եկել և սպառել նորմատիվային ժամկետները: Պետք է նշել նաև, որ ջերմային կորուստները բաշխիչ ցանցերում հասնում էին 30-40%-ի և որպեսզի անհրաժեշտ քանակի ջերմություն տրվեր սպառողին, հարկավոր էր լրացուցիչ 30-40 % ավելի գազ այրել կաթսայատներում, ինչն իր հերթին բերում էր լրացուցիչ գումարային ծախսի, ավելացնելով նաև օդի աղտոտվածությունը:

### **3.2.15.4 Գազամատակարարման ներկա վիճակը**

Արմավիր քաղաքը հիմնականում գազաֆիկացված է: Գազամատակարարման աղբյուր է հանդիսանում «Երևան - Գյումրի» բարձր ճնշման գազատարը՝ 500մմ տրամագծով: Քաղաքի գազամատակարարումը իրականացվում է «Արմավիր» գազաբաշխիչ կայանի միջոցով: Համաձայն «Հայրուսգազարդի» գրավոր տվյալների՝ 15.08.2005թ. N 05-15/2491 ավարտվում է քաղաքի վերագազաֆիկացման աշխատանքները: Քաղաքի վերականգնված և նոր կառուցված բաշխիչ ցանցի երկարությունը, 1.01.2005թ. դրությամբ, կազմում է 152 կմ, ԳԿԿ և ՊԳԿԿ՝ ընդհանուր քանակը 27 հատ է: Կոմունալ-կենցաղային և արտադրական նպատակներով սպառված բնական գազի տարեկան օգտագործման քանակը 6243.022 հազ.խ.մ է, որից կոմունալ-կենցաղայինը՝ 3431.894 հազ. խ. մ., արտադրական կարիքների համար՝ 2811.128 հազ. խ. մ., բաժանորդների քանակը՝ 8624: Ներկայումս քաղաքում կաթսայատները չեն գործում:

### **3.2.15.5 Կապը**

Արմավիր քաղաքի հեռախոսաին կապը իրականացվում է «Արմենտել» ՓԲԸ-ի «Արմավիր» ավտոմատ կայանի միջոցով, որի ընդհանուր հզորությունը 10324 համար է, որից 5 համարանիշով 1024 համար, իսկ 6 համարանիշով՝ 9300 համար: Կայանի հզորությունը կմեծացվի պահանջարկի դեպքում:

## **4. Շրջակա միջավայրի համալիր վերլուծություն**

### **4.1 Նպատակը և խնդիրները**

Արմավիր քաղաքի գլխավոր հատակագծի «Շրջակա միջավայրի պահպանումը» բաժինը իրենից ներկայացնում է փաստաթուղթ, որտեղ արտացոլված են բնական պաշարների (օդ, ջուր, հող, բուսականություն, հանքեր) ինտենսիվ և արդյունավետ օգտագործման վերաբերյալ նախագծային, պրակտիկ գործունեության արդյունքները՝ տնտեսության ճիշտ կազմակերպման, կոմունիկացիաների, կաթսայատների ճիշտ տեղադրման, անթափոն տեխնոլոգիաների և մաքրման սարքավորումների կիրառմամբ, կենցաղային և արդյունաբերական թափոնների մաքսիմալ օգտագործման և վնասագերծման ճանապարհով:

Աշխատանքի հիմնական նպատակն է՝ հիմնավորել և մշակել քաղաքի տարածքային զարգացման ընթացքում շրջակա միջավայրի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումներ ու որոշել առաջնահերթ միջոցառումները:

Որպես մշակման որոշիչ կոնցեպցիա ընդունված է՝ առանձնացնել այն առաջնահերթ միջոցառումները, որոնց իրականացումը հնարավորություն կտա քաղաքի զարգացման ընթացքում, թույլ չտալ ներկա իրավիճակի վատթարացում և առավելագույնս իջեցնել շրջակա միջավայրի աղտոտվածության աստիճանը:

Աշխատանքը կատարված է (1,2) մեթոդական ցուցմունքների հիման վրա, գործող նորմատիվների, պետական ստանդարտների, բնապահպանական օրենքների հիման վրա:

### **4.2 Տարածքի ընդհանուր էկոլոգիական բնութագիրը**

Տարածքի ընդհանուր էկոլոգիական բնութագրման նպատակը կայանում է տարածքի շրջակա միջավայրի բացահայտման, ինչպես նաև տարածքի ընդհանուր էկոլոգիական պարամետրերի՝ ինժեներա-էկոլոգիական բնութագրերի և ինդեքսների, որոշման մեջ:

#### **4.2.1 Ինժեներա-էկոլոգիական բնութագրերը**

Տարածքի ժողովրդագրական ծավալը կամ շենային ժողովրդագրական ծավալը, դա բնակչության առավելագույն թիվն է, որը կարող է տեղակայվել տվյալ տարածքի սահմաններում՝ պայմանով, որ պետք է բավարարվեն բնակչության ամենօրյա կարևոր պահանջները տեղանքի պաշարների հաշվին, առանց էկոլոգիական հավասարակշռության խախտման:

Արդյունաբերական և քաղաքացիական շինարարության համար պիտանի տարածքների առկայությամբ ժողովրդագրական ծավալը կազմում է.

$$D_i = \sum_{i=1}^n T_i \cdot 1000 / H, \text{մարդ, որտեղ.}$$

$T_i$  -  $T$ -րդ տարածքն է, որը ստացել է առավելագույն գնահատականը, հա:

$T_i = 1140,3$  հա; Արմավիր քաղաքի տարածքը՝ 760հա:

$H$  - Հազար բնակչին անհրաժեշտ տարածքն է, կախված տարածքի արտադրական բազայի բնույթից:

$$H=20$$

$$D_1=57015 \text{ մարդ} \sim 60 \text{ հազար մարդ}$$

2. Տարածքի ժողովրդագրական ծավալը ըստ ջրային պաշարներով ապահովման որոշվում է.

$$D=D_2 + D_3, \text{ որտեղ.}$$

$D$  - Տարածքի ընդհանուր ժողովրդագրական ծավալն է, ըստ ջրային պաշարների, մարդ:

$D_2$  - Մասնակի ժողովրդագրական ծավալն է, ըստ մակերևութային ջրերի, մարդ:

$D_3$  - Մասնակի ժողովրդագրական ծավալն է, ըստ խորքային ջրերի:

$$D_2 = \frac{\sum P_i \times K}{P_n}, \text{ որտեղ}$$

$\sum P_i$  – մակերևութային հոսքի ջրային պաշարները (հազ. մ<sup>3</sup>/օր)

$K$  – օգտագործման չափի գործակից – 0,1

$P_n$  – 1 բնակչի նորմատիվային ջրապահովվածությունը (0,5մ<sup>3</sup>/օր)

$$D_2 = \frac{1296 \cdot 0,1}{0,5} = 259,2 \approx 260 \text{ հազ.մարդ}$$

$$D_3 = \sum P_i \times K / P_n, \text{ որտեղ}$$

$\sum P_i$  խմելու որակի ջրային պաշարները (հազ. մ<sup>3</sup>/օր) - 21

$K$  – կորուստները հաշվի առնող գործակից – 0,7

$P_n$  – 1 բնակչի նորմատիվային ջրապահովվածությունը (0,5մ<sup>3</sup>/օր)

$$D_3=30000 \text{ մարդ}$$

$$D=290000 \text{ մարդ}$$

3. Ռեկրեացիոն պաշարների առումով տարածքի ժողովրդագրական ծավալը որոշվում է.

$$D_3=D_4+D_5 \text{ բանաձևով, որտեղ`}$$

$$D_4 = T_p \cdot J \cdot 0,5 \cdot 1000 / 100 \cdot H \cdot M$$

$T_p$  - Տարածքի մակերեսն է - 760հա

$J$  - Տարածքի անտառապատվածությունը % -0,6:

$H$  - 2 կմ<sup>2</sup>

$M$  - 0.1

$$D_4=11400 \text{ մարդ}$$

4. Ջրային ավազանի մոտ հանգստի կազմակերպման պայմաններով տարածքի ծավալը որոշվում է.

$$D_5=2 \cdot B \cdot C \cdot 1000 / 0,5 \cdot M \text{ մարդ, որտեղ.}$$

$B$  - Փետի հատվածն է, որտեղ կարելի է լողալ, կմ – 3,0կմ

$C$  - Գործակից, որը հաշվի է առնում լողափների կազմակերպման հնարավորությունը, տափաստանային գոտու համար  $C=0,5$

0,5 - 1000 բնակչին անհրաժեշտ լողափների մոտավոր նորմատիվն է:

$M_1$  - Գործակից, որը հաշվի է առնում հանգստացողների տեղաբաշխումը անտառում և ջրի մոտ -  $M_1=0,10$  - չոր կլիմա ունեցող շրջանի համար:

D<sub>5</sub>~40000 մարդ; D<sub>3</sub>=51400 մարդ~51000

Այսպիսով, ստացված տվյալների համաձայն որպես ժողովրդագրական ծավալի վերջնական ցուցանիշ ընտրված է 51000 մարդ:

5. Տարածքի վերարտադրողական ունակությունը մթնոլորտային թթվածնի օգտագործմամբ որոշվում է.

$$\Pi_K = \sum_{i=1}^n C_i \cdot T \cdot K_1 \text{ տ, որտեղ.}$$

$\Pi_K$  - Արգասավորությունն է ըստ թթվածնի, տ

$C_i$  - Օրգանական նյութի տարեկան արտադրողականությունն է i-րդ բուսական խմբավորումից, տ/տարի – 6տ/հա

$K_1$  - Անցման գործակից - 1,45

$T$  - Կանաչապատ տարածքների մակերեսն է, հա  $T=169,42$  հա

$K_0=1473,9$ տ

6. Ջրային պաշարների վերարտադրողական ունակությունը որոշվում է.

$$\Pi_B = \sum_{i=1}^n T_i \cdot \lambda \cdot K_2 \text{ մ}^3, \text{ որտեղ.}$$

$\lambda = 10,1 \text{ l/մ}^2$

$K_2 = 0,5$

$T_1 = 1150$  հա

$$\Pi_B = 1150 \cdot 10,1 \cdot 0,5 = 5807,5 \text{ մ}^3$$

7. Տարածքի վերարտադրողական ունակությունը բուսականությունով որոշվում է.

$$\Pi_P = \sum_{i=1}^n C_i \cdot T_i, \text{ որտեղ.}$$

$\Pi_P$  - Տարածքի վերարտադրողականությունն է ըստ բուսական մասսայի, տ

$C_i$  - 1 հա բուսականությամբ տարածքի տարեկան վերարտադրողականությունն է, տ

$T$  - Կանաչապատ տարածքն է, հա - 169,42 հա

$K_P=1016,52$ տ

8. Տարածքի դիմադրողականությունը ֆիզիկական բեռնվածությամբ:

Սա բնութագրում է այս կամ այն լանդշաֆտային դիմադրողականությունը ֆիզիկական անտրոպոգեն ազդեցություններին (ռեակրացիոն, տրանսպորտային և ուրիշ ազդեցություններ):

Տարածքի հարաբերական դիմադրողականությունը ֆիզիկական ազդեցություններին որոշվում է.

$$Y_\Phi = \sum_{i=1}^n y_i \cdot T_i / y_1 \cdot T, \text{ որտեղ.}$$

$\delta_1$  - Տարածքի դիմացկունության գործակիցն է, որը միշտ < 1:

$\delta_i$  - i-րդ տարածքի դիմացկունությունն է, մարդ/հա - 93:

$T_i$  - i-րդ տեղամասի մակերեսն է, հա - 643:



ձ<sub>1</sub> - Էտալոնային լանդշաֆտի դիմացկունությունն է ֆիզիկական ազդեցություններին, մարդ/հա - 200:

T - Տարածքի մակերեսն է, հա - 760

$$Y_{\Phi} = \frac{93 \cdot 643}{200 \cdot 760} = \frac{59799}{152000} = 0,39 \prec$$

#### **4.2.2 Տարածքի տնտեսության ներկա իրավիճակի բնութագիրը և զարգացման հեռանկարները**

Արմավիր քաղաքի տարածքը կազմում է 814.95 հա: Բնակչությունը կազմում է ըստ տեղական իշխանությունների հաշվարկի 40 հազար մարդ:

Արմավիր քաղաքում տեղակայված են 10-ից ավելի արդյունաբերական ձեռնարկություններ: Դրանց մեջ մասնագիտացված ձյուղը հաստոցաշինական, գյուղմթերքների և կոնյակի արդյունաբերությունն է: Քաղաքում կան սննդի, թեթև արդյունաբերության արտադրություններ, ինչպես նաև գյուղ մթերքների վերամշակման, հացաթխման գործարան, «Հոկտեմբերյանի ֆերոսպլավ» ՓԲԸ, Արմավիրի ԲՈՒՍ ԲԲ տրանսպորտային ընկերությունը, «Երևանի կոնյակի գործարան» ՓԲ ընկերության Արմավիրի մասնաձյուղը: Նշված արտադրությունների մեծ մասը սեփականաշնորհված է: Հեռանկարում նախատեսվում է արդյունաբերական ձեռնարկությունների առավել արդյունավետ շահագործում և վերազինում, նոր արդյունաբերական ձեռնարկությունների շահագործում «Արմավիր» արդյունաբերական հանգույցում:

#### **4.3 Արմավիր քաղաքի շրջակա միջավայրի ներկա իրավիճակը**

##### **4.3.1 Մթնոլորտային օդի պահպանություն. Մեթոդակարգային մոտեցումներ**

Որպես որոշիչ կոնցեպցիա ընդունված է՝ առաջնահերթ միջոցառումների առանձնացումը, որոնց իրականացումը թույլ չի տա օդային ավազանի աղտոտվածության մակարդակի բարձրացում: Օդային ավազանի աղտոտվածության վիճակի գնահատականը ընդգրկում է հետևյալ էտապները՝

- առաջնային ձեռնարկությունների և վնասակար նյութերի դասակարգումը (ռանգավորումը) :
- մթնոլորտ համախառն արտանետումների որոշումը (գումարային և ինգրեդիենտներով) արդյունաբերության, էներգետիկայի, ավտոտրանսպորտի արտանետումների տեսակարար կշռի գնահատմամբ:
- ամբողջական աղբյուրների արտանետումներից մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակների որոշումը և ցրման արեալների որոշումը:
- մթնոլորտային օդի աղտոտվածության գոտիների գնահատումը հիգիենիկ իրավիճակով
- քաղաքի տարածքի գնահատումը ըստ օդային ավազանի աղտոտվածության իրավիճակի բարենպաստության աստիճանի:

Արդյունաբերական ձեռնարկությունների համախառն արտանետումների մասին տեղեկությունները վերցված են ՍԹԱ-ի նախագծերից և «2Ձկ – օդ» տարեկան հաշվետվություններից: Ձեռնարկությունների և կոմունալ կաթսայատների արտանետումները որոշված են հաշվարկային եղանակով, կաթսաների և վառելիքի քանակի հիման վրա:

Ավտոտրանսպորտի արտանետումները որոշված են քաղաքում հաշվառված ավտոմեքենաների քանակից և խմբերից ելնելով (քաղաքի պետավտոտեսչության տրամադրած տվյալները):

Մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակները (առավելագույն մերձգետնյա կոնցենտրացիաները) և տեխնոգեն ցրման արեալները որոշված են հաշվարկային եղանակով, համակարգչով՝ «Ռադուգա» ծրագրով:

Տարածքի գնահատականը օդային ավազանի իրավիճակով տրված է բազմաբնույթ անալիզի հիման վրա՝ մետեոպոտենցիալի, ուլտրամանուշակագույն ճառագայթման, տեղումների, ռելիեֆի և սոցիալ-տնտեսական ցուցանիշների (բնակչության խտություն, արդյունաբերական պոտենցիալ, ավտոճանապարհների խտություն, ֆոնային աղտոտվածություն) հաշվառմամբ:

Տեխնոգեն ցրման ստացված արեալները իրենց բնութագրերով ցույց է տրված 1:5000 մասշտաբի հատակագծի վրա:

Աշխատանքում բոլոր տվյալները բերված են 01.01.2005թ. դրությամբ:

#### **4.3.1.1 Մթնոլորտի աղտոտվածության ներկա իրավիճակը**

Մթնոլորտի աղտոտվածության մակարդակները ըստ ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի մոնիտորինգի կենտրոնի տվյալների բերված են աղյուսակ 4.3.1.1-1-ում /3, 4/:

Աղյուսակ 4.3.1.1-1

Արմավիր քաղաքի մթնոլորտում աղտոտող նյութերի  
ֆոնային կոնցենտրացիաների արժեքները

դ. ը/հ	Աղտոտող նյութերի կոդերը և անվանումները	ՍԹԿ-ն բնակելի գոտում, մգ/մ <sup>3</sup>	Ֆոնային կոնցենտրացիաների արժեքները, մգ/մ <sup>3</sup>
1	2	3	4
1	002 – Փոշի	0.5	0.3
2	701 – Ծծմբի երկօքսիդ	0.5	0.05
3	200 – Ազոտի երկօքսիդ	0.085	0.015
4	322 – Ածխածնի օքսիդ	5	0.8

Ինչպես երևում է աղյուսակից Արմավիր քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակները գտնվում են բնակելի գոտու համար սահմանված նորմերում:

Քաղաքի ֆիզիկա-աշխարհագրական և կլիմայական պայմանները խոչընդոտում են մթնոլորտում վնասակար նյութերի ցրմանը՝ ինչի հետ կապված տարածքը դասվում է մթնոլորտի աղտոտվածության բարձր պոտենցիալ ունեցող գոտիների շարքը:

#### **4.3.1.2 Մթնոլորտի աղտոտման աղբյուրները**

Արմավիր քաղաքի մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուրները հանդիսանում են արդյունաբերական ձեռնարկությունները և ավտոտրանսպորտը:

Արդյունաբերական ձեռնարկությունները այժմ գործում են իրենց հզորությունների 5-10%-ի չափով: Բացի դրանից քաղաքում գործում են մի շարք փոքր ձեռնարկություններ, որոնք քաղաքի աղտոտվածության մակարդակում որոշիչ ներդրում ունեցող աղբյուրներ չեն հանդիսանում:

Ձեռնարկությունների և վնասակար արտանետումների դասակարգումը ըստ վնասակարության ինդեքսի /5/:

Դասակարգումը կատարված է՝  $r_i = \frac{M}{\text{ՍԹԿմ.մ.}}$  բանաձևով՝ ինգրեդիենտների համար,

$$r = \frac{M}{\text{ՍԹԿմիջին.օր.}} \text{ ձեռնարկությունների, որտեղ՝}$$

$r_i$  - ինգրեդիենտների վնասակարության ինդեքս

$r$  – բերված համախառն արտանետում;

$M$  – վնասակար արտանետումների տարեկան քանակն է, տ/տարի

ՍԹԿմ – մաքսիմալ միանգամյա ՍԹԿ-ների արժեքներն են, մգ/մ<sup>3</sup>:

ՍԹԿ<sub>միջ. օր.</sub> – միջին օրական ՍԹԿ-ները

Ձեռնարկությունների և վնասակար արտանետումների գերակայությունների ցանկը բերված են աղյուսակներ 4.3.1.2-1 և 4.3.1.2-2 -ում /6, 7, 8, 9/:

Աղյուսակ 4.3.1.2-1

Արմավիր քաղաքի գերակայող արդյունաբերական ձեռնարկությունների ցանկը

դ/դ	Ձեռնարկությունների անվանումը	Համախառն արտանետումներ տ/տարի	Ձեռնարկության դասը	Սանիտարա-պաշտպանիչ գոտու չափը, մ
1	2	3	4	5
1	«Հոկտեմբերյանի ֆերոսպլավ» ՓԲԸ	485,1	III	300
2	Կաթսայատներ	31,4	V	50
3	Արմավիրի հաստոցաշինական գործարան	4,3	V	50
4	«Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ Արմավիրի մասնաճյուղ	21,6	V	50
5	Հացի գործարան	3,2	V	50
6	Շինարարական կազմակերպություն	1,7	IV	100
7	Ավտոտրանսպորտային ձեռնարկություն	2,33	V	50
8	Կաթի ֆաբրիկա	0,3	V	50
9	Ալրաղաց	0,84	IV	100
10	Քարի մշակման արտադրամաս	0,144	V	50
	ԸՆԴԱՄԵՆԸ	550,9		

Աղյուսակ 4.3.1.2-2

Արմավիր քաղաքի մթնոլորտում գերակայող վնասակար արտանետումների ցանկը

դ/դ	Անվանումը	Արտանետումների տարեկան քանակը, տ	Վտանգավորության դասը
1	2	3	4
1	Ծծմբի երկօքսիդ	407,4	3
2	Ազոտի օքսիդներ	14,13	2
3	Ավազի և խճի փոշի	62,4	3
4	Ամիակ	3,93	4
5	Մանգանի օքսիդներ	0,117	2
6	Ածխածնի օքսիդ	46,2	4
7	Աբրազիվ և մետաղական փոշի	2,24	3
8	Յուղի աէրոզոլներ	0,185	-

9	Ալյուրի և ցորենի փոշի	1,14	3
10	Էթիլ սպիրտ	9,4	4
11	Ածխաջրածիններ	2,16	4
12	Փայտափոշի	0,42	3
13	Եռակցման աէրոզոլ	0,4	3
14	Ցեմենտի փոշի	0,2	3
15	Քսիլոլ	0,1	3
16	Բենզոլ	0,32	2
17	Ացետոն	0,07	4
18	Տոլուոլ	0,025	3
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	550,9	

Մթնոլորտի աղտոտման մեջ զգալի բաժինը ընկնում է ավտոտրանսպորտի վրա; որի արտանետումների քանակները ներկա իրավիճակում բերված են աղյուսակ 4.3.1.2-3-ում /10/:

Ավտոտրանսպորտից վնասակար արտանետումները մթնոլորտ

Աղյուսակ 4.3.1.2-3

Տրանսպորտի տեսակները	Աղտոտող նյութերը, տ/տարի			
	Ածխածնի օքսիդ	Ազոտի օքսիդներ	Ածխաջրածիններ	Ընդամենը
1. Բեռնատար	370,6	32,8	83,6	487,0
2. Ավտոբուսներ	289,5	12,9	36	338,4
3. Մարդատար	115,0	6,8	15,7	137,5
Ընդամենը	775,1	52,5	135,3	962,9

Ներկայումս քաղաքի ջերմամատակարարումը իրականացվում է անհատական: Կոմունալ և արդյունաբերական կաթսայատները հիմնականում չեն գործում: Քաղաքը 80-90%-ով գազիֆիկացված է:

Արմավիր քաղաքի մթնոլորտն աղտոտող աղբյուրների բնութագիրը աղտոտման ծավալներով և տնտեսությանը հասցված տնտեսական վնասի գնահատականով բերված է աղյուսակ 4.3.1.2-4-ում /11/:

Մթնոլորտ արտանետումների տարեկան քանակները և հասցված տնտեսական վնասները

Աղյուսակ 4.3.1.2-4

Անվանումը	Արտանետումների քանակը տ/տարի ներդրման %	Տնտեսությանը հասցված տնտեսական վնասը, հազ. դրամ/տարի
1. Արդյունաբերական ձեռնարկություններ	<u>519,5</u> 34,3	72247,6
2. Ավտոտրանսպորտ	<u>962,9</u> 63,6	24194,9
3. Կաթսայատներ	<u>31,4</u> 2,1	2304,6

Անվանումը	Արտանետումների <u>քանակը</u> տ/տարի ներդրման %	Տնտեսությանը հասցված տնտեսական վնասը, հազ. դրամ/տարի
Ընդամենը՝	<u>1513,8</u> 100	98747,1

Արմավիր քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններից ներկա իրավիճակում մթնոլորտ են արտանետվում տարեկան 519,5 տ վնասակար նյութեր:

Առաջնային վնասակար նյութեր են հանդիսանում 18 ինգրիդիենտ՝ 2-4 դասի վտանգավորության:

Հիմնական աղտոտման աղբյուր հանդիսանում է ավտոտրանսպորտը:

Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետումները ներկա իրավիճակում կազմում են տարեկան ~ 962,9 տ, որը կազմում է քաղաքի ամբողջ արտանետումների 63,6%:

Ավտոտրանսպորտի մթնոլորտ վնասակար արտանետումներից տնտեսությանը հասցված վնասը ներկա իրավիճակում գնահատվում է տարեկան 24,2 մլն.դրամ ,արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումներից՝ 72,2 մլն. դրամ:

Ընդհանուր տնտեսական վնասը մթնոլորտի աղտոտումից կազմում է տարեկան 98,7 մլն. դրամ:

#### **4.3.2 Տարածքի համալիր էկոլոգիական գնահատականը**

Տարածքի համալիր գնահատականը տրված է /2/-ի հիման վրա: Տարածքի համալիր գնահատականը տրված է տեղանքի կլիմայական պայմանների , մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի , արդյունաբերական պոտենցիալի , բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ:

Օդային ավազանի գնահատականը բերված է աղյուսակ 4.3.2-1-ում:

Աղյուսակ 4.3.2-1

Օդային ավազանի գնահատականը անտրոպոգեն ազդեցությամբ, հիգիենիկ իրավիճակով և տարածքի համալիր գնահատականը

Անվանումը	գնահատականը			Աղտոտման մակերեսը բնակելի գոտում, հա
	անտրոպոգեն ազդեցությամբ	հիգիենիկ իրավիճակով	տարածքի համալիր գնահատականը	
1	2	3	4	5
1. Գոտի	թույլ ազդեցության գոտի	վտանգ չի հարուցում	բարենպաստ	300
2. Գոտի	միջին ազդեցության գոտի	ծտանգ է հարուցում	բարենպաստ	200

Անտրոպոգեն թույլ ազդեցության գոտին կազմում է 300հա, միջին ազդեցության գոտին՝ 200 հա: Տարածքի համալիր գնահատականը՝ բարենպաստ:

#### **4.4 Մակերևութային և ստոհերկրյա ջրերի պահպանություն**

Բաժինը ընդգրկում է գումարային տվյալների արդյունքների և քաղաքի ջրային միջավայրի վիճակի պահպանման վերաբերյալ առաջարկությունների շարադրում:

Բաժնի հիմնական փուլերը ընդգրկում են՝

- մեթոդակարգային հիմնավորում
- ներկա վիճակի վերլուծություն
- կանխատեսելի էկոլոգիական արդյունքներ և միջոցառումների տնտեսական էֆեկտիվություն
- ջրային ռեսուրսների պահպանման միջոցառումների վերաբերյալ հիմնական դրույթներ

##### **4.4.1 Մեթոդակարգային հիմնավորում**

Ինչպես հիմնական էկոլոգիական հայտանիշներ ընդունված են՝

- աղտոտվածության ծավալի գնահատման համար վնասակարության ինդեքս (ԼԹ);
- աղտոտվածության ինտենսիվության բնութագրման համար եւ նոսրացման բազմապատիկությունը մինչև սահմանային-թույլատրելի նորմաները:

##### **4.4.2 Քաղաքի ջրամատակարարման և կոյուղու ներկա իրավիճակը**

Արմավիր քաղաքի տարածքի համար խիստ կարևոր նշանակություն ունի ջրային ավազանի պահպանությունը:

Տարածքը տեղակայված է Արարատյան հարթավայրի Արևմտյան մասում, որտեղ կենտրոնացված են արտեզյան խմելու ջրերի պրակտիկորեն անսպառ պաշարները: Արտեզյան ջրերի հորիզոնները հիդրավիկորեն կապված են երկրի մակերեսին մոտ գտնվող գրունտային ջրերի հորիզոնների հետ, որոնք ենթակա են կեղտոտման, քաղաքի արդյունաբերական և կենցաղային օբյեկտներից հեռացվող կեղտաջրերից, անձրևաջրերից, ոռոգման ցանցի ջրերից:

###### **4.4.2.1 Ջրամատակարարումը**

Արմավիր քաղաքը ունի կենտրոնացված ջրամատակարարում: Բնակչության, ինչպես նաև արտադրական ձեռնարկությունների խմելու և տնտեսական կարիքների պահանջարկը իրականացվում է քաղաքի գործող, օրվա կարգավորիչ ջրամբարների հարակից տարածքում իրականացված խորքային հորերից, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 21,0 հազ. մ<sup>3</sup>/օր: Խորքային հորերից պոմպերի օգնությամբ ջուրն առանձին ջրագծերով մղվում է քաղաքի կենտրոնացված ջրամատակարարման համակարգի գլխամասային կառույցների տարածքում գործող մարիչ հոր: Վարակազերծումից հետո, ջուրն ինքնահոս խողովակաշարով լցվում է քաղաքի գործող կարգավորիչ ջրամբարները, որտեղից առանձին ջրատարներով տրվում է բնակավայրի ներքին բաշխիչ ցանցի օղակային հինգ գոտիներին:

###### **4.4.2.2 Ջրահեռացում (կոյուղի)**

Արմավիր քաղաքը կոյուղացված է, 95%-ով: :

Կոյուղու ցանցի ընդհանուր երկարությունը՝ 84կմ է, տրամագծերը՝ 150-400մմ գլխավոր կոլեկտորների երկարությունը 18կմ, տրամագիծը՝ 500-1000մմ: Քաղաքի ներքին ցանցի տեխնիկական վիճակը բավարար է:

Կոյուղու մաքրման կայանը գտնվում է Մեծամոր ավանի դիմաց գտնվող տարածքում, հզորությունը՝ 17 հազ.մ<sup>3</sup>/օր: Կոյուղու մաքրման կայանում կատարվում է միայն մեխանիկական մաքրում և ոչ լրիվ մաքրված և վարակազերծված կոյուղաջրերը լճանում են հարող տարածքում և անկազմակերպ թափվում են Սև ջուր գետը: Քաղաքը, բացի կենտրոնական մասից չունի փողոցների

և տարածքի մակերևութային ջրերի հեռացման ցանց և քանի որ տարածքի թեքությունը փոքր է, հորդ անձրևներից առաջացած ջրերը ներծծվելով, օժանդակում են գրունտային ջրերի բարձր մակարդակ առաջացնելուն: Բացի դրանից արտադրական ձեռնարկությունների հոսքաջրերը կոյուղու ցանց են թափվում առանց նախնական մաքրման, ինչը հանգեցնում է մաքրման կայանի աշխատանքի արդյունավետության նվազեցմանը:

Ներկա իրավիճակում ինչպես ջրմուղի ներքին բաշխիչ ցանցի, այնպես էլ կոյուղու ներքին ցանցի համար «Նոր Ակունք» ՍՊԸ կողմից իրականացվել են համապատասխան նախագծա-նախահաշվային և շինարարական աշխատանքների կատարում: Ենթադրվում է, որ աշխատանքները կավարտվեն 2006թ. ամռանը: Աշխատանքներ են տարվում նաև կենսաբանական մաքրման կայանի վերակառուցման ուղղությամբ:

Ծախսը Արմավիր քաղաքի կոյուղու ցանցում կազմում է 3,96 հազ. մ<sup>3</sup>/օր; այդ թվում՝

- տնտեսակենցաղային հոսքաջրեր – 2,66 հազ. մ<sup>3</sup>/օր;
- արտադրական հոսքաջրեր – 1,3 հազ.մ<sup>3</sup>/օր:

#### **4.4.2.3 Մակերեսային ջրերի հեռացումը**

Մակերեսային ջրերի հեռացումը կատարված է ջրահեռացման բաց և փակ եղանակով: Ցածրահարկ բնակելի թաղամասերում ջրահեռացումը կատարվում է բաց եղանակով, ոռոգման նպատակով նախատեսվող փողոցների եզրով անցնող առվակների միջոցով: Փակ եղանակով ջրահեռացումը կատարվում է բարձրահարկ կառուցապատված թաղամասերում: Մակերևութային ջրերի հեռացումը իրականացվում է դեպի Սև ջուր գետը:

#### **4.4.2.4 Աղտոտման հիմնական աղբյուրները**

Սևջուր գետի վրա նկատելի ազդեցություն է թողնում Արմավիր քաղաքը:

Աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում

- Քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները որոնցում լուրջ մաքրման կայանների բացակայության հետևանքով գետն են թափվում աղտոտված հոսքաջրեր:
- Քաղաքի տնտեսակենցաղային հոսքաջրերը, որոնք առանց կենսաբանական մաքրման թափվում են գետ:
- Քաղաքի անձրևային հոսքաջրերը:

Ներկայումս Արմավիր քաղաքի հոսքաջրերից տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է տարեկան 78,1 մլն դրամ, այդ թվում՝

- տնտեսակենցաղային հոսքաջրերի արտահոսքից – 20,08 մլն. դրամ
- արտադրական հոսքաջրերի արտահոսքից – 38,32 մլն. դրամ
- անձրևային հոսքաջրերի արտահոսքից – 19,7 մլն. դրամ:

#### **4.4.2.5 Ջրային միջավայրը աղտոտող ձեռնարկությունների բնութագիրը**

Ձեռնարկությունների բնութագիրը տրված է ըստ վնասակարության ինդեքսի (կմ<sup>3</sup>/տարի):



$L\theta = V \cdot n$ ; որտեղ՝

V- հոսքաջրերի փաստացի ծավալը, մ<sup>3</sup>/տարի;

n – նոսրացման բազմապատիկ՝ անգամ

Ձեռնարկությունների դասակարգումը բերված է գրաֆիկով: Ձեռնարկությունների վերաբերյալ տվյալները տրամադրվել է ՀՀ Բնապահպանության նախարարությունը (2Ձկ -ջուր, ԹՍԱ-ի նորմաներ):

Ձեռնարկությունների բնութագիրը ըստ վնասակարության ինդեքսի պատկերված է գրաֆիկորեն:



Ինչպես երևում է գրաֆիկներից, մակերևութային ջրերի աղտոտման հիմնական աղբյուրը ներկայումս Զրնուղ-Կոյուղի տնտեսությունն է, կաթի և պահածոների գործարանները, ուղևորա-ավտոտրանսպորտային ձեռնարկությունը:



#### 4.4.2.6 Տարածքի բնութագիրը մակերևութային և ստորերկրյա ջրերի իրավիճակով

Արմավիր քաղաքի վարչական տարածքը ընկած է Արարատյան հարթավայրի Արևմտյան մասում, Քասախ գետի աջ ափին: Քասախ գետը սկիզբ առնելով Արագածի լանջերից թափվում է Սևջուր գետը Էջմիածնից դեպի հարավ-արևմուտք: Սևջուր գետը սկիզբ է առնում Ակնալձից և հոսում է դեպի Արաքս:

Ոռոգման նպատակով, քաղաքի փողոցների ջրման, ձեռնարկություններում տեխնիկական ջրամատակարարման նպատակով օգտագործվում են արտեզյան ջրհորներ:

1. Օգտագործվել են Սևջուր գետի հիդրոէկրաբանական տվյալները

2. Սևջուր գետի ֆոնային աղտոտվածությունների (ՍԹԿ-ի մասով) մակարդակները, որոնք տրամադրել է ՀՀ Բնապահպանության նախարարության բնական միջավայրի մոնիտորինգի կենտրոնը:

3. Սևջուր գետի ափերի անտառապատվածությունը, լանջի ցուցադրանքը: Տարածքի գնահատականը տրված է “ՃձԵՐԻ ՁԻ ԶԶՕԵԸ ԻՐ ԻՕԺԱԻ Ը ԻԵԾՔԱԹԻՆԶԵ ՈՃԱՅՆ Ը ԾՁԵՐԻ ԻԵ ԻԵՁԻ ԵԾԻ ԶԵՁ” հիման վրա:

Հաշվարկների արդյունքները բերված են աղյուսակում 4.4.2.6-1: Տարածքը ինչպես մակերևութային, այնպես էլ ստորգետնյա ջրերի իրավիճակով բնութագրվում է բարենպաստ:

Աղյուսակ 4.4.2.6-1

հհ	Գործոն	Չափման միավոր	Փաստացի մակարդակը	Էքսպերտային գնահատականը	Բարենպաստության աստիճանը
<i>Մակերևութային ջրեր</i>					
1.	Ջրառատություն	մ <sup>3</sup> /վրկ	15,8	3	սահմանափակ բարենպաստ
2.	Հոսանքի արագությունը	մ/վրկ	0.92	5	բարենպաստ
3.	Ջրի ջերմաստիճանը (ամառային)	°C	18.0	5	բարենպաստ
4.	Լանջի ցուցադրանքը	կողմնորոշումը	հարավ	3	բարենպաստ
5.	Ափերի անտառապատվածությունը	%	0	1	ոչ բարենպաստ
6.	Բնակչության խտությունը	մարդ/կմ <sup>2</sup>	>200	1	ոչ բարենպաստ
7.	Արդյունաբերական պոտենցիալը	վտանգավորության դասը	III, IV-V	5	սահմանափակ բարենպաստ
8.	Տրանսպորտի առկայությունը	-	-	1	ոչ բարենպաստ
9.	Ֆոնային կոնցենտրացիան	ՍԹԿ միավոր	>1	1	ոչ բարենպաստ
10.	ԹԿՊ	մգ Օ/լ	2,44	5	բարենպաստ
11.	Ջրածնային իոնների կոնցենտրացիան	pH	7,8	5	բարենպաստ
12.	Տարածքի համալիր գնահատականը	-	-	-	բարենպաստ
դդ ր/հ	ՖԱԿՏՈՐ	Չափման միավոր	Փաստացի մակարդակը	Էքսպերտային գնահատականը	Բարենպաստության աստիճանը
<i>Ստորգետնյա ջրեր</i>					
1.	Պահպանման շերտի առկայությունը	հաստությունը, մ	>1	5	բարենպաստ
2.	Բուսականության առկայությունը	անտառապատվածությունը %	<5	1	ոչ բարենպաստ
3.	Բնակչության խտությունը	մարդ/կմ <sup>2</sup>	>200	3	ոչ բարենպաստ
4.	Արդյունաբերական պոտենցիալը	աղտոտվածության հիմնական աստիճանը	IV-V	5	բարենպաստ
5.	Տարածքի համալիր գնահատականը	-	-	-	բարենպաստ

#### 4.4.2.7 Քաղաքի ջրապահական միջոցառումների հիգիենիկ էֆեկտիվության գնահատականը

Եթե քաղաքի հոսքաջրերը թափվում են բաց ջրավազան, ապա քաղաքի ջրապահական միջոցառումների մասին կարելի է դատել ելնելով քաղաքի հոսքաջրերը ընդունող գետի աղտոտվածության մակարդակից՝ քաղաքից վերև և ներքև ընկած հատվածում:

Ջրապահական միջոցառումների հիգիենիկ էֆեկտիվության գնահատականը տրված է համաձայն՝ /14, 15/

1.  $\bar{I} = \frac{\sum_{i=1}^n I_i}{n}$  թվերի միջինը, որտեղ  $I_i$  - փաստացի ցուցանիշի բազային գնահատական է;
2.  $\bar{I} = \frac{\sum_{i=1}^n I_i}{n}$  թվերի միջինը, որտեղ  $I_i$  - փաստացի աղտոտվածության ցուցանիշն է,  $q/m^3$ ;

Ինչպես հետազոտման ենթակա հատված վերցված է Սևջուր գետը Արմավիր քաղաքից վերև և կենսաբանական մաքրման կայանից ներքև ընկած հատվածում: Սևջուր գետի աղտոտվածության մակարդակը 2005 թ. տրամադրել է Հայէկոմոնիտորինգը:

Կատարվել է ստացված տվյալների խմբավորում ըստ՝

- օրգանոլեպտիկ ցուցանիշների;
- սանիտարա-տոկսիկ ցուցանիշների:

Բոլոր փաստացի տվյալները բերվել են պայմանական անչափ միավորների:

$$\delta_i = \frac{C_i}{N_i}, \quad \text{որտեղ}$$

$\delta_i$  - փաստացի ցուցանիշի բազային գնահատական է;

$C_i$  - փաստացի աղտոտվածության ցուցանիշն է,  $q/m^3$ ;

$N_i$  - նորմատիվային ցուցանիշն է,  $q/m^3$ :

Նորմատիվային ցուցանիշները վերցված են կուլտուր կենցաղային օգտագործման ջրավազանների նորմերով:

Այն դեպքում, երբ  $C_i \leq N_i$ , բազային գնահատականը վերցվում է 1:

Յուրաքանչյուր խմբի առանձին ցուցանիշների համար հաշվարկվում է համալիր ցուցանիշ:

Համալիր ցուցանիշը հաշվարկված է՝

$$W = \sum (\delta_i - 1) + 1 \quad \text{բանաձևով, որտեղ}$$

$W$  - համալիր ցուցանիշն է (համապատասխանաբար օրգանոլեպտիկ, սանիտարա-տոկսիկ);

$\delta_i$  - փաստացի ցուցանիշի բազային գնահատական է:

Մշակված տվյալներից արվել է եզրակացություն՝

Սևջուր գետի աղտոտվածության մակարդակը մինչև Արմավիր քաղաքի հոսքաջրերի արտահոսքը ըստ օրգանոլեպտիկ ցուցանիշների գնահատվում է 1 բալ, ըստ սանիտարա-տոկսիկ ցուցանիշների գնահատվում է 3,95 բալ:

Ստացվածից հետևում է, որ Սևջուր գետի աղտոտվածության մակարդակը Արմավիր քաղաքից վերև հատվածում գնահատվում է թույլատրելից չափավոր:

Նմանատիպ հաշվարկների միջոցով գնահատվել է նաև Սևջուր գետի աղտոտվածության մակարդակը Մեծամոր ավանից ներքևի հատվածում: Ըստ օրգանոլեպտիկ ցուցանիշների գնահատականը 1,105 է: Ըստ սանիտարա-տոկսիկ ցուցանիշների գնահատականը կազմում է 6.88 բալ:

Գետի աղտոտվածության մակարդակը մաքրման կայանից ներքև հատվածում գնահատվում է՝

- ըստ օրգանոլեպտիկ ցուցանիշների – չափավոր
- ըստ սանիտարա-տոկսիկ ցուցանիշների – բարձր:

Սևջուր գետի ռանգավորման հիման վրա հիգիենիկ դասակարգման օգտագործմամբ բնութագրվում է քաղաքում ներդրված ջրապահպան միջոցառումների արդյունավետությունը:

Քաղաքից վերև և ներքև փաստացի ցուցանիշների բազային գնահատականների տարբերությունը՝

$$\Delta W = W_{\text{ներքև}} - W_{\text{վերև}} = 0.105 > 0 \text{ (ըստ օրգանոլեպտիկ ցուցանիշների)}$$

$$\Delta W = W_{\text{ներքև}} - W_{\text{վերև}} = 2.93 > 0 \text{ (ըստ սանիտարա-տոկսիկ ցուցանիշների)}$$

Այսպիսով ինչպես օրգանոլեպտիկ ցուցանիշներով, այնպես էլ սանիտարա-տոկսիկ ցուցանիշներով տեղի է ունեցել գետի ջրի աղտոտվածության ավելացում: Քաղաքի ջրապահպան միջոցառումները գնահատվում են անբավարար:

Նշվածից կարելի է անել եզրակացություն՝

1. Արդյունաբերական ձեռնարկություններում բացակայում են մաքրման կայանները
2. Քաղաքի սանիտարական մաքրումը կատարվում է ոչ բավարար, ինչի հետևանքով անձրևաջրերի հետ միասին գետ է թափվում օրգանական և անօրգանական ծագում ունեցող վնասակար նյութեր:
3. Քաղաքի տնտկենցաղային հոսքաջրերի մաքրումը իրականացվում է անբավարար:

#### 4.5 Թափոնների կառավարում

##### 4.5.1 Աղբավայրեր

Արմավիր քաղաքում աղբահեռացումը կատարվում է կենտրոնացված ճանապարհով, հատուկ մասնագիտացված ձեռնարկության կողմից: Այդ նպատակով բնակելի շենքերի շրջակայքում տեղադրված են աղբարկղներ: Կենցաղային աղբը հեռացվում է աղբաթափման վայր, որը զբաղեցնում է 4 հա տարածք, ունի անհրաժեշտ հեռավորություն բնակելի գոտուց: Սակայն աղբահեռացումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է քաղաքի սանիտարական վիճակի վատացմանը: Որպես Արմավիր քաղաքի աղբավայր ծառայում է ~5կմ հեռավորության վրա գտնվող նախկին ավազահանքերից գոյացած փոսերը, վերջիններս պարբերաբար ծածկվում են հողի շերտով: Աղբավայրի հարևանությամբ գտնվում է քաղաքի գերեզմանատունը:

Արմավիր քաղաքում առաջացած կենցաղային կոշտ թափոնների (ԿԿԹ) կազմը բերված է 4.5.1-1\_աղյուսակում: Թափոնների ընդհանուր քանակը այժմ կազմում է 6000տ/տարի:

ԿԿԹ-ի կազմը և տարեկան քանակը

Աղյուսակ 4.5.1-1		
ԿԿԹ	Ընդհանուր քանակից բաժնեմասը, %-ով	Թափոնների ընդհանուր քանակը, տ/տարի
Ապակի	3.5	210
Մետաղ	3.9	234
Պլաստիկ շշեր	2.65	159
Այլ պլաստիկ իրեր	4.35	261
Թուղթ	3.1	186
Այլ թափոններ	82.5	4950
Ընդամենը՝	100	6000

#### **4.5.2 Արդյունաբերական թափոններ**

Թափոնները առաջանում են արդյունաբերական ձեռնարկություններում:

Արդյունաբերական թափոնների ընդհանուր քանակը կազմում է 6641,6 տ/տարի:

Թափոնները բաժանվում են 2 խմբի՝

- օգտագործման ենթակա;
- ոչ օգտագործելի:

Օգտագործման ենթակա թափոնների շարքին են դասվում՝ օգտագործված յուղերը, թեփերը:

Օգտագործված յուղերը տեղում ենթարկվում են մեխանիկական մաքրման (ռեգեներացիա) գտնամբ և նստեցնամբ: Մաքրված յուղերին ավելացվում են մաքուրը և օգտագործվում:

Առաջացած թեփի թափոնները ենթակա են օգտագործման տնտեսության այլ արտադրանքների պատրաստման համար: Օգտագործման ենթակա թափոններ են առաջանում գյուղ մթերքների վերամշակման ձեռնարկություններում, մասնավորապես կոնյակի արտադրությունում: Թորման արտադրության մնացուկը (տկուցք) հարուստ է սպիտակուցային նյութերով, գինեթթվային միացություններով: Տկուցքի քանակը կազմում է ~3000տ/տարի:

Տկուցքը հավաքվում է կոնյակի գործարանի տարածքում:

Գյուղատնտեսության նախարարության հողագիտության և ագրոքիմիայի ինստիտուտի հետ կնքված պայմանագրի համաձայն տկուցքը օգտագործվում է աղուտ ավալի հողերի չեզոքացման (վերականգնման) և որոշ գյուղատնտեսական կուլտուրաների պարարտացման համար:

Բացի դրանից խաղողի մշակման ժամանակ առաջացած չանչերը և և կնձեռները տարեկան ~2000տ քանակով, վաճառվում են Արմավիրի մարզի գյուղերին , ինչպես անասնակեր օգտագործման համար:

Օգտագործման ենթակա թափոններ են առաջանում նաև «Հոկտեմբերյանի ֆերոսպլավ» ՍՊ ընկերությունում: Ֆերոմոլիբդենի ձուլման ընթացքում առաջանում է վտանգավորության V դասին պատկանող խարամ, 1619,6տ/տարի քանակով:

Բաղադրությունը հետևյալն է՝

$\text{SiO}_2$  – 74,2%

$\text{Fe}_2\text{O}_3$  – 15,2%

$\text{CaO}$  – 4,9%

$\text{Al}_2\text{O}_3$  – 5,7%

Յուրաքանչյուր ձուլումից հետո խարամը հավաքվում է և կուտակվում հատուկ հատկացված վայրում, ծածկի տակ: Այս թափոնները օգտագործվում են ճանապարհների կառուցման և բետոնի արտադրության ժամանակ:

Օգտագործման ենթակա թափոնների ընդհանուր քանակը կազմում է 6621,6տ/տարի:

Ոչ օգտագործելի թափոնները գործող ձեռնարկությունների բնույթից կախված, թունավոր չեն և պատկանում են սանէպիդկայանի կողմից համաձայնեցված վայր տեղափոխվող թափոնների խմբին:

Այս թափոնները շինարարական, ավտոտրանսպորտային ձեռնարկություններում առաջացած թափոններն են՝ շինարարական աղբ, ավտոմեքենաների մասեր, օգտագործված տարաներ:

Ոչ օգտագործված թափոնների քանակը կազմում է 20տ/տարի:

Արդյունաբերական թափոնների կազմը բերված է 4.5.2-1 աղյուսակում:

## Արդյունաբերական թափոնների կազմը և տարեկան քանակները

Արդյունաբերական թափոնների բաղադրիչները	Ընդհանուր քանակը տ/տարի	Ընդհանուր քանակից բաժնեմասը, %
1	2	3
1. Օգտագործման ենթակա թափոններ՝ յուղեր, թեփեր	2	0,03
2. Տկուցքեր, կնձեռներ	5000	75,28
3. Ֆերոմոլիբդենի ձուլման խարամ (ծածկագիր 31202500010 13) , վտանգավորության 3–րդ դաս:  Խարամի բաղադրությունը վերցված է «Հոկտեմբերյանի ֆերոսպլավ» ՍՊ ընկերության նախագծի բնապահպանական մասից, հաստատված ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից:	1619,6	24,39
3. Ոչ օգտագործելի թափոններ՝ շինարարական , մետաղական , օգտագործված տարաներ	20	0,3
Ընդամենը	6641,6	100

Քանի որ, քաղաքը չունի արդյունաբերական թափոնների համար առանձին աղբավայր, ուստի ոչ օգտագործելի նշված թափոնները թափվում են կենցաղային աղբավայրում:

Խարամ (ծածկագիր 31202500010 13) , վտանգավորության 3–րդ դաս:  
Խարամի բաղադրությունը վերցված է «Հոկտեմբերյանի ֆերոսպլավ» ՍՊ ընկերության նախագծի բնապահպանական մասից, հաստատված ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից:

**4.5.3 Օրգանական ծագման թափոններ**

Թափոններ առաջանում են առողջապահության բնագավառի հաստատություններում:

Թափոնները դասակարգվում են /19/ հետևյալ կերպ՝

ա) Ոչ վարակիչ թափոններ: Այս թափոնները կազմում են ընդհանուր թափոնների ~90%-ը: Սրանք իրենց բաղադրությամբ նման են կենցաղային թափոններին, քանի որ վարակի տարածման մանրէներ չեն պարունակում: Այս թափոնների շարքին են պատկանում գրասենյակային աղբը՝ թուղթ, կարտոն, փաթեթավորման նյութեր, թերթեր և այլն: Տարեկան քանակը կազմում է 0,5-1տ: Այս թափոնները հեռացվում են ՀՀ-ի կողմից հատկացված աղբավայր:

բ) Վարակիչ թափոններ: Վարակիչ թափոնները դրանք օրգանական ծագման թափոններն են: Ընդհանուր քանակը կազմում է 40կգ/օր:

Սրանք դասակարգվում են հետևյալ կերպ.

№1 կարգ - մարդու անատոմիական թափոններ (հյուսվածքներ, օրգաններ, մարմնի մասեր):

№4 կարգ - առարկաներ և պլաստմասայից թափոններ (ներարկիչներ, ճկափողեր և այլն):

№6 կարգ - օրգանական նյութերով աղտոտված թափոններ (արյունով և այլ նյութերով աղտոտված բամբակը և այլն):

Թափոնների տարանջատում ըստ տեսակների

Բժշկական թափոնները հավաքվում (տարանջատվում) և պահվում են առանձին՝ ըստ տեսակների, բացառելով դրանց միմյանց խառնվելը:

Տարողությունների մեջ տեղադրվելուց հետո հերմետիկորեն փակվում են, իսկ ախտաբանաանատոմիական, միկրոկենսաբանական, սրածայր թափոնները կնքվում և պիտակավորվում են:

Բժշկական թափոնների պահման ժամկետը Հայաստանի կլինայի համար, ծմռանը՝ 72 ժամ, ամռանը՝ 48 ժամ:

Վարակիչ թափոնների վարակազերծում

Վարակազերծումը կատարվում է բժշկական հաստատությունում:

Վարակազերծման համար օգտագործվող չորս հիմնական գործընթացներն են՝

Ջերմային, քիմիական, ճառագայթման և կենսաբանական:

Առավել շատ տարածված են ջերմային և քիմիական գործընթացները:

Ջերմային վարակազերծումը կատարվում է ավտոկլավներում:

Քիմիական վարակազերծման համար օգտագործվում են հեղուկ քլորի երկօքսիդ, քլորակիր (սոդայի հիպոքլորիդ), պերացետիկ թթու կամ չոր անօրգանական քիմիական նյութեր:

Սրածայր թափոնների համար օգտագործվում են ասեղներ ոչնչացնող սարքեր: Սրանք, փոքր, շարժական, օգտագործման սուր բերան ունեցող սարքեր են, որոնք ոչնչացնում են ներարկիչը անմիջապես օգտագործումից հետո: Կան նաև ասեղներ ոչնչացնող մեխանիկական սարքեր, ինչպես նաև էլեկտրականությամբ աշխատող սարքեր:

Վարակազերծված թափոնները ենթակա են խորը թաղման (1.8մ) գերեզմանատանը հատկացված տարածքում:

#### **4.5.4 Գերեզմանատներ**

Քաղաքն ունի մեկ գերեզմանատուն, որն ունի ՍՊԳ և համաճարակաբանական տեսակետից խիստ վտանգ չի ներկայացնում:

#### **4.6 Հողերի պահպանություն**

Արմավիր քաղաքը տեղակայված է Անդրկովկասյան կիսանապատային շրջանի, Արաքսի ենթաշրջանում /16/:

Հողերը – պլյուվիալ-մարգագետնային են:

Հողի հիմնական աղտոտումը կատարվում է արդյունաբերական ձեռնարկությունների և ավտոտրանսպորտի արտանետումներից, կենցաղային և արդյունաբերական թափոնների աղբավայրերից և թափոնակույտերից:

Հողի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում՝

- արդյունաբերական ձեռնարկությունների փոշեգազային մթնոլորտային արտանետումները;

- արդյունաբերական և կենցաղային թափոնների կազմակերպված և չկազմակերպված աղբյուրները:

Քաղաքի հողային տարածքի աղտոտվածության ամփոփիչ ցուցանիշները բերված են 4.6-1 աղյուսակում:

Աղյուսակ 4.6-1

Քաղաքի հողային տարածքի աղտոտվածության ամփոփիչ ցուցանիշներ

Ինգրեդիենտների անվանումը	Ներկա իրավիճակ	
	տ/հա	գ/մ <sup>2</sup>
Ընդամենը փոշի	0,088	8,8
Մանգանի օքսիդներ	0,00015	0,015

Մթնոլորտային օդի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտվածությունից պահպանման միջոցառումները, քաղաքի կանաչապատումը, թափոնների կառավարումը դասվում են հողի աղտոտման կանխարգելման միջոցառումների շարքին:

#### 4.7 Աղմուկի մակարդակի գնահատում

Գտնվելով մայրաքաղաք Երևանից 43կմ հեռավորության վրա, Արմավիր քաղաքը ապահովված է տրանսպորտային բավարար կապերով:

Արմավիր քաղաքի տրանսպորտի անցուղարձի հաշվառումը ցույց է տալիս, որ քաղաքի փողոցներն աշխատում են ազատ ռեժիմով:

Տեղական նշանակության ճանապարհներով և փողոցներով երթևեկության ինտենսիվությունը բարձր չէ (ամենամեծը՝ 500 միավոր ժամվա ընթացքում):

Ավտոտրանսպորտից առաջացած աղմուկի մակարդակը գտնվում է 57-63դԲԱ (ավտոմեքենաների մի կարգային հոսքի դեպքում երթևեկության ինտենսիվությունից կախված աղմուկի մակարդակի նոմոգրամմաների համաձայն) սահմաններում, 70դԲԱ նորմայի դեպքում /21/ :

#### 4.8 Էլեկտրամագնիսական ճառագայթում

Արմավիր քաղաքի էլեկտրամատակարարումը իրականացվում է «Հայաստանի էլ. ցանցեր» ՓԲԸ «Մուսալեռ» մասնաձյուղի կողմից: Սնող գլխավոր ենթակայաններն են՝

- «Արմավիր» - 110/35/10կՎ լարման ենթակայանը, հզորությունը՝ 2x40ՄՎԱ
- «Ուրարտու» - 110/10կՎ լարման ենթակայանը, հզորությունը՝ 1x16ՄՎԱ

Քաղաքի ներքին բաշխիչ ցանցի սնումը իրականացվում է շահագործվող 2 հատ բաշխիչ կետերի և 68 հատ 10/0,4կՎ լարման ենթակայանների միջոցով, որոնցից 9 հատը երկտրանսֆորմատորային են, մնացած 59-ը՝ մեկ տրանսֆորմատորային: Մալուխային և օդային գծերի ընդհանուր երկարությունը 290կմ է, որից մալուխայինը՝ 140կմ, իսկ 150կմ օդային:

Էլեկտրաէներգիայի տարեկան գումարային ծախսը՝ 30 մլն. կՎտ/ժամ, որից կոմունալ – կենցաղայինը՝ 28,9 մլն.կՎտ/ժամ, իսկ արտադրականը՝ 1,065 մլն. կՎտ/ժամ: Մեկ բաժանորդի էլ. էներգիայի միջին ծախսը՝ 2890կՎտ/ժամ:

Քաղաքի էլեկտրամատակարարման տեխնիկական վիճակը բավարար է: Քաղաքն ունի 2՝ «Նոյ» և «Ալտ» հեռուստատեսություններ 50 և 100կՎտ հզորությամբ:

Համաձայն մեթոդակարգի /1, 2/ էլեկտրամագնիսական ճառագայթման վերը նշված աղբյուրները համարվում են սակավահզոր և չեն դիտարկվում ինչպես մթնոլորտի աղտոտման աղբյուրներ:

#### 4.9 Ուղիոսակտիվ ճառագայթում

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության ՊՌԱԿ-ի կողմից Արմավիր քաղաքի համար կատարված բազմամյա գամմա ֆոնի չափումները կազմում են Արարատյան դաշտի համար կատարված ուսումնասիրությունների ընդհանուր մասը և նրա միջին արժեքը կազմում է 16,6 միկրոռենտգեն /ժամ: Բազմամյա չափումների ընթացքում Արմավիր քաղաքի գամմա ֆոնի մակարդակը միշտ դիտվել է թույլատրելի սահմաններում, որը ~3 անգամ ցածր է վտանգավոր համարվող 60 միկրոռենտգեն/ժամ սահմանից:

2005թ. գամմա ֆոնի միջին արժեքները, միկրոռենտգեն/ժամ

Ամիս	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարի
միջին արժեքը	16,1	15,5	15,6	15,5	15,6	15,5	15,5	15,4	15,5	15,5	16,2	16	15,7

#### 4.10 Կանաչապատման համակարգը

Քաղաքի կանաչապատումը սկսվել է 20-րդ դարի 40-ական թվականներին:

Քաղաքի փողոցները կանաչապատված են , կան տարբեր նշանակության կանաչ զանգվածներ:

Ներկա դրությամբ Արմավիր քաղաքի կանաչ տնկարկների ընդհանուր մակերեսը (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) կազմում է 16,04հա, ընդհանուր մակերեսի 2.1%-ը:

Քաղաքի մեկ բնակչի ապահովվածությունը կազմում է 4,01մ<sup>2</sup>/մարդ: Քաղաքի կանաչ զանգվածների ցուցանիշները բերված են 4.10-1 աղյուսակում:

Կանաչ զանգվածների ցուցանիշները

Աղյուսակ 4.10-1

Կանաչ զանգվածների ֆունկցիոնալ նշանակությունը	Ընդհանուր կանաչ զանգված	
	հա	մ <sup>2</sup> /մարդ
1. Ընդհանուր օգտագործման	7,06	1,765
2. Հատուկ նշանակության (գազանանոց)	8,98	2,25



#### **4.11 Բնակչության կենսակերպի բժշկա-աշխարհագրական վերլուծությունը**

Վերլուծությունը կատարված է եղանակի ֆիզիոլոգա-հիգիենիկ գնահատականի արդյունքների, ինչպես նաև ռելիեֆի, հողի, բուսական և կենդանական աշխարհի, ջրային պաշարների և մթնոլորտի համալիր գնահատականների հիման վրա:

Ըստ մարդու ջերմակարգավորիչ ապարատում տարբեր աստիճանի լարվածություն առաջացնող եղանակի կրկնության, Արմավիր քաղաքը դասվում է այն տարածքների շարքը, որտեղ գերակշռում է չափավոր լարվածություն առաջացնող եղանակը, ինչը որոշակի ազդեցություն չի թողնում մրսածության հիվանդությունների աճի վրա:

Քաղաքում կան կենսատերկրաքիմիական էնդեմիկ հիվանդությունների առաջացման նախադրյալներ, կապված ջրում, հողում, բուսական և կենդանական սննդում միկրոէլեմենտների դիսբալանսի հետ:

Ներկայումս նկատվում է էնդեմիկ զոո հիվանդությունը: Քանի որ, քաղաքը գտնվում է բնական աղբյուրներում յոդի պակասության գոտում, այդ իսկ պատճառով համարվում է զոոի էնդեմիկ շրջան: Ջոբից բացի, հաճախ հանդիպում են վահանային գեղձի բորբոքային հիվանդություններ: Արմավիր քաղաքը անապահով է նաև մալարիա հիվանդության տեսակետից:

Կոյուղու և ջրատար ցանցերի հնացման հետևանքով և նրանց վերանորոգման համար բավարար միջոցների բացակայության, ինչպես նաև բնակչության կենսակերպի սանիտարահիգիենիկ պայմանների ընդհանուր վատթարացման պատճառով, ավելացել է սուր-վարակիչ հիվանդությունների բռնկումների թիվը, որոնք ունեն ջրային և կղանքա-բերանային տարածման ուղի:

Ոչ պակաս կարևոր են նաև աղքատ հասարակությանը հատուկ բժշկական այն հիմնախնդիրները, որոնք կապված են թոքախտային ինֆեկցիոն և այլ հիվանդությունների հետ:

Հիմնախնդրային է համարվում շնչառական և ներվային համակարգերի, ուռուցքաբանական, հոգեկան հիվանդությունները:

Արմավիր քաղաքում սանիտարահիգիենիկ և համաճարակային իրավիճակի բարելավումը համալիր հիմնախնդիր է և կարող է լուծվել հետևյալ միջոցառումների իրականացման հաշվին.

- կյանքի մակարդակի աստիճանական բարձրացման և աղքատության կրճատման (նոր աշխատատեղերի ստեղծում), բնակարանային պայմանների որակի բարձրացման, ջեռուցման և գազիֆիկացման;
- հանգստի լիարժեք գոտիների ստեղծման, ջրային օբյեկտների ( Սևջուր գետ) աղտոտման կանխարգելման, չարտոնված աղբավայրերի չեզոքացման և քաղաքային թափոնների վնասազերծման տեխնոլոգիաների կատարելագործման, ջրատար և կոյուղու ցանցերի վերականգնման և ընդլայնման;
- շրջակա միջավայրի վիճակի բարելավման՝ կանաչ տնկարկների մակերեսների ընդլայնման:

#### **4.12. Արմավիրի մարզի Արմավիր ենթատարածքի պատմամշակութային արժեքը**

Դարավոր պատմություն ունի Արմավիրի պատմական ռեզիդենց, որտեղ և մնացել են այդ պատմությունն արտացոլող հարուստ և արժեքավոր հուշարձաններ, միջնադարյան աչքի ընկնող

կոթողներ: Արմավիրի ենթատարածքում գտնվում են 56 հուշարձանախմբեր, որոնք իրենց մեջ ընդգրկում են տարբեր նշանակության և ժամանակահատվածի հուշարձաններ:

Տարածաշրջանը ընդհանուր առմամբ առանձնանում է հարուստ պատմա-մշակութային ժառանգությամբ, ինչը կարող է խթան հանդիսանալ այդ տարածաշրջանում զբոսաշրջության և ռեկրեացիոն գոտիների առավել զարգացման համար:

Արմավիրի ենթատարածքում հաշվառված և պետական ցուցակի մեջ են մտցված թվով 56 պատմա-մշակութային հուշարձաններ, որոնց մեծ մասը պատկանում են նոր և նորագույն ժամանակաշրջանին: Տարածքը բնակեցվել է պատմական Հայաստանի, ինչպես արևելյան գավառներից, այնպես էլ արևմտյան Հայաստանից գաղթած հայերով 19-րդ դ. սկզբներին տեղի ունեցած ռուս-թուրքական պատերազմներից հետո կնքված համապատասխան պայմանագրերի համաձայն: Սակայն այն չի նշանակում թե հայերի և նրանց նախնիների կողմից տարածաշրջանը յուրացվել է նոր և նորագույն ժամանակաշրջաններում: Հայ ժողովրդի հեռավոր նախնիները այստեղ բնակվել են դեռևս 3-րդ հազ. մ.թ.ա. : Դրա վկայություններն են Արմավիրի բլուր, բնակատեղի «Սև բլուր», բազմաթիվ դամբարանադաշտերը և բնակատեղիները, Արմավիր գյուղի «Մոխրաբլուր-Արևիկ» հուշարձանները և այլն:

Ռիարտական ժամանակաշրջանում 8-րդ դ. մ.թ.ա. Դավթի բլրաշարքերի և նրա ստորոտների վրա է հիմնադրվել Արգիշտիխինիլի նշանավոր քաղաքը: Այն եղել է ուրարտական վարչատնտեսական և պաշտամունքային կենտրոն, հիմնադրել է Արգիշտի Ա-ն մ.թ.ա. 776թ.-ին, Արարատյան դաշտի /ուրարտական Արգա երկիր/ կենտրոնական մասում, Արաքս գետի միջին հոսանքի նախկին հունի ձախ ափին /Նոր Արմավիր, Նոր Ամասիա, Նալբանդյան, Հայկական և ջրաշեն գյուղերի միջև ընկած բլրաշարքի՝ Դավթի սարի, վրա/:

Առաջին հնագիտական ուսումնասիրությունը կատարել են Ա.Երիցյանը և Ա.Մ.Ուվարովը 1870թ.-ին: ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը 1962թ.-ին Արգիշտիխինիլիում սկսեց նոր, պարբերական պեղումներ:

Արգիշտիխինիլիի հիմնադրման, ինչպես նաև այնտեղ պաշտպանական, պաշտամունքային և տնտեսական կառույցների մասին տվյալներ կան Արգիշտի Ա-ի և նրա հետնորդներ Սարգուր Բ-ի, Ռուսա Ա-ի և Ռուսա Գ-ի 17 սեպագիր արձանագրություններում: Արգիշտիխինիլիի կառուցապատված մասը գրավել է շուրջ 1000 հա . տարածություն:

Քաղաքն իր արևելյան և արևմտյան կողմերում ունեցել է երկու հսկայական միջնաբերդ, որտեղ եղել են թագավորական պալատներ, տաճարային շինություններ, արհեստանոցներ, հացահատկի պահեստներ, զինու մառաններ: Պալատական, տաճարային շինությունները տեղավորված էին արևմտյան կողմում, ս. Դավթի բլրաշարքի ամենաբարձր մասում՝ շրջափակված եռաշարք հզոր պաշտպանական պարիսպներով, աշտարակներով, որմնահեցերով: Քաղաքի արևելյան մասում գտնվում է Արմավիր բլուրը /բարձրությունը՝ մոտ 80մ./, որից 1կմ. հեռավորության վրա շղթայաձև ձգվում է Դավթի բլրաշարքը՝ մոտ 2,5 կմ. երկարությամբ:

Երվանդունիների թագավորության առաջին շրջանում Արգիշտիխինիլիի մեծ մասը ավերակ էր: Կյանքը վերսկսվեց միայն նրա արևելյան մասում, երբ հիմնադրվեց Երվանդունիների գահանիստ Արմավիրը:

Հայաստանի առաջին մայրաքաղաք՝ Արմավիրը գտնվում է Արմավիր և Հայկական գյուղերի միջև Արմավիր բլուրի վրա, Երասխի ձախ ափին: Մովսես Խորենացին Արմավիրի հիմնադրումը

վերագրում է Հայկ Նահապետի թոռ Արամայիսին, այն մ.թ.ա. 4-րդ դ. վերջին դարձել է Արարատյան Հայկական թագավորության մայրաքաղաքը, որտեղ հաստատվել են Երվանդունիները: Մ.թ.ա. 189թ-ին, երբ Արտաշես Ա-ն հիմնադրեց Մեծ Հայքի թագավորությունը, Արմավիրը դարձավ նրա մայրաքաղաքը:

Արմավիրի միջնաբերդը գտնվում է 76մ. բարձրությամբ բլրի գագաթին, իսկ շուրջը քաղաքի թաղամասերն էին: Մ.թ.ա. 3-րդ-ից 2-րդ դդ. Արմավիրը տնտեսական, մշակութային և պաշտամունքային խոշոր կենտրոն էր: Ըստ Մովսես Խորենացու, Վաղարշակ թագավորը Արմավիրի մեհյանում կանգնեցրել է արեգակի, լուսնի և իր նախնիների անդրինները: Քաղաքի մերձակայքում էր գտնվում Արամայիսի Սոսյաց անտառը, որտեղ գուշակություններ էին անում ծառերի սաղարթների սոսափյունով: Արմավիրը իբրև քաղաք, հիշատակել է հույն աշխարհագիր Պտղոմեոսը /90-168թթ./: Արտաշատի հիմնադրմամբ Արմավիրը դադարել է մայրաքաղաք լինելուց: Պեղումների շնորհիվ հայտնաբերվել են միջնաբերդի պարսպի և շենքերի հիմնապատեր, խեցեղեն, մետաղյա իրեր, զենքեր, զարդարանք, որոնք վկայում են որ Արմավիրը եղել է տնտեսական և մշակութային կենտրոն՝ զարգացած արհեստագործությամբ, առևտրով: Արմավիրը առևտրական ճանապարհներով կապված է եղել Կովկասի, Իրանի, Միջագետքի, Ասորիքի, Միջերկրական ծովի արևելյան և Սև ծովի հարավային ափերի երկրների հետ:

բ/ Երվանդաշատ, Երվանդունիների թագավորության վերջին մայրաքաղաքը: Հիմնադրել է Երվանդ Վերջին թագավորը մ.թ.ա. 3-րդ դարի վերջ 2-րդ դ. սկիզբ, Այրարատ նահանգի Երասխաձոր գավառում, Երասխ գետի ձախ ափին, նրա և Ախուրյանի միախառնման տեղում: Մովսես Խորենացին գրում է, որ Արաքսի հունը Արմավիրից հեռանալու և ձմռանը խմելու ջուր չլինելու պատճառով Երվանդը արքունիքը փոխադրում է «արևմտյան կողմը», միկտուր ապառաժ բլուրի վրա, որը շրջապատում է Երասխը, իսկ դիմացից էլ հոսում Ախուրյան գետը և կառուցում է նոր մայրաքաղաք: Նա բլուրը պարսպում է, պատերի մեջ դնում պղնձյա դռներ, ներքևից մինչև դռները կառուցում երկաթե սանդուխքներ, և դրանց մեջ՝ որոգայթներ դավադիրներին բռնելու նպատակով, քաղաքային ջուր մատակարարելու համար մինչև գետի մակերևույթը, պարիսպների տակ տեղ-տեղ փորել է տալիս հորեր: Սակայն մայրաքաղաքը տեղափոխվել է ոչ այնքան բնակլիմայական պայմանների, որքան քաղաքական անցքերի պատճառով. Արմավիրին տիրել է Արտաշեսը, ուստի Երվանդը, ստիպված էր նոր մայրաքաղաք հիմնադրել: Երվանդաշատը 360-ական թթ. կործանել են Շապուհ Բ արքայի զորքերը: Պահպանվել են Երվանդաշատի ավերակները՝ պարիսպների հետքերը, փողոցների ու շենքերի փլատակները, ինչպես նաև ավերված քաղաքի տեղում միջին դարերում կառուցված բնակավայրի, երկու եկեղեցու ավերակներ, խաչքարեր և վիմագիր արձանագրություններ:

Երվանդ Վերջինը Արմավիրից ամեն ինչ տեղափոխում է նոր մայրաքաղաք, բացի կուռքերից: Սրանց համար կառուցում է Բագարան քաղաքը. Երվանդաշատից հյուսիս 40 ասապարեգ, Ախուրյան գետի վրա: Իր եղբայր Երվագին նշանակում է քրմապետ:

Մայրաքաղաքից քիչ հեռու կառուցում է Երվանդակերտ դաստակերտը: Հետագայում այս ամենը Տրդատ թագավորը նվիրում է Կամսարականներին:

գ/ Մեծամոր, հնագույն ամրոց. բնակատեղի Արարատյան դաշտում, Մեծամոր գետի ակունքների մոտ /Վաղարշապատի տարածք/, Տարոնիկ գյուղից ոչ հեռու:

1965թ. Մեծամորում պարբերաբար պեղումներ է կատարում ՀՍՍՀ ԳԱ արշավախումբը: Հնագույն բնակատեղին գտնվում է միջին անթրոպոգենեզի շրջանի հրաբխային կոներից մեկի վրա և

շրջակա հարթավայրում, ունի 30 հա. տարածք: Գրեթե բոլոր կողմերից շրջապատված է ջրերով, հյուսիսային, արևմտյան կողմերից եզերվում է Մեծամոր գետով, իսկ արևելյանից՝ պաշտպանվել է արհեստական խրամատ-ջրապատնեշով: Հնագիտական պեղումներով ապացուցվում է, որ մ.թ.ա. 4-րդ հզմ. կեսերից մինչև ուշ միջնադար անընդմեջ բնակեցված է եղել: Հզոր կիկլոպյան պարիսպներով պաշտպանված ամրոցում՝ հիմնականում կենտրոնացվել են իշխանավորների և քրմական դասի բնակելի շինությունները, տաճարային համալիրն ու գլխավոր արտադրական միավորները /ծուլարաններ, արհեստանոցներ, մետաղի հարստացման կառույցներ/ :

Միջնաբերդից 0,5 կմ. արևելյան և հյուսիս - արևմտյան կողմերում տարածվում է դամբարանադաշտը /մոտ 50 հա. տարածք/:

### **Պետական ցուցակում ընդգրկված Արմավիրի ենթատարածքի**

#### **պատմության և մշակույթի հուշարձաններ**

##### **ք. Արմավիր**

1. Հուշարձան երկրորդ Աշխարհամարտում զոհվածների /ԵԱԶ/ քաղաքային այգում:
2. Մշակույթի տուն – 1955թ. /ճարտ. Ռ. Ալավերդյան/ Գլխավոր հրապարակում:
- 3.\* Երկաթուղային կայարանի համալիր, շուրջ 3 շենք, XIX դ. -1929թ. /ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ./

##### **գ. Արագածի**

3. Հուշարձան Թաթուլ Հուրյանի - 1973թ. /քանդ. Գ.Ահարոնյան/ դպրոցի բակում:

##### **գ. Արմավիր**

4. Բնակատեղի «Մոխրաբլուր- Արևիկ» - 3 հզմ. մ.թ.ա. 2.5 կմ. աե.՝ Արմավիր-Արևիկ ճանապ.:
5. Հուշարձան ԵԱԶ - 1971թ. գմ. /քանդ. Կ.Նուրիջանյան, ճարտ. Լ. Նալբանդյան/:
6. Հուշարձան Վահագնին - 1971թ. գմ. /քանդ. Կ.Նուրիջանյան/:

##### **գ. Բազարան**

7. Բնակատեղի - մ.թ.ա. 2-1 հզմ. - 7 դ. 9,5 կմ. հս. աե.:
8. Գերեզմանոց - 10 – 13-րդ դդ. հս. մասում:
9. Եկեղեցի Ս. Շուշան - 7դ. Ախուրյան գետի ձախ ափին, Ժայռաբլուրի վրա:

##### **գ. Բամբակաշատ**

10. Եկեղեցի ՍԲ. Աստվածածին - 1901թ. գմ.
11. Հուշարձան ԵԱԶ - 1968թ. /քանդ. Ս.Պետրոսյան, ճարտ. Հ.Նալբանդյան/ գմ.

##### **գ. Երասխահուն**

12. Մշակույթի տուն - 1974թ. /ճարտ. Ռ.Ալավերդյան/ գմ.

##### **գ. Երվանդաշատ**

13. Քաղաքատեղի Երվանդաշատ – մ.թ.ա. 3դ. – մթ. 4-րդ դ. Արաքս գետի ձախ ափին, Արաքս և Ախուրյան գետերի միախառնման աե. անկյունում
14. Ռուսական սահմանափակ զորքերի ուղեկալ - 19-րդ դ. կես գմ.

##### **գ. Հայկավան**

15. Եկեղեցի ՍԲ. Աստվածածին - 1875թ. գմ.
16. Հուշարձան ԵԱԶ - 1975թ. գմ. /քանդ. Հ.Առաքելյան, ճարտ. Ժ.Ավագյան/
17. Քաղաքատեղի Արմավիր – մ.թ.ա. 4-1 հզմ. – 10-13դդ. աե. եզրին /Արմավիր բլուր/
18. Գյուղատեղի - 10-13-րդ. դդ. Արմավիր բլրի ամ. ստորոտին
19. Դամբարանադաշտ - մ.թ.ա. 1-ին հզմ.
20. Քարայր-կացարանների համալիր – մ.թ.ա. 3-1 հզմ.
21. Արգիշտիխինիլի ուրարտական քաղաքի աե. միջնաբերդը

##### **գ. Հոկտեմբեր**

22. Ամրոց «Սարդարապատ» 19-րդ դ. սկիզբ գմ. /պահպանվում է պարսպի հատվածը/
23. Եկեղեցի ՍԲ. Աստվածածին - 1882թ. գմ.
24. Հուշահամալիր Սարդարապատի ճակատամարտի հերոսներին – 1968թ. /ճարտ. Ռ.Իսրայելյան, քանդ. Ա.Հարությունյան/
25. Թանգարանի շենք /ճարտ. Ռ.Իսրայելյան, նկ. Վ.Մարտիրոսյան/ /Հայաստանի ազգագրության պետական թանգարան – 1977թ. համալիրի/
26. Ռեստորանի շենք «Վարդավառ» 1970 հվ. ամ. մասում
27. Հուշարձան ԵԱԶ - 1970թ. գմ.՝ ակումբի մոտ /քանդ. Ե.Վարդանյան, Կ.Կարախանյան, ճարտ. Վ.Սահակյան/

##### **գ. Մյասնիկյան**

28. Բնակատեղի մ.թ.ա. 2-1 հզմ. 3կմ. հս. ճանապարհի աջ կողմում, երեք բլուրների

- և դրանց միջև ընկած տարածքում
29. Դամբարանադաշտ 2-1 հզմ. մ.թ.ա. բնակատեղի աե. մասում
  30. Բնակատեղի մ.թ.ա. 3-2 հզմ. 2կմ. հս. ճանապարհից աջ
  31. Դամբարանադաշտ 3-2 հզմ. մ.թ.ա.
  32. Բնակատեղի 2-1 հզմ. մ.թ.ա. 3,5 կմ. հս. գետակի ձախ ափին
  33. Դամբարանադաշտ 2-1 հզմ. մ.թ.ա. 3,5 կմ. հս.
  34. Բնակատեղի 2-1 հզմ. մ.թ.ա. 2,5 կմ. հս. ամ.
- գ. Մրգաշատ
35. Բնակատեղի «Սև Բլուր» /«Կարա թափա» մ.թ.ա. 3 հզմ. 1,5 – 2 կմ. հս. աե.երկաթգծի կամրջից քիչ հեռու, բլրի գագաթին, քրդ. գերեզմ. մոտ/
  36. Եկեղեցի Ս. Աստվածածին 1900թ. զմ. ակունքի մոտ
  37. Հուշարձան ԵԱԶ - 1969թ. զմ. /ճարտ. Ռ.Ալավերդյան/
- գ. Նալբանդյան
38. Հուշարձան ԵԱԶ 1978թ. զմ. /քանդ. Ն/Նիկողոսյան, ճարտ. Լ.Ղալումյան/
- գ. Նոր Արմավիր
39. Քաղաքատեղի Արգիշտիխինիլի 776թ. մ.թ.ա., միջնադար հվ. մասում, Արաքսի հին հունի ձախ ափին, Դավթի բլրաշարքի ամ. մասում
  40. Միջնաբերդ /արևմտյան/ մ.թ.ա. 8-րդ դ.
  41. Պալատական համալիր մ.թ.ա. 776-763թթ. միջնաբերդի ամ. մասում
  42. Զրամբար մ.թ.ա. 760-730թթ. միջնաբերդի հս. մասում
  43. Մատուռ Ս.Դավիթ 19-րդ դ.միջնաբերդի հս. մասում
- գ. Նոր Կեսարիա
44. Հուշադրյուր 1984թ. զմ. /ճարտ. Ռ.Հարությունյան, քանդ. Զիչակյան, Մ.Մալխասյան/
- գ. Շենավան
45. Հուշարձան ԵԱԶ - 1980թ. զմ. /քանդ. Ռ.Զերբեգյան, ճարտ. Հ.Նալբանդյան/
- գ. Զանիֆիդա
46. Խաչքար 9-11-րդ դդ. 2կմ. աե. 1970թ. կառուց. սրբատեղում, «Խաչքարի դաշտ» վայրում, ջրամբարի մոտ
  47. Հուշարձան ԵԱԶ - 1968թ. զմ. /քանդ. Ս.Սարգսյան/
- գ. Վարդանաշեն
48. գերեզմանոց – 19-20-րդ դդ. 0,5կմ. հս. աե. /հիմնովին վերանորոգված/
  49. Մատուռ Ս. Աստվածածին - 19-րդ դդ. 0,5 կմ. հս. աե. /հիմնովին վեջանորոգված/
- գ.Տանձուտ
50. Գերեզմանոց – 10-13-րդ դդ. զմ.
  51. Եկեղեցի Ս. Սահակ - 1912թ. զմ.
  52. Հուշարձան ԵԱԶ - 1975թ. զմ. /քանդ. Ս.Պետրոսյան/
- գ. Փշատավան
53. Հուշարձան ԵԱԶ - 1975թ. զմ. /ճարտ. Ռ.Աբրահամյան/
- գ. Խանջյան
54. Հուշարձան Աղասի Խանջյանի 1967թ. զմ. /քանդ. Ս.Ստեփանյան/
- գ. Սովետական
55. Հուշարձան ԵԱԶ 1982թ. զմ. /քանդ. Ս.Բաղդասարյան, Տ.Հակոբյան, ճարտ. Հ.Նալբանդյան/
  56. Հուշարձան Հրաչյա Քոչարի - 1970թ.զմ. /քանդ. Ս.Սարգսյան/ գ.Տարոնիկ
  57. Մեծամոր, հնագույն ամրոց – քաղաքատեղի մ.թ.ա. 4-րդ հզմ. կեսից – ուշ միջնադար:

#### 4.13 Լանդշաֆտի դասակարգում, գոտիներ և տեսակներ

Քաղաքային միջավայրի առողջացումը, օդի, ջրի և հողի մաքրությունը խախտված տարածքների ռեկուլտիվացումը, արտադրական և այլ մնացորդների վերամշակումը, աղմուկի և տատանումների իջեցումը արդիական խնդիրներ են քաղաքների վերակառուցման և նոր թաղամասերի, արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման և տրանսպորտային ծանրաբեռնվածությունների հզորացման ծավալների աճի պայմաններում: Խնդիրների լուծման ուղիները պահանջում են կոմպլեքսային վերլուծության և առկա իրավիճակի գնահատման մեթոդների կիրառում, ինչպես նաև նախագծային լուծումներ և նրանց իրականացման ուղիներ:

Համալիր վերլուծության անհրաժեշտությունը պայմանավորված է քաղաքային միջավայրի և իր նյութական առարկայական հիմքի պահպանության և բարելավման խնդրի բազմակողմանիությամբ և բարդությամբ:

Քաղաքային միջավայրը բնական և անտրոպոգեն գործոնների, այդ թվում տնտեսական, մասնավորապես, կոնկրետ տարածքի վրա շինարարական գործունեության փոխադարձ կապերի և ներազդեցությունների միահյուսված արդյունքն է: Քաղաքի բնական և անտրոպոգեն բաղադրիչների տարանջատված ուսումնասիրության մեթոդը և բնա-շինարարական պայմանների գնահատումը թույլ կտան վեր հանել առանձին գործընթացներ և հիմնավորել մասնավոր լուծումները: Սակայն այն հնարավորություն չի տալիս վերլուծել և օբյեկտիվորեն գնահատել քաղաքային միջավայրի վիճակը ներազդող գործոնների համակցությամբ:

Առաջ եկող սողքերը, քայքայումը և կանաչ տնկարկների կործանումը, ինչպես նաև բազմաթիվ այլ բացասական երևույթները հետևանք են ոչ լրիվ և ոչ հստակ պատկերացումների այն մասին, որ տեղի է ունենում կամ կարող է տեղի ունենալ քաղաքային միջավայրի հետ տարածքների յուրացման, նրանց օգտագործման և կառուցապատման արդյունքում: Քաղաքային հողերի գնահատումը քաղաքի լանդշաֆտի կոնցեպցիայի տեսանկյունից պահանջում է քաղաքային միջավայրի բնական և անտրոպոգեն բաղադրիչներում տեղի ունեցող պրոցեսների վերաբերյալ հավաստի տեղեկատվության անհրաժեշտություն:

Այս բնագավառում քաղաքի լանդշաֆտը վերլուծվում է որպես բնական և անտրոպոգեն բաղադրիչների փոխկապակցվածության և ներազդեցությունների արդյունք իր նյութական-առարկայական հիմքում: Սա թույլ է տալիս իրականացնել համալիր մոտեցում քաղաքաշինական խնդիրները լուծելիս: Լանդշաֆտա-էկոլոգիական մեթոդը իր էությամբ հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն գնահատել ձևավորված և նախագծվող բնական տարածքային ընդհանրությունները, կանխատեսել նրանց դինամիկան և զարգացումը, կարգավորել պրոցեսը՝ վերացնելով բացասական գործոնների ազդեցությունը: Հիմնվելով քաղաքի լանդշաֆտի վերաբերյալ այսպիսի դրույթի վրա, կարելի է ճանաչել քաղաքի նյութա-առարկայական հիմքի բարդ գործընթացները և երևույթները, ինչպես նաև ապահովել կառավարման մեթոդներով՝ ձևավորելով դրանցով այս կամ այն քաղաքային միջավայրի պահանջվող վիճակ, ֆունկցիոնալ-հատակագծային, քաղաքի տարածական բովանդակություն, ճարտարապետական կերպար:

Քաղաքի լանդշաֆտը հանդիսանում է օբյեկտիվ իրականություն և իրենից ներկայացնում է քաղաքային միջավայրի վիճակի, քաղաքի նյութա-առարկայական, տարածական հիմքի առավել էական բնութագրերից մեկը: Քաղաքի լանդշաֆտը ձևավորվում է քաղաքի բնական և անտրոպոգեն բաղադրիչների ներազդեցությամբ և փոխկապակցվածությամբ:

Քաղաքի լանդշաֆտի բնական գործոնը ձևավորվում է բնության կոմպլեքսի բնական հատկությունների համակցությամբ, որը կրում է անտրոպոգեն բեռնվածությունների ազդեցությունը: Բնության կոմպլեքսի բաղադրիչների ներազդեցության հիմնական օրինաչափությունների շարքում է լանդշաֆտային շարքի օրինաչափությունը.

- **երկրաբանական կառուցվածքը**, որպես հիմնաքարային, անտրոպոգեն ազդեցության ներքո քիչ փոփոխվող բաղադրիչ, իրենից ներկայացնում է լանդշաֆտի քարաբանական հիմքը.

- **հիդրոերկրաբանական ցանցը** արմատապես ազդում է հիմնաքարային և երեսարկային բաղադրիչների հատկությունների վրա և ակտիվորեն մասնակցում է լանդշաֆտի հատկություններում:
- **հողը, բուսական և կենդանական աշխարհը**, որպես առավել հեշտ փոփոխվող և խոցելի բաղադրիչ:

Անտրոպոգեն բեռնվածությունների ազդեցություններից առաջացած փոփոխությունները վերաճում են քարաբանականից /լիտոգեն/ հիդրոգեն և բիոգեն հիմքերի, այսպիսով առավել շատ փոփոխվում են բիոգեն խմբի բաղադրիչները:

Անտրոպոգեն կամ տեխնոգեն ազդեցություններին բնական բաղադրիչների տարբեր աստիճանի արձագանքումը վերլուծության ժամանակ պահանջում է դիֆերենցված մոտեցում: Այսպես, օրինակ՝ քաղաքային տարածքի ռելիեֆը որպես փոփոխությունների առավել քիչ ենթարկվող բնական բաղադրիչ, թելադրում է հատակագծման և կառուցապատման, ինժեներական ցանցերի և միջոցառումների ձևավորումը:

Բնական բաղադրիչը պահպանողական է, քիչ և դժվար փոփոխելի է և ներազդում է տարածքի զարգացման անտրոպոգեն բաղադրիչների վրա: Ռելիեֆի նման, քաղաքային տարածքի ձևավորման վրա ներազդում է նաև հիդրոգրաֆիկ ցանցը: Բնական կոմպլեքսների և նրանց բաղադրիչների հիմնական հատկությունների բացահայտումը և գնահատումը նրանց օգտագործման տեսակների հարաբերակցության մեջ թույլ է տալիս բավական հավաստիորեն սահմանափակել քաղաքների տարածքներն ըստ բնական կոմպլեքսների գերիշխող հատկանիշների: Քաղաքաշինական գործունեությունը քաղաքի լանդշաֆտի ձևավորման հիմնական գործոնն է: Գործունեության ֆունկցիոնալ անհամասեռությունը քաղաքի լանդշաֆտի դիֆերենցման գործոնն է:

Բնական կոմպլեքսների յուրացումը ուղղված է քաղաքային միջավայրի կայունությանը: Քաղաքի կենսագործունեության արդյունքում տեղի է ունենում լանդշաֆտի դիֆերենցում անտրոպոգեն էլեմենտների և նրանց բաղադրիչների՝ ֆունկցիոնալ զոնաների, բնակելի կամ արդյունաբերական կառուցապատման թաղամասերի, տարածքների ինժեներական կառույցների և կոմունիկացիաների: Բնական կոմպլեքսների վրա անտրոպոգեն /տեխնոգեն/ բեռնվածությունների ազդեցությունների բնույթը և աստիճանը թույլատրում է առանձնացնել մի շարք, որը ձևավորում է տարածություն, ուր բնական կոմպլեքսի կերպարանափոխությունները կրում են տարբեր աստիճանների փոխազդեցություններ: Այսպես, օրինակ՝ բնական կոմպլեքսների կամ լանդշաֆտների առավել խորը կերպարանափոխությունները տեղի են ունենում խոշորամասշտաբ շինարարության /բնակելի զանգվածների, խոշոր արդյունաբերական օբյեկտների և ինժեներական կառույցների/ արդյունքում: Այսպիսի տարածքները բնութագրվում են առավելապես տեխնոգեն բաղադրիչներով և ավելի քիչ՝ բնական բաղադրիչներով:

Ոչ կապիտալ կառուցապատմանը հատուկ են բնական միջավայրի վրա առավել քիչ ներազդեցություններ: Այս դեպքում զարգացումը տեղի է ունենում բնական օրինաչափություններով: Այսպիսի կոմպլեքսները առանձնանում են բնական-անտրոպոգեն խմբում:

Քաղաքաշինական բնօգտագործման տևողությունը որոշակի տարածքի վրա որոշում է շինարարական և բնական բաղադրիչների համադրման բազմությունը և բազմաձևությունը, ձևավորելով պատմական շերտերն ու հատվածները, տարածական-հատակագծային

կառուցվածքները, շինարարական զանգվածների և բաց տարածությունների հարաբերակցությունը: Քաղաքաշինական գործունեությունը քաղաքաստեղծ օբյեկտների բնութագրով և կազմով ազդում է քաղաքի լանդշաֆտի վրա: Քաղաքաստեղծ օբյեկտների տեղաբաշխման մշտական փոփոխությունները, հատկապես զարգացման նախորդ փուլերում, բերել է տարբեր ֆունկցիաներ ունեցող քաղաքաստեղծ օբյեկտների շերտավորված տեղաբաշխման: Դա ծնել է քաղաքային լանդշաֆտի նոր ձևավորվող անտրոպոգեն-բնական կամ բնական-անտրոպոգեն տեսակների տարածական անհամասեռության: Անտրոպոգեն և բնական բաղադրիչների փոխազդեցությունը ձևավորում է քաղաքի լանդշաֆտի կառուցվածքը: Փոխազդեցության արդյունքը բերում է լանդշաֆտային տարբերությունների ձևավորման, իսկ դրանց ամբողջությունը ձևավորում է լանդշաֆտային ենթաշրջաններ, շրջաններ կամ լանդշաֆտային շրջանների խմբեր:

Լանդշաֆտային տարբերությունների քանակը և բազմաձևությունը կան միօրինակությունը կախված է երկու գործոններից. շրջանի բնական լանդշաֆտների բազմաձևությունից և անտրոպոգեն բեռնվածության քաղաքաշինական տակոնոմիի: Այսպիսով, լանդշաֆտային տարբերությունները որպես առաջնային կառուցվածքային տարրեր, հանդիսանում են բնական բաղադրիչների անհամասեռության և քաղաքային տարածքի ֆունկցիոնալ օգտագործման բազմաթիվ տեսակների արդյունք:

Ըստ բնական և անտրոպոգեն փոխազդեցությունների գործոնների, կարելի է տարբերել քաղաքային լանդշաֆտի հինգ հիմնական տեսակ. բնական կոմպլեքսի հատկություններին ենթակա ֆունկցիոնալ անհամասեռ /ոչ հիմնական կառուցապատում/, հիմնականում ոչ կապիտալ կառուցապատում կամ տարածքի օգտագործման նման ձև.

ֆունկցիոնալ համասեռ հիմնական կառուցապատում համասեռ բնական կոմպլեքսի սահմաններում.

ֆունկցիոնալ համասեռ հիմնական կառուցապատում տարբեր /երկու և ավելի/ բնական կոմպլեքսների պայմաններում. բազմաֆունկցիոնալ /երկու և ավելի/ հիմնական կառուցապատում մեկ բնական կոմպլեքսի պայմաններում.

բազմաֆունկցիոնալ /երկու և ավելի ֆունկցիաներ/ հիմնական կառուցապատում տարբեր /երկու և ավելի/ բնական կոմպլեքսների պայմաններում:

Լանդշաֆտային տարբերությունների և շրջանների ձևավորման մեխանիզմների համեմատությունը ցույց է տալիս, որ լանդշաֆտի կառուցվածքում անտրոպոգեն և բնական բաղադրիչները գրավում են առաջնային կամ երկրորդական դիրք: Մարզի հողային ծածկույթն իրենից ներկայացնում է ՀՀ տարածքի տարբեր մասերում հանդիպող տարաբնույթ հողածածկեր:

Մարզի ցածրադիր մասում, ուր գտնվում է Արմավիր քաղաքը, տարածված են կիսաանապատային հողերը, որոնք տարածաշրջանում կազմում են աննշան տոկոս: Նախալեռնային շրջաններում լայնորեն տարածված են խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը: Արմավիր քաղաքի տարածքը ծածկված է ջրաբերուկային-մարգագետնային, հնում ոռոգվող հողերով: Մարզի անտառային բուսականությունը, բնահողային ծածկույթին համապատասխան նույնպես ենթարկված է ուղղահայաց գոտևորման:

Լանդշաֆտային գոտին կիսաանապատային գոտին է, անապատային տեղամասերով: Տիպիկ անապատային լանդշաֆտներ Հայաստանի տարածքում չկան, սակայն դրանց նմանակները, առանձին հատվածներով հանդիպում են Արմավիրյան հարթավայրում, հիմնականում գետային



նստվածքների ու երրորդական կավերի վրա ծովի մակերևույթից մինչև 900 մ բարձրության վրա և գրավում են փոքր տարածքներ: Առավել ցածրադիր տեղերում, Արաքսի և նրա վտակների փոխոր բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Արարատյան հարթավայրին առավել բնորոշ են կիսաանապատային և աղուտա -մարգագետնային լանդշաֆտները: Վերջիններս մտնում են բուն կիսաանապատային գոտու մեջ, բայց ստորգետնյա ջրերի բարձր մակարդակը պայմանավորել է խոնավ ցածրավայրային աղուտային մարգագետինների գոյությունը: Այնտեղ, ուր գրունտային ջրերը մոտ են մակերևույթին, առաջացել են գերխոնավ, այսպես կոչված չալանների հողեր: Այս գոտում առանձնակի տեղ են զբաղեցնում նաև ցածրավայրային ճահճային լանդշաֆտները, որոնք հիմնականում ենթարկված են մելիորացիայի ու կուլտուրականացման: Որոշ վայրերում հանդիպում են թաքիրանման հողեր և ավազի բլրակներ: Հարավ - արևելքից եզրավորող նախալեռնային և ցածր լեռնային նստվածքային ջրամերձ ապարներ ունեցող տարածքներում, շնորհիվ չոր կլիմայի, առաջացել են անապատա- կիսաանապատային լանդշաֆտների հետաքրքիր տիպ՝ Բեդլենդներ, որոնք զերծ են բուսական ծածկույթից: Կիսաանապատային լանդշաֆտը հատուկ է միջին Արաքսի հովտին, մինչև 13000 մ բարձրությանը: Կիսաանապատի ռելիեֆը ալիքավոր է, թույլ մասնատված, հարթավայրի եզրերում և մանավանդ արևմտյան մասում՝ քարքարոտ: Բնորոշ են բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում կուլտուրականացված են և ոռոգվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Վերջին տասնամյակներին իրականացվել են աղուտային հողերի աղազրկման և կուլտուրականացման աշխատանքներ: Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալած հողեր /աղուտներ/ ալկալահողերը: Տեղ-տեղ երևում են թաքիրներ՝ դեղնա-սպիտակավուն կավի ճաքճքած մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի պայմաններում գերակշռում են ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝ պայմանավորելով քայքայված փոխոր նյութերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

Կուլտուրականացված /անտրոպոգեն/ լանդշաֆտը ներկայացված է գյուղատնտեսական հողերով /դաշտեր, պտղատու և խաղողի այգիներ/ հալօֆիտ անապատների յուրացված տեղում: Բարձրադիր /լեռնահարթավայրային կիսաանապատային գոտի, տաք չոր կլիմայով օշինդրա-էֆեմերային բուսականության գերակշռությամբ, գորշ կիսաանապատային հողեր ալուվիալ, դելուվիալ և պեդուվիալ նստվածքների վրա:

Յուրաքանչյուր լանդշաֆտային գոտի առանձնանում է իր ուրույն էկոհամակարգերով և դրանցում ներկայացված բուսական և կենդանական աշխարհով:



## **5.0 Արմավիրի մարզի Արմավիրի քաղաքային համայնքի (բնակավայրի)**

### **տարածքային զարգացման հիմնական դրույթները**

#### **5.1 Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունը և հիմնական նպատակները**

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունն է՝ հետևողականորեն բարեփոխումներ անց կացնելու ճանապարհով, բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները՝ Արմավիրը դարձնել բարեկարգ, մաքուր և գրավիչ բնակավայր:

Արմավիր քաղաքի տարածքային զարգացումը անընդմեջ ընթացող գործընթաց է: Այն պետք է կատարվի քաղաքաշինական գոտևորման ու տարածքային պլանավորման հաջորդական փուլերով՝ նախագծում, շինարարություն, նոր թաղամասերի շահագործում, հին ֆոնդի արդիականացում և վերակառուցում:

Բնակավայրի տարածքային զարգացման քաղաքականությունը պետք է բավարարի համայնքի բնակչության շահերին: Համայնքի բնակչության սոցիալ-մշակութային զարգացման մակարդակը, առողջական վիճակը, կրթական աստիճանը և այլն աջակցում են բնակավայրի տարածքային կայուն զարգացմանը: Բնակչության սոցիալական ակտիվությունը խթանում է բնակավայրի տարածքային զարգացմանը և նպաստում բնակչության համար որակյալ միջավայրի ստեղծմանը:

ՀՀ քաղաքաշինական պայմաններում բնակավայրերի տարածքային պլանավորման կամ տարածքային զարգացման կարևոր խնդիրներից է տարածքային (հողային) պաշարների խնայողաբար օգտագործումն ու տարածքների վերարտադրումը: Բնակավայրի տարածքային զարգացման ծրագրերը իրականացնելու համար հարկավոր է համայնքի սոցիալ-տնտեսական կյանքում զարգանան ու արմատավորվեն համապատասխան պայմաններ, որոնք կնպաստեն գործարարության զարգացմանը, կակտիվացնեն տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունը ռեգիոնալ և միջռեգիոնալ ծրագրերում:

Տարածքային զարգացման ընթացքի տեմպերը ավելացնելու միտումով անհրաժեշտ է՝ կորպորատիվ գործարարության կողմից համայնքում ձեռնարկվի տարածքային խոշոր ծրագրերի իրականացում: Համայնքում պետք է ձևավորել և զարգացնել, կոոպերացման և համակցության ձևերի ներդրմամբ, կառավարվող և կարգավորվող, անշարժ գույքի, հողի և շինությունների նկատմամբ ազատ տնտեսական հարաբերությունների բոլոր առավելությունները, ինչպիսիք են՝ բանկային վարկավորման և բնակարանային շինարարության համար հիպոթեկային ֆինանսավորման միջոցների և մեխանիզմների կիրառումը:

Քաղաքի տարածքային կայուն երկարաժամկետ զարգացումը կարող է իրական դառնալ, օրինակ՝ առանձին թաղամասերի նկատմամբ սոցիալական և ներդրումային գրավչության մեծացման դեպքում, ինչպես նաև, հիմնական ֆոնդերի արդիականացման, նոր ծրագրերի ձեռնարկման նպատակով, քաղաքում ռեզերվային ազատ հողատարածքների առկայության դեպքում:

Բնակավայրի, կամ դրա տարածքի, սոցիալական գրավչությունը աճում է համայնքում հարմարավետ կեցության պայմանների ներդրման դեպքում: Բնակեցման տարատեսակների ընտրության ու բնակչության տարբեր սոցիալական և տարիքային խմբերի կողմից հանրօգուտ

աշխատանքի կատարումը, նրանց պոտենցյալ հնարավորությունների օգտագործումը ևս կբարձարացնեն բնակչության հասարակական ակտիվությունն ու բնակավայրի հանդեպ գործարարության հետաքրքրությունը:

Ներկայումս ընթացող բարեփոխումների պայմաններում ինովացիաներն ու գործարարությունը, գիտությունն ու հանրօգուտ ակտիվ կադրերն են հանդիսանում տարածքի միակ գլխավոր արդյունավետ արտադրական ներուժը:

Տարածքային զարգացումը ներառում է ճանապարհատրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքի ցանցերի ու կառուցների անընդհատ արդիականացում և կատարելագործում: Այն պետք է ընթանա բնակավայրի էկոլոգիական իրավիճակի բարելավմանը, պատմամշակութային ժառանգության պահպանմանը զուգընթաց և շահագործվի խնամքով:

Տարածքային զարգացման հիմքում դրված են երկրում ընթացող արդի սոցիալ-տնտեսական բարեփոխումների հիմնական ուղղությունները: Արմավիրի վերակառուցումն ու նոր հողերի իրացումը պետք է ներառի՝

1. Տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության նախաձեռնողության, ինչպես նաև, տնտեսական և սոցիալական համագործակցության պայմանների ստեղծում:
2. Ռեգիոնալ սոցիալական քաղաքականության առաջնային ուղղությունների կիրառում:
3. Բնակչության սոցիալական պաշտպանության և զանազան սոցիալական պահանջների բավարարելու համար պայմանների ստեղծում:
4. Փոքր և միջին ձեռնարկատիրության շուկայում արդար մրցակցության համար դաշտի ապահովում:
5. Բնակարանային ֆոնդի պահպանման ու շահագործման, ինչպես նաև, տարածքի բարեկարգման որակի բարձրացում:
6. Ժամանակակից ինֆորմացիոն միջոցների և համակարգերի ներդրում ու ընդլայնում, կրթության և լուսավորչության մակարդակների բարձրացման պայմանների ներդրում և կատարելագործում:
7. Բնակարանային – կոմունալ տնտեսության ծառայությունների անխափան մատուցում, այդ թվում, մասնավոր նախաձեռնությունների միջոցով:
8. Տարածքի սոցիալական և ինվեստիցիոն գրավչությանը նպաստող ծրագրերի ապահովում:
9. Առևտրի և կենցաղային սպասարկման համակարգերի կատարելագործում, իջեցված գներով ապրանքների և ծառայությունների մատուցում, առաջին հերթին, փոքր և միջին ձեռնարկատիրության շուկայում արդար մրցակցության դաշտի ապահովման միջոցով:
10. Էկոլոգիական իրավիճակի և կյանքի անվտանգության ապահովության մակարդակի բարձրացում:
11. Մշակույթի, պատմամշակութային ժառանգության պահպանման դերի ու նշանակության կարևորում, ազատ ժամանցի և զվարճալի միջոցառումների կազմակերպում:

Համայնքի զարգացման հիմնական նպատակներն են՝

- նպաստել համայնքի գլխավոր հատակագծի իրականացմանը՝ ապահովելով հողերի գոտիավորման ու հողօգտագործման սխեմայի դրույթները,

- նպաստել համայնքի բնակարանային ֆոնդի մոդեռնիզացմանը, հասարակական ոլորտների զարգացմանը, կոմունալ և ճանապարհային տնտեսության կատարելագործմանը, ճանապարհամեծ և կանաչապատ գոտիների, ինչպես նաև բակային տարածքների բարեկարգմանը,

- մշակել նոր մոտեցումներ համայնքի տարածքում անավարտ մնացած բնակելի կառուցապատման և առանձին շենքերի վերաշահագործման համար,

- ապահովել համայնքի կրթության, մշակույթի, առողջապահության և սպորտի բնագավառների անխափան և նպատակային գործունեության ընդարձակումը, իրականացնել այդ կազմակերպությունների զբաղեցրած շենքերի հիմնովին նորոգումն և նոր կառույցների շինարարություն,

- բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների սպասարկման մակարդակն ու որակը,

- զարգացնել և պահպանել համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության փրկարարական աշխատանքների իրականացման ու արտակարգ իրավիճակներում քաղաքային տնտեսության գործունեությունը երաշխավորող համակարգ:

## **5.2 Համայնքի տարածքային զարգացման կազմակերպում**

### **5.2.1. Հատակագծային կառուցվածքի զարգացում**

Բնակավայրի տարածքային զարգացման հիմքում պետք է դրվի դրա հատակագծային կառուցվածքը և գործառական գոտևորումը:

Համապատասխան քաղաքաշինական գործող հիմնական նորմատիվային փաստաթղթերի պահանջների, քաղաքի գլխավոր հատակագծի նախագծումը կատարվում է երկրի և մարզի տարաբնակեցման ուրվագծի կամ նախագծերի դրույթների հիման վրա՝ օգտագործելով համապատասխան քաղաքաշինական և ծրագրային այլ փաստաթղթերի պահանջները, ինչպես նաև համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը: Գլխավոր հատակագծի նախագծում հաշվի է առնված բնապահպանական տարածքային համալիր ուրվագիծը, տարածքների և բնակավայրերի վտանգավոր երկրաբանական և հիդրոերկրաբանական գործընթացներից պաշտպանելու ուրվագիծը և համարժեք այլ մշակումներ (ՍՆԻՊ 2.07.01-89):

Արմավիրի տարածքային զարգացման ուղղությունների որոշման համար հիմք է հանդիսացել «ՀՀ տարաբնակեցման գլխավոր հատակագիծ» -ը , որտեղ նշվում է, որ տարածական զարգացման համար կան ռեզերվային տարածքներ, քաղաքի հյուսիս-արևելյան մասում (ցածրարժեք գյուղատնտեսական հողեր, բարենպաստ ինժեներաշինարարական պայմաններ), մոտավորապես, 300-350 հա:

Արմավիրի տարածքի ժողովրդագրական առավելագույն տարողությունը ըստ «ՀՀ տարաբնակեցման գլխավոր հատակագծման» առաջարկության կազմում է 51.0 հազ. մարդ:

Համաձայն գործող քաղաքաշինական նորմատիվային փաստաթղթերի (ՍՆԻՊ 2.07.01-89 կետ 1.2) Արմավիրի համայնքը տարաբնակեցման համակարգում դիտարկվում է, որպես տեղական նշանակության տարաբնակեցման համակարգի հիմնական տարրերից մեկը, համակարգի կազմակերպման կենտրոն, ինչը ապահովում է սոցիալական, առողջապահական, կրթական, աշխատանքային շուկայի, կենցաղային, ինժեներատրանսպորտային և այլ ենթակառուցվածքների միասնական գործունեության համակարգումը մարզում:

Արմավիրը, զարգանալով, կարող է հզորացնել իր ազդեցության գոտին՝ տարածելով այն շրջակայքում գտնվող գյուղական բնակավայրերի վրա, ապահովելով վերջիններիս պահանջները, վերը թվարկված ոլորտներում:

Նորավան, Հոկտեմբեր և Նորապատ գյուղերը, գտնվելով Արմավիրին անմիջապես հարող տարածքներում, կարող են ընդգրկվել Արմավիրի քաղաքամերձ գոտու մեջ: Մարզի մյուս գյուղերը կապված են Արմավիրի հետ մի շարք ավտոճանապարհներով: Գյուղական համայնքների բնակչությունը օգտվում և հետագայում օգտվելու է Արմավիրի աշխատատեղերի շուկայից, մարզկենտրոնի այլ ծառայություններից:

Տեղական նշանակության տարաբնակեցման համակարգի բնակչությունը ներկայումս կազմում է շուրջ 71 հազ. մարդ, հետագայում այն կարող է հասնել մինչև 90 հազ. մարդ: Դրանից ելնելով՝ սոցիալական և այլ ոլորտների հեռանկարային հաշվարկային հզորությունները կարող են աճել:

Արմավիրի տարածքային զարգացումը հաշվի է առնում աճող տարրերի գործառական նշանակությունը, ճարտարապետա - հատակագծային լուծումները, սանիտարական, շրջակա միջավայրի պահպանման և այլ պայմաններ: Տարածքային զարգացումը հնարավոր է իրականացնել Արմավիրի սահմաններում առկա բազմաթիվ անօգտագործելի հողատարածքների հաշվին, որոնք գտնվում են քաղաքի տարբեր մասերում, տարբեր գործառական նշանակության գոտիներում: Դրանց հեռանկարային օգտագործումը որոշվում է՝ ելնելով հատակագծային նպատակահարմարությունից: Անօգտագործելի տարածքները բազմաթիվ են և՛ բնակելի կառուցապատման, և՛ արտադրական գոտում: Այդ տարածքների քաղաքաշինական իրացումը կհանգեցնի գոյություն ունեցող կառուցապատման արդիականացմանը, կբարելավի բնակավայրի սանիտարական, էսթետիկական, էկոլոգիական մթնոլորտը, կնպաստի հողատարածքների լիարժեք և նպատակային օգտագործմանը:

Հատակագծային կառուցվածքի հետագա ձևավորման հիմքում պետք է դրվեն ստեղծված քաղաքաշինական ավանդույթները, լանդշաֆտը, ազգային մշակույթն ու կենցաղի առանձնահատկությունները:

Ճանապարհային ցանցի որոշակի լրացման և ճշգրտման միջոցով հնարավոր է այն կատարելագործել, տարանջատել ներքին փողոցային ցանցը տարանցիկ ուղիներից:

#### **5.2.2 Բնակելի ֆոնդի զարգացում և տեղաբաշխում**

Բնակչության աճին համապատասխան նախատեսվում է ապահովել բնակարանային ֆոնդի աճ՝ պահպանելով և պատշաճ մակարդակի բերելով գոյություն ունեցողը, որը պահանջում է արմատական նորոգման աշխատանքներ: Բնակֆոնդի ավելացումը հնարավոր է իրականացնել համայնքի սահմաններում՝ չօգտագործվող հողակտորների հաշվին, անավարտ կառույցները ավարտելով, բնակավայրի հողերի առավել նպատակային օգտագործման միջոցով:

Բնակարանային ֆոնդի զարգացման ծրագիրը պետք է ապահովի գոյություն ունեցող բնակմակերեսների պահպանում, տեխնիկական և բարոյական արդիականացում: Այս միջոցառումները կարող են ապահովել աճող բնակչության մի մասի բնակարանային կարիքները: Բնակչության թվային աճին զուգընթաց պետք է ավելանա նաև բնակարանային ֆոնդը, պետք է կառուցվեն նոր, հարմարավետ և տեխնիկապես ապահով, սեյսմակայուն անհատական բնակելի տներ, բազմաբնակարան շենքեր:

Քաղաքի բնակարանային ֆոնդի հաշվարկային ցուցանիշների ապահովումը պետք է իրականացվի հողերի ռացիոնալ և նպատակային օգտագործման միջոցով: Արմավիրի քաղաքային համայնքի բնակարանային ֆոնդը կազմում է ընդամենը 359.1 հազ. մ<sup>2</sup>, որից անհատական սակավահարկ ֆոնդը՝ 305.2 հազ. մ<sup>2</sup>: Բնակչության միջին ապահովվածությունը բնակմակերեսով

կազմում է 8.9 մ<sup>2</sup>/մարդ: Անհատական սակավահարկ տների միջին մակերեսը (քաղաքապետարանի ցուցանիշներից ելնելով) կազմում է 51.0 մ<sup>2</sup>: Բնակարանային ֆոնդի աճը պետք է ապահովի, ինչպես առկա բնակչության բնակալայմանների բարելավում, այնպես էլ բնակչության աճող թվի բնակարանային մակերեսով պահանջարկը:

Սույն գլխավոր հատակագծով առաջնային փուլում բնակմակերեսով միջին ապահովման հաշվարկային ցուցանիշը ընդունված է 13.0 մ<sup>2</sup>/մարդ: Այստեղից բխում է, որ առկա բնակչությանը (40.0 հազ. մարդ) պահանջվող բնակելի ֆոնդը պետք է աճի առնվազն մինչև 520.0 հազ. մ<sup>2</sup>: Պետք է նաև հաշվի առնել, որ տարբեր պատճառներով (տեխնիկական, վերակառուցման և այլ) նվազող բնակելի ֆոնդը ենթակա է փոխհատուցման: Առկա բնակելի ֆոնդի նվազումը, ոչ արտակարգ պայմաններում հաշվարկվում է ամբողջ բնակֆոնդի 0.25%-ից 5%:

Առկա բնակելի ֆոնդի նվազման ընդհանուր ցուցանիշը առաջնային ժամանակշրջանում ընդունվում է մինչև 20,0 հազ. մ<sup>2</sup>: Առաջնային փուլում և առավելապես քաղաքի զարգացման հետագա փուլերում բնակելի ֆոնդի արդիականացումը կկատարվի անընդմեջ: Այդ գործընթացի հեռանկարային ցուցանիշներն ու բնույթը կթելադրվեն հեռանկարում նոր ստեղծվող պայմաններով և դրանց սահմանումը ներկայումս աննպատակ է:

Բնակչության աճի թվին (11.0 հազ. մարդ) համապատասխան անհրաժեշտ կլինի նախատեսել լրացուցիչ 13.0 մ<sup>2</sup>/մարդ x 11000 մարդ = 143.0 հազ. մ<sup>2</sup> բնակելի ֆոնդ:

Քաղաքի տարածքային զարգացման առաջնային փուլում ( 5-ից 7 տարի) Արմավիրի բնակելի ֆոնդը պետք է կազմի առնվազն 663.0 հազ. մ<sup>2</sup>:

Սկզբնական ժամանակաշրջանից հետո պետք է նախատեսվի բնակչության բնակարանային պայմանների բարելավման հաջորդ փուլը: Հետագա փուլերում բնակմակերեսով միջին ապահովվածության ցուցանիշը կարող է աճել: Այդ աճին զուգընթաց պետք է աճի նաև քաղաքի բնակելի ֆոնդը:

Բնակելի մակերեսով միջին ապահովվածության ցուցանիշի աճին զուգընթաց Արմավիր քաղաքի բնակելի ֆոնդը համապատասխանաբար կստանա հետևյալ թվային արժեքները`

- 15 մ<sup>2</sup>/մարդ ապահովման դեպքում այն կկազմի 765.0 հազ. մ<sup>2</sup>,
- 18 մ<sup>2</sup>/մարդ ապահովման դեպքում կհասնի մինչև 920.0 հազ. մ<sup>2</sup>:

Այսպիսով, քաղաքի բնակելի ֆոնդի զարգացումը պետք է կատարվի երեք ուղղություններով.

- առկա բնակելի ֆոնդի 25-35 % վերակառուցում, բարելավում և ընդարձակում
- տեխնիկական, բարոյապես ծերացման և քաղաքի հատակագծային բարեփոխումների պատճառներով նվազող մասի փոխհատուցում (առկա բնակֆոնդի մինչև 15%)
- նոր բնակելի թաղամասերի կառուցում, այդ թվում սակավահարկ տներով (1 կամ 2 հարկ), տնամերձ` 400մ<sup>2</sup> հողամասով, և բազմահարկ 3 հարկանի բազմաբնակարան շենքերով:
- Առկա բնակելի ֆոնդի վերակառուցումը կանխատեսվում է քաղաքի կենտրոնական թաղամասերում, 40 և ավելի տարիներ առաջ կառուցապատված թաղամասերում:

Այս տարածքների բնակելի ֆոնդը բարոյապես մաշված է և տեխնիկապես չի բավարարում ներկայիս սեյսմակայուն շինարարության պահանջներին: Հին թաղամասերում, հատկապես քսաներորդ դարի 50-60-ական թվականներին, երբեմն նաև ավելի վաղ կամ ուշ հանդիպում են, սովետական տարիներին ձևավորված, բնորոշ կերպարով ճարտարապետական արժեք ներկայացնող անհատական տներ: Միանշանակ դրանք որոշակի տեղական նշանակության ճարտարապետական

արժեք են ներկայացնում և պետք է հնարավոր եղանակներով պահպանվեն՝ կոնստրուկցիաների ուժեղացմամբ:

Տեխնիկական և այլ պատճառներով անբավարար բնակֆորդի փոխհատուցումը հիմնականում նախատեսվում է՝ հնուց ձևավորված թաղամասերի տարածքներում: Նոր բնակելի ֆոնդի տեղաբաշխումը կարող է ընթանալ քաղաքի տարբեր՝ հատկապես արևմտյան և հյուսիս-արևելյան մասերում: Այստեղ առկա են բազում հողատարածքներ, որտեղ կարող է իրականացվել ինչպես սակավահարկ անհատական, այնպես էլ բազմաբնակարան շինարարություն: Արևմտյան թաղամասերում անհատական կառուցապատման համար 90-ական թվականներին քաղաքացիներին բաժանված հողամասերից շուրջ 75% դեռ կառուցապատված չեն: Դեռ չկառուցապատված հողամասերի քանակը հասնում է 2300-ի: Այստեղ փաստորեն նոր տներ կառուցելուց հետո կարող է ապրել մոտ 2300 ընտանիք: Ընդունելով ընտանիքի միջին չափը 4.2-ից 4.4 մարդ՝ ստանում ենք նոր սակավահարկ թաղամասերում բնակեցում հաստատող բնակչության հաշվարկային թիվը՝  $2300 \times (4.2 \dots 4.4) \approx 10000$  մարդ:

Հաշվի առնելով թաղամասերի շինարարության իրականացման երկարատև ընթացքը և բնակմակերեսով մեկ մարդուն միջին ապահովման ցուցանիշի աճը (13.0 մ2/մարդ մինչև 18.0 մ2/մարդ) ստացվում է, որ այս, արդեն բաժանված հողամասերի տարածքում, միայն սակավահարկ տնամերձ հողամասերով կառուցապատմամբ, պետք է իրականացվի առաջնային ժամանակաշրջանում  $13.0 \text{ մ2/մարդ} \times 10000 \text{ մարդ} = 130.0$  հազ. մ2 բնակելի մակերես, հետագայում այն կարող է աճել մինչև 150 հազ.մ2 կամ ավելի ուշ մինչև 180.0հազ.մ2:

Նոր կառուցապատվող մեկ անհատական բնակելի տան միջինացված բնակելի ընդհանուր հաշվարկային մակերեսը ներկայիս 51 մ2 կարող է աճել մինչև 80 մ2:

Արևմտյան թաղամասերում առաջին հերթին անհրաժեշտ է ավարտել կիսակառույց բնակելի շենքերի շինարարությունը: Նոր բազմաբնակարան շենքերի հարկայնությունը առաջարկվում է սահմանափակել 3 հարկով, ելնելով տարածքների սեյսմիկ պայմաններից և ձգտելով հնարավոր չափով ապահովել շինարարության պարզ եղանակները և ոչ բարձր արժեքը: Համապատասխան քաղաքաշինական հիմնավորման, ինչպես նաև քաղաքում տնտեսական ու սոցիալական զարգացման տեմպերի արագացման պայմաններում, տվյալ տարածքներում բնակելի կառուցապատման հարկայնությունը կարող է ընդունվել նաև ավելի բարձր, համապատասխան սեյսմակայուն ու այլ շինարարական նորմերի պահանջների ապահովման պայմանով:

Հաշվի առնելով տարածքում առկա ազատ հողակտորները (20.5 հա), որտեղ հնարավոր է կառուցել զուտ բնակելի բազմաբնակարան շենքեր՝ նախատեսելով նաև առանձին հողահատվածներ առաջնային պարտադիր հասարակական սպասարկման օբյեկտների տեղաբաշխման համար՝ շինարարական նորմերի բնակչության խտության վերաբերյալ, սահմանային ցուցանիշի (300 մարդ/հա) կիրառմամբ ստացվում է, որ տարածքում կարող է բնակվել  $300 \text{ մարդ/հա} \times 20.5 \text{ հա} = 6.15$  հազ. մարդ: Այս տարածքների համար բնակչությանը համապատասխան բնակելի ֆոնդը, ըստ առաջնային ժամանակաշրջանի ընդունված միջինացված բնակեցման նորմի (13.0 մ2/մարդ),պետք է կազմի  $6.15 \text{ հազ.մարդ} \times 13.0 \text{ մ2/մարդ} = 79.95$  հազ.մ2:

Հետագա ժամանակաշրջանում բնակեցման միջինացված նորմի աճը այս թաղամասերում կարող է կատարվի բնակչության թվի նվազեցման ճանապարհով, այսինքն բնակչության մի մասը



բնակարանային պայմանների բարելավման նպատակով կարող է տեղափոխվել քաղաքի այլ թաղամասեր:

### **5.2.3 Արմավիրի հասարակական կենտրոնի համակարգի զարգացում**

Համաքաղաքային հասարակական կենտրոնի համակարգը պետք է ընդգրկի համաքաղաքային նշանակության տարբեր օբյեկտներ՝ վարչական, մշակութային, կրթական, մարզական և այլ:

Միաժամանակ պետք է կատարելագործվեն քաղաքային նշանակության մայրուղիների և ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների համակարգերը:

Հասարակական կենտրոնի հատակագծային տարածական կառուցվածքը ձևավորվում է՝ ներթափանցելով գործառական տարբեր նշանակության գոտիների մեջ՝ բնակելի, արտադրական, հանգստի՝ ստեղծելով համայնքի ամբողջ տարածքում միասնական համակարգ: Սովորաբար, հասարակական համակարգի տարբեր օբյեկտները հիմնականում ձևավորում են ճանապարհատրանսպորտային և հետիոտն ուղիների հատման հանգույցներում, գլխավոր մայրուղիներին կից, հրապարակների շուրջը:

Հասարակական կենտրոնի կառուցապատումն է առավելապես ստեղծում բնակավայրի «դեմքը»: Միջավայրի ճանաչելիությունը սույն նախագծում, հաշվի առնելով այդ հանգամանքները, առաջարկում է հասարակական կենտրոնի զարգացման ուղիները:

### **5.2.4 Բնակչության հասարակական առաջնային սպասարկման համակարգ**

Արմավիրի բնակելի թաղամասերը, ինչպես նշվել է, հավասարաչափ չեն ապահոված առաջնային պարտադիր սպասարկման օբյեկտներով՝ մանկապարտեզներով, դպրոցներով, առևտրի, կենցաղ սպասարկման ձեռնարկություններով:

Այդ համակարգի օբյեկտները անհրաժեշտ է վերագնահատել և վերահաշվարկել, համապատասխան գործող արդի նորմերին: Անհրաժեշտ է նաև, վերլուծել նրանց տեղաբաշխման խնդիրը և համապատասխանեցնել նորմերին ու բնակչության պահանջին:

Ստորև ներկայացված է հասարակական սպասարկման համակարգում ընդգրկվող նվազագույն անհրաժեշտ օբյեկտների և դրանց տարողունակության ցուցանիշները, որոնցում հաշվի է առնված տեղական նշանակության տարաբնակեցման համակարգում ընդգրկվող բնակավայրերի պահանջը, ինչպես նաև, գոյություն ունեցող իրավիճակը և հնարավոր փոփոխությունները:

**Առաջնային սպասարկման համակարգի ցուցանիշներ**

աղյուսակ 5.2.4-1

հհ	Սպասարկման օբյեկտներ	Չափման միավորներ	Տարողություն, քանակ	Տարածք, հա
1.	Մանկական նախադպրոցական, այդ թվում	տեղ	3825	13.4
1ա.	մանկապարտեզներ ընդհանուր տեսակի	տեղ	2550	
1բ.	մասնագիտացված	տեղ	765	
1գ.	մարզաառողջարարական	տեղ	510	
2.	ծածկած լողավազաններ նախադպրոցական հասակի երեխաների համար		քաղաքում երկու օբյեկտ	1.5
3.	հանրակրթական դպրոցներ՝ միահերթ ուսուցմամբ	աշակերտ/տեղ	9180	37
3ա.	1-9-րդ դասարաններում 10-12-րդ դասարաններում	աշակերտ/տեղ	6885 1785	
3բ.	մասնագիտացված	աշակերտ/տեղ	640	
3գ.	միջդպրոցական ուսուցման	աշակերտ/տեղ	460	
3դ.	արտադպրոցական, այդ թվում ըստ ոլորտների՝ <ul style="list-style-type: none"> <li>• տեխնիկական</li> <li>• մարզական</li> <li>• բնագիտական</li> <li>• արվեստ և երաժշտություն</li> </ul>	աշակերտ.տեղ	127 190 127 95	
4.	գիշերօթիկ դպրոցներ	աշակերտ.տեղ	190	ՆԱ
5.	գիշերօթիկ տներ մեծահասակների, հաշմանդամների համար	տեղ	160	ՆԱ
7.	Առողջապահական ստացիոնար համալիր (հիվանդանոց)	տեղ	380	ՆԱ
8.	պոլիկլինիկաներ և ոչ ստացիոնար այլ բժշկական ծառայություններ	հերթափոխում մեկ այցելու	/ * <sup>1</sup>	ՆԱ
9.	բժշկական շտապ օգնության կայաններ	ավտոմեքենա	/ *	ՆԱ
10.	մարզական կառույցներ, այդ թվում		8	0.25
10ա.	ընդհանուր օգտագործման մարզասրահներ	մ <sup>2</sup>		22.4
10բ.	մարզադահլիճներ	մ <sup>2</sup>	4000	
10գ.	ծածկած լողավազաններ	մ <sup>2</sup>	4000-5000*	
11.	քաղաքային գրադարան	ընթերցատեղ	1300-1600*	
12.	հյուրանոցներ	տեղ	100-130*	ՆԱ
13.	կենցաղային սպասարկման ծառայություններ	աշխատատեղ	300	0.6

14.	կոմունալ ծառայություն՝ այդ թվում		510	ՆԱ
14ա.	լվացքատներ	կգ, չոր վիճակում		
14բ.	քիմ. մաքրման կետեր	կգ, չոր վիճակում	6100	0.2
14գ.	քաղաքային բաղնիք	տեղ	720	0.2
15.	հրշեջ կայան	հրշեջ ավտոմեքենա	5-7	0.9
16.	կապի հանգույց	օբյեկտ	7*	0.3-0.8
17.	հանրային զուգարաններ	սարք կոմպլեկտ	2	0.5
18.	հուղարկավորման գրասենյակ և գերեզմանոց	օբյեկտ	1	-
19.	քաղաքային շուկաներ	վաճառատեղ	160	9
20.	հանրային սննդի ձեռնարկություններ	տեղ	1500	
21.	մթերային և արդյունաբերական ապրանքի խանութներ		2300	-

\*/ Տարողությունը և կառուցվածքը որոշվում է առողջապահական մարմնի կողմից և ներկայացվում է նախագծային առաջադրանքում:

#### **5.2.5 Արդյունաբերական և կոմունալ ենթակառուցվածքի զարգացման կազմակերպում**

Արմավիրի արդյունաբերական հանգույցը, որն անցյալում ձևավորված և համակարգված էր, այժմ ևս ունի զարգացման հնարավորություններ:

Քաղաքում տեղաբաշխված արտադրական ձեռնարկությունների վնասակար արտանետումների աստիճանով դասվում են 4 և 5 կարգին ու համապատասխան ՈՒՒՄ 245-71 հետևում է, որ դրանց վնասակար արտանետումների տարածման շառավիղը կազմում է 100 և 50 մ: Այդ պատճառով, արդյունաբերական և բնակելի կառուցապատման տարածքների միջև բացակայում է սանիտարապաշտպանիչ կանաչապատ գոտին: Այդ հանգամանքից ելնելով, հետագայում պահանջում է առավել զգուշորեն վերաբերվել արտադրական գոտիներում նոր ձեռնարկությունների տեղադրման խնդրին: Այժմ գործող արտադրական օբյեկտներից՝ գինու, պահածոների գործարանների հետագա զարգացումը, դրանց արտադրական հզորությունների ավելացումը և մի շարք այլ, առայժմ գրեթե չգործող արտադրությունների վերագործարկման դեպքում, պահանջվում է բացառել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության ներգործությունը:

Համայնքի արտադրական տարածքները ունեն որոշակի քանակությամբ չօգտագործվող հողահատվածներ: Դրանք, ներկայումս, հիմնականում վերածվել են աղբակույտերի տարածման վայրերը: Այդ տարածքները հետագա զարգացման համար կարող են առավել արդյունավետ օգտագործվել: Անհրաժեշտության դեպքում, հնարավոր է դրանց մի մասի գործառական նշանակության փոփոխումը: Հատկապես, արդիական է կատարել չօգտագործվող հողահատվածների կանաչապատում և բարեկարգում, ինչը կնպաստի քաղաքի միկրոկլիմայի, շրջակա միջավայրի բարելավմանը, քաղաքի կանաչապատ տարածքների ավելացմանը:

Առաջարկվում է արդյունաբերական գոտու մեծ և փոքր ձեռնարկությունների գերակշռող մասի պահպանումը, նրանց զարգացումը, շրջակա միջավայրի պահպանման համապատասխան սահմանափակումներով:

Կոմունալ տնտեսության ձեռնարկությունները և պահեստարանային օբյեկտների հողատարածքները գտնվում են, հիմնականում, երկաթուղային ճանապարհին կից և արդյունաբերական գոտում: Դրանք, նույնպես, ունեն սանիտարական մաքրման և կազմակերպման խնդիրներ: Սույն նախագծով առաջարկվում է այդ հարցերի լուծումը, դրանց համապատասխանեցումը գործող նորմերին:

#### **5.2.6 Ճանապարհային ցանցի ու տրանսպորտի զարգացում.**

Արմավիրի ձևավորված տրանսպորտային համակարգը ներկայումս կարող է բավարարել գոյություն ունեցող և հաշվարկային ժամկետում հնարավոր պահանջներին համապատասխան մոդերնիզացման միջոցառումների կիրառմամբ:

Ավտոտրանսպորտային ձեռնարկությունների համար արդյունաբերական հանգույցի գոտում կան համապատասխան տարածքային պաշարներ:

Քաղաքային ներքին ուղևորատար տրանսպորտի տեսակ է ընտրված ավտոբուսը կամ երթուղային տաքսին: Ուղղեվորատար երթուղիների համար հնարավոր փողոցները նշված են «Տրանսպորտի ուրվագիծում»: Բաժնում ներկայացված ճանապարհային ցանցի զարգացումը նպատակաուղղված է կանոնակարգելու գոյություն ունեցող կառուցվածքը՝ լրացնելով այն անհրաժեշտ տարրերով:

Կարևոր նշանակություն ունի քաղաքի միջավայրի բարելավման համար երկաթուղուն հարող գոտու օգտավետ օգտագործումը, կազմակերպումն ու բարեկարգումը: Այս գոտին քաղաքի հարավային, հարավ-արևմտյան սահմանի վրա է գտնվում և փաստորեն ուղեկցում է Արմավիր քաղաքի թե արևելյան, թե արևմտյան մուտքերը: Գոտու միջին հատվածը, որտեղ 1929 թ. կառուցվեց կայարանի շենքը և հիմնվեց հրապարակը, պատկանում է քաղաքի հասարակական կենտրոնին: Կարևոր նշանակություն ունի նաև երկաթուղային կայարանի շենքի վերանորոգման և ժամանակակից տեխնիկական վերազինման իրականացումը, տարածքի, այդ թվում նաև կայարանամերձ ու ավտոկայանի հրապարակի բարեկարգումը, դրանց քաղաքային հասարակական կենտրոնի համակարգի մեջ ընդգրկելու համար: Այս տիրույթում անհրաժեշտ է ապահովել երթևեկության անվտանգությունը:

Ճանապարհային ցանցի զարգացման համար նախատեսվում է հետևյալ խնդիրների լուծում`

- դասակարգել ճանապարհները, գործող շինարարական նորմերին համապատասխան, ճանապարհային ցանցում հստակեցնել արտաքին և ներքին կապերի ուղեգծերը
- գրաֆիկական լուծում ներկայացնել համաքաղաքային նշանակության և բնակելի փողոցների միջև ավտոտրանսպորտային հոսքերի վերադասավորության վերաբերյալ
- քաղաքային ճանապարհային ցանցի կարգավորման ուրվագիծը կատարել, հաշվի առնելով արտակարգ իրավիճակներում համապատասխան միջոցառումների անցկացման պահանջները:

Արմավիրի գլխավոր հատակագծի նախագծի կազմում` գրաֆիկական մասում` «Տրանսպորտի ուրվագիծ. ճանապարհային ցանցի զարգացում» գծագրում նշված են համաքաղաքային

նշանակության կարգավորվող երթևեկությամբ ճանապարհները, բնակելի փողոցները ինչպես նաև արդյունաբերական ճանապարհները: Կից սխեմայում ներկայացված է առաջարկվող ճանապարհատրանսպորտային համակարգի շահագործման ինտենսիվության սխեման:

Գոյություն ունեցող կառուցապատման պայմաններում, տրանսպորտի երթևեկության և հետիոտն անվտանգ շարժման պահանջը հաշվի առնելով, նախատեսվում է ապահովել համապատասխան տեխնիկական միջոցների կիրառում:

Հետիոտն շարժման ուղիների և քաղաքային մայրուղիների հատման տեղում նախատեսվում է կազմակերպել անցումներ, որոնք համաձայն արդի պահանջների, պետք է ունենան հաշմանդամային սայլակների անցուղիներ, պանդուսներ և այլ հարմարանքներ: Հետիոտն անցումներն նախատեսված են իրարից 200 - 300 մ հեռավորությամբ:

Վերգետնյա մարդատար հասարակական տրանսպորտի երթուղիներում կանգառները նախատեսված են, հիմնականում, քաղաքային մայրուղիներից՝ 500մ-ից ոչ պակաս հետիոտն մատչելիությամբ:

Արդյունաբերական գոտում և առանձին ձեռնարկությունների թափուր մնացած հողահատվածներում առաջարկվում է օգտագործել ավտոկայանատեղերի կազմակերպման համար, բնակելի բազմաբնակարան շենքերի բակերը անհատական մեքենաների ավտոտնակներից ազատելու ու բակերի բարեկարգումն իրականացնելու համար: Նույնը վերաբերվում է նաև գերատեսչական և տարբեր կազմակերպությունների պատկանելիության, բեռնատար, մարդատար և ավտոբուսների կայանատեղերի կազմակերպման համար: Ինչպես բեռնատար, այնպես էլ մարդատար տարբեր պատկանելիության ավտոտրանսպորտի միջոցների տեխնիկական սպասարկման ձեռնարկությունների տեղաբաշխումը պետք է իրականացվի բացառապես արդյունաբերական գոտում:

#### **5.2.6.1 Փողոցային ցանցի զարգացման հեռանկարները**

Այսօր Արմավիր քաղաքի տրանսպորտային թիվ մեկ խնդիրը շրջանցիկ ճանապարհի բացակայությունն է: Քաղաքի կենտրոնական փողոցներից մեկով՝ Երևանյան փողոցով են անցնում միջպետական նշանակության Մ- 5 (Երևան-Արմավիր- Թուրքիայի սահման ) մայրուղին և հանրապետական նշանակության Հ-17 (Արմավիր-Իսահակյան-Գյումրի) ճանապարհը: Համաձայն »ՀՀ տարաբնակեցման գլխավոր հատակագծի«, Մ-5 ճանապարհը պետք է քաղաքը շրջանցի հարավային կողմից: Դա կախված է տրանսպորտի զարգացման տեմպերից և, առաջին հերթին, Թուրքիայի սահմանի բացումից: Ջգալու համար, թե դա ինչ կտա քաղաքին, կարելի է ղեկավարվել հետևյալ տրամաբանությամբ: Այսօր, Էջմիածին-Արմավիր ուղղությամբ քաղաք է մուտք գործում ժամում 696 ավտոմեքենա: Նույն ուղղությամբ, այսինքն Երևանյան փողոցով, քաղաքից դուրս է գալիս 324 ավտոմեքենա: Տրամաբանորեն, տարանցիկ երթևեկություն կարելի է համարել 324 ավտոմեքենա: Եթե քաղաքը շրջանցող ճանապարհ կառուցվի, ապա Երևանյան փողոցով երթևեկության անցուղարձը կպակասի ժամում 324 ավտոմեքենայով կամ  $1/3$  –ով, ինչը զգալի կթեթևացնի փողոցի բեռնվածությունը:

Այսօրվա դրությամբ, փաստորեն, Էջմիածնի կողմից քաղաքն ունի միայն մեկ մուտք, որի պատճառով Երևանյան փողոցը, մյուսների համեմատությամբ ծանրաբեռնված է: Նպատակահարմար ենք գտնում քաղաքի մուտքը կազմակերպել նաև Շահումյան փողոցով, ինչը ցուցադրված է ուրվագծում: Ընդհանուր առմամբ քաղաքը չունի նաև պարուրող փողոց, ինչի բացակայությունը դժվարություններ կառաջացնի արտակարգ իրավիճակներում: Ուրվագծում նշված են նաև քաղաքի պարուրող փողոցների և այլ փողոցների ուրվագծերը, որոնք կլրացնեն համաքաղաքային նշանակության փողոցների շարքը: Այդ փողոցների ընդհանուր երկարությունը

կկազմի 10.635 կմ, իսկ համաքաղաքային նշանակության փողոցների ընդհանուր երկարությունը հավասար կլինի 27.01 կմ և խտությունը 3.3 կմ/կմ2:

աղյուսակ 5.2.6.1-1

	Փողոցի անվանումը	Երկարու- թյունը, մ	Երթևեկային մասի լայնու- թյունը, մ	մայթերի լայնությունը, մ		Երթևեկության անցուղարձը ավտ/ժամ	բեռնվածու- թյան մա- կարդակը
					մայթի բանուկ մաս		
	1	2	3	4	5	6	7
1.	Երևանյան I հատված II հատված	2075	15.0	2.0	3.0	972 1120	0.41 0.47
	Ելք դեպի Բաղրամյան	-	15.0	-	2.0	324	0.14
	մուտք Երևանի կողմից	1950	27.5	-	-	696	0.29
2.	Հանրապետութ- յան I հատված II հատված	1100	13.5	2.0	4.0	648 486	0.27 0.20
3.	Մաշտոցի	2100	12.0	-	2.0	286	0.12
4.	Արարատյան	1100	14.0	-	3.0	1296	0.08
5.	Շահումյան I հատված II հատված	1550	13.0	-	4.0	396 326	0.17 0.14
6.	Աբովյան I հատված II հատված III հատված IV հատված V հատված	1600	10.0	1.0	3.5/4.0	78 204 300 132 84	0.04 0.11 0.17 0.07 0.05
7.	Զիվանի (օղակաձև մասը)	225	8.0	1.0	2.0	120	0.1
8.	Չարենցի (օղակաձև մասը)	225	8.0	1.0	2.0	125	0.11
9.	Ավետիսյան I հատված II հատված	950	10.5	1.0	2.0	62 88	0.05 0.07
10.	Սահմանապահ ների I հատված II հատված	950	10.5	1.0	2.0	88 108	0.07 0.09
11.	Լեւոնոստով I հատված II հատված	1150	12.0	-	3.5	90	0.05
12.	Մաքսիմ Գորկու I հատված II հատված	1400	12.0	1.5	2.0	156 64	0.09 0.04

### **5.2.6.2 Հասարակական տրանսպորտի երթևեկության կարգավորում**

Քաղաքի տարբեր մասերի մատչելիությունը ապահովելու համար նախատեսվում է հասարակական տրանսպորտի երթևեկության կազմակերպում: Այն պետք է նպաստի ողևորների հնարավորին կարճ ժամանակամիջոցում քաղաքի մի մասից մյուս մաս տեղափոխմանը, կենտրոնական և արվարձանային բնակելի թաղամասերի, աշխատավայրերի, վարչական, առևտրային, հասարակական և կենցաղային սպասարկման և այլ ծառայությունների միջև բնակչության համար հարմարավետ տարածքային մատչելիության:

Որպես կանոն քաղաքի հատակագծային կառուցվածքում իր զարգացման ընթացքում ձևավորվում են հանգուցային գոտիներ, որտեղ սովորաբար տեղաբաշխված են լինում կարևոր նշանակություն ունեցող կազմակերպությունները, դրանք են՝ արդյունաբերական գոտիներում արտադրական ձեռնարկությունները, կոմունալ ծառայությունների արտադրամասերը, պահեստարանները և այլն, հասարակական կենտրոնում տեղաբաշխված վարչական և հասարակական կազմակերպությունները, առևտրի խոշոր կենտրոնները, սպասարկման ծառայություններն ու նման օբյեկտներ: Ներկայումս գործող երկթուղային ավտոբուսների երեք ուղիների երկարությունը հետագայում նախատեսվում է հասցնել մինչև 40 կմ-ի: Երթուղիները ընտրված են, հիմնվելով վերը նշված սկզբունքների վրա, և ընգրկում են քաղաքի ամենահաճախելի վայրերը՝ երկաթուղային կայարանի և ավտոկայանի հրապարակը, քաղաքի վարչական կենտրոնը, արդյունաբերական գոտին, արևմտյան և հյուսիս-արևելյան բնակելի թաղամասերը:

Առաջնահերթ ժամանակաշրջանի համար առաջարկվում է կազմակերպել երեք երթուղի: Բոլոր երթուղիները անցնում են կենտրոնական փողոցներով, ընդգրկելով քաղաքային շուկան, առևտրի կենտրոնը, ավտոկայանը և քաղաքի վարչական և մշակութային կենտրոնը: Երթուղիներից մեկը ընդգրկում է քաղաքի արևմտյան, երկրորդը՝ արևելյան և հյուսիս-արևելյան մասերի սպասարկումը: Երրորդ երթուղին, քանի որ կենտրոնական հատվածում բնակչության տեղաշարժն ավելի մեծ է, լրացնում է առաջին և երկրորդ երթուղիները ամենածանրաբեռնված փողոցներում:

Առաջին երթուղու երկարությունը կարող է կազմել շուրջ 15 կմ, երկրորդինը՝ մինչև 12 կմ, երրորդինը՝ մոտ 10 կմ:

Երթուղիների կանգառների միջև հեռավորությունը ընտրված է 500-600 մ-ի սահմաններում՝ ավելի հաճախ տեղաբաշխվելով կենտրոնական մասում:

### **5.2.6.3 Անհատական օգտագործման տրանսպորտի կայանատեղերի հաշվարկ և տեղադրում:**

Բնակելի կառուցապատման և դրանց հարակից արտադրական, կոմունալ, պահեստարանների և այլ տարածքներում նախատեսվում է բնակչության անհատական օգտագործման տրանսպորտի ծածկված և բացօթյա կայանատեղերի տեղադրում: Տրանսպորտային միավորների հաշվարկային քանակը ընդունվում է հազար բնակչի համար՝ ներկայիս 86 մեքենայից հասցնել 120-ի: Այսպիսով, Արմավիր քաղաքի անհատական ավտոտրանսպորտի միավորների ընդհանուր քանակը կհասնի 6120 - ի:

Քաղաքի անհատական տրանսպորտի այն մասը, որը պատկանում է տնամերձ հողամասերով սակավահարկ տներում բնակվողներին կազմելու է 85% կամ 5200 ավտոմեքենա: Այս քանակությամբ

ավտոմեքենաները կարող են կայանվել տնամերձ հողամասերում: Բազմաբնակարան բնակելի շենքերում բնակվողներին պատկանող ավտոմեքենաների քանակը ստացվում է ընդհանուր թվի 15% կամ 920 ավտոմեքենա: Հաշվարկը կատարված է համապատասխան 5.1.2 Բնակելի ֆոնդի զարգացում և տեղաբաշխում բաժնում ներկայացված ցուցանիշների:

Բազմաբնակարան շենքերում բնակվողների անհատական օգտագործման ավտոմեքենաների համար կայանատեղերի (ավտոտնակների) տեղաբաշխումը կատարվել է համապատասխան քաղաքի տարածքում առկա և նախատեսվող շենքերի դիրքի և քանակի:

Այսպիսով, քաղաքի կենտրոնական մասում Երևանյան, Նալբանդյան, Չարենցի, Հանրապետության, Զիվանու փողոցներում տեղակայված շենքերի համար առաջարկվում է կազմակերպել դրանց հարակից մասերում առկա արտադրական և կոմունալ ձեռնարկություններին պատկանող տարածքների թափուր հողահատվածները: Բաղրամյան փողոցին հարակից թաղամասերում այդ նպատակների համար հնարավոր է օգտագործել նաև չգործող արտադրական ու կոմունալ նշանակության մասնաշենքերի տարածքը, ինչը թույլ կտա կազմակերպված տեղաբաշխել ներկայումս և հեռանկարում աճող պահանջը:

Քաղաքի տարածքների, դրանց ճանապարհային և ինժեներական ենթակառուցվածքների ավելի արդյունավետ օգտագործման համար վերը նշված տարածքներում նպատակահարմար է նախատեսել և իրականացնել բազմաօգտակար ավտոտնակների շինարարություն:

#### **5.2.7 Կանաչապատ տարածքների զարգացում**

Արմավիրի տարածքային զարգացման կարևոր խնդիրներին է դասվում կանաչապատ տարածքների վերականգնման և ընդարձակման խնդիրը:

Կանաչ տարածքների՝ տնկիների, պուրակների, զբոսայգիների, փողոցային ծառատունկների և տնկարանների խնամքի համար անհրաժեշտ է՝

- ծառուղիների նորոգում և վերակառուցում.
- ոռոգման ցանցի ու վաքերի նորոգում և փոխարինում նորերով,
- գոյություն ունեցող զբոսայգիներում և այլ տեղերում ծառուղիների ու վաքերի կառուցում,
- սիզամարգերի ձևավորում ու նորոգում, ծաղկանոցների և վարդանոցների պատրաստում,
- զբոսայգիներում կանաչ տնկումների վերականգնում,
- լճակների և առուների մաքրում, լրացուցիչ առուների փորում՝,
- ձմեռային սեզոնին սիզամարգերի ձյան փխրեցում և ցրում, փոցխով մաքրում, գարնանային սնուցում, ջրում, քաղհանում, հնձում, ամառային սնուցումներ, աղբի և թափված տերևների հավաքում:
- ծառուղիների վաղ գարնանային տոփանում կատկով, եզրերի խուզում և վաքերի մաքրում, ավլում, ջրցանում, ձյան հեռացում, ավազի ցանում:

Քաղաքի տարածքի տարբեր մասերում առկա են բաց, չկառուցապատված և չբարեկարգված հողահատվածներ: Առաջարկվում է դրանք վերածել ընդհանուր օգտագործման կանաչապատ գոտիների՝ այդ տեղերում ստեղծելով զբոսայգիներ և պուրակներ: Այդպիսի տարածք կարելի է համարել Երևանյան փողոցի և երկաթուղու միջև, ինչպես նաև, դրան հարակից գոտին, որոնք ենթակա են կանաչապատման և տարածքներում հանգստի գոտիների կազմակերպման, անհրաժեշտ է նաև համապատասխան օբյեկտների տեղաբաշխում, ինչի շնորհիվ քաղաքի



ընդհանուր օգտագործման կանաչապատ համակարգը կաճի 7.26 հա նոր զբոսայգով: Արդյունքում Արմավիրի քաղաքային մուտքից սկսած կծկավորվի բավականին խոշոր՝ 15.52 հա կանաչ զանգված:

Արմավիրի բնակիչների նախաձեռնությամբ քաղաքում հիմնադրվել է կենդանաբանական անկյուն, որը Արմավիր քաղաքում կատարում է տեղական կենդանաբանական այգու դերը և կոչվում է «Գազանանոց»: Այս նպատակների համար տրամադրված է 8.98 հա, որը մասամբ կանաչապատ է և տարեցտարի ծառապատվում է: Նման նախաձեռնությունը ողջունելով հանդերձ, պետք է նշել, որ անհրաժեշտ է նաև կենդանաբան, դենդրոլոգ /ծառագետ/ ու ճարտարապետ մասնագետների մասնակցությունը կենդանիների վանդակների հարմարեցման, այգու տարածքի բարեկարգմանն ու կանաչապատմանը մասնագիտական աջակցություն ցուցաբերելու համար:

Կանաչապատ նոր տարածքներ նախատեսվում է ստեղծել քաղաքի հյուսիսում և հյուսիս-արևելքում, ինչպես նաև արևմտյան բնակելի շրջանում:

Արմավիր քաղաքի սահմաններում կանաչապատ զանգվածների ցուցանիշները

Աղյուսակ 5.1.6-1

Կանաչ զանգվածների գործառական նշանակությունը	Ընդհանուր կանաչ զանգված	
	հա	մ <sup>2</sup> /մարդ
1. Ընդհանուր օգտագործման	53.92	10.57
2. Սահմանափակ օգտագործման	110.0	21.56
3. Հատուկ նշանակության	5.5	1.08
Ընդամենը	169.42	33.2

Քաղաքի միջավայրի բարելավման համար կարևոր նշանակություն ունի երկաթուղուն հարող գոտու նպատակային օգտագործումը, կազմակերպումն ու բարեկարգումը:

### 5.2.8 Ինժեներական ենթակառուցվածքներ

Ինժեներական ենթակառուցվածքների ուրվագծերը նախագծելու համար, որպես ելակետային տվյալներ, օգտագործում են՝

- Արմավիր քաղաքի գլխավոր հատակագծային հորինվածքը՝ կատարված «Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից 2006 թ.
- «Նոր Ակունք» ՓԲԸ գլխավոր տվյալները (07.02.2006թ. N 56102) Արմավիր քաղաքի առկա ջրամատակարարման և կոյուղացման վերաբերյալ
- «ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Մուսալեռ» մասնաձյուղի գլխավոր տվյալները (21.01.06թ. N ԱԱ-54) Արմավիր քաղաքի առկա էլեկտրամատակարարման վիճակի վերաբերյալ
- «Հայրուսգազարդ» ՓԲԸ գլխավոր տվյալները (15.08.05թ. AAD-05-15/2491) Արմավիր քաղաքի գազաֆիկացման և գազամատակարարման առկա վիճակի վերաբերյալ

- ՀՀ Առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և համաճարաքային տեսչության, Արմավիր մարզային կենտրոնի գլխավոր տվյալները քաղաքի սանիտարահիգիենիկ վիճակի վերաբերյալ (13.02.06թ. N01-27116):

#### 5.2.8.1 Ջրամատակարարման նորմերը և հաշվարկային ժամանակաշրջանի ջրապահանջը

Ջրամատակարարումը նախատեսվում է բնակչության խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների բավարարման, խմելու որակի ջուր պահանջող արտադրական ձեռնարկությունների, ինչպես նաև, բնակավայրի հակահրդեհային անվտանգության կարիքների ապահովման համար:

Բնակչության մեկ մարդու միջին օրական ջրապահանջի քանակը համաձայն Արմավիր քաղաքում գործող “FICHTHER” ընկերության առաջարկության կազմում է՝ 129 լ/օր և չնախատեսված ծախսերի համար ընդունված է՝ ընդհանուր պահանջարկի 25%-ի չափով:

Հակահրդեհային կարիքների համար պահանջվող ջրաքանակը հաշվարկված է ըստ գործող նորմերի պահանջների՝ 50-100 հազ. բնակչությամբ բնակավայրերի համար միաժամանակյա արտաքին հրդեհների քանակը  $2 \times 35 \text{ լ/վրկ}$  է, ինչպես նաև, ներքին հրդեհների համար՝  $2 \times 2,5 \text{ լ/վրկ}$ : Բնակավայրի հակահրդեհային կարիքների համար պահանջը կազմում է  $2 \times 35 + 2 \times 2,5 = 75 \text{ լ/վրկ}$ :

Հրդեհի տևողությունն ընդունվում է 3 ժամ, պահանջվող ջրաքանակը՝ 810,0 խ.մ:

Հակահրդեհային կարիքների ջրապահանջը պետք է վերականգնվի 0.4.Ջ-ում 24 ժամվա ընթացքում: Դրա համար անհրաժեշտ է ընդհանուր ջրապահանջին ավելացնել 9.3 լ/վրկ:

Նախկինում գործող խոշոր ձեռնարկությունները ներկայումս չեն գործում: Դրանք վերագործարկման ժամանակ կունենան իրենց լուրջ ջրամատակարարման համակարգը:

Արմավիր քաղաքի հեռանկարաճանաչ գարգացման ժամանակաշրջանի համար խմելու որակի ջրապահանջի հաշվարկը բերվում է 5.2.9.1-1 աղյուսակում:

աղյուսակ 5.2.9.1-1

հհ	ջրասպառողներ	քանակ հազ.	ջրասպառման նորմա լ/օր	ջրապահանջը		ջրահեռացում	
				մ <sup>3</sup> / օր	լ/ վրկ	մ <sup>3</sup> / օր	լ/վրկ
1	բնակչությունը	51.0	129	6705.0	78.0	4694.0	55.0
2	արտադրական կարիքներ	10%	—	670.0	8.0	459.0	5.0
3	հակահրդեհային կարիքների համար			810,0	9.0	—	—
	ընդամենը			8185.0	95.0	5153.0	60.0
4	չնախատեսված ծախսեր	25%		2046.0	24.0	1005.0	12.0
5	ամբողջը			10231.0	118.0	6158.0	72.0

Այսպիսով, ըստ կատարված հաշվարկների՝ հեռանկարաձային զարգացման ժամանակաշրջանի համար Արմավիր քաղաքի խմելու որակի ջրի ընդհանուր պահանջը կազմում է 10231.0 մ<sup>3</sup>/ օր (118.0 լ/վրկ): Հեռացման ենթակա կեղտաջրերի քանակը՝ 6158.0 մ<sup>3</sup>/ օր (72.0 լ/ վրկ): Ընդհանուր ջրապահանջը կբավարարվի ինչպես ներկայումս, այնպես էլ հետագայում ոչ ճնշումային խորքային հինգ հորերից, որոնց ընդհանուր հզորությունը 21,0 հազ. մ<sup>3</sup> է: Խորքային հորերից ջուրը մղվում է ԿՕԱ 12-160-100 մակնիշի պոմպերի միջոցով:

#### **5.2.8.2 Ջրամատակարարման համակարգը և գոտիները**

Ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է: Ջրասպառողների պահանջարկը բավարարվում է մեկ ջրատարով: Ելնելով քաղաքի կառուցապատման և նոր գլխավոր հատակագծով նախատեսված կառուցապատման տակ դրվող տարածքների ամենացածր նիշերի և Օ.Կ.Ջ-ների հատակի նիշերի տարբերությունից, որը կազմում է 920-860=60 մ՝ ջրամատակարարման ցանցը կարող է լինել մեկ գոտիանի օրվա կարգավորիչ ջրամբարներով: Ըստ կատարված հաշվարկների, քաղաքում շուրջօրյա ջրամատակարարում ապահովելու, ինչպես նաև հակահրդեհային պահանջվող ջրաքանակ պաշարելու համար անհրաժեշտ է ունենալ 7600 մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով ՕԿՋ: Նախկինում կառուցված ՕԿՋ ծավալը 7 հազ. մ<sup>3</sup> է , որից ներկայումս գործում են 2 x 2000մ<sup>3</sup> կլոր երկաթբետոնյա ջրամբարները, իսկ 1x 2000 մ<sup>3</sup> և 1 x 1000 մ<sup>3</sup> ուղղանկյուն ջրամբարները չեն գործում: Անհրաժեշտ է կատարել վերակառուցման և վերականգնման աշխատանքներ: Ջրամատակարարման գլխամասային կառույցները՝ խորքային հորերը, ՕԿՋ-ը, մարիչ հորը և քլորակայանն, ունեն պահանջվող նորմերին համապատասխան սանապահպանության գոտի՝ պահակային ծառայությամբ:

#### **5.2.8.3 Ներքաղաքային բաշխիչ ցանց**

Սպառողներին անընդմեջ անհրաժեշտ ճնշում և ջրաքանակ ապահովելու համար քաղաքի օղակային բաշխիչ ցանցը բաժանված է հինգ գոտու: Գոտիները սնող նորակառույց ջրագծերի ընդհանուր երկարությունը 9 կմ է, որից 300 մմ տրամագծով՝ 0,6 կմ է, 250 մմ տրամագծով՝ 8,4 կմ:

Ներքին բաշխիչ հինգ գոտիների ջրագծերի ընդհանուր երկարությունը 121.0 կմ է , որից նոր կառուցվածը՝ 81,5 կմ:

Օղակային բաշխիչ ցանցի հիդրավիկ հաշվարկները կատարված են համակարգչային “Epanet” ծրագրով: Ջրամատակարարման ընդհանուր համակարգը, ինչպես նաև բաշխիչ ցանցի օղակային հինգ գոտիներ մուտք գործող ջրաքանակի տվյալները, վերցվում են այդ նպատակի համար հինգ կարգավորող հորերի մեջ տեղակայված ջրաչափերի միջոցով: Անհրաժեշտ վերահսկողություն կազմակերպելու համար ինչպես բազմաբնակարան, այնպես էլ առանձնատների սպառողների ջրաչափերը տեղադրվում են բնակարանից դուրս:

#### **5.2.8.4 Ջրահեռացում (կոյուղի)**

Ներկայումս Արմավիր քաղաքային համայնքի տարածքը կոյուղացված է 95%-ով, գործող ցանցի ընդհանուր երկարությունը մոտ 84,0 կմ: Նախատեսված է չկոյուղացված տարածքների կոյուղացում (ընդհանուր երկարությունը 10,0 կմ): Քաղաքի կոյուղու գլխավոր կոյուղատարի երկարությունը 6,86 կմ է, որից 1,11 կմ քաղաքի տարածքում՝ 800 մմ տրամագծով, իսկ 5,75 կմ քաղաքի տարածքից դուրս՝ 1000 մմ: Մինչև կոյուղու պոմպակայանը: Ավարտված են պոմպակայանի վերանորոգման,

վերականգնման աշխատանքներ: Նախկինում Արմավիր և Մեծամոր քաղաքային համայնքների կենցաղային կեղտաջրերը ենթարկվում էին կենսաբանական մաքրման: 1989թ-ից՝ շուրջ 15 տարի, այն չի գործել, բարոյապես և ֆիզիկապես շարքից դուրս է եկել և ներկայումս վերականգնման համար նպատակահարմար չէ: Հաշվի առնելով նաև շահագործող կազմակերպության առաջարկը՝ նախատեսվում է կառուցել նոր, ժամանակակից մաքրման կայան՝ 17.5 հազ.մ<sup>3</sup> /օր հզորությամբ, չգործող մաքրման կայանին հարակից տարածքում:

Անհրաժեշտ է նշել, որ Արմավիր, Մեծամոր քաղաքային համայնքների, ինչպես նաև որոշ գյուղական բնակավայրերի կեղտաջրերի մաքրման կենսաբանական, ինժեներական լճակների կիրառման տարբերակ չի դիտարկվում: Նկատի ունենալով տարածքի գրունտային ջրերի բարձր մակարդակը, աղուտների առկայությունը, ինչպես նաև ստորերկրի արտեզյան ավազանի ջրերը աղտոտումից զերծ պահելու պահանջարկը, հաշվի առնելով երկաստիճան մաքրման (մեխանիկական և կենսաբանական) կայանի կառուցման ֆինանսական միջոցների բացակայությունը՝ առաջարկվում է կեղտաջրերի մաքրումը իրականացնել փուլային եղանակով: Սկզբում կատարել մեխանիկական մաքրում, կառուցելով ճաղավանդակ, ավազավորսիչ և առաջնային պարզարան, երկրորդ փուլով իրականացնել կենսաբանական մաքրման կառույցները: Կեղտաջրերը լրիվ և խորը մաքրումից և վնասազերծումից հետո լցնել Սևջուր գետը՝ հաշվի առնելով մակերեվութային ջրերի աաղտոտումից պահպանելու պահանջարկը:

#### **5.2.8.5 Էներգամատակարարում**

##### **5.2.8.5.1 Էլեկտրամատակարարման բեռնվածքների հաշվարկ**

Քաղաքի հեռանկարային զարգացման ժամանակաշրջանի համար առավելագույն հզորությունների պահանջարկի քանակը որոշելու նպատակով հիմք են հանդիսացել գլխավոր հատակագծի ներկայացվող տվյալները , ըստ որոնց Արմավիր քաղաքի բնակչության քանակը հաշվարկված է 51.0 հազ. մարդ:

Հաշվարկային առավելագույն հզորությունը հաշված է, որպես հզորությունների գումար: Այստեղ ընդգրկված է կոմունալ կենցաղային, հասարակական և այլ շինությունների արտաքին լուսավորության պահանջարկը, ինչպես նաև, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի պահանջարկի հաշվարկը, որը կատարված է համաձայն գործող նորմերի, որտեղ մեկ մարդուն հասանելիք էլեկտրաէներգիայի քանակը /խոշորացված ցուցանիշով/ կազմում է 2000 ԿԿՏ/ժամ, իսկ տարվա ընթացքում օգտագործվող ժամերի քանակը 5300:

Արդյունաբերական ձեռնարկությունների համար պահանջվող էլեկտրաէներգիայի քանակը հետազայում կձշտվի, քանի որ ներկայումս այդ ձեռնարկությունները մեծամասամբ չեն գործում, և չկան տվյալներ դրանց արտադրանքի տեսականու և քանակի վերաբերյալ:

Արմավիր քաղաքի տարածքային զարգացմանը համապատասխան հաշվարկային պահանջվող էլեկտրաէներգիայի գումարային քանակը ներկայացված է 5.2.8.5.1-1 աղյուսակում:

Սպառող	միջոց հոգս	մեկ մարդու համար պահանջվող էլ.էներգիայի քանակը, կվտ/ժամ/տարի	էլ.էներգիայի գումարային ծախսը , հազ. կվտ/ժամ/տարի	Տարվա օգտագործվող ժամերի քանակը, ժամ	Մաքսիմալ պահանջվող հզորությունը, ԿՎՏ
Բնակելի- կենցաղային	52.0	2000	104000.0	5300	20000.0
Կորուստ- ներ և չնախա- տեսված ծախսեր 30%			3120.0		6000.0
Ընդամենը					26000.0
Արտադրա- կան					5200.0
Ամբողջը					31200.0

Ըստ կատարված հաշվարկների, քաղաքի հեռանկարային զարգացման ժամանակաշրջանի համար էլեկտրաէներգիայի պահանջվող գումարային հզորությունը կազմում է 31.2 ՄՎԱ է: Արմավիր քաղաքի հաշվարկային զարգացման ժամանակաշրջանի համար պահանջվող էլեկտրաէներգիայի քանակը 32.1 ՄՎԱ, որը կբավարարվի գոյություն ունեցող «Արմավիր» 110/35/10 ԿՎ 2x31.5 ՄՎԱ և «Ուրարտու» 110/10 ԿՎ հզորության ենթակայաններից:

#### **5.2.8.5.2 Էլեկտրամատակարարման նախագծային առաջարկություն**

Արմավիր քաղաքի տարածքային զարգացման ներքո անհրաժեշտ է իրականացնել՝ Էլեկտրամատակարարման համակարգի արդիականացում և ժամանակակից պահանջներին համապատասխան վերազինում:

Համակարգի համապատասխանեցումը անվտանգության տեխնիկայի պահանջներին, էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումը ապահովելու համար նախատեսվում է՝

- 10/0.4 լարման ցանցային ենթակայանների աստիճանաբար անցումը երկտրանսֆորմատորային կայանների
- նոր նախատեսված թաղամասերի համար անհրաժեշտ է 10 կՎ և 0.4 լարման ցանցի իրականացում
- երրորդ բաշխիչ կետի (ԲԿ) կառուցում. նախատեսված տարածքը նշված է նախագծի գրաֆիկական մասում:

#### **5.2.8.6 Ջերմամատակարարում**

Ջերմային ցանցերի վերագործարկման համար անհրաժեշտ է ամբողջովին վերակառուցել այն, ըստ որում այն հաշվով, որ ջերմային կորուստները լինեն 10%-ից ոչ ավելի: Այդ հնարավոր է ջերմագծերի և ջերմամատակարարման խողովակների համար մշտական հսկողություն սահմանելու հնարավորություն տվող ստորգետնյա անցանների ուղիների կառուցման դեպքում: Սակայն նշված ուղիների ստեղծման համար մեծ կապիտալ ներդրումներ են պահանջվում, բացի այդ նաև որոշակի

տարածք, ինչը, ելնելով ճանապարհաշինարարական նորմերի պահանջներից, քաղաքի փողոցներն ու մայրերը չեն կարող ապահովել:

Ներկայումս հանրապետության մեծ և փոքր քաղաքներում կենտրոնացված ջերմամատակարարում չի իրականացվում: Այդ իսկ պատճառով անցնում են ապակենտրոնացված ջերմամատակարարման համակարգի, որի դեպքում ջերմություն արտադրող աղբյուրները մոտեցնում են սպառողներին՝ կառուցելով մեկ կամ երկու-երեք շենքերի համար փոքր հզորության կաթսայատներ շենքերի մոտ: Տարբերակ է համարվում նաև կաթսայատան տեղադրումը սպառող շենքի տանիքում: Նման դեպքում ընդհանրապես բացառվում է արտաքին ջերմային ցանցի կառուցումը: Բազմաբնակարան շենքերում հնարավոր ջեռուցումը իրականացվում է նաև խոհանոցներում փոքր հզորության կաթսաների տեղադրումով, որոնք ապահովում են տվյալ բնակարանի, ինչպես ջեռուցման, այնպես էլ տաք ջրի մատակարարման պահանջները: Սակավահարկ բնակելի շենքերի և առանձնատների ջեռուցումը, ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս հնարավոր է իրականացնել բնակարանային փոքր հզորության կաթսաներով կամ գազավառարաններով: Բացի այդ տաք ջրի ստացումը և ջեռուցումը հնարավոր է իրականացնել էլեկտրականությամբ, օդի լավորակիչներով կամ անվտանգությունը ապահովող գազասարքավորումների միջոցով:

#### **5.2.8.6.1 Նախագծային առաջարկություններ**

Այսպիսով Արմավիր քաղաքի բազմաբնակարան, հասարակական առողջապահական, մշակութային, վարչական շենքերի ջեռուցման կարիքների բավարարումը նախատեսվում է ապակենտրոնացված ջերմամատակարարման համակարգերով, այսինքն՝

- կառուցել առանձին փոքր հզորության կաթսայատուն մեկ կամ մի քանի շենքերի համար՝ կարճ արտաքին ցանցերով
- տեղադրել կաթսայատունը սպառող շենքի տանիքում
- առանձին բնակարաններում տեղադրել փոքր հզորության ժամանակակից կաթսաներ կամ գազավառարաններ՝ ապահովելով անվտանգության պահանջների խստագույն պահպանումը:

#### **5.2.8.7 Գազամատակարարման հեռանկարային զարգացում**

##### **5.2.8.7.1 Գազի ծախսը հաշվարկային ժամանակաշրջանի համար**

Գազի ընդհանուր պահանջարկի հաշվարկներում հաշվի է առնված բնական գազով ապահովումը՝

- բնակելի շենքերի ջեռուցման, տաք ջրամատակարարման և կենցաղային կարիքների համար
- հասարակական նշանակության և սպասարկման օբյեկտների ջեռուցման ու տաք ջրամատակարարման համար
- արտադրական և այլ ձեռնարկությունների ջեռուցման, օդափոխության և տեխնոլոգիական կարիքների համար

Ըստ կատարված հաշվարկների՝ հեռանկարային զարգացման համար գազի տարեկան պահանջարկը կազմում է 9365.0 հազ. խ. մ/տարի, որից՝ կոմունալ-կենցաղային կարիքների համար՝ 5110.0 հազ. խ. մ/տարի, արտադրական կարիքների համար՝ 4255.0 հազ. խ. մ./տարի:

Արտադրական ձեռնարկությունների պահանջարկը հետագայում կարիք ունի ճշտագրուման, քանի որ ներկայումս դրանք հիմնականում չեն գործում: Գազամատակարարման աղբյուրը, ինչպես ներկայումս, այնպես էլ հետագայում, կլինի «Արմավիր» գազաբաշխիչ կայանը:

#### **5.2.8.7.2 Գազամատակարարման նախագծային առաջարկություններ**

1. Ներկայացվող գլխավոր հատակագծով քաղաքի բնակչության կենցաղային, տնտեսական, ինչպես նաև արտադրական կարիքների բավարարման համար ջերմային աղբյուր է հանդիսանում բնական գազը
2. Գազափոխադրման համակարգի վերակառուցման և վերագինման, միջբակային ցանցի անվտանգ շահագործման և հուսալիության բարձրացում
3. Գազամատակարարման ներտնային ցանցի տեխնիկական վիճակի բարելավման, ծխաօդատար ուղիների հաճախակի ստուգումներ
4. Ներբնակարանային գազամատակարարումը պետք է ապահովի բաժանորդի հաշվարկային ջերմապահանջը՝ կերակրի պատրաստման, տաք ջրամատակարարման և ջեռուցման կարիքները, ինչպես նաև փաստացի գազասպառման ճշգրիտ և թափանցիկ հաշվառում
5. Սույն ներկայացվող գլխավոր հատակագծով նախատեսվում է կառուցապատման տակ տրվող տարածքների գազամատակարարման նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերի կատարում և իրականացում:

#### **5.2.8.8 Կապը**

Արմավիր քաղաքի հեռախոսային կապը իրականացվում է «Արմենտել» ՓԲԸ Արմավիր մասնաճյուղի կողմից: Ավտոմատ կայանի հզորությունը 5 համարանիշով 1024 համար է, իսկ 6 համարանիշով՝ 9300, ընդամենը 10324 համար: Կայանի հզորությունը կփոխվի ըստ աճող պահանջարկի:

**6. Արմավիր քաղաքի շրջակա միջավայրի կանխատեսումային ցուցանիշները և բարելավման համար նախատեսվող միջոցառումները**

**6.1 Աթմոսֆերային օդի պահպանություն**

Ինչպես այժմ, այնպես էլ հեռանկարում մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներ են հանդիսանում արտադրական ձեռնարկությունները, ավտոտրանսպորտի և էներգետիկայի օբյեկտները:

Ներկա դրությամբ, օդային ավազանի վիճակով տարածքը գնահատվում է բարենպաստ, անտրոպոգեն ազդեցությամբ գերիշխում են հիմնականում թույլ ազդեցության գոտիները, հիգիենիկ վիճակով՝ օդային ավազանի աղտոտվածությունը որևէ վտանգ չի հարուցում:

Քանի որ, քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացումը հստակ պլանավորված չէ, ապա ընդունված է, որ արդյունաբերական ձեռնարկությունները հեռանկարում կդիտվեն որպես օդային ավազանը աղտոտող հիմնական աղբյուրներ: Ընդունված է, որ հեռանկարում այդ ձեռնարկությունները կշահագործվեն ունեցած հզորությունների 60-80%-ով: Այդ պատճառով մթնոլորտ արտանետվող վնասակար արտանետումների տարեկան քանակները կավելանան:

Արդյունաբերական ձեռնարկությունների և վնասակար արտանետումների գերակայությունների ցանկերը բերված են 6.1-1 և 6.1-2 աղյուսակներում:

Աղյուսակ 6.1-1

Արմավիր քաղաքի գերակայող արդյունաբերական ձեռնարկությունների ցանկը

դ.դ/հ	Ձեռնարկությունների անվանումը	Համախառն արտանետումներ տ/տարի	Ձեռնարկության դասը	ՍՊԳ, մ
1	«Հոկտեմբերյանի ֆերոսպլավ» ՍՊԸ	747.9	III	300
2	Կահույքի ֆաբրիկա	19.4	V	50
3	Արմավիրի հաստոցաշինական գործարան	8.6	V	50
4	Կաթսայատուն N 1 (արդիանգույցի)	43.9	-	-
5	Կաթսայատուն N 2 (քաղաքի ջերմամատակարարում)	38.9	-	-
6	«Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ Արմավիրի մասնաճյուղ	21.6	V	50
7	Մեխանիկական գործարան	4.02	V	50
8	Շ ին. կազմակերպություն	5.1	IV	100
9	Հացի գործարան	4.8	V	50
10	Ավտոտրանսպորտային ձեռնարկություն	4.65	V	50
11	Կարի ֆաբրիկա	0.9	V	50
12	Ալրաղաց	1.26	IV	100
13	Քարի մշակման արտադրամաս	0.29	V	50
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>901,3</b>		



Արմավիր քաղաքի մթնոլորտում գերակայող  
վնասակար արտանետումների ցանկը

դ/դ	Անվանումը	Արտանետումների տարեկան քանակը, տ միջոցառումներից առաջ և հետո	Վտանգավորության դասը
1	2	3	4
1	Ծծմբի երկօքսիդ	611,2	3
2	Ազոտի օքսիդներ	<u>28,1</u> 15,7	2
3	Ավազի փոշի	<u>116,3</u> 77,1	3
4	Ֆորմալդեհիդ	1,8	2
5	Յուղի աերոզոլներ	2,1	-
6	Ամիակ	5,9	4
7	Քսիլոլ	4,9	3
8	Մանգանի օքսիդներ	0,244	2
9	Ածխածնի օքսիդ	92,23	4
10	Աբրազիվ և մետաղական փոշի	<u>6,23</u> 1,31	3
11	Փայտափոշի	<u>2,35</u> 1,83	3
12	Էթիլ սպիրտ	20,9	4
13	Ածխաջրածիններ	4,3	4
14	Ալյուրի և ցորենի փոշի	1,26	3
15	Տոլուոլ	1,35	3
16	Ցեմենտի փոշի	0,6	3
17	Եռակցման աերոզոլ	0,8	3
18	Երկաթի օքսիդներ	0,06	3
19	Բենզոլ	0,64	2
20	Ացետոն	0,144	4
	ԸՆԴԱՄԵՆԸ	<u>901,3</u> 844,36	

Քաղաքի աճին համապատասխան ավելանում է նաև ավտոտրանսպորտը, որի արտանետումների քանակները բերված են աղյուսակ 6.1-3 -ում:

## Ավտոտրանսպորտից վնասակար արտանետումները մթնոլորտ

Անվանումը	Ավտոտող նյութերը, տ/տարի			
	Ածխածնի օքսիդ	Ազոտի օքսիդներ	Ածխաջրածիններ	Ընդամենը
1. Բեռնատար	652,3	57,7	147,1	857,1
2. Ավտոբուսներ	509,5	22,7	63,4	595,6
3. Մարդատար	202,4	11,9	27,6	241,9
Ընդամենը	1364,2	92,3	238,1	1694,6

Հեռանկարում քաղաքի բնակելի հատվածի ջերմամատակարարումը դիտարկվում է երկու տարբերակով՝

1. Ոչ մեծ ժամանակակից կաթսայատներով (2-3 շենքի համար մեկ կաթսայատուն), ընդհանուր 12 հատ:
2. Կենտրոնացված ջերմամատակարարում, 1 հատ բնական գազով շահագործվող կաթսայատնով:

Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ցրման արդյունքում մերձգետնյա շերտում սպասվելիք կոնցենտրացիաների արժեքները բերված են աղյուսակ 6.1-4-ում:

Աղյուսակ 4

## Ցրման հաշվարկների արդյունքները

Ավտոտող նյութերի անվանումը	Ցրման հաշվարկների արդյունքները, ՍԹԿ միավոր	
	Ածխածնի օքսիդ	Ազոտի օքսիդներ
Տարբերակներ		
I տարբերակ	0,083	1,313
II տարբերակ	0,052	0,981

Ինչպես երևում է աղյուսակ 4-ից և ցրման հաշվարկի գրաֆիկական մասից (նայել հավելված), էկոլոգիական տեսակետից նախընտրելի է կենտրոնացված ջերմամատակարարումը՝

- սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտու համար սահմանված նորմերում: Ավտոտվածության մակարդակները 26-38%-ով ցածր են, քան լոկալ ջեռուցման դեպքում.
- լոկալ ջեռուցման դեպքում ազոտի օքսիդների մերձգետնյա կոնցենտրացիան նորմայից բարձր է: Ավտոտման գոտին կազմում է ~19հա (նայել գրաֆիկական մասը):

Չնայած էկոլոգիական տեսակետից նախընտրելի է կենտրոնացված ջերմամատակարարումը, սակայն համաձայն 5.2.8.6 բաժնի ընտրվում է ապակենտրոնացված ջերմամատակարարման համակարգը՝

- սակավահարկ բնակելի շենքերի և առանձնատների ջեռուցումն իրականացնել բնակարանային փոքր հզորության գազային կաթսաներով կամ գազավառարաններով
- բազմաբնակարան բազմահարկ շենքերի ջեռուցումն իրականացնել կառուցելով 1, 2, 3 կամ ավելի շենքերի համար համապատասխան հզորության ժամանակակից գազային կաթսայատներ:

Քաղաքի օդային ավազանի աղտոտման հիմնական աղբյուրների և տնտեսությանը հասցված տնտեսական վնասի քանակական բնութագրերը բերված են աղյուսակ 6.1- 5-ում:

Աղյուսակ 6.1- 5

Մթնոլորտ արտանետումների տարեկան քանակները և տնտեսությանը հասցված տնտեսական վնասները

Անվանումը	Արտանետումների քանակը, տ/տարի ներդրման %	Տնտեսությանը հասցված տնտեսական վնասը, հազ. դրամ/տարի
1	2	3
1. Արդյունաբերական ձեռնարկություններ	<u>818,5</u> 31,5	97176,9
2. Ավտոտրանսպորտ	<u>1694,6</u> 65,3	29786,8
3. Կաթսայատներ	<u>82,8</u> 3,2	6285,4
Ընդամենը՝	<u>2595,9</u> 100	133249,1

Բերված 1-5 աղյուսակներից երևում է, որ Արմավիր քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում IV-V դասի են, որոնք հանդիսանում են 2-4-րդ վնասակարության դասին պատկանող 20 աղտոտող նյութերի արտանետումների աղբյուրներ:

Արդյունաբերական ձեռնարկություններից մթնոլորտ են արտանետվում տարեկան 818,5տ վնասակար նյութեր:

Մթնոլորտ վնասակար արտանետումների հիմնական մասը բաժին է ընկնում ավտոտրանսպորտին, որի արտանետումները կազմում են քաղաքի մթնոլորտ արտանետումների 65,3%-ը՝ 1694,6տ/տարի:

Ավտոտրանսպորտի արտանետումներից տնտեսությանը հասցված վնասը գտնվում է 1-ին տեղում՝ տարեկան ~29,8մլն դրամ:

Ընդհանուր տնտեսական վնասը բոլոր արտանետումներից կազմում է տարեկան ~133,25մլն դրամ:

## 6.2 Մթնոլորտային օդի աղտոտվածության կանխատեսվող մակարդակները

Հեռանկարում ավելանում են կաթսայատների արտանետումները, արդյունաբերական ձեռնարկությունների և ավտոտրանսպորտի արտանետումները:

Ավտոտրանսպորտի արտանետումների համար (ազոտի օքսիդներ, ածխածնի օքսիդ) կատարված է մթնոլորտային օդի աղտոտվածության երկարաժամկետ կանխատեսում համաձայն /20/:

Արտանետումների հաստատուն աղբյուրների համար (արդյունաբերական ձեռնարկություններ, կաթսայատներ) կատարված է մեքենայական հաշվարկ «Ռադուգա» ծրագրով:

Հաշվարկների արդյունքները աղտոտվածության մակարդակի իջեցման համար միջոցառումներից առաջ և հետո բերված են աղյուսակ 6.2-1-ում (միջոցառումները նայել կետ 4):

Աղյուսակ 6.2-1

Անվանումը	Մաքսիմալ մերձգետնյա կոնցենտրացիաները ՍԹԿ միավոր միջոցառումներից առաջ և հետո		
	Արդյունաբերական ձեռնարկություններ, կաթսայատներ	Ավտոտրանսպորտ	Արդ. ձեռնարկություններ, կաթսայատներ, ավտոտրանսպորտ
1	2	3	4
1. Փոշի	<u>1,39</u> 0,79	-	<u>1,39</u> 0,79
2 Ածխածնի օքսիդ	<u>0,96</u> 0,096	<u>1,59</u> 0,64	<u>1,96</u> 0,74
3 Ազոտի օքսիդներ	<u>1,73</u> 0,615	<u>0,14</u> 0,084	<u>1,87</u> 0,7
4 Մանգանի օքսիդներ	<u>0,315</u> 0,315	-	<u>0,315</u> 0,315
5 Ացետոն	<u>0,015</u> 0,015	-	<u>0,015</u> 0,015
6 Յուղի աէրոզոլներ	<u>0,58</u> 0,58	-	<u>0,58</u> 0,58

Ինչպես երևում է աղյուսակ 6-ից, օդապահպան միջոցառումների իրականացման դեպքում վնասակար նյութերի մաքսիմալ մերձգետնյա կոնցենտրացիաները չեն գերազանցի սահմանված նորմերը:

### 6.2.1 Մթնոլորտի ցրման պայմանների հաշվառումը

Աղտոտման մակարդակների գնահատականը և մթնոլորտի ցրման պայմանների հաշվառումը կատարված է համաձայն /10/:

Դրանից ելնելով, հաշվարկված է աղտոտող նյութի մոտավոր քանակը (Mp), որը կարելի է արտանետել (կամ կրճատել) մթնոլորտ: Մթնոլորտային օդի ցրման հատկությունների պահուստը (դիֆիզիտ) (BP) և աղտոտող նյութերի մոտավոր քանակը տրված են աղյուսակ 6.2.1-1-ում:

Աղյուսակ 6.2.1-1

Մթնոլորտ օդի ցրման հատկությունները և  
աղտոտող նյութերի մոտավոր քանակները

Անվանումը	BP մ <sup>3</sup> /վրկ	Արտանետման մոտավոր արժեքը, Mp գ/վրկ	Փաստացի արտանետումը M <sub>գ</sub> գ/վրկ	Mp - M <sub>գ</sub> գ/վրկ
1. Փոշի	-5642	-0,846	12,41	11,564
2. Ածխածնի օքսիդ	19442	58,3	11,11	47,19
3. Ազոտի օքսիդներ	-5463	-0,218	1,013	0,795
4. Մանգանի օքսիդներ	-10238	-0,0102	0,015	0,0048
5. Ացետոն	4716	1,66	0,0253	1,63
6. Յուղի աէրոզոլներ	2800	0,14	0,14	0

### 6.3 Տարածքի համալիր գնահատականը

Տարածքի համալիր գնահատականը տրված է /2/-ի հիման վրա: Տարածքի համալիր գնահատականը տրված է տեղանքի կլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ: Օդային ավազանի գնահատականը բերված է աղյուսակ 6.3 -1-ում:

Աղյուսակ 6.3 -1

Օդային ավազանի գնահատականը անտրոպոգեն ազդեցությամբ, հիգիենիկ իրավիճակով և տարածքի համալիր գնահատականը

Անվանումը	Գնահատականը		Տարածքի համալիր գնահատականը	Աղտոտման մակերեսը քաղաքի տարածքում, հա
	անտրոպոգեն ազդեցությամբ	հիգիենիկ իրավիճակով		
1 գոտի	Միջին ազդեցության գոտի	վտանգ է հարուցում	բարենպաստ	78
2 Գոտի	Թույլ ազդեցության գոտի	վտանգ չի հարուցում	բարենպաստ	625

Օդապահպան միջոցառումների չիրականացման դեպքում քաղաքում ստեղծվում են հետևյալ գոտիներ

- ուժեղ ազդեցության գոտի – 55հա
- միջին ազդեցության գոտի – 200հա

- թույլ ազդեցության գոտի – 560հա (նայել գրաֆիկական մաս)
- Անտրոպոգեն ազդեցության թույլ գոտին կազմում է 625 հա, միջին ազդեցության գոտին 78 հա:

Հիգիենիկ իրավիճակով տարածքը վտանգ չի հարուցում: Տարածքի համալիր գնահատականը մնում է բարենպաստ:

#### **6.4 Միջավայրի պահպանական միջոցառումների վերաբերյալ որոշումները**

Որպես առաջնահերթ միջոցառումներ որոշված են տեխնոլոգիական և սանիտարա-տնտեսական բնույթի միջոցառումները:

##### **Ա. Արդյունաբերական ձեռնարկությունների համար**

- հզորությունների աճին զուգընթաց տեխնոլոգիական հոսքագծերի և սանիտարա-տեխնիկական արդիականացում
- շինարարական արդյունաբերական ձեռնարկություններում ուժեղացնել հսկողությունը փոշու կազմակերպված և անկազմակերպ արտանետումների վրա, ինչը կբերի փոշու արտանետումների ~80%-ով նվազեցմանը:
- նոր արդյունաբերական ձեռնարկությունների կենտրոնացումը արդյունաբերական հանգույցի տարածքում, ինչը կապահովի վնասակար թափոնների օգտագործման և վնասազերծման լավ պայմաններ:
- մթնոլորտի աղտոտվածության դիտարկման և վերահսկման համակարգի կատարելագործումը:
- «Հոկտեմբերյանի ֆերոսպլավ» ՓԲ ընկերությունում նախատեսել փոշու ~40%-ով իջեցման վերաբերյալ միջոցառումներ:
- Աղյուսակ 7-ից ելնելով, Արմավիր քաղաքում նպատակահարմար է զարգացնել էլեկտրոնիկայի, սարքաշինական, ոսկերչական և գյուղմթերքների վերամշակման արտադրությունները:

##### **Բ. Ավտոտրանսպորտի համար**

- լավացնել ճանապարհների ծածկույթը:
- ավտոմեքենաների տեխնիկական վիճակի, ինչպես նաև ծխազագերի չեզոքացման մուտքերի վրա վերահսկման ուժեղացում և վառելանյութի որակի վերահսկում:
- քաղաքի հասարակական տրանսպորտի համար ֆիքսված կանգառների նախատեսում և դրանց վերահսկում:
- ավտոճանապարհների եզրագծով իրականացնել լրացուցիչ անտառատնկում, ավտոտրանսպորտի արտանետումների վնասակար ազդեցության նվազեցման համար:

Նշված միջոցառումների իրականացումը կնպաստի վնասակար արտանետումների նվազեցմանը ~40%-ով:

##### **Գ. Էներգետիկայի օբյեկտների համար**

- քաղաքի ջերմամատակարարումը կազմակերպելու ժամանակ հաշվի առնել էկոլոգիական տեսակետից նախընտրելի կենտրոնացված ջերմամատակարարման տարբերակը:
- քաղաքի բնակելի հատվածում նախատեսել ժամանակակից կաթսայատներ բարձր ՕԳԳ-ով, գազի այրման լավացված ռեժիմով, ինչը կնպաստի վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումների նվազեցմանը (ազոտի օքսիդների 3 անգամ նվազեցումը):

#### **6.5 Մակերևութային ջրերի պահպանություն**

Ինչպես ներկայումս, այնպես էլ հեռանկարում Սևջուր գետի աղտոտվածության վրա նկատելի ազդեցություն կգործեն՝

- *Արդյունաբերական ձեռնարկությունները:* Հզորությունների աճի և կոյուղու համակարգի ընդլայնման հետ մեկտեղ կավելանա Արմավիր քաղաքի տնտեսակենցաղային կոյուղի թափվող արտադրական հոսքաջրերի քանակը՝ դառնալով 1.93 հազ մ<sup>3</sup>/օր: Ձեռնարկությունների դասակարգումը ըստ վնասակարության ինդեքսի կստանա գրաֆիկում

պատկերված տեսքը: Առաջնակարգ տեղերում կմնան սննդի արդյունաբերության և , ավտոտրնասպորտային ձեռնարկությունները: Առանց նախնական մաքրման արտադրական հոսքաշրերի արտահոսքը տնտեսակենցաղային կոյուղու ցանց կհանգեցնի Սևջուր գետի աղտոտվածության ավելացմանը ԹԿՊ-ով, ԹՔՊ-ով, կախյալ մասնիկներով, երկաթով, նավթամթերքով:

- Արմավիր քաղաքի տնտեսակենցաղային հոսքաշրերը: Բնակչության աճի հետ մեկտեղ ավելանում են նաև հոսքաշրերի քանակը օրական 2,66 հազ. մ<sup>3</sup>-ից դառնալով 5,56 հազ. մ<sup>3</sup>:

Հոսքաշրերի արտահոսքը Սևջուր գետ կկազմի 7,49 հազ. մ<sup>3</sup>/օր:


Սևջուր գետ թափվող անձրևաշրերի քանակը արդյունաբերական ձեռնարկությունների տարածքից կկազմի տարեկան 351 հազ. մ<sup>3</sup>:

Ձեռնարկությունների դասակարգումը ըստ տնտեսությանը հասցված վնասի պատկերված է գրաֆիկորեն:


Առանց ջրապահպան միջոցառումների ներդրման, հեռանկարում Սևջուր գետի աղտոտվածության հետևանքով տնտեսությանը հասցված վնասը կգնահատվի տարեկան 127,6 մլն դրամ, այդ թվում՝

- տնտեսակենցաղային հոսքաշրերի արտահոսքից – 42մլն. դրամ
- արտադրական հոսքաշրերի արտահոսքից – 65,896մլն. դրամ
- անձրևաշրերի արտահոսքից – 19,2 մլն դրամ:

#### Ձեռնարկությունների բնութագիրը աղտոտվածության ծավալով



### Ձեռնարկությունների բնութագիրը տնտեսությանը հասցված վնասի գնահատմամբ



#### 6.5.1 Սևջուր գետի աղտոտվածության կանխատեսելի մակարդակը Արմավիր քաղաքի տնտեսական գոտային արտադրական կոյուղու արտահոսքից հետո

Հաշվարկները կատարվել են համաձայն /18/: Օգտագործվել են Սևջուր գետի հիդրոերկրաբանական տվյալները, աղտոտվածության մակարդակները Արմավիր քաղաքի հոսքաջրերի արտահոսքից վերև դիտարկման կետում: Հաշվարկների հիմքում ընկած են քաղաքի կոյուղու կոլեկտորում աղտոտող նյութերի կանխատեսելի հաշվարկային կոնցենտրացիաները: Հաշվարկների արդյունքում ստացվում է, որ առանց նախնական մաքրման հոսքաջրերի արտահոսքը 500մ հեռավորության վրա, ջրօգտագործման 1-ին կետում հանգեցնում է՝

- կախյալ մասնիկների կոնցենտրացիաների ավելացմանը՝ 10,1մգ/լ-ից դառնալով 24մգ/լ (>0,75մգ/լ-ից)
- ԹԿՊՐԻՎ 1,77-ից դառնում է 14,3մգ  $O_2$ /լ, ինչը ~2,4 անգամ գերազանցում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան:
- Քլորիդների և սուլֆատների կոնցենտրացիաները ավելանում են, սակայն մնում են նորմերի սահմաններում:
- ամոնիակային ազոտը 0,83 մգ/լ-ից դառնում է 2,27մգ/լ, ինչը գերազանցում է ՍԹԿ-ն 1,14 անգամ:



Նկատվում է նավթամթերքի և յուղերի կոնցենտրացիաների գերազանցում ՍԹԿ-ից 6,4 անգամ:

1. Ծանր մետաղների համար ՍԹԿ-երի գերազանցում չի նկատվում, չնայած նկատվում են կոնցենտրացիաների ավելացումներ: Հեռանկարում, առանց ջրապահպան միջոցառումների ներդրման, Սևջուր գետի աղտոտվածության աստիճանը Արմավիր քաղաքի հոսքաջրերի արտահոսքից 500մ ներքև հատվածում գնահատվում է՝
2. ըստ օրգանոլեպտիկ ցուցանիշների - բարձր
3. ըստ սանիտարա-տոկսիկ ցուցանիշների - արտակարգ բարձր:

#### **6.5.2 Անձրևաջրերի արտահոսքի հետևանքով գետի աղտոտվածության կանխատեսելի մակարդակը**

1. Անձրևաջրերի արտահոսքն իրականացվում է անձրևային կոյուղու համակարգով:
2. Անձրևաջրերի հոսքաջրերի հետ Սևջուր գետ թափվող վնասակար նյութերի տարեկան քանակները կկազմեն՝
3. կախյալ մասնիկներ –280,8տ (800մգ/լ)
4. նավթամթերք – 1,755տ (5մգ/լ)
5.  $\text{ԹԿՊ20} - 14,04\text{տ (40 մգO}_2\text{/լ)}$
6. Սևջուր գետի աղտոտման հետևանքով տնտեսությանը հասցված վնասը կկազմի տարեկան ~19,7 մլն. դրամ:
7. Հաշվարկված է անձրևային հոսքաջրերում աղտոտող նյութերի առավելագույն թույլատրելի կոնցենտրացիան՝  $\text{C}_{\text{թսա-ն}} / 18$ : Ստացվել են հետևյալ տվյալները.
8. կախյալ մասնիկների համար – 15մգ/լ
9. նավթամթերք – 0,5մգ/լ
10.  $\text{ԹԿՊ20} - 17\text{մգ O}_2\text{/լ}$ :
11. Բոլոր 3 նյութերի համար  $\text{C}_{\text{փաստ}} > \text{C}_{\text{թսա}}$ :
12. Ստացվածից հետևում է , որ արդյունաբերական ձեռնարկություններում անձրևաջրերի լոկալ մաքրման կայանների շահագործումը անհրաժեշտ է  $\text{C}_{\text{փաստ}} = \text{C}_{\text{թսա}}$  հավասարության պահպանման և գետի աղտոտվածության կանխարգելման տեսանկյունից:

#### **6.5.3 Ջրային ռեսուրսների պահպանական միջոցառումների վերաբերյալ հիմնական որոշումները**

1. Քաղաքում շուրջօրյա ջրամատակարարում ապահովելու, ինչպես նաև հակահրդեհային պահանջվող ջրաքանակ պաշարելու համար անհրաժեշտ 7600մ<sup>3</sup> ծավալով օրվա կարգավորիչ ջրամբարների շահագործում:
2. Ներկայումս գործում են 2x2000մ<sup>3</sup> երկաթբետոնյա ջրամբարներ, իսկ 1x2000մ<sup>3</sup> և 1x1000մ<sup>3</sup> ուղղանկյուն ջրամբարները չեն գործում: Անհրաժեշտ է կատարել վերակառուցման, վերականգնման աշխատանքներ:



## 6.6 Թափոնների կառավարում

### 6.6.1 Կենցաղային թափոններ

Բնակչության աճի հետ մեկտեղ կավելանա նաև կենցաղային կոշտ թափոնների քանակը: Հեռանկարում ԿԿԹ-ների քանակը կկազմի տարեկան 10200 տ: Թափոնների կազմը բերված է աղյուսակ 6.6.1-1-ում:

ԿԿԹ-ների կազմը և տարեկան քանակները

Աղյուսակ 6.6.1-1

ԿԿԹ	Ընդհանուր քանակից բաժնեմասը, %-ով	Թափոնների ընդհանուր քանակը, տ/տարի
Ապակի	2,5	255
Մետաղ	1,9	194
Պլաստիկ շէեր	2,7	275
Այլ պլաստիկ իրեր	3,5	357
Թուղթ	7	714
Այլ թափոններ	82,4	8405
Ընդամենը՝	100	10200

### 6.6.2 Արդյունաբերական թափոններ

Արդյունաբերական թափոնների կազմը և տարեկան քանակները բերված են աղյուսակ 6.6.2-1-ում:  
Աղյուսակ 6.6.2-1

Արդյունաբերական թափոնների բաղադրիչները	Ընդհանուր քանակը տ/տարի	Ընդհանուր քանակից բաժնեմասը, %
1	2	3
1. Օգտագործման ենթակա թափոններ՝ թեփեր, մետաղատաշեղներ, յուղեր, արժեքավոր նյութեր (սննդի արտադրության օբյեկտներ) ֆերոմոլիբդենի ձուլման խարամ	7200	98,1
2. Ոչ օգտագործելի թափոններ՝ շինարարական ոչ թունավոր, մետաղական (ավտոմեքենաների մասեր և այլն), օգտագործված տարաներ	140	1,9
Ընդամենը	7340	100

Օգտագործման ենթակա թափոնների քանակը կազմում է 98,1%:

Շրջակա միջավայրի վրա քաղաքային թափոնների վնասակար ազդեցության մեղմացման և կանխարգելման համար անհրաժեշտ է՝

- կենցաղային թափոնների տեղափոխման շարժական և տեխնիկական սարքավորումների նորացում;
- կոշտ կենցաղային թափոններով աղտոտված տարածքների, խախտված լանդշաֆտով հողակտորների և սանիտարական գոտիների տարածքների միացում կանաչապատման և հասարակական օգտագործման կանաչ տարածքների հետ, մաքրման, վերականգնման և առողջացման աշխատանքների իրականացում;
- աղբավայրում աղբի հարթեցման և հողով ծածկման աշխատանքների պարբերաբար իրականացում;

### 6.7 Հողերի պահպանություն

Հեռանկարում հողի աղտոտման հիմնական աղբյուրներ կմնան արդյունաբերական ձեռնարկությունների փոշեգազային մթնոլորտային արտանետումները և արդյունաբերական ու կենցաղային թափոնների աղբավայրերը:

Քաղաքի հողային տարածքի աղտոտվածության ամփոփիչ ցուցանիշները բերված են 6.7-1 աղյուսակում:

Աղյուսակ 6.7-1

Ինգրեդիենտների անվանումը	Հողի աղտոտում	
	տ/հա	գ/մ <sup>2</sup>
Փոշի	0,16	16
Մանգանի օքսիդներ	0,0003	0,03
Երկաթի օքսիդներ	0,000075	0,0075

Դիտարկենք մթնոլորտային օդի աղտոտման արդյունքում բուսածածկույթի և հողերի աղտոտման հնարավոր հետևանքները /20/:

Հողը ընդունակ է իր մեջ հավաքել մթնոլորտից հողի վրա նստած աղտոտումները, որոնք էլ փոխում են հողի հատկությունները, որի արդյունքում հնարավոր է հողի բերքատվության անկում, բույսերի, հետևաբար և մարդկանց ու կենդանիների վրա թունավոր ազդեցություններ: Արմավիր

քաղաքի հողի աղտոտման համար վտանգ են ներկայացնում հատկապես ազոտի օքսիդների արտանետումները, որոնք օժտված են բարձր օքսիդացվող ակտիվությամբ: Այս միացությունները իջեցնում են հողի և բույսերի մեջ կալցիումի, մագնեզիումի, կալիումի պարունակությունները, որոնք ծախսվում են ավելցուկ թթվայնության չեզոքացման վրա:

Վտանգ են ներկայացնում նաև փոշու, ինչպես նաև յուղի աերոզոլների արտանետումները, որոնք նստելով ծառերի տերևների վրա առաջացնում են անձրևից չմաքվող կաշուն միացություններ:

Մթնոլորտային օդի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտվածությունից պահպանման միջոցառումները, քաղաքի կանաչապատումը, թափոնների կառավարումը դասվում են հողի աղտոտման կանխարգելման միջոցառումների շարքին:

## 6.8 Աղմուկի մակարդակի գնահատում

Հեռանկարում, ի հաշիվ տեղական նշանակության փողոցներով ավտոտրանսպորտի երթևեկության ինտենսիվության ավելացման, սպասվում է աղմուկի մակարդակի բարձրացում: Քաղաքում աղմուկի մակարդակի իջեցման համար անհրաժեշտ է ավտոճանապարհների եզրին նախատեսել կանաչ գոտիների ավելացում, ինչը կհանգեցնի աղմուկի մակարդակի իջեցմանը՝ ~8-10դԲԱ-ով /17/:

Հեռանկարում աղմուկի մակարդակը բնակելի գոտում կկազմի՝

$$L_{\text{ԵՑԱՐ}} = 75 - 2 - 8 = 65 \text{ ԴԲԱ (նորման 70 ԴԲԱ)}$$

$$L_{\text{ԶՍԶ}} = 75 \text{ ԴԲԱ}$$

$$\Delta L_{\text{ԸՐՈՐ}} = 2 \text{ ԴԲԱ}$$

$$\Delta L_{\text{ԸԶԱՍ}} = 8 \text{ ԴԲԱ}$$

## 6.9 Կանաչապատում

Արմավիր քաղաքի կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ կպարունակի ներքոհիշյալ հիմնադրույթները.

- բնագավառի գործունեությունը համակարգող մասնագիտացված կառուց-վածքային ստորաբաժանման ստեղծում քաղաքապետարանում;
- վերականգնման աշխատանքների, նոր տարածքների կանաչապատման իրականացում, հստակ նախագծերին և ծրագրերին համապատասխան, ապահովելով հետագա ոռոգումը;
- ոռոգման համակարգի զարգացում և բարեփոխում;

Հատուկ ուշադրություն է դարձվել նաև Արմավիր քաղաքի կանաչապատմանը, որպես օդը մաքրող գործոն:

Արմավիր քաղաքում կանաչ տարածքների չափը ներկա իրավիճակում չի համապատասխանում գործող նորմերին (1 բնակչին  $7 \text{ մ}^2$  հասարակական կանաչ և  $6 \text{ մ}^2$  շրջանային նշանակության կանաչ): 40,0 հազար բնակչով քաղաքում կա ընդամենը 16,04 հա հասարակական կանաչ 39,0 հա-ի փոխարեն:

Հեռանկարային 51 հազար բնակչության համար ըստ գործող նորմերի պահանջվում է 66,3 հա կանաչ, որից 35,7 հա հասարակական կանաչ և 30,6 հա շրջանային նշանակության կանաչ, որն ապահովված է գլխավոր հատակագծով: Նախատեսված են քաղաքային այգիներ, սպորտ-

հրապարակներ՝ կանաչ գոտով, շրջանային նշանակության կանաչ գոտիներ և այլն (տես գլխավոր հատակագիծ): Բացի դրանից նախագծված են նաև մագիստրալ ճանապարհների, գերեզմանոցի և այլ օբյեկտների պահպանության գոտիների կանաչապատում:

Քաղաքի կանաչ զանգվածների ցուցանիշները բերված են 6.9 -1 աղյուսակում:

Աղյուսակ 6.9 -1

Կանաչ զանգվածների ցուցանիշները

Կանաչ զանգվածների ֆունկցիոնալ նշանակությունը	Ընդհանուր կանաչ զանգված	
	հա	մ <sup>2</sup> /մարդ
1. Ընդհանուր օգտագործման	53,92	10,57
2. Սահմանափակ օգտագործման	110,0	21,56
3. Հատուկ նշանակության	5,5	1,08
4. Ընդամենը	169,42	33,21

### 6.10 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում և նոր տարածքներ գրեթե չեն ներառում:

Տվյալ լանդշաֆտային գոտուն բնորոշ բուսատեսակների պահպանության համար, շինարարության համար հատկացված տարածքներում դրանց առկայության պարագայում, սերմնադրման ժամանակահատվածում անհրաժեշտ է հավաքել սերմերը և օգտագործել զարման սերմնացանի համար: Գլխավոր հատակագծում տեղ գտած շինարարական աշխատանքների ժամանակ ծառահատումներ չեն իրականացվելու:

### 6.11 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բնի որի ոչնչացմամբ: Սակայն կենդանիներն ինչպես որդիներն առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն և նոր բնի որի և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ջրատարների կառուցման ընթացքում պայթեցման և ամենանախնդիր շինարարական աշխատանքները կիրականացվեն և ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ - մայիս) դուրս: Բացի այդ, պայթեցումների ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով դրանք կիրականացվեն և փոքր հզորության լիցքերով:

Ընդհանուր առմամբ, համակարգերի վեժնակառուցման աշխատանքների ազդեցություններն ինչպես որ կկրեն և լուրջ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներն ինչպես որ կհասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց

փոքրածավալության պատճառով չէ ն կարող արգել և կէ նդանական աշխարհի նէ ռկայացուցիչնէ ռի սէ զոնային միգրացիայի կամ ջուր խմէ լու ճանապարհնէ ռը:

#### 6.12 Արմավիր քաղաքի էկոլոգիական ցուցանիշներ

Աղյուսակ 6.13-1

NN ը/ն	Ցուցանիշներ	Չափման միավոր	Ցուցանիշներ	
			Ներկա իրավիճակ	Հեռանկար 2020 թ.
1	2	3	4	5
	<b>Օդ</b>			
1	Ձեռնարկություններից արտանետվող վնասակար նյութերի ընդհանուր քանակը, այդ թվում՝	տ/տարի	550,9	901,3/844,36
	Կոշտ, այդ թվում՝	տ/տարի	66,917	127,784/83,144
	Կախյալ մասնիկներ	տ/տարի	66,8	127,54/82,9
	Մանգանի օքսիդներ	տ/տարի	0,117	0,244
	Գազանման, այդ թվում՝	տ/տարի	4,445	14,734
	Ծծմբային անհիդրիդ	տ/տարի	407,4	611,2
	Ածխածնի օքսիդ	տ/տարի	46,2	92,23
	Ազոտի օքսիդներ	տ/տարի	14,13	28,1/15,7
	Այլ արտանետումները	տ/տարի	11,745	27,36
2	Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ընդհանուր քանակը, այդ թվում՝	տ/տարի	962,9	1694,6
	Ածխածնի օքսիդ	տ/տարի	775,1	1364,2
	Ածխաջրածիններ	տ/տարի	135,3	238,1
	Ազոտի օքսիդներ	տ/տարի	52,5	92,3
3	Ձեռնարկություններից մթնոլորտ արտանետվող գումարային բերված արտանետումները (վնասակարության ինդեքս LBծեռն)	կմ <sup>3</sup> /տարի	1163,7	2009,7
4	Գումարային բերված արտանետումը ավտոտրանսպորտից (վնասակարության ինդեքս LBտ)	կմ <sup>3</sup> /տարի	862,8	1517,3
5	ՍԹԿ-ների նորմերին հասնում	ՍԹԿ միավոր		
	Կախյալ մասնիկներ (փոշի)	ՍԹԿ միավոր	0,6	0,79
	Ածխածնի օքսիդ	ՍԹԿ միավոր	0,16	0,74
	Ազոտի օքսիդներ	ՍԹԿ միավոր	0,17	0,7
	Մանգանի օքսիդներ	ՍԹԿ միավոր	-	0,315
6	Ձեռնարկությունների արտանետումներից քաղաքի օդային ավազանի աղտոտվածության	հազ.դրամ տարի	74552,2	103462,3

	հետևանքով տնտեսությանը հասցված վնասը			
7	Նույնը ավտոտրանսպորտի արտանետումներից	<u>հազ.դրամ</u> տարի	24194,9	29786,8
	<b><i>2 Հողեր և թափոններ</i></b>			
1	Տարածքի կանաչապատում	հա	16,04	53,92
2	Քաղաքի ընդհանուր տարածքից կանաչապատման %-ը	%	2,1	7,09
1	2	3	4	5
3	Մեկ մարդուն ընկնող կանաչապատ տարածքը	մ <sup>2</sup> /մարդ	4,01	10,57
4	Քաղաքի սանիտարական մաքրումը՝ թափոնների հավաքումը և տեղափոխումը	տ/տարի	6000	10200
5	Արդյունաբերական թափոնների օգտագործումը առաջանում են թափոններ Ընդամենը	տ/տարի	6641,6	7340
	Խոշոր տոննայնություն	տ/տարի	6619,6	7200
	Թաղման ենթակա	տ/տարի	-	-
	Վերամշակման ենթակա թափոններ	տ/տարի	6621,6	7200
	Անթափոնության մակարդակը (վերամշակված թափոնների՝ առաջացած թափոնների հարաբերությունը)		0,99	0,98
	Աղմուկը բնակելի գոտում	դԲԱ	45	45
	Աղմուկը փողոցում	դԲԱ	57	65



## **7. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՏԻՎԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆՆԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

### **7.1. ՆԱԽԱԲԱՆ**

Համայնքի գլխավոր հատակագծի «Քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումները» բաժինը սահմանում է համայնքի քաղաքացիական պաշտպանության (այսուհետև՝ ՔՊ) ինժեներատեխնիկական և տարածքի բնական վտանգավոր երևույթներից և տեխնածին վտանգներից պաշտպանության միջոցառումները:

Բաժինը բաժանված է երկու մասի՝

1) ՔՊ ինժեներատեխնիկական միջոցառումներ, որոնք մշակվել են՝ հաշվի առնելով տարածքների և այնտեղ տեղաբաշխված օբյեկտների պատկանելիությունը ՔՊ խմբերին:

2) արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ, որոնք մշակվել են՝ հաշվի առնելով նախագծվող տարածքում առկա տեխնածին ու բնական պոտենցիալ վտանգները՝ շրջակա միջավայրի և բնական պայմանների գնահատմամբ:

### **7.2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՏԻՎԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

ՔՊ ինժեներատեխնիկական միջոցառումներն ուղղված են բնակչության եւ նյութական արժեքների պաշտպանության նախապատրաստմանը ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ՀՀ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում, ինչպես նաև արտակարգ իրավիճակների սպառնալիքի և ծագման դեպքում:

ՔՊ ինժեներատեխնիկական միջոցառումների հիմնական պահանջներն են՝

ա) ՔՊ տեսանկյունից՝ բնակավայրերի, գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում եւ մանրամասն հատակագծման նախագծերում հատուկ, կարելիքագույն նշանակության օբյեկտների գործունեության կայունության ապահովումը եւ նպատակահարմար տեղաբաշխումը.

բ) շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, հիդրոտեխնիկական կառույցների, տրանսպորտային ուղիների և մայրուղիների շինարարության անվտանգության ու հուսալիության ապահովումը, վտանգավոր օբյեկտների անվտանգ գործունեության ապահովումը.

գ) կառավարման, կապի ու ազդարարման, կառավարման մարմինների և բնակչության իրազեկման ապահովման համակարգերի հիմնումը և դրանց բնականոն գործունեության ապահովումը.

դ) պաշտպանական կառույցների շինարարությունը, պահպանումը և բնակչության պատասխարումը.

ե) անհատական պաշտպանության միջոցների ու քաղաքացիական պաշտպանության նպատակով այլ գույքի անհրաժեշտ պաշարների ստեղծումը, պահպանումը և բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը.

զ) բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը:

## **7.2.1. Կառավարում, կապ և ազդարարում**

### **7.2.1.1. Կառավարում.**

ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության, ՀՀ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու, ինչպես նաև բնական աղետների ու տեխնածին վթարների սպառնալիքի կամ արտակարգ իրավիճակի առաջացման դեպքում՝ համայնքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումն ու կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ ՔՊ պետը, կառավարման հիմնական և իրավիճակի կտրուկ վատթարացման դեպքում՝ պահեստային կառավարման կետերից:

Առանձին դեպքերում փրկարարական աշխատանքների տեղամասերում աշխատանքների կառավարումը կարող է իրականացվել շարժական կառավարման կետերից, որոնք հազեցվում են կապի տեխնիկական և սուրհանդակային ուժերով ու միջոցներով:

ՔՊ միջոցառումների իրականացումը համակարգում և վերահսկում է ՔՊ բնագավառում լիազորված մարմնի տարածքային ստորաբաժանումը՝ Հայաստանի փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչությունը:

### **7.2.1.2. Կապ և ազդարարում.**

Համայնքում արտակարգ իրավիճակների առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում բնակչության ազդարարելու մասին որոշումներն ընդունում են՝

ա) Հայկական ատոմային էլեկտրակայանում ՀՀ վարչապետը.

բ) այլ համայնքային նշանակության արտակարգ իրավիճակների դեպքում՝ համայնքի ղեկավարը.

գ) ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հարձակման սպառնալիքի կամ հանկարծակի հարձակման դեպքում՝ լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը, ՀՀ պաշտպանության նախարարության հակաօդային պաշտպանության և ավիացիայի միացյալ հրամանատարական կետից ստացված տեղեկատվության հիման վրա:

Համայնքում արտակարգ իրավիճակների առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում բնակչության ազդարարումն իրականացնում են՝

ա) Հայկական ատոմային էլեկտրակայանում՝ լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը.

բ) այլ համայնքային նշանակության արտակարգ իրավիճակների դեպքում՝ համայնքի ղեկավարը.

գ) ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հարձակման սպառնալիքի կամ հանկարծակի հարձակման դեպքում՝ լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը:

Համայնքում բնակչության պաշտպանության միջոցառումների ընթացքում կապը կազմակերպվում է գերկարճալիք ու կարճալիք, ինչպես նաև բջջային, քաղաքային և ուղիղ հեռախոսակապի միջոցով:

ՀԱԷԿ-ում տեղի ունեցած ճառագայթային վթարի մասին ահազանգը Արմավիրի մարզային փրկարարական վարչության օպերատիվ հերթապահը զուգահեռ ստանում է Հայաստանի փրկարար ծառայության և ՀԱԷԿ-ի ձգնաժամային կառավարման կենտրոններից և կազմակերպում է ՀՀ Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի ու տարահանման

հանձնաժողովի անդամների և բնակչության ազդարարումը՝ «Ճառագայթային վտանգ» ազդանշանը հնչեցնելու միջոցով:

Ազդանշանը տրվում է շչակների միջոցով, 3 րոպե անընդմեջ տևողությամբ: Բնակչության հետագա գործողությունների վերաբերյալ հաղորդագրությունները տրվում են հեռուստատեսությամբ և ռադիոյով: Անհրաժեշտության դեպքում ազդարարման գործընթացին մասնակցում են նաև ոստիկանության շարժական ուժերն ու միջոցները:

Համայնքում առկա և անհրաժեշտ էլեկտրական շչակների հաշվարկ.

աղյուսակ 7.2.1.1-1

Անհրաժեշտ է (հատ)	Առկա է (հատ)	
	ընդամենը	որից սարքին
1	1	1

## 7.2.2. Բնակչության տարահանում.

2.1 Համայնքում տարահանում կարող է իրականացվել՝

ա) ուժեղ երկրաշարժի հետևանքով ավերված և բնակվելու համար վտանգավոր բնակավայրերից:

Այս դեպքում տարահանումն իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված պլանի (զաղտնի):

բ) ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի կամ դրա անմիջական սպառնալիքի դեպքում՝ սահմանված միջամտման չափաքանակների գերազանցմամբ Ճառագայթային ազդեցության և (կամ) Ճառագայթային աղտոտման ենթակա տարածքներից:

1. տարահանման 4 հավաքակետեր

- N 1 – թիվ 8 միջն. դպրոցում,
- N 2 – թիվ 9 միջն. դպրոցում,
- N 3 – թիվ 10 միջն. դպրոցում,
- N 4 – թիվ միջն. դպրոցում:

2. նստեցման 1 հավաքակայան - Երկաթուղային կայարանում:

Տարահանումն սկսելուց առաջ տարահանման հավաքակայաններում ստեղծվում են սանիտարական մշակման և տեխնիկայի ապահովագրման կետեր:

Տարահանման միջոցառումների իրականացման ընթացքում կատարվում է բնակչության մասնակի և լրիվ սանիտարական մշակում՝ օգտագործելով բաղնիքներն ու ցնցուղները:

Համայնքի տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովման համար ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը ներգրավում է 30 մարդատար վագոն (1-ին հավելվածի 2-րդ հաշվարկ):

գ) քիմիական վտանգավոր օբյեկտին հարակից վարակավտանգ գոտուց:

Այս դեպքում բնակչության տարահանում նախատեսվում է իրականացնել հետիոտն շարասյուներով կամ ավտոտրանսպորտային միջոցներով՝ մոտակա անվտանգ գոտիներ մարդկանց ժամանակավոր տեղափոխման և տեղաբաշխման միջոցով:

Համայնքի տարածքում տեղաբաշխված քիմիական վտանգավոր օբյեկտի՝ «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ի բնութագրական ցուցանիշները բերված են բաժնի 7.3.2.2 կետի 2-րդ աղյուսակում:

### 7.2.3. Բնակչության պատսպարում.

Քաղաքի տարածքում բնակչության պատսպարումն իրականացվում է հետևյալ պաշտպանական կառույցներում՝

ա) ապաստարաններում և հակաճառագայթային թաքստոցներում՝ ռազմական դրության պայմաններում աշխատանքը շարունակող օբյեկտների աշխատողներին ու ծառայողներին:

բ) նկուղային տարածքներում՝ «Օդային տագնապ» ազդանշանի և ՀԱԷԿ-ի վթարի դեպքերում ամբողջ բնակչությանը:

Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ընդգրկում են՝

ա) պաշտպանական կառույցների վաղօրոք շինարարությունը.

բ) պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստ վիճակում.

գ) պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպումը.

դ) արագ կառուցվող և պարզագույն թաքստոցների շինարարության կազմակերպումն ու ապահովումը պատերազմի սպառնալիքի ժամանակ:

Պաշտպանական կառույցները բերվում են պատրաստակաՆության՝ պատսպարվողների ընդունման համար ազդանշան տալու պահից սկսած 12 ժամվա ընթացքում, իսկ քիմիական վտանգավոր օբյեկտում, որոնք գտնվում են մշտական պատրաստակաՆության վիճակում՝ անմիջապես:

Պաշտպանական կառույցներում բնակչության պատսպարումը տեղի է ունենում քաղազդանշաններով:

Պաշտպանական կառույցներում բնակչության պատսպարումն իրականացվում նախապես մշակված և հաստատված պլաններով:

ՀԱԷԿ-ի վթարի դեպքում համայնքի բնակչության պատսպարման հաշվարկը կատարված է 1-ին հավելվածի 5-րդ կետում:

Համայնքի բնակչությունը պատսպարման վայրերից դուրս գալու և ռադիոակտիվ աղտոտված գոտում գործելակերպի կանոնների մասին տեղեկատվություն ստանում է հեռուստատեսության, ռադիոյի և շարժական բարձրախոս սարքավորումների միջոցով:

Համայնքում առկա ապաստարանների վերաբերյալ տվյալները բերված են 1-ին աղյուսակում, հակաճառագայթային թաքստոցներինը՝ 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 7.2.3-1

Հ/հ	Տեղակայման վայրը	Կարգը	Տարողությունը (մարդ)	Տեխնիկական վիճակը
1.	«Գազմեքենա» ՓԲԸ	II	280	բավարար
2.	Հացամթերքի կոմբինատ	II	280	բավարար
3.	Կուլտուրայի տուն	III	1000	անբավարար

Աղյուսակ 7.2.3-2

Հ/հ	Տեղակայման վայրը	Կարգը	Տարողությունը (մարդ)	Տեխնիկական վիճակը
4.	Թիվ 2 դպրոց	III	200	անբավարար
5.	Թիվ 5 դպրոց	III	1000	անբավարար
6.	Թիվ 3 դպրոց	III	2200	անբավարար
7.	Սայաթ-Նովա 1	III	110	անբավարար
8.	Սայաթ-Նովա 2	III	650	անբավարար
9.	Սայաթ-Նովա 3	III	460	անբավարար

10.	Գործարանային 6	III	450	անբավարար
11.	Գործարանային 7	III	450	անբավարար
12.	Հերացու 38	III	500	անբավարար
13.	Քաղկոպ	III	250	անբավարար
14.	Հացի գործարան	III	500	անբավարար
15.	Ամբուլատորիա	III	410	անբավարար
16.	Կաթի գործարան	III	1000	անբավարար
17.	Գինու գործարան	III	400	անբավարար
18.	Կահույքի գործարան	III	400	անբավարար
19.	Պահածոների գործարան	III	500	անբավարար
20.	Երկաթուղու կայարան	III	400	անբավարար

#### 7.2.4. Բնակչության ապահովում.

##### 7.2.4.1. Ուղղման դրության ժամանակ.

Ուղղման դրության ժամանակ համայնքի բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովված հաշվարկը համաձայն աղյուսակ 3-ի:

Աղյուսակ 7.2.4.1-1

Հ/հ	Բնակչության տարիքային խմբերը	Թվաքանակը (մարդ)		Անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներ		
		Առկա	Նախա - գծային	Տեսակը	Բնակչության թիվը գումարած 10%	
					Առկա	Նախա գծային
1.	0-2 տարեկան	975	1 530	Մանկական պահպանման խցիկ (ԿՋԴ-4, ԿՋԴ-6)	1 073	1 683
2.	2-7 տարեկան	1 625	2 550	Մանկական նախադպրոցական զտող հակազգ (ՊԴՖ-Դ-ՆՄՈՒ, ՊԴՖ-ԴԱ)	1 787	2 805
3.	7-17 տարեկան	5 363	8 415	Մանկական դպրոցական զտող հակազգ (ՊԴՖ-Շ-ՆՄՈՒ, ՊԴՖ-ՇԱ)	5 900	9 257
4.	17 –ից բարձր	24 537	38 505	Զտող հակազգ (ԳՊ-5, ԳՊ-7)	26 990	42 355
Ընդամենը		32 500	51 000	-	35 750	56 100

##### 7.2.4.2. ՀԱԷԿ-ի վթարի դեպքում.

ՀԱԷԿ-ի վթարի դեպքում համայնքի բնակչությանը նախատեսվում է ապահովել՝

- Նյութական միջոցներով՝ հագուստ, կոշիկ (1-ին հավելվածի 1-ին հաշվարկ),
- Վահանաձև գեղձի արգելափակման նպատակով կայուն յոդով (1-ին հավելվածի 3-րդ հաշվարկ),
- շնչադիմակներով (1-ին հավելվածի 4-րդ հաշվարկ):

Համայնքի բնակչության համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները բնակչությանը բաշխվում են նախօրոք և պահպանվում նրանց մոտ, ինչպես նաև տրվում են համայնքի կազմակերպությունների ղեկավարներին՝ ըստ աշխատողների թվի:

Համայնքի բնակչությանն անհատական պաշտպանության միջոցների բաշխումը կազմակերպում է ՀՀ Արմավիրի մարզպետարանը, որը անհատական պաշտպանության միջոցներն ստանում է ՀՀ ԱԻՆ պետական ռեզերվների գործակալությունից՝ ըստ ներկայացված հայտի:

### 7.3. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներն իրականացվում են նախապես և ուղղված են արտակարգ իրավիճակների առաջացման ռիսկը նվազագույնին հասցնելուն, իսկ դրա առաջացման դեպքում՝ նաև մարդկանց առողջության պահպանմանը, շրջակա բնական միջավայրին պատճառվող վնասի և նյութական կորուստների չափերի նվազեցմանը:

Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների հիմնական պահանջներն են՝

ա) բնակավայրերի, գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում եւ մանրամասն հատակագծման նախագծերում վտանգավոր ձեռնարկությունների ու արտադրությունների նպատակահարմար տեղաբաշխումը՝ բնակչության պաշտպանության տեսանկյունից.

բ) կենսաապահովման օբյեկտների անխափան աշխատանքի ապահովումը.

գ) արտակարգ իրավիճակների կանխումը և հնարավոր հետևանքների նվազեցումը.

դ) հրդեհային անվտանգության բարձրացումը:

#### 7.3.1. Վտանգավոր բնական երևույթներ.

##### 7.3.1.1. Քաղաքի տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանները.

Քաղաքի տարածքը գտնվում է Անդրկովկասի առավել չոր, երաշտային շրջաններից մեկում, որտեղ ամռանը առանձին դեպքերում քամու արագությունը կարող է հասնել 15-20մ/վ:

Համայնքի տարածքը բաժանված է 2 ինժեներա-երկրաբանական շրջանների, որոնցից առաջինը ինժեներային նախապատրաստում չի պահանջում:

Երկրորդ շրջանում ընդգրկվում են՝

ա) քաղաքի հարավ-արևելյան մասի եզրամասը, որտեղ սպիտակահողային կավավազները թրջվելու դեպքում ցուցաբերում են նստվածքային հատկություններ և որպես հիմնային գրունտներ նրանք չեն երաշխավորվում:

Ինժեներային նախապատրաստումը – մակերևույթային ջրերի հեռացում՝ հաշվի առնելով սպիտակահողային և պնդացած կավավազների հատկությունները, և ուղղահայաց նախագծում:

բ) քաղաքից հյուսիս և հյուսիս-արևելք ընկած կառուցապատումից ազատ տարածքը, որտեղ ծածկույթային գրունտը տեղ-տեղ բացակայում է և մերկանում են տուֆերը:

Ինժեներային նախապատրաստումը – մակերես դուրս եկող ստորգետնյա աղի ջրերի կարգավորում, ուղղահայաց նախագծում:

Թալիչ-Շամիրամի սելավի սելավային ջրերի հեռացման համար Մեծ Հոկտեմբերյան ջրանցքից 3կմ հյուսիս-արևելք կառուցված է հողապատնեշ: Վերջինս գտնվում է ինժեներային վատ վիճակում:

Հարկավոր է միջոցներ ձեռնարկել նրա ամրությունը ուժեղացնելու համար: Անհրաժեշտ է նաև հենապատերի կառուցում սելավատարի կողերի երկայնքով, որն անցնում է ենթաշրջանի հարավային մասով:

Տեղամասերի շահագործման դեպքում անհրաժեշտ է անցկացնել հատուկ ինժեներա-երկրաբանական հետազննումներ:

##### 7.3.1.2. Սեյսմիկ վտանգի գնահատում.

Արմավիր քաղաքի տարածքի համար կատարված հաշվարկների արդյունքները ցույց են տվել, որ սպասվող մաքսիմալ հորիզոնական արագացումները գտնվում են 0.26g–0.49g տիրույթում: Սեյսմիկ

վտանգի հաշվարկի համար հիմք է ընդունվել ՀՀՇՆ II-2-94 «Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր» նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտևորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը: Համաձայն (ՀՀ ՇՆ II – 6.02.06) նորմերի, հաշվի առնելով Սարդարապատի խզվածքից Արմավիրի քաղաքի տարածքի 6-ից (հարավային սահմանագիծ) մինչև 10կմ (հյուսիսային մաս) հեռավորության վրա գտնվելու հանգամանքը վերջնական հաշվարկներում օգտագործվել է  $0.4g \times 1.2 = 0.48g$  արագացման ելակետային արժեքը:

Քաղաքի տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանները մանրամասն ներկայացված են բնակավայրի հատակագծի 3.1.4 բաժնում:

### 7.3.2. Տեխնածին վտանգներ.

#### 7.3.2.1. Ճառագայթավտանգ օբյեկտներ.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ ՀԱԷԿ): Տեղակայման վայրը Արմավիրի մարզ, ք.Մեծամոր:

Համայնքը գտնվում է շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտում՝ ՀԱԷԿ-ին հարակից 5-10 կմ շառավղով տարածքում, որտեղ պլանավորվում են իրականացնել միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից բնակչության պաշտպանության միջոցառումներ՝ համաձայն 7.3.2.3. կետի:

Համայնքում բնակչության ճառագայթային պաշտպանության միջոցառումներն իրականացվում են մոնիթորինգի արդյունքների հիման վրա:

#### 7.3.2.2. Քիմիական վտանգավոր օբյեկտներ.

Համայնքի տարածքում է տեղաբաշխված «Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ-ն, որի բնութագրական ցուցանիշները բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 7.3.2.1-1

Օբյեկտների անվանումը	Օբյեկտի հասցեն	Ունեւն		Ազդեցության գոտին		Վտանգավոր գոտում գտնվող մարդկանց թիվը		
		Անվանումը	Քանակ (տն)	Խորություն (մ)	Մակերես (կմ <sup>2</sup> )	Օբյեկտում	Հարակից տարածքում	Ընդամենը
«Արմավիրի կաթի գործարան» ԲԲԸ	Սայաթ-Նովա 2	Ամոնիակ	1.5 տ	545	0.01	56	19 944	20 000

Քիմիական վտանգավոր օբյեկտում վթարների դեպքում բնակչության պաշտպանության հիմնական միջոցառումներն են՝

- բնակչության ազդարարումը և իրազեկումը.
- բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը. բնակչության տարահանումը վտանգավոր գոտիներից.
- բնակչության պատսպարումը բնակելի և վարչական շենքերում այդ շենքերի հետագա հերմետիկացումը ձեռքի տակ եղած միջոցներով:

Քիմիական վտանգավոր օբյեկտներին ներկայացվում են հետևյալ պահանջները՝

ա) համապատասխան ֆիլտրավենտիլյացիոն համակարգով ապաստարանի առկայություն.

բ) աշխատակիցների քանակին համապատասխան անհատական պաշտպանության միջոցներով ապահովվածություն.

գ) 30-40 մ<sup>3</sup>-ից ոչ պակաս ծավալով ջրավազանի կամ ջրային բակի, 50 լ/վրկ հզորությամբ 2 հատ ջրային պոմպի առկայություն.

դ) ազդարարման էլեկտրական շղակի առկայություն:

### **7.3.2.3. Տեխնածին արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումները.**

Տեխնածին արտակարգ իրավիճակների դեպքում իրականացվում է՝

- բնակչության ազդարարում (համաձայն 7.2 կետի),
- բնակչության տարահանում (համաձայն 7.3 կետի),
- բնակչության պատսպարում (համաձայն 7.4 կետի),
- բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովում (համաձայն 7.5 կետի):

### **7.3.3. Համայնքի տարածքի հրդեհային անվտանգություն.**

Բնակավայրը պետք է ապահովված լինի հրդեհային պահպանությամբ, ինչպես նաև հակահրդեհային ջրամատակարարմամբ, շենքերին եւ շինություններին հարող մշտական գործող ճանապարհներով, կապի միջոցներով՝ համաձայն հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի:

Շենքերի, շինությունների, կազմակերպությունների ծավալահատակագծային ու կառուցվածքային լուծումները, ինչպես նաև դրանց միջեւ անջրպետները պետք է ապահովեն մարդկանց անվտանգությունը և հրդեհների մարումը:

Համայնքի բնակելի տարածքի սահմաններում պոտենցիալ վտանգավոր (հրդեհների աղետային զարգացման առումով) պահեստների եւ շինությունների, ինչպես նաև այրվող գազերով և հեղուկներով տարանցիկ խողովակաշարերի տեղաբաշխումն իրականացվում է նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Հրդեհային անվտանգության բնագավառում համայնքի՝ պետության պատվիրակած լիազորություններն են՝

ա) հրդեհների կանխման եւ հնարավոր հետեւանքների նվազեցման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը.

բ) հրդեհային անվտանգության միջոցառումների կատարման, կազմակերպման և իրականացման աշխատանքներին աջակցելը և օգնելը:

Հրդեհային անվտանգության բնագավառում համայնքի կամավոր լիազորություններն են՝

ա) հրդեհային անվտանգության ապահովման միջոցների ու կանոնների ուսուցումը բնակիչներին և նրանց ընդգրկումը հրդեհների կանխման ու հրդեհաշիջման աշխատանքներում.

բ) հրդեհային պահպանության հասարակական միավորումների գործունեությանն աջակցելը.

գ) հրդեհային անվտանգության ապահովման նկատմամբ հասարակական վերահսկողության կազմակերպումը.

դ) հակահրդեհային իրավիճակի վատթարացման դեպքում անհրաժեշտ ռեժիմի ապահովումը:

Համայնքին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներն են.



ա) Կազմակերպությունների, շենքերի, շինությունների, բաց պահեստների, ինչպես նաև շենքերին կից հակահրդեհային միջտարածությունները պետք է ժամանակին մաքրվեն հրդեհավտանգ թափոններից: Հրդեհավտանգ թափոնները, աղբը պետք է հավաքվեն հատուկ հատկացված տարածքներում, կոնտեյներների կամ արկղերի մեջ և տեղափոխվեն:

բ) Շենքերի, շինությունների հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման, շենքերի և շինությունների կառուցման համար:

գ) Շենքերի, շինությունների, բաց պահեստների հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների, անշարժ հրդեհային սանդղուղքների, հրդեհային գույքի մոտեցման ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն: Վերակառուցման պատճառով ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով պետք է տեղադրվեն շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:

դ) Ժամանակավոր շինությունները, կրպակները, տաղավարները պետք է տեղադրվեն շենքերից և շինություններից 15 մետրից ոչ պակաս հեռավորության վրա կամ հակահրդեհային պատի մոտ (բացառությամբ իրավական ակտերով սահմանված պահանջվող՝ ավելի մեծ հակահրդեհային միջտարածության): Առանձին բլոկ-կոնտեյներային շենքերը թույլատրվում է տեղադրել խմբերով, յուրաքանչյուր բլոկում 10-ից ոչ ավելի կոնտեյներ, որոնց գումարային մակերեսը չպետք է գերազանցի 800 մ<sup>2</sup>: Այդ շենքերի խմբերից մինչև շինությունները, առևտրական տաղավարները և օբյեկտները ընկած հեռավորությունը չպետք է լինի 15 մ-ից պակաս:

ե) Հակահրդեհային միջտարածություններում արգելվում է կրակ վառելու միջոցով թափոններ ոչնչացնել: Թափոնների ոչնչացումը կատարվում է հատուկ հատկացված տեղերում:

զ) Հակահրդեհային ջրաղբյուրները, շենքերի և շինությունների մուտքերը արագ ի հայտ բերելու նպատակով, օբյեկտների այդ տարածքները պետք է ապահովված լինեն լուսավորությամբ:

է) Բնակելի շենքերի, ամառանոցային ավանների, հասարակական շենքերի տարածքի չհսկվող հրապարակներում, բակերում չի թույլատրվում պահել դյուրավառ հեղուկներ և գազեր:

ը) Այգեգործական ընկերությունները, որոնց շինությունները (հողակտորները) 300-ից չեն գերազանցում, հրդեհաշիջման համար պետք է ունենան շարժական հրշեջ շարժիչապոմպ, իսկ եթե դրանց քանակը 300-ից մինչև 1000 է՝ երկուսից ոչ պակաս կցովի հրշեջ շարժիչապոմպ:

թ) Ամառային ամիսներին կայուն չոր, շոգ և քամոտ եղանակի պայմաններում բնակավայրում, կազմակերպություններում, ամառանոցային ավաններում խարույկների վառումը, հրդեհավտանգ աշխատանքների կատարումը կարող է ժամանակավորապես դադարացվել:

ժ) Հրդեհի դեպքում հրշեջ պահպանությանը հաղորդելու համար համայնքը և առանձին տեղաբաշխված օբյեկտները պետք է ունենան սարքին հեռախոսային, ռադիո կամ կապի այլ միջոցներ:

## 7.4 ՀԱՇՎԱՐԿՆԵՐ

ՀԱԷԿ-ի վթարի դեպքում համայնքի բնակչության ապահովման

### 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ Աղյուսակ Հ-1

Բնակչության թվաքանակը		Նյութական ապահովման միջոցների (հագուստ, կոշիկ) հաշվարկը՝ ըստ տարիքի և սեռի				
		մինչև 2 տ	2-7 տ	7-17 տ	17-ից բարձր	
					կին	տղամարդ
առկա	32 500	975	1 625	5 363	12 759	11 778
նախագծային	51 000	1 530	2 550	8 415	20 400	18 105

### 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ Աղյուսակ Հ-2

Բնակչության թվաքանակը		Հեռավորությունը միջանկյալ կետից (կմ)	Երթուղու երկարությունը սանիտարական մշակման կետերից վերաբնակեցման վայր (կմ)	Ընդունող բնակավայրի անվանումը	Տրանսպորտային միջոցների քանակը
առկա	32 500	0	92	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի	30 վագոն
նախագծային	51 000				47 վագոն

### 3 ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԱՀԱՆԱԶԵՎ ԳԵՂՁԻ ԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՆ Աղյուսակ Հ-3

Բնակչության թվաքանակը		Որից՝ ըստ տարիքի		Կայուն յոդի մեկ օրվա պահանջվող քանակը (գրամ)		
				Ընդամենը (գրամ)	որից՝ ըստ տարիքի	
		0-16	16 ավելի		0-16 (գր)	16 և ավելի (գր)
առկա	32 500	7 269	25 231	3 752,515	472,485	3 280,03
նախագծային	51 000	11 220	39 780	5 888,562	741,438	5 147,124

### 4. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ

Աղյուսակ Հ-4

Բնակչության թվաքանակը		Անհրաժեշտ հակազագերի քանակը	Անհրաժեշտ շնչադիմակների քանակը
առկա	32 500	-	32 500
նախագծային	51 000		51 000

### 5. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՍՊԱՐՄԱՆ Աղյուսակ Հ-5

Պատասխարման ենթակա բնակչության թվաքանակը		Այդ թվում					
		Ապաստարան		Հակաճառագայթային թաքստոցներ		Նկուղներ	
		քանակ/ տարող.	%	քանակ/ տարող.	%	քանակ/ տարող.	%
առկա	32 500	-		17 /	-	4 163 /	100
նախագծային	51 000			10 480		35 500 /	
						4 500 /	
						51000	

## 7.5. ՀԻՄՆԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
2. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
3. «Հայաստանի փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենք,
4. «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք,
5. «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենք,
6. «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
7. ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 17-ի «ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2328-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N194-Ն որոշում:
8. ՀՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 13 «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 746 որոշում,
9. ՀՀ կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» թիվ 592 որոշում,
10. ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» թիվ 679 որոշում,
11. ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի «ՀՀ արդյունաբերական օբյեկտի անվտանգության վկայագրի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 702 որոշում:
12. ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» թիվ 609-Ն որոշում,
13. ՀՀ կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 16-ի «ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին տեղեկատվության ստացման և ազդարարման կարգը հաստատելու մասին» թիվ 1304-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի «Կառավարման մարմինների և բնակչության իրազեկման կարգը սահմանելու մասին» թիվ 1494-Ն որոշում,
15. ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը հաստատելու մասին» թիվ 1925-Ն որոշում,
16. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանը (Հայկական ատոմային էլեկտրակայանի արտաքին վթարային պլան) հաստատելու մասին» թիվ 2328-Ն որոշում:
17. Հայստանդարտ «Անվտանգություն արտակարգ իրավիճակներում, տեխնածին արտակարգ իրավիճակներ, տերմիններ և սահմանումներ» ՀՍ 201-2000,
18. Հայստանդարտ «Անվտանգություն արտակարգ իրավիճակներում, բնական արտակարգ իրավիճակներ, տերմիններ և սահմանումներ» ՀՍ 227-2003,
19. Հայստանդարտ «Անվտանգություն արտակարգ իրավիճակներում, արտակարգ իրավիճակներ, տերմիններ և սահմանումներ» ՀՍ 233-2004,
20. ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր»,
21. ՀՀՇՆ II-6.01-96 «Վտանգավոր բնական ազդեցությունների երկրաֆիզիկա»,
22. ՍՆԻՊ 2.01.15-90 «Տարածքների, շենքերի և կառուցվածքների ինժեներական պաշտպանությունը երկրաբանական վտանգավոր երևույթներից. Նախագծման հիմնական դրույթներ»,
23. ՍՆԻՊ 2.06.15-85 «Տարածքների ինժեներական պաշտպանությունը ողողումներից և հեղեղներից»,
24. ՇՆՁ II-6.01.01-98 «Շենքերի և կառուցվածքների տարածքների ինժեներական պաշտպանությունը բնության վտանգավոր երևույթներից»,
25. ՀՀՇՆ II-8.04.01-97 «Շենքերի և կառուցվածքների հրդեհային անվտանգություն»:

**8 Արմավիրի քաղաքային համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագծի  
հիմնական տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ**

Աղյուսակ 8 -1

\* / 1 սյունակում հոդերն ու տարածքները համարակալված են ըստ ՀՀ հողային օրենսգրքի կոդերի

հհ	Ցուցանիշների անվանումը	Չափման միավորը	Ցուցանիշներ	
			Առկա	Նախագծային
1	2	3	4	5
<b>1.0.0</b>	<b>Տարածքը</b>			
	<b>Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, այդ թվում՝</b>	հա	2177.24	2177.24
*	նախագծային սահմաններում ընդգրկված հողեր	հա	2177.24	2177.24
<b>1</b>	<b>Գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝</b>	հա	845.94	845.94
1.1	վարելահողեր	հա	121.82	121.82
1.2	բազմամյա տնկարկների	հա	6.72	6.72
1.3	խոտհարքների	հա	-	-
1.4	արոտավայրերի	հա	403.02	403.02
1.5	այլ հողատեսակների	հա	314.37	314.37
<b>2</b>	<b>Բնակավայրերի հողեր, որից՝</b>	հա	848.08	854.32
2.1	բնակելի կառուցապատման, այդ թվում	հա	438.55	478.74
2.1.1ա	սակավահարկ տնամերձ	հա	406.33	412.8
2.1.1բ	բազմաբնակարան	հա	10.63	66.04
2.1.2	այգեգործական /ամառանոցային/	հա	21.56	21.56
2.2	հասարակական կառուցապատման	հա	69.83	104.89
2.3	խառը կառուցապատման	հա	56.81	22.15
2.4	ընդհանուր օգտագործման, որից՝	հա	187.70	206.37
2.4 ա	կանաչապատ տարածքներ	հա	7.06	26.45
2.4 բ	փողոցներ, հրապարակներ	հա	174.98	179.92
2.5	այլ հողեր և տարածքներ	հա	95.19	20.55
<b>3</b>	<b>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝</b>	հա	166.50	160.24
3.1	արդյունաբերական օբյեկտների	հա	97.5	91.27
3.2	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	46.11	46.11
3.3	պահեստարանների	հա	22.89	22.89
3.4	ընդերքի օգտագործման	հա	-	-
<b>4</b>	<b>Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածք. հողեր, որից՝</b>	հա	54.98	54.98
4.1	էներգետիկայի	հա	4.31	4.31
4.2	կապի	հա	0.21	0.21
4.3	տրանսպորտի	հա	26.74	26.74
4.4	կոմունալ ենթակառուցվածքների	հա	23.72	23.72

hh	Ցուցանիշների անվանումը	Չափման միավորը	Ցուցանիշներ	
			Առկա	Նախագծային
1	2	3	4	5
5	<b>Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝</b>	հա	109.80	109.80
5.1	բնապահպանական	հա	55.74	55.74
5.2	առողջարարական նպատակներով նախատեսված	հա	-	-
5.3	հանգստի համար նախատեսված	հա	-	-
5.4	պատմական և մշակութային	հա	54.06	54.06
6	<b>Հատուկ նշանակության հողեր</b>	հա	132.81	132.81
7	<b>Անտառային հողեր</b>	հա	-	-
8	<b>Զրային հողեր</b>	հա	19.13	19.13
9	<b>Պահուստային հողեր</b>	հա	-	--
<b>2.0.0</b>	<b>Տարածքն ըստ սեփականության ձևերի</b>			
2.0.1	պետական սեփականություն	հա	232.30	232.30
2.0.2	համայնքի սեփականություն	հա	982.64	982.64
2.0.3	ՀՀ քաղաքացիների մասնավոր սեփականություն	հա	808.66	808.66
2.0.4	ՀՀ իրավաբանական անձանց	հա	153.63	153.63
<b>3.0.0</b>	<b>Դեմոգրաֆիական տվյալներ</b>			
3.1.0	բնակչության թիվը	հազ. մարդ	40.0	51.0
3.2.1	բնակչության խտությունը համայնքի տարածքում	մարդ/ հա	18.9	24.0
3.2.2	բնակչության խտությունը բնակավայրի տարածքում	մարդ/ հա	47.2	60.1
3.3.0	բնակչության տարիքային կազմը, այդ թվում՝			
3.4.0	մինչև 15 տարեկան երեխաներ	հազ. մարդ/ %	15.0	19.0
3.5.0	աշխատունակ հասակի բնակչություն	հազ. մարդ/ %	18.7	24.0
3.6.0	թոշակառու բնակչություն	հազ. մարդ/ %	6.3	8.0
<b>4.0.0</b>	<b>Բնակելի ֆոնդը</b>			
4.1.0	ընդհանուր բնակելի ֆոնդը, որից՝	հազ. մ <sup>2</sup> ընդհ. մակերես	359.1	
	առաջնային փուլում	-"-	-	663.0
	մոտ հեռանկարում	-"-	-	765.0
	ավելի ուշ հեռանկարում	-"-	-	920.0
4.2.0	բազմաբնակարան շենքեր	-"-	53.9	230.0
4.3.0	մենատներ	-"-	305.2	433.0
4.4.0	բնակելի ֆոնդն ըստ տեսակների			
4.5.0	1-2 հարկանի	տուն	5979	
4.6.0	3-5 հարկանի	շենք	142	
4.7.0	5 հարկից ավելի	-"-	-	
4.8.0	առկա բնակելի ֆոնդի նվազումը, այդ թվում՝	-"-	-	
4.9.0	տեխնիկական վիճակից ելնելով	-"-	-	

հհ	Ցուցանիշների անվանումը	Չափման միավորը	Ցուցանիշներ	
			Առկա	Նախագծային
1	2	3	4	5
4.10.0	վերակառուցման պատճառով	-"	-	
4.11.0	յլ պատճառներով	-"	-	
4.12.0	բնակչության միջին ապահովվածությունը բնակելի մակերեսով	մ2 / մարդ	8.97	
	առաջնային փուլում	մ2 / մարդ	-	13.0
	մոտ հեռանկարում	մ2 / մարդ	-	15.0
	ավելի ուշ հեռանկարում	մ2 / մարդ	-	18.0
<b>5.0.0</b>	<b><u>Բնակչության մշակութային և կենցաղային սպասարկման համակարգը</u></b>			
5.1.0	մանկական նախադպրոցական կազմակերպություններ	հազ. տեղ	0.9	3.8
5.2.0	ընդամենը / 1000 մարդ		22.5	74.5
5.3.0	հանրակրթական դպրոցներ	հազ. տեղ		9.18
5.4.0	ընդամենը /1000 մարդ			180
5.5.0	հիվանդանոցներ	հազ. մահճակալ		380
5.6.0	ընդամենը /1000 մարդ			7.45
5.7.0	պոլիկլինիկաներ	հերթափոխում հաճախում		ՆԱ
5.8.0	ընդամենը /1000 մարդ			
5.9.0	առևտրի	մ2 առևտր. մակերես		ըստ պահանջի
5.10.0	ընդամենը /1000 մարդ			
5.11.0	կենցաղային սպասարկում	աշխ. տեղ		300
5.12.0	ընդամենը /1000 մարդ			5.89
5.13.0	առողջարանային հանգստի հիմնարկներ	տեղ		
5.14.0	ընդամենը /1000 մարդ, այդ թվում`			
5.15.0	հանգստյան տներ, պանսիոնատներ	տեղ		
5.16.0	երեխաների համար ճամբարներ	տեղ		
<b>6.0.0</b>	<b><u>Տրանսպորտային սպասարկում</u></b>			
6.1.0	Ուղևորատար հասարակական տրանսպորտի գծերի երկարությունը` ընդամենը, այդ թվում`			
6.2.0	Էլեկտրաֆիկացված երկաթուղի	կրկնակի ուղեգիծ / կմ	-	-
6.3.0	մետրոպոլիտեն	-"	-	-
6.4.0	տրամվայ	-"	-	-
6.5.0	տրոլեյբուս	-"	-	-
6.6.0	ավտոբուս	-"	-	-
6.7.0	ճոպանուղի	-"	-	-
6.8.0	Ճանապարհների և փողոցների երկարությունը` ընդամենը, այդ թվում`	կմ	89.6	91.0
6.9.0	արագընթաց շարժման մայրուղային ճանապարհների	կմ	-	-
6.10.0	չընդհատվող շարժման համաքաղաքային նշանակության մայրուղիների	կմ	-	-
6.11.0	Արտաքին տրանսպորտ, այդ թվում`	կմ		
6.12.0	Էլեկտրաֆիկացված երկաթուղի	կմ	-	-
6.13.0	ավտոբուս	ուղու կմ	-	-
6.14.0	օդային տրանսպորտ	ուղու կմ	-	-

Աղյուսակ 8 -1-ի շարունակություն

hh	Ցուցանիշների անվանումը	Չափման միավորը	Ցուցանիշներ	
			Առկա	Նախագծային
1	2	3	4	5
6.15.0	Կամուրջներ, ուղեկամուրջներ, տրանսպորտային հանգույցներ	ուղու կմ	2	2
6.16.0	Փողոցաճանապարհային ցանցի խտություն	կմ / քառ. կմ	4.23	4.3
6.17.0	քաղաքային կառուցապատման սահմաններում	կմ / քառ. կմ	10.0	10.03
<b>7.0.0</b>	<b><u>Ինժեներական սարքավորումներ</u></b>			
7.1.0	Ընդհանուր ջրօգտագործում, այդ թվում	հազ. մ <sup>3</sup> / օր	21,0	10.2
7.1.1	- տնտեսական և խմելու նպատակով	հազ. մ <sup>3</sup> / օր		6.7
7.1.2	- արտադրական կարիքների համար	հազ. մ <sup>3</sup> / օր		0.67
7.1.3	Ջրամատակարարման համակարգի գլխամասային կառույցների հզորությունը	հազ. մ <sup>3</sup> / օր		10.2
7.1.4	Ջրամատակարարման օգտագործման աղբյուրներ	հազ. մ <sup>3</sup> / օր		-
7.1.5	Մաքուր ջրօգտագործում, այդ թվում`	լ / օր		
7.1.5	տնտեսական խմելու նպատակով	լ / օր		6705
7.2.0	Կոյուղի	հազ. մ <sup>3</sup> / օր		
7.2.1	Կեղտաջրերի ընդհանուր երկքը ընդամենը, այդ թվում`	հազ. մ <sup>3</sup> / օր		6.2
7.2.2	Կոյուղու մաքրման կայանների արտադրողականություն	հազ. մ <sup>3</sup> / օր		17.4
7.3.0	Էլեկտրամատակարարում			
7.3.1	Էլեկտրաէներգիայի զումարային օգտագործում, այդ թվում`	ՄՎտ. ժամ / տարի	30.0	31.2
7.3.1	արտադրական օբյեկտների կարիքների համար	ՄՎտ. ժամ / տարի	1.065	-
7.3.1	կոմունալ կենցաղային կարիքների համար	ՄՎտ. ժամ / տարի	28.95	-
7.3.2	1 մարդու կողմից տարեկան էլեկտրաէներգիայի օգտագործում, այդ թվում`	կՎտ. ժամ	2890	3500
7.3.2	կոմունալ կենցաղային կարիքների համար	կՎտ. ժամ	-	
7.3.3	էլեկտրաբեռնվածության ծածկման աղբյուրներ	մլն. կՎտ	-	
7.4.0	Ջերմամատակարարում		-	
7.4.1	Բնակավայրի վառելիքային հաշվեկշռում գազի տեսակարար կշիռը	%		
7.4.2	Գազի օգտագործումը` ընդամենը, այդ թվում`	մլն. մ3	6.3	9.3
7.4.2	կոմունալ կենցաղային կարիքների համար	մլն. մ3	3.4	5.1
7.4.2	արտադրական կարիքների համար	մլն. մ3	2.8	4.2
<b>8.0.0</b>	<b><u>Տարածքի ինժեներական նախապատրաստում</u></b>			
8.1.0	Տարածքի պաշտպանությունը ջրածածկումից		-	
8.1.1	մակերեսը	հա	-	



Աղյուսակ 8 -1-ի շարունակություն

հհ	Ցուցանիշների անվանումը	Չափման միավորը	Ցուցանիշներ	
			Առկա	Նախագծային
1	2	3	4	5
8.1.2	պաշտպանիչ կառույցների երկարությունը	կմ	-	
8.2.1	Գետափերի ամրացում	կմ	-	
8.3.1	Տարածքի սահմաններում ստորգետնյա ջրերի մակարդակի իջեցում և այլն միջոցառումներ	հա	-	
8.4.1	Տարածքի սանիտարական մաքրում	հա		
8.5.1	Կենցաղային աղբի ծավալը	հազ. տ/տարի	6.0	
8.5.2	Աղբի այրման և աղբավերամշակման կազմակերպություններ	միավոր / հազ. մ 3 օրում	-	
<b>9.0.0</b>	<b><u>Շրջակա միջավայրի պաշտպանություն</u></b>			
9.1.0	Աղտոտվածության աղբյուրներից, աղմուկի ներգործությունից պաշտպանող սանիտարապաշտպանիչ գոտիներ՝ ընդամենը, այդ թվում՝	հա		
9.1.1	կանաչապատում	հա		
9.2.1	Մթնոլորտի օդի աղտոտվածության մակարդակը	սահմանային թույլատրելի խտությունից (ՍԹԽ) %		
9.3.1	Ջրամբարների աղտոտվածության մակարդակը	“-		
9.3.1	Հողի և ընդերքի աղտոտվածության մակարդակը	“-		
9.4.1	Աղմուկի ազդեցության մակարդակը	դեցիբել (ԴՑԲ)		

## **9 Արմավիրի քաղաքային համայնքի (քնակավայրի) Բաղրամյան փողոցին հարող բնակելի կառուցապատման թաղամասերի տարածքի վերակառուցման գոտիավորման նախագիծ**

Արմավիր քաղաքի Բաղրամյան պողոտային հարող բնակելի կառուցապատման թաղամասերի վերակառուցման գոտիավորման նախագիծը մշակված է «Արմավիր քաղաքի գլխավոր հատակագծի» կազմում՝ համաձայն ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի քաղաքապետարանի (պատվիրատու) կողմից ներկայացրած «Տեխնիկական բնութագրի», կապալային աշխատանքների կատարման 21 դեկտեմբերի 2005թ. N ԱՄ-ԱԲ-ԱՇՁԲ-35-05 պայմանագրի հիման վրա:

Բաղրամյան պողոտային հարող բնակելի կառուցապատման թաղամասերի տարածքի վերակառուցման գոտիավորման նախագծի նպատակներն են՝

- քաղաքաշինական, տարածական և հատակագծային միասնական լուծումների մշակում,
- հիմնականում քաղաքային բնակելի և հասարակական կառուցապատման, քաղաքային նոր և վերակառուցվող բնակելի թաղամասերի փողոցային ցանցի, ինժեներական ենթակառուցվածքի, կանաչապատման և նման այլ խնդիրների, ինչպես նաև հողօգտագործման կանոնակարգում,
- «սահմանված գոտի - թույլատրելի օգտագործում» սկզբունքով, կառուցապատման չափորոշիչների ու քաղաքաշինական կայուն զարգացման համար անհրաժեշտ միջոցառումների առաջադրում:

Բաղրամյան պողոտային հարող բնակելի կառուցապատման թաղամասերի տարածքի վերակառուցման գոտիավորման նախագիծը հիմնվում է ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի, հաստատված քաղաքաշինական ծրագրային և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի դրույթների վրա:

Բաղրամյան պողոտային հարող բնակելի կառուցապատման թաղամասերի տարածքի վերակառուցման գոտիավորման նախագիծը մշակված է «Արմավիր քաղաքի գլխավոր հատակագծի» քաղաքաշինական և բնապահպանական դրույթներին համապատասխան:

Գոտիավորման նախագիծը մշակված է տարածքի տեղագրական և կադաստրային հանույթի, «Արմավիր քաղաքի գլխավոր հատակագծի» համար հատուկ կատարված ինժեներաերկրաբանական, միկրոսեյսմաշրջանացման հետազոտությունների արդյունքում ստացված քարտեզների, ինժեներական և ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքների նախագծային փաստաթղթերի օգտագործմամբ:

### **9.1 Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներին համապատասխանությունը**

Սույն գոտիավորման նախագիծը համապատասխանում է «Արմավիր քաղաքի գլխավոր հատակագծի» դրույթներին և իր նախագծային լուծումներով բխում է դրանցից:

Տեխնիկական բնութագրի և նախագծման առաջադրանքի պահանջներին համապատասխան՝ Բաղրամյան փողոցին հարող բնակելի կառուցապատման թաղամասերի տարածքի վերակառուցման գոտիավորումը, նախանշված գոտիները, դրանց սահմանները, գործառական նշանակությունը, ինչպես նաև քաղաքաշինական օգտագործման ռեժիմները կազմում են նախագծի մեթոդական հիմքը:

Բաղրամյան պողոտային հարող բնակելի կառուցապատման թաղամասերի տարածքի վերակառուցման գոտիավորման նախագիծը հաշվի է առնում և հիմնվում է բոլոր հաստատված

ծրագրային քաղաքաշինական փաստաթղթերի դրույթների վրա և մշակված է ՀՀ տարածքում գործող օրենքների, նորմատիվային և այլ իրավական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Բաղրամյան պողոտային հարող բնակելի կառուցապատման թաղամասերը տարածվում են Արմավիր քաղաքի կենտրոնական մասից դեպի հյուսիս - արևմուտք և ներկայումս մասամբ կառուցապատված են հիմնականում բնակելի շենքերով անավարտ կառույցներով: Տարածքի կառուցապատումը նախատեսվեց 1974 թ. գլխավոր հատակագծով, նույն թվականին «Հայպետնախագիծ» ինստիտուտը մշակեց թաղամասի մանրամասն հատակագծման նախագիծ, առաջարկելով գերակայող մասը դեռ XX դարի 90-ական թվականների սկզբից, Այս հողամասն ունի բարենպաստ սեյսմիկ ցուցանիշներ:

Արմավիր քաղաքային համայնքի՝ գլխավոր հատակագծով առաջարկված տարածքային զարգացման լուծումներում նշված հողահատվածը մեկնաբանվում է որպես բնակելի թաղամասերի վերակառուցման համար նախատեսված տարածք:

#### **Տարածքի փաստացի օգտագործման և գոտիավորման նախագծային հաշվեկշիռ**

աղյուսակ 9.1-1

	Հողի նպատակային նշանակություն	Գործառական նշանակություն	Տարածքը, հա
<b><u>Փաստացի</u></b>	<b><u>Բնակավայրի հողեր</u></b>	Բնակելի կառուցապատման	123.11
<b><u>Նախագծային</u></b>	<b><u>Բնակավայրի հողեր</u></b>	Բնակելի կառուցապատման, այդ թվում սակավահարկ	67.66
		Հասարակական կառուցապատման	14.85
		Խառը կառուցապատման	31.42
		Ընդհանուր օգտագործման տարածքներ, այդ թվում՝	6.5
		գբոսայգիներ, պուրակներ	13.75
		փողոցներ, հրապարակներ	8.81
			4.94
	<b><u>Հատուկ նշանակության</u></b>		3.78
	<b><u>Ընդամենը</u></b>		123.11

Թաղամասի բնակչության հեռանկարային հաշվարկային թիվը ընդունվում է համապատասխան ներկայումս գործող շինարարական նորմերի պահանջների, որտեղ հաշվի առնելով տարածքի վերակառուցման վերաբերյալ նվազեցնող գործակիցը, մոտ 10 հա. մարդ, այդ թվում՝

- բազմաբնակարան կառուցապատման համար կազմում է մինչև 8.9 հազ. մարդ
- սակավահարկ կառուցապատման համար 1.1 հազ. մարդ:

**9.2 Բաղրամյան փողոցին հարող բնակելի կառուցապատման թաղամասերի տարածքի վերակառուցման գոտիավորմամբ թույլատրելի օգտագործման և կառուցապատման սահմանափակումների հիմնավորում**

Տարածքի օգտագործման և կառուցապատման սահմանափակումները հիմնավորվում են ՀՀ օրենքներով, կառավարության որոշումներով գործող նորմերով և իրավական այլ փաստաթղթերով:

Տարածքի հատակագծային կառուցվածքը /ներկայացած է նախագծի գրաֆիկական մասում/: Այն ներառում է՝

- բնակելի կառուցապատման գոտիներ, որոնք տարբերվում են ըստ կառուցապատման տեսակի և հարկայնության /բազմաբնակարան և սակավահարկ տնամերձ հողամասերով մենատներ/
- հասարակական կառուցապատման գոտիներ
- բազմաֆունկցիոնալ /խառը/ կառուցապատման տարածքներ
- ընդհանուր օգտագործման /զբոսայգիներ/ գոտիներ ու ճանապարհային ցանց

Թաղամասի սահմաններում առկա են նաև հատուկ նշանակության օբյեկտներ, իրենց հողատարածքներով:

Գոտիների տարածքը, բնակչության և բնակելի ֆոնդի խտությունները, ինչպես նաև գոտիների տարածքների գործառական կազմն ու դրանց չափային մասնաբաժինը ներկայացված է գրաֆիկական մասում:

Արմավիր քաղաքի Բաղրամյան պողոտային հարող թաղամասերի  
գոտիավորման նախագծով առանձնացված  
գոտիների թույլատրվող օգտագործման ցանկ

աղյուսակ 9.2-1

Սահմանված գոտիների նշահարում	Թույլատրելի օգտագործում
1	2
<b>2.1</b>	<b>Բնակելի կառուցապատում</b>
2.1-1, 2.1-2, 2.1-3, 2.1-4, 2.1-5, 2.1-6, 2.1-7, 2.1-8, 2.1-9, 2.1-10, 2.1-11, 2.1-13, 2.1-14	Բազմաբնակարան բնակելի շենքեր, բարեկարգման կառույցներ, կանաչապատում, դրանց սպասարկող ինժեներական ենթակառուցվածքի կառույցներ ու ցանցեր, տարածքի սանիտարական մաքրման ենթակառուցվածք

2.1.1-12, 2.1.1-15, 2.1.1-16, 2.1.1-17, 2.1.1-18, 2.1.1-19	Տնամերձ հողամասերով սակավահարկ բնակելի տներ, դրանց սպասարկող ինժեներական ենթակառուցվածքի կառույցներ ու ցանցեր
<b>2.2</b>	<b>Հասարակական կառուսապատում</b>
2.2-6, 2.2-7, 2.2-9, 2.2-12, 2.2-15, 2.2-18, 2.2-19, 2.2-34, 2.2-35, 2.2-36, 2.2-37	Մանրածախ առևտրի խանութներ
2.2-24, 2.2-25, 2.2-26, 2.2-30, 2.2-31, 2.2-38, 2.2-39	Մանրածախ առևտրի խանութներ, հասարակական սննդի ձեռնարկություններ և կետեր, ռեստորաններ, խորտկարաններ, սրճաններ, բարեր
2.2-13	Մանրածախ առևտրի խանութներ, ինչպես նաև հանրախանութներ կամ մեծածախ առևտրի խանութներ
2.2-2, 2.2-3, 2.2-4, 2.2-5, 2.2-22, 2.2-23, 2.2-28, 2.2-29, 2.2-32, 2.2-33, 2.2-46, 2.2-47	Կանաչապատ տարածքներում տեղաբաշխվող <ul style="list-style-type: none"> <li>• հասարակական սննդի ձեռնարկություններ և կետեր, ռեստորաններ, խորտկարաններ, սրճաններ, բարեր</li> <li>• մանրածախ առևտրի խանութներ</li> </ul>
2.2-14	Մարդատար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ձեռնարկություններ, անհատական օգտագործման ավտոմեքենաների կայանատեղեր բազմահարկ, վերգետնյա կամ նաև ստորգետնյա
2.2-8-1, 2.2-8-2, 2.2-8-3, 2.2-8-4, 2.2-8-5, 2.2-8-6, 2.2-8-7, 2.2-8-8	Բազմաբնակարան շենքերի առաջին հարկերում ու դրանց կցակառույցներում տեղադրվող <ul style="list-style-type: none"> <li>• մանրածախ առևտրի խանութներ, հանրախանութներ</li> <li>• հասարակական սննդի ձեռնարկություններ և կետեր, ռեստորաններ, խորտկարաններ, սրճաններ, բարեր</li> <li>• շրջանային նշանակության հասարակական սպասարկման, ներառյալ կրթական և առողջապահական կազմակերպ-ներ, պատկերասրահներ, թանգարաններ, գրադարաններ</li> <li>• բնակելի միջավայրը չաղտոտող /օդում, ջրում վասակար արտանետումներ, աղմուկ, փոշի, տիաճ հոտ, թրթռումներ, էլեկտրամագնիսական կամ ռադիոակտիվ ճառագայթում և այլն/ կենցաղային սպասարկման</li> </ul>

	ձեռնարկություններ, արհեստանոցներ, գործակալություններ
2.2-17, 2.2-27	Գրասենյակներ, գործակալություններ և հաճախորդներին սպասարկող այլ կազմակերպություններ
2.2-1,	Հասարակական սննդի ձեռնարկություններ և կետեր, ռեստորաններ, խորտկարաններ, սրճարաններ, բարեր
2.2-40, 2.2-41, 2.2-42, 2.2-43, 2.2-44, 2.2-45	Բնակելի միջավայրում տեղաբաշխվող , թաղամասային նշանակության հասարակական սպասարկման հիմնարկներ, ներառյալ կրթական և առողջապահական հիմնարկներ, պատկերասրահներ, թանգարաններ, գրադարաններ
<b>2.3</b>	<b>Բազմաֆունկցիոնալ /խառը/ կառուցապատում</b>
2.3-16 2.3-20, 2.3-21	<p>Բազմաֆունկցիոնալ նշանակության համալիրներ</p> <ul style="list-style-type: none"> <li>մանրածախ առևտրի խանութներ, հանրախանութներ</li> <li>հասարակական սննդի ձեռնարկություններ և կետեր, ռեստորաններ, խորտկարաններ, սրճարաններ, բարեր</li> <li>բնակելի միջավայրը չաղտոտող /օդում, ջրում վասակար արտանետումներ, աղմուկ, փոշի, տիաճ հոտ, թրթռումներ, ելեկտրամագնիսական կամ ռադիոակտիվ ճառագայթում և այլն/ կենցաղային սպասարկման ձեռնարկություններ, արհեստանոցներ, գործակալություններ</li> <li>գրասենյակներ, գործակալություններ և հաճախորդներին սպասարկող այլ կազմակերպություններ</li> <li>վարչական և ԳՀ կազմակերպություններ, փոքր հզորության թեթև արդյունաբերության ձեռնարկություններ</li> <li>հյուրանոցներ, հանրակացարաններ, սպասարկման ծառայություններով բնակելի շենքեր</li> <li>անհատական օգտագործման ավտոմեքենաների կայանատեղեր բաղմահարկ, վերգետնյա կամ նաև ստորգետնյա</li> <li>դրանց սպասարկող ինժեներական ենթակառուցվածքի կառույցներ ու ցանցեր</li> <li>տարածքի սանիտարական մաքրման ենթակառուցվածք</li> </ul>
<b>2.4</b>	<b>Ընդհանուր օգտագործման</b>
2.4.1-1, 2.4.1-2, 2.4.1-3, 2.4.1-4, 2.4.1-5	Քաղաքային զբոսայգի /լանդշաֆտային գոտի/, հանգստի կազմակերպման համար նախատեսվող, ոչ հիմնական կառույցներ, կանաչապատում, բարեկարգում, դրանց սպասարկող ինժեներական ենթակառուցվածքի կառույցներ ու ցանցեր
2.4.2	Համաքաղաքային նշանակության մայրուղիներ, ինժեներական ենթակառուցվածքի ստորգետնյա ցանցեր
<b>6.0</b>	<b>Հատուկ նշանակության տարածքներ</b>
6.1, 6.2	Ձորամասեր, ռազմական ուսումնարաններ

### **9.3 Գոտիների օգտագործման պայմանները**

#### **Քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային, գյուղատնտեսական և այլ սահմանափակումները:**

Վերակառուցման համար նախատեսված բնակելի թաղամասերը պետք է համապատասխանեցվեն բնակելի միջավայրի համար գործող քաղաքաշինական, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանման նորմերին և պահանջներին:

Հիմնականում պահպանելով գոյություն ունեցող շենքերի տեղաբաշխումը՝ պետք է կատարվի նաև անավարտ շենքերի ու նոր բնակելի ու հասարակական օբյեկտների կառուցումը, թաղամասի փողոցային ցանցի վերանորոգում, ստորգետնյա ինժեներական կոմունիկացիաների հիմնանորոգում ու ցանցերում լրացուցիչ նոր գծերի կառուցում, գլխավոր հատակագծի լուծումներին ու սույն գոտիավորման նախագծին համապատասխան:

Բազմաբնակարան կառուցապատման գոտիներից 2.1.6-2, 2.1-7, 2.1.8-1, 2.1.8-2, 2.1.8-3, 2.1.9-1, 2.1-10 և 2.1-11 գոտիները 20 -դարի 70-80-ական թվականներին կառուցապատված են հինգ հարկանի բազմաբնակարան շենքերով, իսկ 2.1-7 գոտում նույն տարիներից անավարտ մնացած կառույցներով:

Բնակելի նոր կառուցապատման հատվածներում նախատեսվում է տեղաբաշխել նոր բազմաբնակարան շենքեր: Դրանց հարկայնությունը պետք է կարգավորվի տարածքների կառուցապատման չափորոշիչների /տես գրաֆիկական մասի 2, 3, 4 աղյուսակները/: Նոր շենքերի տեղաբաշխումը ներկայացված է գրաֆիկական մասում, իսկ վերջնական լուծումը պետք է մշակվի համապատասխան շենքի տեղադրման նախագծում, որտեղ պետք է հաշվի առնվեն կոնկրետ հողատարածքի ինժեներատեխնիկական պայմանները և կառուցապատման չափորոշիչները:

Շենքերի տեղաբաշխումը, նախագծումը պետք է կատարվի շինարարական, հակահրդեհային, սանիտարական և այլ գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Կոնկրետ շենքերի տեղաբաշխման, նախագծման և շինարարության ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել նոր հաստատված նորմատիվային փաստաթղթերի պահանջները:

Բաղրամյան պողոտայի ճարտարապետական կերպարի բարելավման, պողոտային պատշաճ միջավայրի ձևավորման համար, ճակատային մասով դեպի Բաղրամյան պողոտա և Աբովյան փողոց ուղղված բնակելի շենքերի առաջին հարկերում կարող են նախատեսվել և կառուցվել, գործող շինարարական նորմերի պահանջներին և սույն գոտիավորման նախագծով թույլատրվող օգտագործման պայմաններին համապատասխան՝ առևտրի, հանրային սննդի, կենցաղային սպասարկման և հասարակական տարբեր կազմակերպություններ: Դրանց տեղաբաշխումն ու շահագործումը չպետք է վատթարացնի բնակելի թաղամասերում ու շենքերում բնակեցման պայմանները (աղմուկ, փոշի, տհաճ հոտ և այլն):

Բնակելի կառուցապատման համար նախատեսված գոտիներում՝ կառուցապատումը կարգավորող գծերին համապատասխան, կարող են տեղաբաշխվել նաև հյուրանոցային շենքեր, պանսիոններ: Դրանց համար հատկացվող տարածքները բնակելի կառուցապատման համար նախատեսված գոտու սահմաններում կարող են կազմել գոտու տարածքի 15%-ից ոչ ավելի: Նման օբյեկտների տեղադրման դեպքում չպետք է խախտվի գոտու օգտագործման, սույն նախագծով սահմանված, ցուցանիշները:

Բնակելի կառուցապատման համար նախատեսված գոտիները համապատասխանաբար լրացուցիչ պետք է կահավորվեն ինժեներական ենթակառուցվածքի սարքերով (ջրամատակարարում, կոյուղի, էլեկտրամատակարարում, գազամատակարարում և այլն) ըստ տեղադրվող շենքերի նշանակության և դրանց տեխնիկական պահանջների: Ինժեներական ենթակառուցվածքին պատկանող բոլոր կոմունիկացիաներին միացումների և թույլատրելի բեռնվածություններն ու տրամադրվող քանակները կարգավորում են քաղաքի /թաղամասի/ կոմունալ ծառայությունները:

Ի նկատի ունենալով տարածքի հարթ ռելիեֆը, շենքերի և շինությունների նախագծերում պետք է լուծվի շենքերի ու շինությունների ստորերկրյա կոնստրուկցիաների ու հիմնատակերի պաշտպանումը, ինչպես մակերևութային, այդպես նաև ստորերկրյա ջրերից: Տարածքի կառուցապատման նախագծում պետք է մշակվի ու կարգավորվի գոտիների տարածքների ուղղաձիգ հատակագծում և մակերևութային ջրերի կազմակերպված հեռացումը: Գոտիների տարածքներում պետք է նախատեսվեն աղբահեռացման հարթակներ:

Հասարակական նոր կառուցապատման համար նախատեսված գոտիներում պետք է տեղաբաշխվեն թաղամասի բնակչության սպասարկման այն կազմակերպությունների շենքերն ու շինությունները, որոնց տեղաբաշխումը բնակելի կառուցապատման գոտիներում նպատակահարմար չէ, ելնելով տարբեր պայմաններից (աղմուկ, տեխնոլոգիական սարքավորումներից թրթռումներ, տհաճ հոտ և այլն), ինչպես նաև բացակայող տեխնիկական կամ առանձին օժանդակ կառույցներ:

Հասարակական կառուցապատման գոտիներում թույլատրվող կառույցների նշանակությունը ներկայացված է 9.2-1 աղյուսակում:

2.2-40-ից 2.2-45 գոտիներում թույլատրվում է բնակելի միջավայրում տեղաբաշխվող, թաղամասային նշանակության հասարակական սպասարկման հիմնարկներ, ներառյալ կրթական և առողջապահական հիմնարկները, պատկերասրահներ, թանգարաններ, գրադարաններ:

Հասարակական և կենցաղային սպասարկման կազմակերպությունների հզորությունների ընտրությունը կարող է կատարվել թաղամասի կառուցապատմանը նախորդող փուլերում՝ համապատասխան սույն գոտիավորման նախագծի հիմնական չափորոշիչների:

Մեծ կարևորություն պետք է տրվի ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների՝ զբոսայգիների և պուրակների, ստեղծմանը: Հասարակական նշանակության օբյեկտներին կից զբոսայգիների տարածքը երաշխավորում են թաղամասի բնակչության փրկարարական և այլ ինժեներատեխնիկական միջոցառումների իրականացումը արտակարգ իրավիճակների պայմաններում:

Ջրոսայգիների ու պուրակների կառուցապատումը պետք է իրականացվի գլխավորապես ոչ հիմնական կառույցներով, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ փոխորինվել նոր՝ տեխնիկապես զինված սարքավորումներով: Ջրոսայգիների տարածքները պետք է ապահովված լինեն տարեց մարդկանց, երեխաների և հաշմանդամների համար զբոսայգու հարմարավետ կահույքով, մատչելի արահետներով և ձեմուղիներով: Ջրոսայգիների և հասարակական կառուցապատման գոտիների հարակից մասերում պետք է նախատեսվեն և իրականացվեն հասարակական զուգարաններ: Կենցաղսպասարկման օբյեկտներին կից պետք է նախատեսվեն անհատական ավտոմեքենաների կայանման, տեխնիկական սպասարկման և լվացման կետեր:



Շրջակա միջավայրի պահպանման և բնապահպանական ինչպես նաև սանիտարահիգիենիկ պահանջների կատարումը պետք է նախատեսվի համապատասխան գործող նորմերի և սույն գլխավոր հատակագծի:

#### 9.4 Թաղամասերի ինժեներական ենթակառուցվածքը

**Ջրամատակարարում.** Թաղամասերի ապահովումը խմելու ջրով կարող է կատարվել համաձայն Արմավիրի քաղաքային համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագծով առաջարկված, «Նոր Ակունք» ՓԲԸ տվյալներին (07.02.2006թ. N 56102) համապատասխան: Արմավիր քաղաքի առկա ջրամատակարարման և կոյուղացման վերաբերյալ բնակչության մեկ մարդու միջին օրական ջրապահանջի քանակը համաձայն Արմավիր քաղաքում գործող “FICHTHER” ընկերության առաջարկության կազմում է՝ 129 լ/օր և չնախատեսված ծախսերի համար ընդունված է՝ ընդհանուր պահանջարկի 25%-ի չափով:

Թաղամասերի ջրամատակարարումը նախատեսվում է բնակչության խմելու, տնտեսա-կենցաղային, հասարակական կազմակերպությունների և սպասարկման ձեռնարկությունների, ինչպես նաև հակահրդեհային պահանջները բավարարելու համար: Բնակչության մեկ մարդու պահանջվող միջին օրական ջրաքանակն ընդունված է 129 լ/օր:

Թաղամասերի համար խմելու որակի ջրապահանջի հաշվարկը բերվում է 9.4-1 աղյուսակում:

աղյուսակ 9.4-1

հհ	ջրասպառողներ	քանակ հազ.	ջրասպառման նորմա լ/օր	ջրապահանջը		ջրահեռացում	
				մ3/ օր	լ/ վրկ	մ3/ օր	լ/վրկ
1	բնակչությունը	10.0	129	1290.0	15.0	903.0	10.5
2	հասարակական օբյեկտների կարիքներ	10%	—	130.0	1.5	46.0	1.0
3	հակահրդեհային կարիքների համար			156.0	1.8	—	—
	ընդամենը			1576.0	18.3	950.0	11.5
4	չնախատեսված ծախսեր	25%		400.0	4.6	240.0	3.0
5	ամբողջը			1980.0	23.0	1200.0	14.5

Այսպիսով, ըստ կատարված հաշվարկների՝ հեռանկարաձային զարգացման ժամանակաշրջանի համար Բաղրամյան պողոտային հարող թաղամասերի խմելու որակի ջրի ընդհանուր պահանջը կազմում է 1980.0 մ3/ օր (23.0 լ/վրկ): Հեռացման ենթակա կեղտաջրերի քանակը՝ 1200.0 մ3/ օր (14.5.0 լ/ վրկ): Ընդհանուր ջրապահանջը կբավարարվի ինչպես ներկայումս, այնպես էլ հետագայում ոչ ճնշումային խորքային հինգ հորերից, որոնց ընդհանուր հզորությունը 21,0 հազ. մ3 է: Խորքային հորերից ջուրը մղվում է ՃԹ 12-160-100 մակնիշի պոմպերի միջոցով:

Հակահրդեհային կարիքների համար պահանջվող ջրաքանակը հաշվարկված է ըստ գործող նորմերի Հրդեհի տնտղությունը ընդունվում է 3 ժամ, պահանջվող ջրաքանակը կազմում է՝

Հակահրդեհային ջրապահանջը պետք է վերականգնվի ՕԿՁ – ում 24 ժամվա ընթացքում:՝

Խմելու, տնտեսական կարիքների, հասարակական և սպասարկման ձեռնարկությունների և հակահրդեհային կարիքների համար պահանջվող միջին օրական ջրաքանակի և հեռացման ենթակա կեղտաջրերի քանակի հաշվարկը ներկայացվում է 9.4-1 աղյուսակում.

**Ջրահեռացում.** Թաղամասերի ներքին կոյուղու ցանցը նախատեսվում է  $D = 200-300$  մմ տրամագծի խողովակներով: Թաղամասերի կոյուղու ցանցից կեղտաջրերը պետք է հեռացվեն գոյություն ունեցող կոյուղատարի միջոցով, որը մայր կոյուղատարի միջոցով ուղղվում է դեպի Մեծամորի կեղտաջրերի մաքրման կայանները:

Սակերևութային ջրահեռացումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող գծերով:

**Էլեկտրամատակարարում.** Թաղամասերի էլեկրամատակարարումը նախատեսվում է համապատասխան Արմավիրի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի նախագծի:

**Գազամատակարարում.** Նախատեսվում է համապատասխան Արմավիրի քաղաքային համայնքի տարածքում առկա գազաբաշխիչ կայանի հնարավորության:

**Ջեռուցում.** Նախատեսվում է համապատասխան Արմավիրի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի նախագծի:

**Աղբահեռացում.** Թաղամասից աղբահեռացումը պետք է իրականացվի դեպի քաղաքային աղբավայր:

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար

Դ. Սարգսյան

## 10. Օգտագործված ղեկավար և մեթոդական փաստաթղթերի ցանկ

- [illegible]

25. Ծօւի աի անձաի իի նի ոճաաբի Եր ծաղաթի "Ի օճաի ա ի ծեծի աւ Ե օթ-թաի Եա ի Եծօթաթւաթ նժաւ աժաի ոճի Եծաթիւ Ե նժաանձաի Ե", Ի ի նթա, 1982 Ե.
26. "Աթաի ի աթնձաթ ի ծեծի աիւ օթեծի ծի ա Ե ծաթօթւձաթի ա աժաի ոճի Եծաթիւ ի Ե աթծաթիւ ի ոճ Ե օի ծի Եծի աի Ե Ե նժաւ աի ծի աի ա", Ի ի նթա, 1974 Ե.
27. Ծօւի աի անձաի իի նի ոճաաբի Եր ծաղաթի "Ի օճաի ա ի ծեծի աւ Ե օթ-թաի Եա ի Եծօթաթւաթ նժաւ աժաի ոճի Եծաթիւ Ե նժաանձաի Ե" ա ի ծի աթծաթ ի Եաի Եծի աթ Ե չանձի Եթ աի ծի աի ա, ի ի նթի ա Ե նթիւնթ ի աթաթիւ Ե օի Եծի ա. ՕԻ ԵԵԻ աժաի ոճի Եծաթիւնձա Աի նժաթաի ոճի յ. Ի ի նթա. 1982 Ե.
28. Ծօւի աի անձաի իի ի օճաի ա ի Եծօթաթւաթ նժաւ ա ծաթիւ ի Ե ի Եաի Եծի աթ. ՕԻ ԵԵԻ աժաի ոճի Եծաթիւնձա Աի նժաթաի ոճի յ. Ի ի նթա. 1980 Ե.
29. Օթաթիւ ի ծան-ձծ ծաննթաթիւ ա ձի ի ոճաժ աժաիւ Եաանձա, նի աժաթւթիւ ա աւաժի նա ի ծաի ծեծի. ՆԻ 369-74. Աի ոճի Ե ՆՆՆՆ. Ի ի նթա. 1975 Ե.
30. Եի ոճի Եթ ի նի ոճաա, ի ծաթիւ ծաթաթիւ Ե, նի աթնի աթիւ Ե օճաժաթիւ ծաղաթի Եաի աժի ի-ձաթի Ե-աթիւ ի աժի ծեծի աժաթաի նի Ե ի աի ծի ա ոճի ա Ե ի ծի աթծաթ ծաթիւ ի Եաի Եծի աթ Ե չանձի Եթ աի ծի աի ա, ի ի նթի ա Ե նթիւնթ ի աթաթիւ Ե օի Եծի ա. ԱՆԻ ԱԻ 38-83. Աի նժաթաի ոճի Ե. Ի ի նթա. 1984 Ե.
31. Ի օճաի ա ի ծեծի աւ. Աթաթի ոճաժ. Ի աւթ ձժաթ աթիւ ի օճաի ա ի աժծի ոճի Ե Ե ի աթիւ Ե աի ա ի ձ չաժծի աթիւ ի Եաի աժաթիւ Ե օաի աժաթիւ Ե. ԱԻ ՆՈ 17.1.3.11-84 (ՆՈ ՆԻԱ 4035-83). Աի ոճաթնձաթիւ Ե Ե ի Եծաթ ՆՆՆՆ ի ոճի աժծաթ. Ի ի նթա. 1984 Ե.
32. Եի օի ձի աթիւ ի աւնի Ե ի յեթծաթի աթիւ ի չաժծի աթիւ Ե ի ծեծի աթիւ նժաւ ա օաժաթ 1986 աի ա ի ա ձաժծի Եթ աթծաթիւ ի ոճ Աթի յի նի ա ՕԱԵՆ. Աի ոճաթնձաթիւ Ե Ե ի Եծաթ ՆՆՆՆ ի աթիւ ի աժծի Եաթ Ե Ե ի օժի Եր ի ծեծի աթիւ նժաւ. Աթի յի նի ա ծանի օթթթիւ նի ա օի ծաթիւ Ե ի աթիւ ի աժծի Եաթ Ե Ե ի օժի Եր ի ծեծի աթիւ նժաւ. Աժաթ. 1988 Ե.
33. Նաի Եծաթիւ ի օճաի ա ի Եծօթաթւաթ նժաւ նի աժի աթիւ աի ծի ա. Ա.Ա. Ի ի Եթի ա, Ա.Բ. Աճաժա. Եաի Եաժա. 1978 Ե.

**Շրջակա միջավայրի պահպանության բաժնի ներքին օգտագործված փաստաթղթերի ու գրականության ցանկ**

1. Ծօւի աի անձաի իի նի ոճաաբի Եր ծաղաթի "Ի օճաի ա ի ծեծի աւ Ե օթ-թաի Եա ի Եծօթաթւաթ նժաւ աժաի ոճի Եծաթիւ Ե նժաանձաի Ե" ա ի ծի աթծաթ ի Եաի Եծի աթ Ե չանձի Եթ աի ծի աի ա, ի ի նթի ա Ե նթիւնթ ի աթաթիւ Ե օի Եծի ա. Ի ., 1982 Ե.
2. Ծաթիւ ի աթթիւ ի ի օճաի ա ի Եծօթաթւաթ նժաւ ա ծաթիւ ի Ե ի Եաի Եծի աթ. Ի . 1986 Ե.
3. Ի թիւ ի օաի ձա ի ի Եծի Եթ ա չա N 68 ի ձ 19.07.2005ա
4. Նձի Եծաթիւ յ Եթ ձա ի Եթ. Աժաթ, 1996 Ե.
5. Ի ծաթիւ աթիւ ի ծաթաթիւ Ե ի ծաթաթիւ Ե Եաննթթթթթ թիւ ի Եթի ա աւաժի նա աժաթիւ Եաանձա ա ձի ի ոճաժ. Աթաթի ի աժի Եթաժ, 1982 Ե.
6. Աաթիւ 20Ի -աթաժ, ի ծի աթծ ի ծաթաթիւ -աթիւնձիւ Ե աւաժի նի ա (Ի ԱԱ), աթիւ ի աթթ, ի Ե թնձաթնձա ձի ծաթ Ե յեթի ի Ե-աթիւ ա ծաթթթիւ, ի աթիւ ի ՆԻՆ.
7. Նաի ծի Ե չաթիւ ի աժաթիւ Ե ի ձի աժաթիւ Ե ի աժի աթթթ ի Եթի աթիւ ի աթ յեթի աժծիւ աթ չաժի ի օճաի ա ի աժի ծեծի. Ե., Աթաթի ի աժի Եթաժ, 1986 Ե.

8. Նախագիծը և ձեռնարկը իմ օգնությամբ և ձեռնարկը իմ օգնությամբ չափազանց լավ է իրականացվել։ Ե., Առաջին համաժողով, 1986 թ.
9. ՈՒՄՈՒՄ-ի 245-71. Նախագիծը և ձեռնարկը իմ օգնությամբ չափազանց լավ է իրականացվել։ Ե., Առաջին համաժողով, 1986 թ.
10. Ինքնագիրը և ձեռնարկը իմ օգնությամբ չափազանց լավ է իրականացվել։ Ե., Առաջին համաժողով, 1983 թ.
11. Առաջին համաժողովի ձեռնարկը իմ օգնությամբ չափազանց լավ է իրականացվել։ Ե., Առաջին համաժողով, 1983 թ.
12. Ինքնագիրը և ձեռնարկը իմ օգնությամբ չափազանց լավ է իրականացվել։ Ե., Առաջին համաժողով, 1987 թ.
13. Երկրորդ համաժողովի ձեռնարկը իմ օգնությամբ չափազանց լավ է իրականացվել։ Ե., Առաջին համաժողով, 1987 թ.
14. Ինքնագիրը և ձեռնարկը իմ օգնությամբ չափազանց լավ է իրականացվել։ Ե., Առաջին համաժողով, 1987 թ.
15. Ինքնագիրը և ձեռնարկը իմ օգնությամբ չափազանց լավ է իրականացվել։ Ե., Առաջին համաժողով, 1989 թ.
16. Առաջին համաժողովի ձեռնարկը իմ օգնությամբ չափազանց լավ է իրականացվել։ Ե., Առաջին համաժողով, 1961 թ.
17. ՈՒՄՈՒՄ-ի II-12-77. Չափազանց լավ է իրականացվել։ Ե., 1978 թ.
18. Ինքնագիրը և ձեռնարկը իմ օգնությամբ չափազանց լավ է իրականացվել։ Ե., Առաջին համաժողով, 1990 թ.
19. Օրհնագիրը և ձեռնարկը իմ օգնությամբ չափազանց լավ է իրականացվել։ Ե., Առաջին համաժողով, 2001 թ.
20. Արևիկալի ձեռնարկը իմ օգնությամբ չափազանց լավ է իրականացվել։ Ե., Առաջին համաժողով, 1984 թ.
21. Հայաստանի սոցիալական միությունները, տեղական պատմության և պատմության /ՀԱՍՄ/

**Քաղաքացիական պաշտպանության ինստիտուտի և տեղական միջոցառումների բաժնում**  
**օգտագործված նորմատիվային փաստաթղթերի ցանկ**

26. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
27. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
28. «Հայաստանի փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենք,
29. «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք,
30. «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենք,
31. «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
32. ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 17-ի «ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2328-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N194-Ն որոշում:
33. ՀՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 13 «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 746 որոշում,

34. ՀՀ կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատասպարման կարգը հաստատելու մասին» թիվ 592 որոշում,
35. ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» թիվ 679 որոշում,
36. ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի «ՀՀ արդյունաբերական օբյեկտի անվտանգության վկայագրի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 702 որոշում:
37. ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» թիվ 609-Ն որոշում,  
 ՀՀ կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 16-ի «ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին տեղեկատվության ստացման և ազդարարման կարգը հաստատելու մասին» թիվ 1304-Ն որոշում,
38. ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի «Կառավարման մարմինների և բնակչության իրազեկման կարգը սահմանելու մասին» թիվ 1494-Ն որոշում,
39. ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը հաստատելու մասին» թիվ 1925-Ն որոշում,
40. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանը (Հայկական ատոմային էլեկտրակայանի արտաքին վթարային պլան) հաստատելու մասին» թիվ 2328-Ն որոշում:
41. Հայստանդարտ «Անվտանգություն արտակարգ իրավիճակներում, տեխնածին արտակարգ իրավիճակներ, տերմիններ և սահմանումներ» ՀՍՏ 201-2000,
42. Հայստանդարտ «Անվտանգություն արտակարգ իրավիճակներում, բնական արտակարգ իրավիճակներ, տերմիններ և սահմանումներ» ՀՍՏ 227-2003,
43. Հայստանդարտ «Անվտանգություն արտակարգ իրավիճակներում, արտակարգ իրավիճակներ, տերմիններ և սահմանումներ» ՀՍՏ 233-2004,
44. ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր»,
45. ՀՀՇՆ II-6.01-96 «Վտանգավոր բնական ազդեցությունների երկրաֆիզիկա»,
46. ՍՆԻՊ 2.01.15-90 «Տարածքների, շենքերի և կառուցվածքների ինժեներական պաշտպանությունը երկրաբանական վտանգավոր երևույթներից. Նախագծման հիմնական դրույթներ»,
47. ՍՆԻՊ 2.06.15-85 «Տարածքների ինժեներական պաշտպանությունը ողողումներից և հեղեղներից»,
48. ՇՆՁ II-6.01.01-98 «Շենքերի և կառուցվածքների տարածքների ինժեներական պաշտպանությունը բնության վտանգավոր երևույթներից»,
49. ՀՀՇՆ II-8.04.01-97 «Շենքերի և կառուցվածքների հրդեհային անվտանգություն»: